Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2970

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԿԱԶՆԵԱՆ

## ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԱՐԹԻՆԷՍ Վ. ՉԱԼԸԽԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

Ի ՎԻԵՆՆԱ
ՏՊԱՐԱՆ Ս. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1856

491.99-5
Չ-15

2010

[illegible] 20[illegible]

2002

27

491.99-5
2-15

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
# ՀԱՅԿԱԶՆԵԱՆ
*ԼԵԶՈՒԻ*

Ա 425
97-ՁԱ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Հ. ՎՐԹԱՆԷՍ Վ. ՉԱԼԸԽԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Т 64730)
ՌԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Հ.
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
19717-59



Ի ՎԻԷՆՆԱ
Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
1856

36592 ա.հ.

[illegible]

Ա 125
110-70

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

1889 [illegible] 2:

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

Գիտունք կ'ըսեն թէ իրենց չգիտցածն իրենցմէ ետքինները պիտի իմանան։ Աս խօսքիս ճշմարտութիւնը փորձով իմացան. ինչու որ տեսան թէ ամէն ուսում պզտիկէն սկսած ու ատենով մեծցած է, եւ միշտ ետեւէն եկողն առջինին վրայ բան մը աւելցուցած է։ Այսպէս կը տեսնենք նաեւ արուեստները՝ որոնք որ յառաջ շատ կոպիտ էին, ետքը որչափ որ արուեստաւորները շատցան, այնչափ արուեստները կարգաւորեցին, բարակցուցին ու դիւրինցուցին։ Նոյնպէս հայերէն քերականութիւնն՝ որ ազատական արուեստ մըն է, վերջին ատեններս շատ ծաղկեցաւ, ու հիմակուան ատեն հայու լեզուն ունի ընդարձակ ու համառօտ թէ գրաբառ եւ թէ աշխարհաբառ ընտիր քերականութիւններ։

Ի վերայ այսր ամենայնի մեզի աւելորդ չերեւցաւ ալ աւելի աշխատիլ ու մեր լեզուն աւելի դիւրինցընել։ Ինչու որ Եւրոպացւոց զանազան ազգաց տեսակ տեսակ քերականութիւնները ձեռք առնելով՝ իմացանք որ առաջի ատենուան դժուարութիւնները դուրս հանելով՝ իրենց աշկերտները շատ դիւրին ճամբէ կը քալեցընեն։ Անոր համար մենք ալ ջանացինք աս նոր քերականութիւնս այնպէս դիւրինցընել ու այնպէս ընել որ ամէն դասատան տղաք կարող ըլլան քիչ ատենուան մէջ գրաբառ հասկընալ։

## ԱՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Առաջին մասին մէջ ամէն բառերուն ու օրինակներուն թէ աշխարհաբառն ու թէ տաճկերէնը դիմացը դրինք, որ նոր սորվողները դիւրաւ հասկընան, ու սորվածնին չէ թէ թութակի պէս, հապա հասկընալով սորվին։ Նոյնպէս երկրորդ մասին մէջ ալ ամէն կանոնին մէյ մէկ օրինակը մեկնեցինք, որ միտք առնելը դիւրին ըլլայ։

Բ. Այնպիսի գիտելիքներն՝ որոնք որ նոր սորվողի մը հարկաւոր չէին, զատ ծանօթութեանց մէջ դրինք, որ ծանրութիւն չըլլայ. թէպէտ վարպետն իր խոհեմութեամբն, ու աշկերտին միտքը չափելով՝ կրնայ անոնցմէ ալ դաս տալ կամ հարկաւոր չսեպածը թողուլ։

Գ. Որչափ կարելի էր՝ ջանացինք որ օրինակները բացայայտ ըլլան, ընտիր ու օգտակար խօսքեր։ Ինչու որ բացայայտ օրինակներն ու ամբողջ խօսքերը դիւրաւ կը հասկցուին, շուտ կը սորվուին ու երկայն միտքը կը մնան։ Անոր հակառակ

թէ որ օրինակները մութ ըլլան կամ ամբողջ խօսքեր չըլլան, տղաք աղէկ չեն հասկընար, ուշ կը սորվին ու շուտ կը մոռնան։

Օրինակներուն տեղերը չգրինք, որ պարապ տեղ թուահամարները ծանրութիւն չըլլան։ Գլխաւոր հեղինակներն՝ ուսկից օրինակները քաղեցինք, սոնք են. Աստուածաշունչ գիրքը, Ագաթանգեղոս, Եզնիկ, Ոսկեբերան, Մամբրէ, Խորենացի, Եղիշէ, Մանդակունի, Ն. Շնորհալի, Ն. Լամբրոնացի, Սարգիս վարդապետ, Ճառընտիրք, եւ այլն։

Ի. Ինչպէս որ ամէն կարդացող կը տեսնէ, մէկ կողմանէ առաջուց տպած քերականութիւններուն կարգը պահեցինք. բայց ինչ բան ալ փոխեցինք, փորձով տեսանք որ կարգն ու դիւրութիւնն այնպէս կը պահանջէր։

Առաջ ածականին ու գոյականին մէկտեղ հոլովիլը կարգի դրինք։ Պատճառն ալ յայտնի է. վասն զի երբ որ աշկերտը քերականութեան առջի մասը կը լմնցընէ, պիտի կարող ըլլայ ամէն մասն բանի ուղիղ որոշել։ Արդ՝ երբ որ չէ սորված թէ ածականը գոյականին հետ ինչպէս պիտի հոլովի, չիկրնար անուններուն հոլովներն աղէկ որոշել. ինչպէս ըսեմ ղէօյրէնէ ծառ, կը կարծէ որ ղէօյրէնէ հայցական ըլլայ, ու ծառ՝ ուղղական։ Այսպէս խմացիր մէկալ հոլովներն ալ։ Անոր համար հասարակօրէն ամէն լեզու գոյականներուն հոլովելն աւանդելէն ետքը՝ ածականին ու գոյականին մէկտեղ հոլովելը կ'աւանդէ։

Թէպէտ ածականները մեր լեզուին մէջ զատ հոլով չունին, ինչպէս քանի մը լեզուներ ունին. բայց զատ հոլովելու եղանակ մը ունին, այս ինքն՝ նախդիրը յառաջ դրուողը կ'առնէ, ածականը յառաջ դրուելու ըլլայ՝ նախդրիւ կը հոլովի, ետքը դրուելու ըլլայ՝ մէկտեղ կը հոլովի, եւ այլն։

Ասկէց զատ զանազան դժուարութիւն ունի մեր լեզուին մէջ թուական անուններուն, մասնական անուններուն, առացական դերանուններուն, ու մանաւանդ ցուցական դերանուններուն իրենց գոյականին հետ մէկտեղ հոլովիլը, որոնք կանոնով սորվիլն առանց մասնաւոր վարժութեան նոր սորվողի մը դժուարին է, չըսեմ անկարելի։

Աս բաներուս վրայ սովորութիւն էր երկրորդ մասին մէջ շատ դժուարին ու ճղճղկած կանոններ աւանդել. որոնք աշկերտներուն մեծ ծանրութիւն կու տան, եւ օգուտ չունին։

Ի. Ինչպէս որ առջի մասին մէջ ամէն բառերուն, հոլովներուն, լծորդութիւններուն նշանակութիւնը դրինք որ կարող ըլլան տղաք դիւրաւ հասկընալ, նոյնպէս երկրորդ մասին մէջն ալ՝ տղոց դիւրինցընելու համար գլխաւոր կանոնները հարցման եղանակաւ աւանդեցինք։ Ինչպէս ըսեմ թէ անուն բայի ինչ ըսել է, կամ թէ խօսքի մէջ անուն բային ո՛րն է, չիկրնար նոր սորվող տղայ մը խելք հասցընել։ Բայց հարցմանէ շատ դիւրաւ կրնայ հասկընալ թէ ինչ ըսել է անուն բայի, կամ թէ խօսքի մէջ անուն բայի բուսածն ո՛րն է, ո՛րն է խնդիրը, ինչ հոլով է, նախդրիւ տրական թէ ներգոյական, եւ այլն։ Թէպէտ ստոյգ է որ չեն կրնար մէկէն ի մէկ այնպէս հասկընալ, ինչպէս որ կը հասկընայ երկայն ատեն սորվող մը. բայց հարցումը տղոց դիւրաւ հասկցընելու ճամբայ կը բանայ։

# ՍՈՐՎԵՑԸՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Լեզու սորվելու աղէկ պատկերն ու բնութեան սքանչելի կարգը պզտիկ տղոց վրայ կ'երեւայ։ Անոր համար թէ վարպետին եւ թէ աշկերտին աչքին առջեւն ըլլայ տղոց օրինակը։ Առաջ տղոց միտքն անգիր ու ճերմակ թղթի կը նմանի, ու երբ որ կը սկսին զգայութիւնները հաստատուիլ, ձայնն ականջէն անցնելով միտքը կը տպաւորի, եւ վրան շատ ատեն անցնելով եւ նոյնը շատ անգամ լսելով՝ թէ ձայնը կը սորվի եւ թէ ձայնին ինչ նշանակելը կ'իմանայ. եւ մէկալ կողմանէ ինքն ալ թոթովելով մը կը սկսի խօսիլ մինչեւ լեզուն բացուի։ Անանկ է նէ՝ ինչպէս որ աշխարհաբառ լեզուն լսելով կը սորվին, նոյնպէս ալ գրաբառը կարդալով պէտք է սորվիլ. ինչու որ ականջին լսելով բրածն՝ աչքը կարդալով կ'ընէ։ Ուստի լեզու մը սորվելու համար շատ կարդալու է, չէ թէ մինակ քերականութիւն, հապա ուրիշ գիրք ալ։

Շատերը կը խաբուին կարծելով թէ մինակ քերականութիւնը բերնուց սորվելով կրնան լեզուն ալ սորվիլ։ Քերականութիւնն իբրեւ թէ տղուն ձեռքէն բռնողն է որ դիւրաւ քալէ ու չիյնայ. բայց ինչպէս որ տղուն ձեռքէն բռնելը միայն քալել չիսորվեցըներ, հապա պէտք է որ ինքն ալ քալէ, անանկ ալ մինակ քերականութիւնը բերնուց սորվեցընել՝ առանց գրքերու վրայ վարժեցընելու, աշկերտը աշխատցընելէն զատ օգուտ չունի։

Անոր համար աշկերտը քերականութիւն սկսած առաջին օրը պիտի սկսի միանգամայն գիրք մը կարդալ (որն որ մենք Աւետարանը պատշաճ կը սեպենք), ու որչափ կարելի է վարպետին մեկնելովը հասկընալ։ Խօսք մը շատ կերպ կրնայ աշկերտը հասկընալ։ Մէյ մը մինակ բառերը հասկընալով. ինչպէս որ մարդ մը կրնայ իր չգիտցած լեզուաւը խօսք մը սորվիլ, ու բառերուն նշանակութիւնը հասկընալ. երկրորդ իւրաքանչիւր բառ ինչ մասն բանի է, ինչ հոլով է կամ ժամանակ, եւ այլն. դարձեալ արդեօք անո՞ւն բայի է թէ խնդիր, եւ այլն։ Արդ երբ որ աշկերտը վարպետին մեկնելովը բառերուն ինչ նշանակելը կը հասկընայ, ու երբ որ օրէ օր ալ քերականութեան մէջ առաջ կ'երթայ, վարպետը կրնայ աշկերտէն պահանջել որ որոշէ անուան հոլովը, բային ժամանակը, սեռը, եւ այլն։ Եւ որչափ որ աշկերտը քերականութեան մէջ յառաջ երթայ, այնչափ աւելի պիտի պտուղը ցուցընէ, ամէն բան քերականութեան կանոնին համաձայն հասկընալով։ Աս ճամբով մէկ տարուան մէջ կրնան աշկերտները (թէ որ փութաջան ըլլան) դիւրին խօսքերը կամաց կամաց հասկընալ։

Բայց ինչպէս որ տղաք միայն չեն լսեր, հապա կրցածնուն չափ ալ կը խօսին, յառաջ մէկ երկու բառ, ան ալ ծուռ ու սխալ արտաբերութեամբ, դարձեալ մայրերնէն կամ քովի եղողներէն շիտակը կը լսեն, ու այնպէս կը սորվին. նոյնպէս աշկերտը կարդալէն զատ պիտի գրէ ալ, նախ դիւրին բաներ, ինչպէս ըսեմ, անուն մը հոլովել դիմացը աշխարհաբառով, գոյական ու ածական անունները մէկտեղ հոլովել,

եւ այլն։ Թէ որ սխալ ըլլայ՝ վարպետը կը շիտկէ, կարդալով ալ իր սխալը կ'իմանայ, ու շիտակը կը սորվի։ Երբ որ ասոնց մէջ բաւական կրթութիւն ու երկրորդ մասը սկսին սորվիլ, կրնան ան ատեն կարճ ու դիւրին խօսքերն ամէն կանոններուն վրայ աշխարհաբառէն գրաբառ թարգմանել։ Ասիկա ալ ճամբայ կը բանայ աւելի երկնկեկ խօսքեր ու պատմութիւններ թարգմանելու։

Եւ որպէս զի թէ վարպետներուն եւ թէ աշկերտներուն դիւրին ըլլայ աս կերպ թարգմանութիւնը, մասնաւոր ասոր համար համառօտ գիրք մը աշխարհաբառ, տաճկերէն ու անոնց գրաբառն ալ զատ տպեցինք։

Երբ որ աս կերպով կը սկսին սորվիլ՝ կը յուսանք որ տղոց ձանձրութիւնը (որ իրենց հասակին բնական է) կը քիչնայ, չըսեմ թէ կը վերնայ։ Վասն զի բաւական օգտակար զբաղում կ'ունենան. մէյ մը համար սորվելով, (ուր որչափ կարելի էր անօգուտ աշխատանքները վերցուցինք,) երկրորդ կարդալով, երրորդ գրելով։ Միանգամայն կը տեսնեն իրենց աշխատանքին պտուղը, որ մարդուս շատ սիրտ կու տայ. անոր հակառակ երբ որ աշխատութեան պտուղը չ'երեւար, ձանձրութիւն կը պատճառէ։

Ասով մենք ալ կ'ուրախանանք, տեսնելով օրէ օր մեր լեզուին ծաղկիլը եւ ուսումնասէր տղոց բազմանալը, եւ որ ամէն բանէ աւելի մեր սիրտը կ'ուրախացընէ ան է, որ աստուածպաշտութեան ու գիտութեան լոյսը, որ հիմա գրքերուն մէջ իբրեւ թէ պահուած է, հասկըցող քիչ ըլլալուն համար, ամենուն սիրտը կը ծագի, եւ սքանչելի պտուղներ կը հասցընէ իր ատենին ի փառս Աստուծոյ, որուն մեր ամէն աշխատութիւնը կը նուիրենք։

[illegible]

# ՅԱՆԿ

## ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԵԱՑ


Ածական անուն . . 20 · 114
Ածանցական անուն . . . 114
Անեզական անուն . . . . 4
Աներեւոյթ բայ . . . . 197
Անկանոն բայ . . . . . 78
Անկատար ժամանակ . . . 38
Անուն . . . . . . . . 114
Անուն բայի . . . . 142 · 144
Անցեալ ժամանակ . . . 37
Անցողական բայ . . . . 60
Ապառնի ժամանակ . . . 37
Առոգանութիւն . . . . 224
Արգելիչ խնդրոյ . . . 199
Բաղադրեալ անուն . . . 117
Բաղդատական ածական . . . . . . 115 · 178
Բայ . . . . . . . . . 36
Բայանուն . . . . . . 205
Բարդ անուն . . . . . 117
Բարձր շարագրութիւն . . 220
Բացայայտիչ, Բացայայտեալ . . . 141 · 165
Բացառական հոլով . . . 158
Բութ . . . . . . . . 225
Գերադրական ածական 115 · 178
Գերակատար ժամանակ . 38
Գիր . . . . . . . . . 1
Գոյական անուն . . . . 114
Գործիական հոլով . . . 159
Դերանուն . . 29 · 130 · 185
Դէմք բայից . . . . . 38
Դէմք դերանուանց . . . 29
Դիմազուրկ բայ 92 · 148 · 200
Դիմորոշ յօդք . . . 135 · 191
Դրական ածական . . . . 115
Ենթամնայ . . . . . . 227
Երկորեակ . . . . . . 227
Զարտուղի բայ . . . . . 78
Էական բայ . . . . . 38 · 167
Էական դերանուն . . 29 · 130
Ընդունելութիւն եալ . . 202
Ընդունելութիւն լի . . . 202
Ընդունելութիւն լոց . . 203
Ընդունելութիւն ող կամ օղ . 201
Թիւ անուանց . . . . 2 · 117
Թիւ բայից . . . . . . 38
Թուական անուն . . 23 · 123
Ժամանակ բայից . . . . 37
Լծորդութիւն բայից . . . 38
Լուծումն շարագրութեան . 213
Խնդիր բաղդատական անուանց . . . . . . . . 176
Խնդիր բայանուանց . . . 205
Խնդիր բայի . . . . . . 142
Խնդիր բնութեան . . . . 162
Խնդիր էական բայից . . 168
Խնդիր մասնական անուան . 182
Խնդիր սեռի կրաւորական բայից . . . . . . . 193
Խնդիր սեռի ներգործական բայից . . . . . 156
Խոնարհմունք բայից . . . 38
Կատարեալ ժամանակ . . 37
Կէտ . . . . . . . . 225
Կոչական հոլով . . . . 162
Կրաւորական բայ . . . . 37
Կրկնական թուականք 26 · 126
Համաձայնութիւն մասանց բանի . . . . . 141
Համաձայնութիւն ածականաց ընդ գոյականս . 179
Հայցական հոլով 156 · 170 · 193
Հասարակ բայ . . . . . 37
Հարցական դերանուն 36 · 134
Հարցումն . . . . . . 144
Հոլովմունք անուանց . . . 3 · 120 · 123
Հոլովումն ածականաց ընդ գոյականս . . . . 20
Հոլովք անուանց . . . . 2
Ձեւ անուանց . . . . . 116
Ձայնակրական բայ . . . 37
Ճոխ շարագրութիւն . . 217
Մակակէտ . . . . . . 227
Մակբայ . . . . . 100 · 210
Մասնական անուն 27 · 127 · 182
Մասունք բանի . . . 1 · 141
Միջակ շարագրութիւն . . 218
Միջարկութիւն . . . . . 113
Յատկացուցիչ, Յատկացեալ . . . . 141 · 149
Յատուկ անուն . . . 5 · 16

Յարաբերական դերանուն . . . . . . . 35 . 186
Յարակատար ժամանակ . . 38
Նախադրութիւն . . . . . 94
Նախդրիւ տրական . 2 . 155
Ներգոյական հոլով . 160 . 171
Ներգործական բայ . 36 . 136
Ներգործակերպ չէզոք . . 37
Ներկայ ժամանակ . . . . 37
Շաղկապ . . . . . . . . 107
Շարադրութիւն . . . . 216
Շեշտ . . . . . . . . . 224
Ուղղագրութիւն . . . . 224
Ուղղական հոլով . . 144 . 169
Չէզոք բայ . . . . . . . 37
Պակասաւոր բայք . . . . 85
Պատմական հոլով . . . 162
Պատիւ . . . . . . . . 227
Պատուագիր . . . . . . 227
Պարագայք անուանց . . 116
Պարագայք բայից . . . . 36
Պարառական հոլով . . . 183
Պարզ անուն . . . . . 117
Պարզ շարադրութիւն . . 216
Պարոյկ . . . . . . . 225
Սեռական հոլով . . 149 . 170
Սեռք բայից . . . . 36 . 136
Ստացական դերանուն 34 . 134
Ստորադասական եղանակ . 137
Ստորակէտ . . . . . . 225
Վերծանութիւն . . . . 224
Վերջակէտ . . . . . . 225
Վերջահոլով տրական 3 . 154
Տրական հոլով . . . 3 . 154
Տրոհութիւն . . . . . 225
Ցուցական դերանուն 32 . 133
Փակագիծ . . . . . . 227

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԿԱԶՆԵԱՆ

# ԼԵԶՈՒԻ

## ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ արուեստ մըն է, որ աղէկ հասկընալ, անսխալ խօսիլ ու շիտակ գրել կը սորվեցընէ:

Մեր լեզուի մէջ խօսքը բառէ կը շինուի, բառը վանկէ ու վանկը գրէ:

Հայերէն լեզուն բուն երեսունուվեց գիր ունի, որոնց վրայ ետքէն օ ու ֆ* գրերը աւելցընելով՝ եղան երեսուն'ուըթը, որ են՝

Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ, Էէ, Ըը, Թթ, Ժժ, Իի, Լլ, Խխ, Ծծ, Կկ, Հհ, Ձձ, Ղղ, Ճճ, Մմ, Յյ, Նն, Շշ, Ոո, Չչ, Պպ, Ջջ, Ռռ, Սս, Վվ, Տտ, Րր, Ցց, Իւ, Փփ, Քք, Օօ, Ֆֆ:

Ասոնցմէ ոմանք՝ որ իրենք իրենցմէ ձայն կը հանեն, Ձայնաւոր կ'ըսուին. ինչպէս, ա, ե, է, ը, ի, ո, ու, օ: Իսկ որոնք որ առանց ձայնաւորի իրենք իրենցմէ ձայն չեն կրնար հանել, Բաղաձայն կ'ըսուին, ինչպէս մնացածները:

Մեր լեզուի մէջ բանը կամ խօսքը ութը մաս ունի, որոնք են՝ Անուն, Դերանուն, Բայ, Ընդունելութիւն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ ու Միջարկութիւն: Որոնց վրայ կարգաւ պիտի խօսինք:

* Աս Օ ու Ֆ գրերը օտար լեզուէ առնուած են: Հիմակուան օ գրուածը առաջ աւ կը գրուէր: Իսկ ֆ՝ որն որ հիմայ օտար բառերու մէջ կը գործածուի, առաջ փ կը թարգմանուէր:

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԽՕՍՔԻ ՄԱՍԱՆՑ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

---

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

ԱՆՈՒՆԸ *խօսքի կամ գործածութեան մէջ տեսակ տեսակ կ'ըլլայ կամ կը փոխուի. ինչպէս* Բան, *կ'ըլլայ* բանի, ի բան, զբան, ի բանէ, զբանէ, բանիւ, զբանիւ, ի բանի, ո՜վ բան: Բանք, բանից, ի բանս, զբանս, ի բանից, զբանից, բանիւք, զբանիւք, ի բանս, ո՜վ բանք:

*Անուան ասանկ տեսակ տեսակ փոխուիլը՝* Հոլով *կ'ըսուի: Հոլովը կը նշանակէ անուան մը պէսպէս փոխուիլը՝ իր սկիզբն ու վերջը գիր աւելնալով. ու շատ անգամ ալ իր մէջէն ձայնաւոր գիր մը կորսընցընելով կամ փոխելով:*

*Մեր լեզուին մէջ աս հոլովները տասն են,* Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական, Պատմական, Գործիական, Պարառական, Ներգոյական, Կոչական:

*Երբ որ անուն մը՝ մէկ հատ բան կը ցուցընէ,* Եզակի *կ'ըսուի. երբ որ երկու երեք կամ շատ բան մէկէն կը ցուցընէ,* Յոգնակի *կ'ըսուի: Աս Եզակի ու Յոգնակի բաժնիս* Թիւ անուանց *(անուններուն թիւը) կ'անուանուի:*

*Թէպէտ անունները տասը հոլով ունին, բայց ամէն անուանց աս տասը հոլովները մէկ կերպով չեն, հապա զանազան կերպով: Անուանց ասանկ զատ տեսակ հոլովելը* Հոլովմունք անուանց *կ'ըսուի, ու կը նշանակէ անուններուն զատ զատ վերջաւորութեամբ փոխուիլը սեռականին ու գործիականին մէջ: Աս Հոլովմունքն ինն են. որոնց օրինակները հիմա կը սկսինք կարգաւ դնել:*

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

## ՀՈԼՈՎՄԱՆՑ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

---

### Առաջին հոլովման օրինակը.

Եզակի:

| | Գրաբառ. | Աշխարհաբառ. | Տաճկերէն. |
|---|---|---|---|
| Ուղ. | բան, | խօսք, | սէօզ. |
| Սեռ. | բանի, | խօսքին, | սէօզիւն. |
| Տր. | բանի,<br>ի բան*, | խօսքին, | սէօզէ. |
| Հայց. | զբան, | խօսքը, | սէօզիւ. |
| Բաց. | ի բանէ, | խօսքէն, | սէօզտէն. |
| Պատ. | զբանէ, | խօսքին վրայ, | սէօզտէն էօթիւրիւ.<br>մէօզիւն իւզէրինէ. |
| Գործ. | բանիւ, | խօսքով, | սէօզ իլէ. |
| Պար. | զբանիւ, | խօսքին բոլորտ. | սէօզիւն էթրաֆընտա. |
| Ներ. | ի բանի,<br>ի բան, | խօսքին մէջ, | սէօզտէ. |
| Կոչ. | ով բան, | ով խօսք, | եա սէօզ. |

Յոգնակի:

| | Գրաբառ. | Աշխարհաբառ. | Տաճկերէն. |
|---|---|---|---|
| Ուղ. | բանք, | խօսքեր, | սէօզլէր. |
| Սեռ. | բանից, | խօսքերուն, | սէօզլէրին. |
| Տր. | բանից,<br>ի բանս, | խօսքերուն, | սէօզլէրէ. |
| Հայց. | զբանս, | խօսքերը, | սէօզլէրի. |
| Բաց. | ի բանից, | խօսքերէն, | սէօզլէրտէն. |

* Տրականը երկու է. մէկը կ'ըսուի Վերջահոլով Տրական, ինչպէս բանին վերջահոլով տրականը կ'ըլլայ բանի. իսկ մէկալը կ'ըսուի Նախդրիւ Տրական, ինչպէս ի բան, եւայլն: Նոյնպէս ալ ներգոյականը: Տրականին վրայ ի գրէն զատ նախդիր կը գրուին նաեւ ասոնք ց, առ, ընդ, թէ բաղաձայն ու թէ ձայնաւոր գրով սկսած բառերուն վրայ: Երբ որ անուն մը ձայնաւոր գրով կը սկսի՝ ի չդրուիր, հապա յ կամ քիչ տեղ ի յ. զորօրինակ յարութեան կամ ի յարութեան: — Ասյին վրայ ըսածնիս՝ բացառական ու ներգոյական հոլովներուն վրայ ալ իմացիր. ինչպէս յերկրէ, ի յերկնից, յերկրի. եւայլն:

| | | | |
|---|---|---|---|
| Պատ. | զԲանից, | խօսքերուն վրայ, | սէօզլէրտէն էօթ-րիւ. |
| Գոր. | Բանիւք, | խօսքերով, | սէօզլէր իլէ. |
| Պար. | զԲանիւք, | խօսքերուն բոլոր-տիքը, | սէօզլէր էթրա-ֆընտա. |
| Ներ. | ի Բանս, | խօսքերուն մէջ, | սէօզլէրտէ. |
| Կոչ. | ով Բանք, | ով խօսքեր, | եա́ սէօզլէր: |

Ա՛ս հոլովման տակ կ'երթան շատ բառեր ալ, որոնց վերջի ձայնաւոր գիրը մինակ ա, է, ո, օ ըլլալուն համար ոչ գիր կը կորսնցնեն ու ոչ կը փոխեն*. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Արքայ, | քայի, | Թագաւոր, | փատիշահ. |
| Բանտ, | բանտի, | Բանտ, | զընտան. |
| Գան, | գանի, | Ծեծ, | քէօթէք. |
| Արուեստ, | ուեստի, | Արհեստ, | սէնաաթ. |
| Նետ, | նետի, | Նետ, | օգ. |
| Բողբոջ, | բոջի, | Ծիլ, | ֆիլիզ. |
| Տօն, | տօնի, | Տօն, | եօրթու, զիննէթ. |

Ե՛տեւի եկած բառերը վերջի եա, է, ու ձայնաւոր գրերնին կը կորսնցնեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Ատեան, | տե-նի, | Ատեան, | տիվան. |
| Վայրկեան, | կե-նի, | Ակնթարթ, | տագիգէ. |
| Սիրտ, | ս-րտի, | Սիրտ, | եիւրէք. |
| Օգուտ, | օգ-տի, | Օգուտ, | ֆայտա. |

Ե՛տեւի եկած բառերը իրենց է եւ ոյ ձայնաւոր գրերը ուրիշ ձայնաւորի մը հետ կը փոխեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Կէտ, | կիտի, | Կէտ, | նօգտա. |
| Հանդէս, | դիսի, | Հանդէս, | ալայ, զիննէթ. |
| Ողջոյն, | ջունի, | Բարեւ, | սէլամ. |

Անեզական:

Ա՛նեզական կ'ըսուին ան անուններն՝ որոնք եզակի չունին ու մինակ յոքնակի են. (թէպէտ մինակ մէկ բան նշանակեն.) ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Աղօթք, | աղօթից, | Աղօթք, | տուա. |
| Կրօնք, | կրօնից, | Կրօն, | մէզհէպ. |

* Աս բառերուս վրայ ետքը աս մասին յաւելուածին մէջ աւելի ընդարձակ կը խօսինք ու հարկաւոր կանոններ կը դնենք:

### Յատուկ անուանք:

Յատուկ կ'ըսուին այն անունները՝ որոնք միայն մէկ անձի մը կամ տեղւոյ մը որոշուած են. անոր համար ալ հասարակօրէն յոգնակի չունին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Եգիպտոս, | տոսի, | Եգիպտոս, Մըսըր. |
| Մովսէս, | սէսի կամ սիսի, | Մովսէս մարգարէ. |
| Սարգիս, | գ-սի, | Սուրբ Սարգիս մարտիրոս: |

---

### Երկրորդ հոլովման օրինակը:

#### Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. քաղաք, | քաղաք, | շէհիր. |
| Ս. քաղաքի, | քաղքին, | շէհիրին. |
| Տ. քաղաքի, ի քաղաք, | քաղքին, | շէհիրէ. |
| Հ. զքաղաք, | քաղաքը, | շէհիրի. |
| Բ. ի քաղաքէ, | քաղքէն, | շէհիրտէն. |
| Պ. զքաղաքէ, | քաղքէն վրայ, | շէհիրտէն էօթրիւ. |
| Գ. քաղաքաւ, | քաղքով, | շէհիր իլէ. |
| Պ. զքաղաքաւ, | քաղքին բոլորտիքը, | շէհիրին էթրաֆընտա. |
| Ն. ի քաղաքի, ի քաղաք, | քաղքին մէջ, | շէհիրտէ. |
| Կ. ով քաղաք, | ով քաղաք, | եա շէհիր. |

#### Յոգնակի:

| | | |
|---|---|---|
| Ո. քաղաքք, | քաղքըներ, | շէհիրլէր. |
| Ս. քաղաքաց, | քաղքըներուն, | շէհիրլէրին. |
| Տ. քաղաքաց, ի քաղաքս, | քաղքըներուն, | շէհիրլէրէ. |
| Հ. զքաղաքս, | քաղքըները, | շէհիրլէրի. |
| Բ. ի քաղաքաց, | քաղքըներէն, | շէհիրլէրտէն. |
| Պ. զքաղաքաց, | քաղքըներուն վրայ, | շէհիրլէրտէն էօթ. |
| Գ. քաղաքօք կամ քաւք, | քաղքըներով, | շէհիրլէր իլէ. |
| Պ. զքաղաքօք կամ քաւք, | քաղքըներուն բոլորտիքը, | շէհիրլէրին էթրաֆընտա. |
| Ն. ի քաղաքս, | քաղքըներուն մէջ, | շէհիրլէրտէ. |
| Կ. ով քաղաքք, | ով քաղքըներ, | եա շէհիրլէր: |

Այս հոլովման տակ կ'երթան շատ բառեր ալ, որոնց վերջի ձայնաւոր գիրը միայն ա, ե, ու, օ, ըլլալուն համար, ոչ գիր կը կորսնցընեն եւ ոչ գիր կը փոխեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Աւազան, | զանի, | աւազան, | հավուզ. |
| Բարեկամ, | կամի, | բարեկամ, | տօսթ. |
| Աշակերտ, | տի, | աշկերտ, | շագիրտ. |
| Ընկեր, | րի, | ընկեր, | պայտաշ. |
| Ջինուոր, | րի, | զինուոր, | ճէնքճի. |
| Թագաւոր, | րի, | թագաւոր, | փատիշահ. |
| Լեզու, | զուի, | լեզու, | տիլ, լիսան. |
| Մեղու, | ղուի, | մեղու, | արը. |

Նաեւ եկած բառերը իրենց եա, է, ու, ձայնաւոր գրերը կը կորսնցընեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Ահեակ, | ահե-կի, | ձախ, | սօլ. |
| Որդեակ, | որդե-կի, | զաւակ, | օղուլ. |
| Սենեակ, | սենե-կի, | խուց, | օտա. |
| Գրիչ, | գր-չի, | գրիչ, | գալէմ. |
| Մրրիկ, | մրր-կի, | մրրիկ, | գայ. |
| Բազում, | բազ-մի, | շատ, | չօգ. |

Նաեւ եկած բառերն իրենց ետքի է, ոյ, իւ ձայնաւորները կը փոխեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Մէգ, | միգի, | մշուշ, | տիւման. |
| Պարտէզ, | տիզի, | պարտէզ, | պաղչէ. |
| Հողեղէն, | ղէնի, | հողէ, | թօփրագտան. |
| Ոսկեղէն, | ղէնի, | ոսկէ, | ալթընտան. |
| Խարոյկ, | րու-կի, | խարոյկ, | աթէշ. |
| Հովիւ, | հովու-ի, | հովիւ, | չօպան. |

Անեզականք:

| | | | |
|---|---|---|---|
| Կամք, | կամաց, | կամք, | կէօնիւլ. |
| Կերպարանք, | րանաց, | երես, | սիւրէթ. |
| Միտք, | մ-տաց, | միտք, | ֆիքր. |

Յատուկ անուանք:

| | | | |
|---|---|---|---|
| Հնդիկ, | Հնդ-կի, | Հնդկաց, | Հինտիսթանլը. |
| Պարսիկ, | Պարս-կի, | Պարսիկ, | Աճէմ. |

---

Երրորդ հոլովման օրինակը:

Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. գետ, | գետ, | չայ. |
| Ս. գետոյ, | գետին, | չայըն. |
| Տ. գետոյ, | գետին, | չայա. |
| ի գետ, | | |
| Հ. զգետ, | գետը, | չայը. |
| Բ. ի գետոյ, | գետէն, | չայտան. |
| Պ. զգետոյ, | գետին վրայ, | չայտան էօթրիւ. |
| Գ. գետով, | գետով, | չայ ըլա. |
| Պ. զգետով, | գետին բոլորտիքը, | չայըն էթրաֆընտա. |
| Ն. ի գետ, | գետին մէջ, | չայտա. |
| Կ. ով գետ, | ով գետ, | եա չայ. |

Յոգնակի:

| | | |
|---|---|---|
| Ո. գետք, | գետեր, | չայլար. |
| Ս. գետոց, | գետերուն, | չայլարըն. |
| Տ. գետոց, | գետերուն, | չայլարա. |
| ի գետս, | | |
| Հ. զգետս, | գետերը, | չայլարը. |
| Բ. ի գետոց, | գետերէն, | չայլարտան. |
| Պ. զգետոց, | գետերուն վրայ, | չայլարտան էօթ. |
| Գ. գետովք, | գետերով, | չայլար ըլա. |
| Պ. զգետովք, | գետերուն բոլոր. | չայլարըն էթրա. |
| Ն. ի գետս, | գետերուն մէջ, | չայլարտա. |
| Կ. ով գետք, | ով գետեր, | եա չայլար: |

Ա.ս հոլովման տակ կ'երթան շատ բառեր ալ, որոնց վերջի ձայնաւոր գիրը մինակ ա, ե, ո, օ ըլլալուն համար ոչ գիր կը կորսնցընեն եւ ոչ կը փոխեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Բերան, | նոյ, | բերան, | աղըզ. |
| Երկաթ, | թոյ, | երկաթ, | տէմիր. |
| Տղայ, | այոյ, | տղայ, | չօճուգ. |
| Դեղ, | ղոյ, | դեղ, | իլաճ. |
| Ծեր, | րոյ, | ծեր, | իխթիյար. |
| Տերեւ, | եւոյ, | տերեւ, | եափրագ. |
| Գործ, | ծոյ, | գործ, | իշ. |
| Խոտ, | տոյ, | խոտ, | օթ. |

Հոտ, տոյ, հոտ, գօգու.
Ամօթ, թոյ, ամօթ, այըպ.
Ցօղ, ղոյ, ցօղ, չիհ, սէրփինթի.

Ետքի եկած բառերն իրենց եա, է, ու ձայնաւոր գրերը կը կորսընցընեն. ինչպէս,

Առաքեալ, առաքե-լոյ, առաքեալ, րէսիւլ.
Սեաւ, սե-ւոյ, սեւ, սիյահ.
Մարմին, մարմ-նոյ, մարմին, թէն.
Ծծումբ, ծծ-մբոյ, ծծումբ, քիւքիւրթ.
Խունկ, խ-նկոյ, խունկ, քիւննիւք.
Ծուխ, ծ-խոյ, ծուխ, թիւթիւն.

Ետեւի եկած բառերն իրենց է, ոյ, իւ, ձայնաւոր գրերն ուրիշ ձայնաւորի մը հետ կը փոխեն. ինչպէս,

Էշ, իշոյ, էշ, էշէք.
Սէր, սիրոյ, սէր, մուհապպէթ.
Յոյս, յուսոյ, յոյս, ումուտ.
Թիւ, թուոյ, համրանք, սայը.
Պատիւ, պատուոյ, պատիւ, իզզէթ.

Անեզականք:

Դժոխք, խոց, դժոխք, ճէհէննէմ.
Գինք, գ-նոց, գին, փահա.
Կուռք, կ-ռոց, կուռք, փութ.

Յատուկ անուանք:

Աստուածատուր, Աստուածատ-րոյ, Թէոդորոս մին է.
Հայք, Հայոց, Հայոց ազգը կամ երկիրը.

Աս հոլովման տակ գացող անուններուն ոմանց եզակի տրականն ու ներգոյականը շատ անգամ ամ կ'ըլլայ, մանաւանդ են, եալ վերջաւորողներուն. ինչպէս, վերին, վերնամ. յետին, յետնամ. գրեցեալ, գրեցելամ. ի սրբամ:

Երբեմն ասոր պէս հոլոված անուններուն սեռականն ու բացառականն առջի կամ երկրորդ հոլովման պէս ալ կ'ըլլայ. զոր օրինակ, պատիժ, պատժոյ կամ պատժի. Թուղթ, Թղթոյ կամ Թղթի, ի Թղթէ. Թեւ, Թեւոյ կամ Թեւի, ի Թեւէ:

Չորրորդ հոլովման օրինակը։

Եզակի։

Ո. Եկեղեցի, ժամ, էկէղէցի, քիլիսէ.
Ս. Եկեղեցւոյ*, ժամին, քիլիսէնին.
Տ. Եկեղեցւոյ, ժամին, քիլիսէյէ.
յեկեղեցի,
Հ. զեկեղեցի, ժամը, քիլիսէյի.
Բ. յեկեղեցւոյ, ժամէն, քիլիսէտէն.
Պ. զեկեղեցւոյ, ժամին վրայ, քիլիսէտէն էօ.
Գ. Եկեղեցեաւ, ժամով, քիլիսէ իլէ.
Պ. զեկեղեցեաւ, ժամին բոլորտիքը, քիլիսէնին էթր.
Ն. յեկեղեցւոջ, ժամին մէջ, քիլիսէտէ.
յեկեղեցի,
Կ. ո՛վ Եկեղեցի, ո՛վ ժամ, եա՛ քիլիսէ.

Յոգնակի։

Ո. Եկեղեցիք, ժամեր, քիլիսէլէր.
Ս. Եկեղեցեաց, ժամերուն, քիլիսէլէրին.
Տ. Եկեղեցեաց, ժամերուն, քիլիսէլէրէ.
յեկեղեցիս,
Հ. զեկեղեցիս, ժամերը, քիլիսէլէրի.
Բ. յեկեղեցեաց, ժամերէն, քիլիսէլէրտէն.
Պ. զեկեղեցեաց, ժամերուն վրայ, քիլիսէլէրտէն էօթ.
Գ. Եկեղեցեօք ժամերով, քիլիսէլէր իլէ.
կամ եաւք,
Պ. զեկեղեցեօք ժամերուն բոլոր. քիլիսէլէրին էթ.
կամ եաւք,
Ն. յեկեղեցիս, ժամերուն մէջ, քիլիսէլէրտէ.
Կ. ո՛վ Եկեղեցիք, ո՛վ ժամեր, եա՛ քիլիսէլէր։

Ա՛ս հոլովման տակ կ՚երթան ամէն հասարակ բազմավանկ անունները, որոնք ի կը վերջաւորին. ինչպէս,

Բարի, բարւոյ, աղէկ, էյի.
Գինի, գինւոյ, գինի, շարապ.
Գօտի, գօտւոյ, գօտի, գուշագ.
Կղզի, կղզւոյ, կղզի, ատա.

* Այսոց եզակի սեռականն ու բացառականն երբեմն կրնայ առանց ւ գրի գրուիլ. այսպէս, էկէղէցոյ, աղւոյոյ, ճշմարտոյ։
Տրականը քիչ տեղ ոջ կ՚ըլլայ եւ անկէց բացառականն ալ կրնայ ոջէ ըլլալ. ինչպէս, ի տեղւոջէ, ի տուոջէ։

Կան բառեր որ երկրորդ հոլովման նման կը հոլովին, այսինքն –ոյ, –ով, –ոց, –ովք: Այսպէս են նաեւ –ացի, եցի վերջաւորածները.

Հոգի, գւոյ, գւով, գւոց, գւովք. հոգի. Ճան.
Որդի, դւոյ, դւով, դւոց, դւովք. որդի. Էվլատ.
Հռոմայեցի, ցւոյ, ցւով, ցւոց. հռոմայեցի. Րումլը.
Փարիսեցի, ցւոյ, ցւով, ցւոց. փարիսեցի. Փարիսի.
Աթենացի, ցւոյ, ցւով, ցւոց, աթենացի. աթինալը.

Անեղականք:

ընթրիք, ընթրեաց, իրիկուան հաց, ագշամ եէմէյի.
կարծիք, կարծեաց, կարծիք, թահմին.

---

Հինգերորդ հոլովման օրինակը:

Եզակի:

Ո. Զգեստ, հագուստ, էսպապ.
Ս. Զգեստու, հագուստին, էսպապըն.
Տ. Զգեստու, հագուստին, էսպապա.
ի զգեստ,
Հ. զԶգեստ, հագուստը, էսպապը.
Բ. ի Զգեստէ, հագուստէն, էսպապտան.
Պ. զԶգեստէ, հագուստէն վրայ, էսպապտան էօ.
Գ. Զգեստու, հագուստով, էսպապ ըլա.
Պ. զԶգեստու, հագուստին բոլ. էսպապըն էթր.
Ն. ի Զգեստու, հագուստին մէջ. էսպապտա.
ի զգեստ,
Կ. ով Զգեստ, ով հագուստ, եա էսպապ.

Յոգնակի:

Ո. Զգեստք, հագուստներ, էսպապլար.
Ս. Զգեստուց, հագուստներուն, էսպապլարըն.
Տ. Զգեստուց, հագուստներուն, էսպապլարա.
ի զգեստս,
Հ. զԶգեստս, հագուստները, էսպապլարը.
Բ. ի Զգեստուց, հագուստներէն, էսպապլարտան.
Պ. զԶգեստուց, հագուստներուն վր. էսպապլարտան էօ.
Գ. Զգեստուք, հագուստներով, էսպապլար ըլա.
Պ. զԶգեստուք, հագուստներուն բոլորտիքը. էսպապլարըն էթրաֆընտա.

Ն. ի Զգեստս, հագուստներուն էսպապլարտա.
ՃԶ,
Կ. ո՛վ Զգեստք, ո՛վ հագուստներ, եա՛ էսպապլար:

Այս հոլովման տակ կ՚երթան նաեւ բառերն ալ, որոնցմէ ոմանք ոչ գիր կը կորսնցընեն ու ոչ կը փոխեն. ոմանք կը փոխեն ու ոմանք ալ կը կորսնցընեն. ինչպէս,

| | | | |
|---|---|---|---|
| Առաւօտ, | տու, | առաւօտ, | սապահ. |
| Ժամ, | ժամու, | ժամ, | սաաթ. |
| Ծով, | ծովու, | ծով, | տէնիզ. |
| Սով, | սովու, | սով, | գըթլըղ. |
| Աղուէս, | ուէսու կամ ուեսու, | աղուէս, | թիլքի. |
| Ինձ, | ընձու, | ինձ, | գափլան. |
| Զէն, | զինու, | զէն, | սիլահ. |
| Ցուլ, | ցլու, | ցուլ, | պուղա. |

Կան բառեր ալ, որոնց բացառականն ալ կ՚ըլլայ. ինչպէս,

Զարդ կամ Արդ, ու, ի զարդուէ, զարդ, տիւզէն.
Խրատ, խրատու, ի խրատուէ, խրատ, էօյիւտ.
Սպաս, սպասու, ի սպասուէ, ծառայ- խըզմէթ.
ութիւն,
Նախանձ, ձու, ի Նախանձուէ, նախանձ, գըսգանճլըգ.
Ասր, ասու, յասուէ, բուրդ, եափաղը.
Զօր, զօրու, ի զօրուէ, զօրաց,
զօրաւք կամ զօրօք, զօր, ասքէր.

Անեզական:

Բարք, բարուց, բարք, թապիէթ.
Պարտք, պարտուց, պարտք, պօրճ.

Յատուկ անուանք:

Աբրահամ, մու, մաւ, Աբրահամ նահապետ.
Ղուկաս, սու, Ղուկաս աւետարանիչ.

Այս հոլովման եզականին նման կը հոլովին նաեւ քանի մը ածական անուններ, որոնց օրինակն այսպէս է.

| Եզակի: | Յոգնակի: |
|---|---|
| Ո. փոքր, պզտիկ, քիւչիւք. | փոքունք*. |
| Ս. փոքու, | փոքունց. |

* Որոնց որ վերջի ձայնաւոր գիրն ը է (որ ներգործութեամբ

| | |
|---|---|
| Տ. փղքու, ի փղքր, | փղքունց, ի փղքունս. |
| Հ. զփղքր, | զփղքունս. |
| Բ. ի փղքուէ, | ի փղքունց. |
| Պ. զփղքուէ, | զփղքունց. |
| Գ. փղքու, | փղքումբք. |
| Պ. զփղքու, | զփղքումբք. |
| Ն. ի փղքու, ի փղքր, | ի փղքունս. |
| Կ. ով փղքր, | ով փղքունք. |

Մանր, մանու, նունք, ունց, ումբք, մանր, ուֆագ:
Ծանր, ծանու, ծանունք, ունց, ուք, ծանր, աղըր:

---

Վեցերորդ հոլովման օրինակը:

Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. Հիմն, | հիմ, | թէմէլ. |
| Ս. Հիման, | հիմին, | թէմէլին. |
| Տ. Հիման, ի հիմն, | հիմին, | թէմէլէ. |
| Հ. զհիմն, | հիմը, | թէմէլի. |
| Բ. ի հիմանէ, | հիմէն, | թէմէլտէն, |
| Պ. զհիմանէ, | հիմին վրայ, | թէմէլտէն էօթ. |
| Գ. Հիմամբ, | հիմով, | թէմէլ իլէ. |
| Պ. զհիմամբ, | հիմին բոլորտիքը, | թէմէլին էթր. |
| Ն. ի հիման, ի հիմն, | հիմին մէջ, | թէմէլտէ. |
| Կ. ով հիմն, | ով հիմ, | եա թէմէլ. |

Յոգնակի:

| | | |
|---|---|---|
| Ո. Հիմունք, | հիմեր, | թէմէլլէր. |
| Ս. Հիմանց, | հիմերուն, | թէմէլլէրին. |
| Տ. Հիմանց, | հիմերուն, | թէմէլլէրէ. |
| ի հիմունս, | | |
| Հ. զհիմունս, | հիմերը, | թէմէլլէրի. |
| Բ. ի հիմանց, | հիմերէն, | թէմէլլէրտէն. |
| Պ. զհիմանց, | հիմերուն վրայ, | թէմէլլէրտէն էօ. |
| Գ. Հիմամբք, | հիմերով, | թէմէլլէր իլէ. |
| Պ. զհիմամբք. | հիմերուն բոլորը. | թէմէլլէրին էթ. |
| Ն. ի հիմունս, | հիմերուն մէջ. | թէմէլլէրտէ. |
| Կ. ով հիմունք, | ով հիմեր, | եա թէմէլլէր: |

չիգրուիր), մինակ + գնելով յոգնակի չեն ըլլար. Հապա ամբողջ վանկով, ինչպէս աս օրինակէն ու ետեւի եկածներէն կ'երեւայ:

Ասոր տակ գացողները հասարակօրէն ն կը վերջաւորին. ինչպէս,

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արեգակն, | գական, | գակունք, | արեւ, | կիւնէշ. |
| Սերմն, | սերման, | սերմանք, | սերմ, | թօհում. |
| Անուն, | անուան, | անուանք, | անուն, | ատ, իսմ. |
| Տուն, | տան, | տունք, | տուն, | էվ. |
| Շուն, | շան, | շունք, | շուն, | քէօփէք. |
| Դուռն, | դ-րան, | դ-րունք, | դուռ, | գափու. |
| Շուրթն, | շ-րթան, | շ-րթունք, | շրթունք, | տուտագ. |
| Խոստումն, | խոստ-ման, | խոստ-մունք, | խոստում, | իգրար. |
| Քիրտն, | ք-րտան, | քրտունք, | քրտինք, | թէր. |

Ասոր նման կը հոլովին ամէն ութիւն վերջաւորուած գոյականներն եւ ուրիշ մէկ քանի անուններ. ինչպէս,

| Եզակի: | Յոգնակի: |
|---|---|
| Ո. Նեղութիւն, նեղութիւն. | Նեղութիւնք. |
| Ս. Նեղութեան, | Նեղութեանց. |
| Տ. Նեղութեան, ի Նեղութիւն, | Նեղութեանց, ի Նեղութիւնս. |
| Հ. զՆեղութիւն, | զՆեղութիւնս. |
| Բ. ի Նեղութենէ, | ի Նեղութեանց. |
| Պ. զՆեղութենէ, | զՆեղութեանց. |
| Գ. Նեղութեամբ, | Նեղութեամբք. |
| Պ. զՆեղութեամբ, | զՆեղութեամբք. |
| Ն. ի Նեղութեան, | ի Նեղութիւնս. |
| Կ. ով Նեղութիւն, | ով Նեղութիւնք. |

Իմաստութիւն, թեան, թենէ, իմաստութիւն, իլիմ.
Արիւն, արեան, րենէ, արիւն, գան.
Ջիւն, ձեան, ձեանէ, ձիւն, գար.
Սիւն, սեան, սեանէ, սիւն, տիրէք.
Ժողովուրդ, վ-րդեան, վ-րդենէ, վուրդք, վ-րդոց, վ-րդովք. } ժողովուրդ, ճէմաաթ.
Ծնունդ, ծն-նդեան, ի ծն-նդենէ, ծնունդք, ծննդոց, ծննդովք. } ծնունդ, տօղուշ.

---

### Եօթներորդ հոլովման օրինակը:

Եզակի:

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գառն, | գառ, | գուզու. |
| Ս. | Գառին, | գառին, | գուզունուն. |
| Տ. | Գառին, <br> ի գառն, | գառին, | գուզույա. |
| Հ. | զԳառն, | գառը, | գուզույու. |
| Բ. | ի Գառանէ, | գառէն, | գուզուտան. |
| Պ. | զԳառանէ, | գառին վրայ, | գուզուտան էօ. |
| Գ. | Գառամբ, | գառով, | գուզույլա. |
| Պ. | զԳառամբ, | գառին բոլորը. | գուզունուն էթ. |
| Ն. | ի Գառին, <br> ի գառն, | գառին մէջ, | գուզուտա. |
| Կ. | ո՛վ Գառն, | ո՜վ գառ, | եա՛ գուզու. |

Յոգնակի:

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գառինք, | գառեր, | գուզուլար. |
| Ս. | Գառանց, | գառերուն, | գուզուլարըն. |
| Տ. | Գառանց, <br> ի գառինս, | գառերուն, | գուզուլարա. |
| Հ. | զԳառինս, | գառերը, | գուզուլարը. |
| Բ. | ի Գառանց, | գառերէն, | գուզուլարտան. |
| Պ. | զԳառանց, | գառերուն վրայ, | գուզուլարտան էօ. |
| Գ. | Գառամբք, | գառերով, | գուզուլար ըլա. |
| Պ. | զԳառամբք, | գառերուն բոլորը. | գուզուլարըն էթ. |
| Ն. | ի Գառինս, | գառերուն մէջ, | գուզուլարտա. |
| Կ. | ո՛վ Գառինք, | ո՜վ գառեր, | եա՛ գուզուլար: |

Ա՛ս հոլովման տակ կ՚երթան ետեւի բառերն ալ.

Եզն, եզին, յեզանէ, եզինք, եզ, էօքիւզ:

Լեառն, լերին, ի լեռնէ, լերինք, լերանց, լերամբք, } լեռ, տաղ:

Հարսն, հարսին, ի հարսնէ, հարսունք, հարսանց, հարսամբք, } հարս, կէլին:

Մասն, մասին, ի մասնէ, մասունք, մասանց, մասամբք, } մաս, կտոր, հիսսէ, փայ:

Մատն, մատին, ի մատանէ, մատունք, մատանց, մատամբք, } մատ, պարմագ:

Յոգնակիի մէջ կը զարտուղին՝

Ձեռն, ձեռին, ի ձեռանէ,
ձեռք, ձեռաց, ձեռօք կամ ձեռաւք, } ձեռք, էլ:

Ոտն, ոտին, յոտանէ,
ոտք, ոտից, ոտիւք, } ոտք, այագ:

---

Ութերորդ հոլովման օրինակը:

Եզակի:

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկր, | ոսկր, | քէմիք. |
| Ս. | Ոսկեր, | ոսկրին, | քէմիյին. |
| Տ. | Ոսկեր, յոսկր, | ոսկրին, | քէմիյէ. |
| Հ. | զՈսկր, | ոսկրը, | քէմիյի. |
| Բ. | յՈսկերէ, | ոսկրէն, | քէմիքտէն. |
| Պ. | զՈսկերէ, | ոսկրին վրայ, | քէմիքտէն էօթ. |
| Գ. | Ոսկերբ, | ոսկրով, | քէմիք իլէ. |
| Պ. | զՈսկերբ, | ոսկրին բոլորտիքը, | քէմիյին էթր. |
| Ն. | յՈսկեր, յոսկր, | ոսկրին մէջ, | քէմիքտէ. |
| Կ. | ո՜վ Ոսկր, | ո՜վ ոսկր, | եա քէմիք. |

Յոգնակի:

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկերք, | ոսկրներ, | քէմիքլէր. |
| Ս. | Ոսկերց կամ ոսկերաց, | ոսկրներուն, | քէմիքլէրին. |
| Տ. | Ոսկերց կամ ոսկերաց, յոսկերս, | ոսկրներուն, | քէմիքլէրէ. |
| Հ. | զՈսկերս, | ոսկրները, | քէմիքլէրի. |
| Բ. | յՈսկերց կամ յոսկերաց, | ոսկրներէն, | քէմիքլէրտէն. |
| Պ. | զՈսկերց կամ զոսկերաց, | ոսկրներուն վրայ, | քէմիքլէրտէն էօ. |
| Գ. | Ոսկերբք կամ րօք, աւք, | ոսկրներով, | քէմիքլէր իլէ. |
| Պ. | զՈսկերբք կամ կերօք, րաւք, | ոսկրներուն բոլ. | քէմիքլէրին էթ. |
| Ն. | յՈսկերս, | ոսկրներուն մէջ, | քէմիքլէրտէ. |
| Կ. | ո՜վ Ոսկերք, | ո՜վ ոսկրներ, | եա քէմիքլէր: |

Ա՛ս հոլովման տակ կ՚երթան ետեւի բառերն ալ:

Կայսր, կայսեր, ի կայսերէ, կայսերք, } կայսր·
կայսերաց, կայսերօք կամ կայսերաւք, } չէզար·
Տարր, տարեր, ի տարերէ, տարերք, } տարր·
տարերաց, տարերօք կամ րաւք, } ճօնսիւր:
Աղբեւր կամ աղբիւր, աղբեր, յաղբերէ, } աղբիւր·
աղբիւրք կամ աղբերք, երաց, րօք կամ րաւք, } պունար:
Աստղ, աստեղ, յաստեղէ, աստեղք, } աստղ·
աստեղաց, աստեղօք կամ ղաւք, } երլտըզ:

---

Իններորդ հոլովման օրինակը:

Իններորդ հոլովումը Յատուկ անուանք են, (տես երես 5.) որոնք (բաց ի իւրաքանչիւր հոլովմանց տակը գացողներէն,) երկու կերպով կը հոլովին, սեռականը ոյ կամ եայ, ու գործիականն ով կամ եաւ վերջաւորելով*. ինչպէս,

Ո. Տրդատ.
Ս. Տրդատայ.
Տ. Տրդատայ, առ Տրդատ.
Հ. զՏրդատ.
Բ. ի Տրդատայ.
Պ. զՏրդատայ.
Գ. Տրդատաւ.
Պ. զՏրդատաւ.
Ն. ի Տրդատ.
Կ. ով Տրդատ.
} Հայոց սուրբ Թագաւոր մըն է:

Հայկ, Հայկայ. Հայոց ազգին նահապետը կամ գլուխը:
Հռոմ, Հռոմայ. Հռոմ քաղաքը:
Մեսրոպ, պայ, պաւ. Մեսրոպ վարդապետը:
Սահակ, կայ, կաւ. Սահակ պարթեւ հայրապետը:

Ո. Հռիփսիմէ,
Ս. Հռիփսիմեայ.
Տ. Հռիփսիմեայ, առ Հռիփսիմէ.
Հ. զՀռիփսիմէ.
} Հռոմայեցի սուրբ կոյս մըն է, որ Հայաստան մարտիրոս եղաւ:

* Յատուկ անուանց յոգնականը՝ թէ որ պէտք ըլլայ, մէյ մը կը բանի ք աւելցընելով Հասարակ անուանց պէս, ինչպէս Յովսէփք, Սիմոնեանց, եւ այլն: Մէյ մ'ալ եանք կամ անք մասնիկ աւելցընելով՝ Ներսէսեանք, Ներսէսեանց:

Բ. ի Հռիփսիմեայ.
Պ. զՀռիփսիմեայ.
Գ. Հռիփսիմեաւ
Պ. զՀռիփսիմեաւ.
Ն. ի Հռիփսիմէ.
Կ. ով Հռիփսիմէ.

} Հռոմայեցի սուրբ կոյս մըն է, որ Հայաստան մարտիրոս եղաւ։

Եսայի, այեայ, եաւ. Եսայի մարգարէ։
Հեղինէ, նեայ, նեաւ. Մեծին Կոստանդիանոսի մայրը։

---

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### Ա. Այր, երէց մարդ, էր, քիշի.

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո. | Այր, | Արք. |
| Ս. | Առն, | Արանց. |
| Տ. | Առն, առ այր, | Արանց, առ արս. |
| Հ. | զԱյր, | զԱրս. |
| Բ. | յԱռնէ, | յԱրանց. |
| Պ. | զԱռնէ, | զԱրանց. |
| Գ. | Արամբ, | Արամբք. |
| Պ. | զԱրամբ, | զԱրամբք. |
| Ն. | յԱռն, յայր, | յԱրս. |
| Կ. | ով Այր, | ով Արք. |

Այսպէս կը հոլովին նաեւ

Տէր, տեառն, ի տեառնէ, տերամբ, տեարք, տեարց կամ տերանց, տերամբք, } տէր, սահապ, աղա։
Պարտատէր, տեառն, առնելիք ունեցող, պօրճ սահապը։
Տանուտէր, տեառն, տանտէր, էվ սահապը։

### Բ. Հայր, հայր, փէտէր.

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո. | Հայր, | Հարք. |
| Ս. | Հօր կամ հաւր, | Հարց կամ հարանց. |
| Տ. | Հօր կամ հաւր, առ հայր, | Հարց կամ հարանց, առ հարս. |
| Հ. | զՀայր, | զՀարս. |
| Բ. | ի Հօրէ կամ ի հաւրէ, | ի Հարց կամ ի հարանց. |
| Պ. | զՀօրէ կամ զհաւրէ, | զՀարց կամ զհարանց. |

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библ.
7/XI 1922
Ա. ՄԱՍՆԻԿԵԱՆԻ ԱՆՎԱՆ
1917-59
T6430

Գ. Հարբ, Հարբք.
Պ. զՀարբ, զՀարբք.
Ն. ի Հօր կամ ի հաւր, ի Հարս.
Կ. ով Հայր, ով Հարք.

Այսպէս կը հոլովին նաեւ

Մայր, մօր կամ մաւր, մայր, անա.
Եղբայր, եղբօր կամ եղբաւր, եղբայր, գարտաշ.

Գ. Քոյր, քոյր, գըզգարտաշ.

Եզակի: Յոգնակի:

Ո. Քոյր, Քորք.
Ս. Քեռ, Քերց.
Տ. Քեռ, առ քոյր, Քերց, առ քորս.
Հ. զՔոյր, զՔորս.
Բ. ի Քեռէ, ի Քերց.
Պ. զՔեռէ, զՔերց.
Գ. Քերբ, Քերբք.
Պ. զՔերբ, զՔերբք.
Ն. ի Քեռ, ի քոյր, ի Քորս.
Կ. ով Քոյր, ով Քորք.

Այսպէս կը հոլովին նաեւ

Հօրաքոյր, քեռ, հօրքոյր, հալա.
Մօրաքոյր, քեռ, մօրքոյր, թէյզէ.

Դ. Կին, կին, գարը.

Եզակի: Յոգնակի:

Ո. Կին, կանայք.
Ս. Կնոջ, կանանց կամ կանաց.
Տ. Կնոջ, առ կին, կանանց, առ կանայս.
Հ. զԿին, զԿանայս.
Բ. ի Կնոջէ, ի Կանանց կամ ի կանաց.
Պ. զԿնոջէ, զԿանանց կամ զկանաց.
Գ. Կանամբ կամ կնաւ, Կանամբք.
Պ. զԿանամբ կամ զկնաւ. զԿանամբք.
Ն. ի Կնոջ, ի կին, ի Կանայս.
Կ. ով Կին, ով Կանայք.

Այսպէս կը հոլովին նաեւ

Տիկին, տիկնոջ, ի տիկնոջէ, տիկնամբ կամ տիկնաւ, տիկնայք, տիկնաց, տիկնամբք. } խաթուն, հանըմ:

Առնակին, առնակնոջ, կարգուած կին, էրլի:

Ե. Գիւղ, գեղ, քէօյ.

| Եզակի: | Յոգնակի: |
|---|---|
| Ո. Գեղ կամ գիւղ կամ գեւղ, | Գեղք կամ գիւղք. |
| Ս. Գեղջ, | Գիւղից. |
| Տ. Գեղջ, ի գիւղ, | Գիւղից, ի գիւղս. |
| Հ. զԳիւղ, | զԳիւղս. |
| Բ. ի Գեղջէ, | ի Գիւղից. |
| Պ. զԳեղջէ, | զԳիւղից. |
| Գ. Գիւղիւ, | Գիւղիւք. |
| Պ. զԳիւղիւ, | զԳիւղիւք. |
| Ն. ի Գեղջ, ի գիւղ, | ի Գիւղս. |
| Կ. ով Գիւղ, | ով Գիւղք. |

Զ. Օր կամ Աւր, օր. կիւն.

| Եզակի: | Յոգնակի: |
|---|---|
| Ո. Օր կամ աւր, | |
| Ս. Աւուր, | Աւուրք. |
| Տ. Աւուր, յօր կամ յաւր, | Աւուրց. |
| Հ. զՕր կամ զաւր, | Աւուրց, յաւուրս. |
| Բ. յՕրէ կամ յաւրէ, | զԱւուրս. |
| Պ. զՕրէ կամ զաւրէ, | յԱւուրց. |
| Գ. Աւուրբ, | Աւուրբք. |
| Պ. զԱւուրբ, | զԱւուրբք. |
| Ն. յԱւուր, յօր կամ յաւր, | յԱւուրս. |
| Կ. ով Օր կամ աւր, | ով Աւուրք. |

Այսպէս կը հոլովին նաեւ

Կէսօր, աւուր, } օրհասարակ.
Հասարակօր, աւուր, } էօյլէն:

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

Խօսեցանք ընդհանրապէս անուանց հոլովելուն վրայ, երբ որ խօսքին մէջ մինակ բանելու ըլլան։ Բայց կը գտնուի շատ տեղ ալ, որ երկու անուն քովէ քով կու գան ու այնպէս կը հոլովին. ինչպէս, ծանր բեռ, աղուոր ձեռք. անուշ ջուր, [illegible] [illegible]. աղէկ մարդ, [illegible] [illegible], եւ այլն։

Հիմայ տեսնենք թէ անուններն այսպէս քովէ քով գալու ըլլան նէ՝ ինչպէս պիտի հոլովին։

Երբ որ այսպէս երկու անուն քովէ քով գալու ըլլան, մէկը Ածական կ'ըսուի ու մէկալը Գոյական։

Գոյական կ'ըսուի ան անունը, որ ինք իրեն գոյող կամ եղած բան մը կը նշանակէ, ու մինակ կրնայ կենալ. ինչպէս վերի օրինակներուն մէջ բեռ, մարդ, ջուր։

Ածականն ինք իրեն գոյող բան մը չի նշանակեր ու մինակ չիկրնար կենալ, հապա ուրիշ ինք իրեն գոյողի այս ինքն գոյականի մը կարօտութիւն ունի. ինչպէս վերի օրինակներուն մէջ ծանր, անուշ, աղէկ։

Թէ ո՛րն է ածական ու ո՛րն է գոյական՝ որոշելու դիւրին ճամբան աս է։ Ա՛ն բառն՝ որուն քով որ բան, մը գոյականը կրնայ դրուիլ՝ ածական է. իսկ որուն քով որ չիկրնար դրուիլ՝ գոյական է։ Ջուր բան, [illegible] մը, չ'ըսուիր, ուրեմն ջուր գոյական է. ծանր, թեթեւ բան, աղուոր, [illegible] մը կ'ըսուի. ասանկ է նէ ծանր ու թեթեւ ածական են։ Այսպէս իմացիր ամէն անունն ալ։

Որպէս զի տղաք աղէկ մը հասկընան ածականին ու գոյականին սահմանը, թող վարպետն աշկերտներուն տեսակ տեսակ անուններ հարցընէ, որ լեզուաւ որ տղաք աղէկ գիտեն ու կը հասկընան, որ իրենք իրենցմէ գտնեն թէ ո՛րն է գոյականն ու ո՛րն է ածականը։ Եթէ որ տղաք առջի բերան սխալելու ըլլան, ինչպէս շատ անգամ կը պատահի, վարպետին շտկելն աւելի աղէկ կը հասկըցընէ, քան թէ մեր երկայն երկայն սահմանը մէկնելը։

Աշխարհաբառ ու տաճկերէն լեզուի մէջ ածականը գոյականէն միշտ յառաջ կը դրուի ու ամենեւին չի հոլովիր. ինչպէս.

կարմիր խնձոր, Գըրմըզը էլմա.
կարմիր խնձորին, Գըրմըզը էլմանըն.
կարմիր խնձորին, Գըրմըզը էլմայա.
կարմիր խնձորը, Գըրմըզը էլմայը.
կարմիր խնձորէն, Գըրմըզը էլմատան.
կարմիր խնձորով, Գըրմըզը էլմայըլա:

Չ'ըսուիր խնձոր կարմիր, էլմա գըրմըզը. եւ ոչ ալ ածականը կրնայ հոլովել՝ կարմիրը խնձորը, կարմիրէն խնձորէն. գըրմըզըյը էլմայը, գըրմըզըտան էլմատան:

Նայց գրաբառ ածականը գոյականէն թէ յառաջ ու թէ ետքը կրնայ դրուիլ (թէպէտ աւելի գոյականէն յառաջ կը դրուի):

Եւ է որ յառաջ դրուելու ըլլայ, հասարակօրէն նախդրիւ կը հոլովի. այսպէս.

Եզակի:

Ո. վայրենի ծառ, Եապանի աղաճ.
Ս. վայրենի ծառոյ, Եապանի աղաճըն.
Տ. վայրենի ծառոյ, Եապանի աղաճա.
ի վայրենի ծառ,
Հ. զվայրենի ծառ, Եապանի աղաճը.
Բ. ի վայրենի ծառոյ, Եապանի աղաճտան.
Պ. զվայրենի ծառոյ, Եապանի աղաճտան էօթրի.
Գ. վայրենի ծառով, Եապանի աղաճ իլէ.
Պ. զվայրենի ծառով, Եապանի աղաճըն էլիլէ.
Ն. ի վայրենի ծառ, Եապանի աղաճտա.
Կ. ով վայրենի ծառ, Էյ Եապանի աղաճ.

Յոգնակի:

Ո. վայրենի ծառք, Եապանի աղաճլար.
Ս. վայրենի ծառոց, Եապանի աղաճլարըն.
Տ. վայրենի ծառոց, Եապանի աղաճլարա.
ի վայրենի ծառս,
Հ. զվայրենի ծառս, Եապանի աղաճլարը.
Բ. ի վայրենի ծառոց, Եապանի աղաճլարտան.
Պ. զվայրենի ծառոց, Եապանի աղաճլարտան էօթրիւ.

Գ. Վայրենի ծառովք, Եապանի աղաճլար իլէ·
Պ. զՎայրենի ծառովք, Եապանի աղաճլարըն էնրա·
Ն. ի Վայրենի ծառս, Եապանի աղաճլարտա·
Կ. ով Վայրենի ծառք, Էյ Եապանի աղաճլար:

Այսպէս նախդրիւ կը հոլովին ամէն նախադաս ածականները. ինչպէս.

Խաւարին բանտ, մութ բանտ, գարանլըգ զընտան.
Մտերիմ բարեկամ, սրտակից բարեկամ, սատըգ տօսթ.
Գործասէր մեղու, ժիր մեղու, համարալթ արը.
Լայն տերեւ, լայն տերեւ, էնլի եափրագ.
Սնոտի յոյս, պարապ յոյս, պօշ ումուտ.
Անոյշ գինի, անուշ գինի, թաթլը շարապ.
Անառակ որդի, անառակ որդի, խօվարտա էվլատ.
Անսուտ խոստումն, իրաւ խոստում, խիլաֆսըզ իգրար.
Շքեղ զարդ, փառաւոր զարդ, քէրլամէլի տիւզէն.
Լուսալիր աստղ, պայծառ աստղ, շէֆաֆլը եըլտըզ.
Յորդառատ աղբիւր, առատ աղբիւր, ճօշգուն պունար.

Բայց թէ որ ածականն իր գոյականէն ետքը գրուելու ըլլայ, պէտք է որ անոր հետ մէկտեղ հոլովի. այսպէս.

Եզակի:

Ո. Եղբայր սիրելի, Սէվկիլի գարտաշ·
Ս. Եղբօր սիրելւոյ, Սէվկիլի գարտաշըն·
Տ. Եղբօր սիրելւոյ, առ եղբայր սիրելի, Սէվկիլի գարտաշա·
Հ. զԵղբայր սիրելի, Սէվկիլի գարտաշը·
Բ. յԵղբօրէ սիրելւոյ, Սէվկիլի գարտաշտան·
Պ. զԵղբօրէ սիրելւոյ, Սէվկիլի գարտաշտան էօ·
Գ. Եղբարբ սիրելեաւ, Սէվկիլի գարտաշ իլէ·
Պ. զԵղբարբ սիրելեաւ, Սէվկիլի գարտաշըն էն·
Ն. յԵղբայր սիրելի, Սէվկիլի գարտաշտա·
Կ. ով Եղբայր սիրելի, Էյ Սէվկիլի գարտաշ·

Յոգնակի:

Ո. Եղբարք սիրելիք, Սէվկիլի գարտաշլար·
Ս. Եղբարց սիրելեաց, Սէկիլի գարտաշլարըն·

Տ. Եղբարց սիրելեաց, Սէվկիլի գարտաշլարա.
առ եղբարս սիրելիս,
Հ. զեղբարս սիրելիս, Սէվկիլի գարտաշլարը.
Բ. յեղբարց սիրելեաց, Սէվկիլի գարտաշլարտան.
Պ. զեղբարց սիրելեաց, Սէվկիլի գարտաշլարտան էօ.
Գ. Եղբարբք սիրելեօք, Սէվկիլի գարտաշլար իլէ.
Պ. զեղբարբք սիրելեօք, Սէվկիլի գարտաշլարըն էն.
Ն. յեղբարս սիրելիս, Սէվկիլի գարտաշլարտա.
Կ. ով Եղբարք սիրելիք, էյ Սէվկիլի գարտաշլար.

Այսպէս կը հոլովին ամէն յետադաս ածականները.

Այր իմաստ- առն իմաստ- խելացի մարդ, ակըլլը ատամ:
տուն, տնոյ,
Այր բարի, առն բարւոյ, աղէկ մարդ, էյի ատամ:
Հոգի սուրբ, հոգւոյ սրբոյ, սուրբ հոգի, ազիզ րուհ:
Փող մեծ, փողոյ մեծի, մեծ փող, պէօյիւք զուրնա:

Հոս տեղս պէտք սկսին տղաք՝ ածականները գոյականներու հետ հոլովելով գրել, եւ անոնց դիմացը հոլովներուն նշանակութիւնները դնել:

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՎՐԱՅ

Թուական անուանք բանի մը որոշ համրանքը կը ցուցնեն, ու չորս տեսակ են. Բացարձակ, Դասական, Անջատական ու Կրկնական:

### Ա. Բացարձակ:

Բացարձակ թուականներն ածական են, ու պատասխան կու տան աս հարցման՝ քանի՞ հատ, գա՞չ թանէ. մէ, երկու, երեք, եւ այլն:

Բացարձակ թուականներուն կարգն ու հոլովը այսպէս է.

Մի, միոյ, միում, ի մի, զմի, ի միոջէ
կամ ի միոյ, միով, մէկ, պիր.
Երկու, երկուց, երկոքումբք*, երկու, իքի.
Երեք, երից, երիւք, երեք, իւչ.

* Քիչ տեղ կը բանի բուն իր գործիականը, որ է երկուք:

Չորք, չորից, չորիւք, Չորս, տէօրթ.
Հինգ, հ-նգի*, հնգիւ, հնգից, հնգօք, Հինգ, պէշ.
Վեց, վեցի, վեցիւ, վեցից, վեցիւք, Վեց, ալթը.
Եւթն, եւթան, եւթամբ, եւթանք,
եւթանց կամ եւթնից, եւթամբք, Եօթը, եէտի.
Ութ, ութի, ութիւ, ութից, ութիւք, Ութը, սէքիզ.
Ինն, ըննի, ըննիւ, ըննից, ըննիւք,
կամ ինունք, ինունց, ինամբք,
կամ իննուք, Ինը, տօգուզ.
Տասն, տասին, տասամբ, տասունք,
տասանց, տասամբք, Տասը, օն.
Մետասան, Տասնըմէկ, օն պիր.
Երկոտասան, Տասներկու, օն իքի.
Երեքտասան, ի. իւ. Տասներեք, օն իւչ.
Չորեքտասան, ից. իւք. Տասնըչորս, օն տէօրթ.
Հնգետասան, Տասնըհինգ, օն պէշ.
Վեշտասան, Տասնըվեց, օն ալթը.
Եւթնեւտասն, տասին, տասամբ, տասանք, տասանց,
տասամբք, Տասնըեօթը, օն եէտի.
Ութեւտասն, տասին, տասամբ, տասանք, տասանց,
տասամբք, Տասն'ութը, օն սէքիզ.
Իննեւտասն, տասին, տասամբ, տասանք, տասանց,
տասամբք, Տասնըինը, օն տօգուզ.
Քսան, քսանի, նիւ, նից, նիւք, Քսան, եիրմի.
Երեսուն, երես-նի, նիւ, նից, նիւք, Երեսուն, օթուզ.
Քառասուն, քառաս-նի, նիւ, նից, նիւք, Քառասուն,
գըրգ.
Յիսուն, յիս-նի, նիւ, նից, նիւք, Յիսուն, էլլի.
Վաթսուն, վաթս-նի, նիւ, նից, նիւք, Վաթսուն, ալթմըշ.
Եւթանասուն, եւթանաս-նի, նիւ, նից, նիւք, Եօթա-
նասուն, եէթմիշ.
Ութսուն, ութս-նի, նիւ, նից, նիւք, Ութսուն, սէքսէն.
Իննսուն, իննս-նի, նիւ, նից, նիւք, Իննսուն, տօգսան.
Հարեւր, հարիւրոյ, ով, ոց, ովք կամ ի, իւ, ից,
օք, Հարիւր, եիւզ.

* Ասոնց եզակի վերջաւորութիւնները գործիականէն զատ հասարակօրէն շատ չեն գործածուիր:

Երկերիւր, | | երկու հարիւր, իքի եիւզ.
Երեքհարեւր, | | երեք հարիւր, իւչ եիւզ.
Չորեքհարեւր, | ամէնն ալ | չորս հարիւր, տէօրթ եիւզ.
Հինգհարեւր, | Հարիւրին | հինգ հարիւր, պէշ եիւզ.
Վեցհարեւր, | պէս կը | վեց հարիւր, ալթը եիւզ.
Եւթնհարեւր, | հոլովին. | եօթը հարիւր, եէտի եիւզ.
Ութհարեւր, | | ութը հարիւր, սէքիզ եիւզ.
Իննհարեւր, | | ինը հարիւր, տօգուզ եիւզ.

Հազար, ի, աւ, աց կամ ի, իւ,ից, օք, հազար, պին.
Բեւր, բիւրու, ու, ուց, ուք, տասը հազար, օն պին:

Բ. Դասական:

Դասականներն ածական են, ու բանի մը կարգը կը ցուցնեն, ու պատասխան կու տան հարցման՝ քանիերորդ, գաչընճը՞։ Ասոնք բացարձականներէն կ'ելլեն երորդ կամ որդ մասնիկը վրանին աւելցնելով. այսպէս.

Առաջին, | | առաջին, իլք, էվվէլքի.
Երկրորդ, | | իքինճի.
Երրորդ, | | իւչինճի.
Չորրորդ, | | տէօրտիւնճի.
Հինգերորդ, | | պէշինճի.
Վեցերորդ, | | ալթընճը.
Եւթներորդ, | | եէտինճի.
Ութերորդ, | | սէքիզինճի.
Իններորդ, | | տօգուզունճու.
Տասներորդ, | դի, դաւ, | օնունճու.
Մետասաներորդ, | դաց, դաւք, | օն պիրինճի.
Քսաներորդ, | | եիրմինճի.
Քսաներորդ առաջնորդ, | | եիրմի պիրինճի.
Քսաներորդ երկրորդ, | | եիրմի իքինճի.
Երեսներորդ, | | օթուզունճու.
Քառասներորդ, | | գըրգընճը.
Հարիւրորդ, | | եիւզիւնճի.
Հազարերորդ, | | պինինճի.

Առաջին բառն այսպէս կը հոլովի.

Առաջին առաջնոյ, առաջնում, յառաջնմէ կամ յառաջնոյ, առաջնով:

### Գ. Անջնէրական:

Ա՛նձներական կ'ըսուին ան թուական անունները, որոնք իրենց նշանակած թիւը մէկտեղ համրելով կը ցուցընեն. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Երկոքեան կամ երկոքին, | Էրկուքն ալ, | իքիսի տէ· |
| Երեքեան կամ երեքին, | Էրէքն ալ, | իւչիւ տէ· |
| Չորեքեան կամ չորեքին, | Չորսն ալ, | տէօրտիւ տէ· |
| Եւթանեքեան կամ անեքին, | Եօթն ալ, | եէտիսի տէ· |
| Տասնեքեան կամ նեքին, | Տասն ալ, | օնու տա· |
| Երկոտասանեքեան կամ նեքին, | Տասներկուքն ալ, | օն իքիսի տէ· |

Ասոնք այսպէս կը հոլովին.

| | |
|---|---|
| Ո· Երկոքեան կամ քին, | Իքիսի տէ· |
| Ս· Երկոցունց կամ ցուն, | Իքիսինին տէ· |
| Տ· Երկոցունց, առ երկոսեան կամ առ երկոսին, | Իքիսինէ տէ· |
| Հ· զԵրկոսեան կամ սին, | Իքիսինի տէ· |
| Բ· յԵրկոցունց, | Իքիսինտէն տէ· |
| Պ· զԵրկոցունց, | Իքիսինտէն տէ եօնիլէ· |
| Գ· Երկոքումբք, | Իքիսիյլէ տէ· |
| Պ· զԵրկոքումբք, | Իքիսինին տէ էնիրաֆընտա· |
| Ն· յԵրկոսեան կամ սին, | Իքիսինտէ տէ· |

Այսպէս կը հոլովին նաեւ

Ամենեքեան կամ ամենեքին, } Ամէնն ալ, հէփիսի տէ:
Բոլորեքեան կամ բոլորեքին, }

### Դ. Կրկնական:

Կրկնական կ'ըսուին ան թուականները, որոնք բանի մը քանիպատիկ ըլլալը կը ցուցընեն. ինչպէս·

| | | |
|---|---|---|
| Կրկին, | Կրկնապատիկ, | իքի գաթ· |
| Երեքկին, | Էրէքապատիկ, | իւչ գաթ· |
| Չորեքկին, | Չորսապատիկ, | տէօրթ գաթ· |
| Ե թանասնեկին, | Եօթանասնապատիկ, | եէթմիշ գաթ· |

| | | |
|---|---|---|
| Եւթնպատիկ, | եօթըպատէկ, | եէտի գաթ. |
| Տասնպատիկ, | տասըպատէկ, | օն գաթ. |

---

## ՅՕԳՈՒԱԾ Գ.

### ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. Ոմն, | Ո՛ք, մէկը, | պիրիսի. |
| Ս. Ուրումն, | Ուրուք, | պիրիսինին. |
| Տ. Ումեմն, առ ումն, | Ումեք, առ ոք, | պիրիսինէ. |
| Հ. զՈմն, | զՈ՛ք, | պիրիսինի. |
| Բ. յՈւմեմնէ, | յՈւմեքէ, | պիրիսինտէն. |
| Պ. զՈւմեմնէ, | զՈւմեքէ, | պիրիսինտէն էօթրի. |
| Գ. Ոմամբ, | ունի, | պիրիսիյլէ. |
| Պ. զՈմամբ, | ունի, | պիրիսինին իչին. |
| Ն. յՈւմեմն, յումն, | յՈւմեք, յոք, | պիրիսինտէ. |

Յոգնակի:

| | |
|---|---|
| Ո. Ոմանք, | պազըլար. |
| Ս. Ոմանց, | պազըլարըն. |
| Տ. Ոմանց, առ ոմանս, | պազըլարա. |
| Հ. զՈմանս, | պազըլարը. |
| Բ. յՈմանց | պազըլարտան. |
| Պ. զՈմանց, | պազըլարտան էօթրի. |
| Գ. Ոմամբք, | պազըլար իլէ. |
| Պ. զՈմամբք, | պազըլարըն էթրաֆընտա. |
| Ն. յՈմանս, | պազըլարտա. |

Ինչ կամ՝ ինչ այսպէս կը հոլովի.

Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. Ինչ կամ ինչ, | բան մը, | պիր շէյ. |
| Ս. Իրիք, | բանի մը, | պիր շէյին. |
| Տ. Իմիք, առ ինչ, | բանի մը, | պիր շէյէ. |
| Հ. զԻնչ, | բան մը, | պիր շէյի. |
| Բ. յԻմեքէ, յԻմեմնէ, | բանէ մը, | պիր շէյտէն. |
| Պ. զԻմեքէ, զԻմեմնէ, | բանէ մը վրայ, | պիր շէյտէն էօ. |
| Գ. Իւիք, | բանով մը, | պիր շէյ իլէ. |
| Պ. զԻւիք, | բանի մը բոլոր. | պիր շէյին էթ. |
| Ն. յԻմիք, | բանի մը մէջ, | պիր շէյտէ: |

Այլ, այլոյ, այլում, յայլմէ, այլով, ուրիշ, պաշգա․
Մեւս, միւսոյ, միւսում, ի միւսմէ, միւսով, մէկալ, օպիրի․
Իւրաքանչիւր*, րոյ, րում, րմէ, րով, ամէն մէկ, հէր պիր․
Երկաքանչիւր, րոյ, րում, րմէ, րով, երկուքն ալ, իքիսի տէ․
Միմեանց, մէկ մէկու, պիրի պիրինին, ու Իրերաց, իրարու, պիրի պիրինին, անեզական են, ուղղական ալ չունին։ Առջինը կը հոլովի եօթներորդ հոլովման պէս, միմեանց, միմեամբք, ու վերջինը երկրորդ հոլովման պէս, իրերաց, իրերօք։

---

# ՅՕԴՈՒԱԾ Ե․

## ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

| Եզակի։ | | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո․ Ո՞վ, ո՞, | քի՞մ, | Ո՞յք, քիմլէ՞ր․ |
| Ս․ Ո՞յր, | քիմի՞ն, | Ո՞յց․ |
| Տ․ Ո՞ւմ, | քիմէ՞, | Ո՞յց, յՈ՞յս, ցՈ՞յս․ |
| Հ․ զՈ՞վ, զո՞, | քիմի՞, | զՈ՞յս․ |
| Բ․ յՈւմէ՞, | քիմտէ՞ն, | յՈ՞յց․ |
| Պ․ զՈւմէ՞, | քիմտէ՞ն էօթիւրիւ, | զՈ՞յց․ |
| Գ․ Որո՞վ, | քիմի՞ իլէ, | Որո՞վք․ |
| Պ․ զՈրո՞վ, | քիմի՞ն էթրաֆըն․ | զՈրո՞վք․ |
| Ն․ յՈ՞ւմ, յՈ՞վ, յՈ՞, | քիմտէ՞, | յՈ՞յս․ |

Ի՞նչ հարցական անունն եզակի միայն ունի, ու այսպէս կը հոլովի․

| | |
|---|---|
| Ո․ Ձ—նէ, | |
| Ս․ Է՞ր, | նէ՞նին, նէ՞ շէյին․ |
| Տ․ Ի՞մ, Հի՞մ, ընդ Է՞ր, | նէ՞յէ, նէ՞ շէյէ․ |
| Հ․ զԻ՞, | նէ՞, նէ՞ շէյ․ |
| Բ․ առ ի Մէ՞, | նէ՞ շէյտէն․ |

* Իւրաքանչիւր բառին մինակ ուղղականը ընտիր մատենագիրք ամէն հոլովին տեղ կը բանեցընեն․ իսկ Երկաքանչիւր երբեք չեն գործածեր, այլ Երկոքեան։

| | |
|---|---|
| Պ. զմէ՞, | նի՞չին. |
| Գ. իւ՞, | նէ՞ շէյ իլէ. |
| Պ. զիւ՞, | նէ՞ շէյին էթրաֆընտա. |
| Ն. յի՞մ, | նէտէ՞. |

Քանի՞, գա՞չ հարցականն ալ այսպէս կը հոլովի. Քանի՞, քանւո՞յ կամ քանո՞յ, ի քանւո՞յ կամ ի քանո՞յ. Քանի՞ք, քանեա՞ց, ի քանի՞ս, քանեօ՞ք եւ այլն:

---

# ԳԼՈՒԽ Բ.

## ԴԵՐԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

ՈՐՊԷՍ զի անուն մը շատ անգամ խօսքի մէջ չկրկնուի, անոր տեղը կը դրուի բառ մը, որ Դերա-նուն կ՚ըսուի:

Դերանուններն անուանց պէս Թիւ, Հոլով ու Հոլովմունք ունենալէն զատ, ունին նաեւ Դէմք ալ, որ երեք է. առաջին՝ Ես. երկրորդ դիմացինն՝ Դուն. երրորդ մէկ ուրիշ մը՝ Նա:

Դերանուններուն արմատն աս երեք դիմորոշ յօդերն են, ս, դ, ն: Ս՝ առջի դէմը, դ՝ երկրորդ դէմը, ն՝ երրորդ դէմը կը ցուցընէ: Ինչպէս աշխարհաբար լեզուի մէջ ալ կ՚ըսենք. գլուխս, գլուխդ, գլուխը. պաշըմ, պաշըն, պաշը. տունս, տունդ, տունը. էվիմ, էվին, էվի:

Դերանունները չորս տեսակ են, Էական, Ցուցական, Ստացական ու Յարաբերական:

---

Ա. Էական դերանուններն ասոնք են, Ես, Դուն, Ինքն, Իւր, ու այսպէս կը հոլովին:

### Ա. ԴԷՄՔ

Եզակի:

| | | |
|---|---|---|
| Ո. Ես, | ես, | պէն. |
| Ս. Իմ, | իմին, | պէնիմ. |
| Տ. Ինձ, առ իս, ցիս, | ինծի, | պանա. |
| Հ. զիս, | ես, | պէնի. |
| Բ. յինէն, | ինծմէ, | պէնտէն. |

| | | |
|---|---|---|
| Պ. զինէն, | իմ վրայ, | պէնտէն եօթ. |
| Գ. ինեւ, | ինձմով, | պէնիմ իլէ. |
| Պ. զինեւ, | իմ բոլորտիքը, | պէնիմ էթրա. |
| Ն. յիս, | իմ վրայ, | պէնտէ. |

Յոգնակի.

| | | |
|---|---|---|
| Ո. Մեք, | մենք, | պիզ. |
| Ս. Մեր, | մեր, | պիզիմ. |
| Տ. Մեզ, առ մեզ, | մեզի, | պիզէ. |
| Հ. զՄեզ, | մեզ, | պիզի. |
| Բ. ի Մէնջ, | մեզմէ, | պիզտէն. |
| Պ. զՄէնջ, | մեր վրայ, | պիզտէն եօթ. |
| Գ. Մեւք, | մեզմով, | պիզիմ իլէ. |
| Պ. զՄեւք, | մեր բոլորտիքը, | պիզիմ էթրաֆ. |
Ծուլքն կամ բնաւ ոչ ընթեռնուն, եւ կամ զոր ընթեռնուն ոչ սիրով եւ փափագանօք.

Ծոյլերը կամ ամենեւին չեն կարդար, եւ կամ կարդացածնին սիրով ու փափաքով չէ:

Թէմպէլլէր եա հիչ օգումազլար, եախօտ օգուտուգլարը խօթէք վէ արզու իլէ տէյիլ տիր:

Գ. Բացառական:

Բացառական կ'ըսուին անոնք՝ որոնք երկու հակառակ խօսք իրարու կը կապեն, կամ թէ ըսեմ խօսքին վրայ՝ բայց, ամմա մը կ'աւելցընեն. ինչպէս,

Այլ, Հապա, Եա, Իլլա.

Ոչ ի բնութենէ, այլ ի կամաց մերոց է լինել ծոյլ կամ փոյթ յուսմունս.

Մեր բնութենէն չէ, հապա մեր կամքէն է ծոյլ կամ փոյթեռանդն ըլլալ սորվելու մէջ.

Իլիմ էօյրէնմէտէ թէմպէլ եախօտ համարաթ օլմագ պիզիմ թապիէթիմիզտէն տէյիլ, եա կէօ-նիւմիւզտէն տիր:

Սակայն, Բայց, Հապա, Բայց, Ամմա, Իլլա, Լաքին:

Ոչ տեսանես զհոգի քո, սակայն հաւատաս թէ հոգի ունիս.

Քու հոգիդ չես տեսներ, բայց կը հաւտաս որ հոգի ունիս.

Ճանընը կէօրմէզսին, ամմա ինանըրսըն քի ճանըն վար:

Դ. Անկատարական:

Անկատարական կ'ըսուին անոնք, որոնք խօսքին միտքն անկատար կը թողուն, ու կը կապեն ուրիշ

շաղկապի մը հետ, որ անոնց միտքը կը լրացընէ, ինչպէս,

Թէպէտ եւ, Թէ եւ, Թէպէտ, Թէրչէ, Ֆարազա. Ետեւէն կ'ուզեն Այլ, Սակայն, Բայց, Ամմա, Լաքին:

Ակն Թէպէտ եւ փոքր է առ մեծամեծ անդամս, սակայն սքանչելի քան զամենեսեան.

Թէրչէ աչքը մեծ անդամներուն քովը պզտիկ է, Բայց ամենէն սքանչելի է.

Գէզիւք ազալարըն մաքէյնինտէ Ֆարազա կէօզ պիր քիւչիւք ազա տըր, լաքին ճիւմլէսինտէն գըյմէթլի տիր:

## Ե. Մեկնական:

Մեկնական կ'ըսուին անոնք՝ որոնք առջի մութ խօսքը մեկնելով ուրիշին հետ կը կապեն. ինչպէս,

Այս ինքն, Այս ինքն է, Այս է, Այսինքն, Եանի:

Զկնիքն Քրիստոսի բարձցուք, այսինքն զխոնարհութիւն նորա:

Քրիստոսի նշանը վրանիս առնենք, այսինքն անոր խոնարհութիւնը.

Քրիստոսուն նշանը իւսթիւմիւզտէ օլսուն, եանի օնուն ալչագ կէօնիւլլիւլիւյիւ:

Իբր թէ, Իբր այն թէ, Իբրեւ թէ, Սանքի:

Ուր եւ գնասցես՝ մի ցուցաներ զքեզ, իբր թէ իմաստուն եւ գիտուն ես.

Ուր որ երթաս նէ՝ մի ցուցըներ զքեզ, իբրեւ թէ իմաստուն եւ գիտուն ես.

Նէրէյէ քի կիտէրսէն կէօսթէրմէ սէնի, սանքի ագըլլը վէ իլիմտար սըն:

## Զ. Սկզբնաւորական:

Սկզբնաւորական կ'ըսուին անոնք՝ որոնք հասարակօրէն խօսքին սկիզբը կը դրուին. ինչպէս,

Արդ, Եւ արդ, Արդ, Իմտի:

Եւ արդ աղաչեմ առնել աղօթս վասն ամենայն մարդկան.

Արդ կ'աղաչեմ աղօթք ընել ամէն մարդու համար.

Իսկ եալվարըրըմ քի հէր ատէմ իչին տուվա է-
տէսինիզ:

Իսկ, Իսկ թէ, Իսկ, Բայց թէ որ, Լաքին, Ամմա էյէր.

Ունկնդիր լինի խրատու իմաստունն, իսկ անմիտն
առօրին յայտնէ զբարկութիւն իւր.

Խելացին խրատը մտիկ կ'ընէ, իսկ անխելքը շուտ
մը իր բարկութիւնը կը յայտնէ.

Իլիմտար (քիմսէ) նասիհաթա գուլագ վէրիր, ա-
մմա ագըլսըզ անիտէ էօֆքէսինի պէյան էտէր:

Աղ ի ջրոյ գդանայ, իսկ եթէ մերձեսցի ի ջուր՝
հալի.

Աղը ջրէն կը գդանայ, բայց թէ որ ջրին դպչելու
ըլլայ, կը հալի.

Թուզ սուտան փէյտահ օլուր, ամմա էյէր սույա
տօգանըրսա, էրիր:

Է. Պատճառական:

Պատճառական կ'ըսուին անոնք՝ որոնք երկու խօսք իրարու կը կապեն՝ պատճառը ցուցընելով. ինչպէս,

Քանզի, Վասն զի, Ինչու որ, Չէրէ:

Ժամ է արդ ի քնոյ զարթնուլ, վասն զի գիշերն
անց եւ տիւն մերձեցաւ.

Հիմա քնէն արթըննալու ատենն է, ինչու որ գի-
շերն անցաւ ու ցորեկը մօտիկցաւ.

Իմտի ույգուտան ույանմանըն վագթը տըր, չէրէ
կէճէ կէչտի վէ կիւնտիւզ եագլաշտը:

Հրեշտակք չունին պէտս կերակրոյ, զի անմարմինք
են,

Հրեշտակները կերակուր ուտելու հարկաւորութիւն
չունին, ինչու որ մարմին չունին.

Մէլայըգլարըն եէմէյէ իհթիզալարը եօգ, չէրէ թէն-
լէրի եօգտուր:

Ը. Մակաբերական:

Մակաբերական կ'ըսուին անոնք՝ որոնք որ առջի խօսքէն՝ ուրիշ խօսք մը յառաջ կը բերեն, ինչպէս,

Ապա, Ուրեմն, Ապա ուրեմն, Անանկ է նէ, Էօյլէ իսէ:
Բռունք մտանեն յարքայութիւն երկնից, ապա ուրեմն չէ հնար ծուլութեամբ հասանել նմա.
Բուռն ընողներն արքայութիւն կը մտնեն, անանկ է նէ՛ ծուլութեամբ անոր չիհասնուիր.
Զօր էտէնլէր ճէննէթէ կիրէրլէր, էօյլէ իսէ թէմպէլլիքիլէ նէթիշիլմէզ.
Վասն այնորիկ, Առոր համար, Պունուն իչին.
Վասն այսորիկ, Նմին իրի, Այնր աղագաւ, Անոր համար, Օնուն իչին:
Հուր բնութեամբ թեթեւ է, վասն այնորիկ ի վեր կոյս բերեալ լինի.
Կրակը բնութեամբ թեթեւ է, անոր համար դէպ ի վեր կ'ելլէ.
Աթէշ ասլը խաֆիֆ տիր, օնուն իչին եօգարը չըգար:

Թ. Համեմատական:

Համեմատական կ'ըսուին անոնք՝ որոնք երկու խօսք իրարու քով կը բերեն ու կը համեմատեն. ինչպէս,
Քան, Քան թէ, Քան զի, Նէքի.
Թող թէ, Թող որ, Տէյիլ քի.
Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք.
Աղէկ է աչքով կոյրը քան զի մտքով (կոյրը).
Տահա էյի տիր (ինսանա) քի կէօզլու քէօր օլսուն, նէքի ֆիքրի:
Ընդամ. ալ, պիլէ, հասարակօրէն բայէն կամ անուանէն ետքը կը դրուի. ու իրմէ առաջ մինչեւ, մինչ, զի, զի եւ, եւ կ'ուզէ,
Սատանայ յօժարեցոյց զհեթանոսս երկիր պագանել փայտից եւ քարանց, մինչեւ ճճեաց եւ օձից անգամ.
Սատանան բաղձալ տուաւ հեթանոսներուն երկրպագութիւն ընել փայտերուն ու քարերուն, մինչեւ որդերուն ու օձերուն ալ.
Շէյթան օտունլարտան վէ թաշլարտան (մատէ),

Նէ երլանլարա մէ պեօճէքլէրէ պիլէ սեճտէ գըլ-մաղա փութփերեսթլէրի արզիուլէթտիրտի:

Եւ հաց անգամ չժամանէին ուտել.

Հաց ուտելու ալ ատեն չունէին.

Էքմէք եէմէյէ պիլէ վագըթ պուլամազլարտը:

Ժ. Թէական:

Թէական կ'ըսուին անոնք՝ որոնք որ կը ցուցընեն թէ մէկ խօսքը մէկալէն կախում ունի. ինչպէս,

Թէ, Եթէ, Թէ որ, Էյէր:

Զկունք եթէ յամեսցին ի ցամաքի, մեռանին.

Ձուկերը թէ որ ցամաքը ուշանան նէ, կը մեռնին:

Պալըգլար, էյէր գարատա չօգ կէճիքիրլէրիսէ՝ էօլիւրլէր:

Թէ, Զի, Որպէս զի*, Որ, Քի:

Յորժամ ամպ ծագէ յարեւմտից, ասէք թէ անձրեւ գայ.

Երբ որ արեւմուտքէն ամպ կ'ելլէ, կ'ըսէք որ անձրեւ կու գայ.

Նէ զաման քի կիւնպաթըտան պուլութ կէօրիւնիւրսէ, տէրսինիզ քի եաղմուր կէլիր:

Գիտասջիր զի Տէր զսիրտս ամենեցուն ճանաչէ.

Գիտնաս որ Աստուած ամենուն սիրտը կը ճանչնայ:

Պիլէսին քի Ալլահ հէր քէշին եիւրէյինի թանըր:

Կալցես միշտ առաջի աչաց զմահ, որպէս զի մի երկիցես ի մահուանէ.

Մահը միշտ աչքիդ առջեւն ունենաս, որ մեռնելէն չվախնաս.

Էօլիւմ տայիմա կէօզիւնիւն էօնիւնտէ օլսուն, քի էօլիւմտէն գորգմայասըն:

* Քիչ տեղ զի կամ որպէս զի շաղկապին տեղ աշխարհաբառ մէջ հասարակ եղած որ շաղկապը կը բանեցընեն. այսպէս, Յորժամ ցամնու սիրտ քո, ասա, չունիմ սիրտ որ ցամնում. այս ինքն, զի ցամնուցում:

Տեսանեմս որ մեծի ուման կարօտ է խոնարհութիւն, այս ինքն՝ տեսանեմս զի. եւ այլն:

# ԳԼՈՒԽ Է.

## ՄԻՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Միջարկութիւնը, ութերորդ մասն բանի, ժոր-դուան ըռնադան կէրէգը կը յայտնէ, այս ինքն կամ ուրախութիւնը, կամ տրտմութիւնը, կամ զարմացումը, եւ այլն. ինչպէս,

Երանի, Երանի թէ, Երանի՛, Մութլու, Նէ մութլու:
Երանի ողորմածաց, երանի հեզոց.
Երանի՛ ողորմածներուն, երանի՛ հեզերուն.
Մութլու մէրհամէթլիլէրէ, մութլու հալիմլէրէ:

Բարէ, Ո՛վ, Ո՛հ, Հա՜յ վախ, Եազը՛գ, Եա՛:
Բարէ թշուառութեանս, Հայը՛ֆ սէֆիլլիյիմէ.
Բարէ կուրութեանս, Եազը՛գ քէօրլիւղիւմէ.
Ո՛վ սքանչելեացս, Եա՛ պու մու-ճի-զէ-լէ՜ր:

Վա՜յ, Աւա՜ղ, Վա՜յ, Վա՜յ, Եազը՛գ, Հայը՛ֆ, Վա՜խ:
Վա՜յ թշուառականացս. Եազը՛գ պիզ սէֆիլլէրէ.
Եղո՜ւկ եմ ես, Վա՜յ պանա.
Աւա՜ղ աղէտիցս, Եազը՛գ սէֆիլլիյիմէ.

Ա՛ղէ, Հա՛պա, Օ՛ն, Հա՛դէ, Տէ՛խմտի, Հա՛յտէ:
Ա՛ղէ ածէք զմտաւ, Տէհա տիւ-շիւ-նիւ-նիւ-զ:
Օ՛ն, արիք գնասցուք աստի, Հա՛յտէ կիտէլիմ պուրատան:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

---

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

Առջի մասին մէջ (երես 2.) անուան հարկաւոր պարագաներուն վրայ համառօտ մը խօսեցանք։ Հոս կը մնայ խօսիլ քանի մը հարկաւոր գիտելիքներու վրայ, որոնք առջի մասին մէջ չգրեցինք որ՝ գուցէ նոր սորվողներուն ծանրութիւն կ'ըլլայ։

---

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

• ԱՆՈՒՆՆ Ի՛ՆՉ Է ՈՒ ՔԱՆԻ՛ ԿԸ ԲԱԺՆՈՒԻ

**Անունը** բառ մըն է, որ կը ցուցընէ թէ **ան բանն** կամ **ան բանը ինչ** է կամ **ինչպէս** է։ Ինչպէս թէ որ ըսեմ **քաղաք**, աս բառս կը ցուցընէ թէ շատ տներ մէկտեղ ինչ է։ Կամ թէ որ ըսեմ **գետ**, աս բառը կը ցուցընէ թէ շատ վազուն ջուրն ինչ է. եւ այլն։ Կամ երբ որ ըսելու ըլլամ **մեծ** քաղաք, **լայն** գետ, հոս տեղս **մեծ** բառը կը ցուցընէ թէ քաղաքն **ինչպէս** է, նոյնպէս եւ **լայն** բառը կը ցուցընէ թէ գետն **ինչպէս** է։

Ուստի անունը կը բաժնուի պինտ առաջ **Գոյական ու Ածական**։

Գոյականը բանի մը ինչ **ըլլալը**, իսկ ածականը **ինչպէս ըլլալը** կը ցուցընէ։

Գոյականը **ինք իրեն եղող**, իսկ ածականը՝ **գոյականին վրայ եղող բան մը կը նշանակէ**։ Ինչպէս թէ որ ըսեմ **Կարմիր խնձոր**, **Խնձորը** ինքիրեն եղողն է, իսկ **Կարմիրը** ինքիրեն եղող չէ, **Խնձորին** վրայ եղողն է, եւ կարմիրը ինքիրեն չիկրնար կենալ կամ ըլլալ՝ հապա կամ արիւնին կամ թղթին կամ կաշիին եւ կամ ուրիշ բանի մը վրայ պիտի ըլլայ։ Այսպէս ի-

մացիր ամէն ածականն ալ, ինչպէս առջի մասին մէջ (Երես 20.) գրեցինք:

Ածականը գոյականին ինչպէս ըլլալը երեք աստիճանով կրնայ ցուցընել, անոր համար ածականն երեք աստիճան ունի, Դրական, Բաղդատական եւ Գերադրական:

Առաջին աստիճան կամ Դրական կ'ըսուի ածականը, երբ որ միայն գոյականին ինչպէս ըլլալը կը ցուցընէ, առանց շատը քիչը ցուցընելու. ինչպէս, այր բարի, այր չար, ծանր քար, թեթեւ բեռն:

Երկրորդ աստիճան կամ Բաղդատական կ'ըսուի ածականը, երբ որ գոյականին ինչպէս ըլլալն ուրիշէն աւելի կամ պակաս կը ցուցընէ. ինչպէս, բարեգոյն, չարագոյն:

Դու իմաստնագոյն ես քան զիս.

Դուն ինձմէ աւելի խելացի ես.

Սէն պէնտէն ագըլլը սըն:

Եւղ թեթեւագոյն է քան զջուր.

Եղը ջրէն թեթեւ է.

Եաղ սուտան խաֆիֆ տիր:

Դրականը ընդհանրապէս բաղդատական կ'ըլլայ՝ դրականին վրայ գոյն մասնիկն աւելցընելով:

Երրորդ աստիճան կամ Գերադրական կ'ըսուի ածականը, երբ որ գոյականին ինչպէս ըլլալն ուրիշէն շատ աւելի կամ շատ պակաս կը ցուցընէ. ինչպէս, Ամենաբարի, Ամենամեծ, Ամենաչար:

Ասկէ զատ մեր բուն հին մատենագիրներուն գրուածոցը մէջ դրական անուններու տեսակ մը կրկնութիւն կայ՝ որ գերադրականի զօրութիւն ունի: Աս կրկնութիւնը հասարակօրէն միավանկ բառերու վրայ կ'ըլլայ, ան ալ զանազան եղանակաւ, մէյ մը նոյն բառն առանց փոփոխութիւն մը կրելու կը կրկնուի, ու մէջը միայն ա զօդիչ մասնիկը կ'առնու. ինչպէս ժիրաժիր, ամենաժիր, ղայէթ ղայրէթլի. մեծամեծ, շատ մեծ, փէք պէօյիւք. մանրամանր, շատ պզտիկ, փէք քիւչիւք. նորանոր, ամենանոր, եէնի իճատ. դառնադառն, շատ դառն, փէք աճը: Ասոնք հասարակօրէն

յոգնակի իմաստով կը գործածուին: Երկրորդ՝ դրական ածականը կրկնուելու տեղ՝ ուրիշ մօտ հնչմամբ բառ կամ մասնիկ մը կը դրուի. ինչպէս ժանտաժուտ, անգարն, ղայէթ զալըմ. սափասուտ, [illegible], եափ եալան: Երրորդ՝ դրական ածականը կրկնուելու ատեն՝ երկրորդ մասին առջի գիրը մ՚ի կը փոխուի, եւ ա զօդիչ մասնիկն երբեմն կ՚առնէ ու երբեմն չ՚առներ. ինչպէս խառնամառն, տաքնամբրայ, գարմագարըշ. հաստամէստ, պէրք, ամուր, գավի. սուտ մուտ, [illegible], եալան եանլըշ. քսմոս, բամբասող, ղայպէթ էտէն. լուռ մուռ, [illegible] [illegible], սուս փուս:

Թէպէտ եւ աս բառերուն երկրորդ մասը կրնայ երբեմն զատ ու նշանակիչ բառի մը պէս առնուիլ, այսու ամենայնիւ աս կերպով քովէ քով բերելը մեր լեզուին հին յատկութիւններէն մէկն է, որովհետեւ մեր ազգն իր լեզուին մէջ արդէն շատ հին ատենները՝ ընդհանուր հոգի ու հակում մը կը ցուցընէ՝ նոյնահնչիւն կամ մօտահնչիւն բառեր քովէքով բերելու:

Մնացած հարկաւոր գիտելիքները երկրորդ մասին մէջ կը դնենք:

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԱՆՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ *

Անուան պարագաները չորս են Ձեւ, Թիւ, Հոլով եւ Հոլովում:

Ա. Անունը ձեւին կողմանէ կրնայ Պարզ, Բարդ՝ Բաղադրեալ ու Ածանցական ըլլալ:

* Անուան պարագաները որչափ կարելի էր համառօտեցինք՝ մէյ մը որ շատը քերականական կանոններու վերաբերութիւն չունին: Երկրորդ շատերն ալ աւելի կը դժուարացընեն, քան թէ օգուտ կ՚ընեն նոր սորվողի մը, ինչպէս է Ձեւն ու Տեսակը զատ զատ բաժնելը, ու անոնց վրան մանր մանր քըննութիւններ ընել: Ուր թողունք որ շատերն աղէկ գիտեն գրաբառ լեզուն առանց գիտնալու զատ զատ անթիւ անհամար մասնիկներուն ուժը, ակիզբը, իբր թէ անդամազննութիւնը:

Պարզ կ՚ըսուի ան անունը, որն որ ուրիշէ եղած չէ․ ինչպէս, հոգի, մարմին, տէր։

Բարդ կ՚ըսուի ան անունը, որն որ երկու ամբողջ բառէ շինուած է․ ինչպէս, հոգետէր, մարմնատէր։

Նախադրեալ կ՚ըսուի, որն որ իր սկիզբն աննշան մասնիկ մը ունի, ինչպէս, անհոգի, անմարմին։

Ածանցական կ՚ըսուի, որն որ իր վերջն աննշան մասնիկ մը ունի, ինչպէս, հոգեւոր, մարմնաւոր։

Բ․ Անուան թիւն երկուք է, Եզակի ու Յոգնակի․ ինչպէս յայտնի է։

Բայց հասարակ յոգնակիի նշանէն զատ կան նաեւ շատ մասնիկներ՝ որ եզակի անուան վրայ դրուելով յոգնակի կը շինեն, բայց միշտ եզակիի պէս կը հոլովին․ եւ որովհետեւ զանազան վերջաւորութիւններ ունին, ինչպէս եար կամ եր, կան, որոյ, ան, ոյ, եան, անի, անոր համար զանազան հոլովմանց տակ կ՚երթան։ Աս տեսակ բառերուն օրինակները հոս կը դնենք։

Որեար, որերոյ, մարդիկ, ատամլար․
Վանեար, վաներոյ, վանքեր, մանասթըրլար․
Բանեար, բաներոյ, կագ, նիզա․
Քաղաքնեար, քաղաքներոյ, քաղաքիկներ, քիւչիւք շէհիրլէր․
Նաւկնեար, նաւկներոյ, նաւակներ, քիւչիւք գայըգլար․
Բարձկնեար, բարձկներոյ, բարձիկներ, քիւչիւք եասթըգլար․
Տոհմական, տոհմականի, բերք, մահսուլաթ․
Զօրական, զօրականի, զօրք, ասքէր․
Բազմական, բազմականի, բազմականներ, մէճլիստէ օթուրանլար․
Կալորայ, կալորայի, կալքեր, խըըմէնլէր․
Արտորայ, արտորայի, արտեր, էքինլէր․
Ձիան, ձիեր, աթլար․
Իշան, էշեր, էշէքլէր․
Մանկտի, մանկտւոյ, տղաք, չօճուգլար․
Ոսկրոտի, ոսկրոտւոյ, ոսկրներ, քէմիքլէր․
Արմտի, արմտւոյ, արմատք, մահսուլաթ․

Բերդեան, բերդեր, գալէլէր·
Գրեան, գրենոյ, գրեր, քիթապլար·
Խոյեան, խոյեր, գօչլար·
Նախարարեան, նախարարներ, պէյլէր·
Անապատեան, անապատներ, չէօլլէր·
Կմբեթանի, կմբեթանւոյ, գմբեթներ, գուպպէլէր·
Ազատանի, ազատանւոյ, ազնուականներ, քիպարլար·
Կանանի, կանանւոյ, կանայք, գարըլար·
Քաղաքանի, քաղաքանւոյ, քաղաքներ, շէհիրլէր·
Աւագանի, աւագանւոյ, մեծամեծներ, ըրիձալ քիպար:

Երբեմն՝ նաեւ ընտիր մատենագրաց գրուածոցը մէջ, աս արդէն յոգնակի նշանակութիւն ունեցող բառերէն ոմանց վրայ հասարակ յոգնակիի հոլովմունք ալ տրուած կը տեսնենք:

Թէ որ անուն մը կրկնուելու ըլլայ, երբեմն ամէն կը նշանակէ. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Ամի ամի, | ամէն տարի, | հէր եըլ· |
| Աւուր աւուր, | ամէն օր, | հէր կիւն· |
| Առն առն, | ամէն մարդու, | հէր քիշինին· |
| Միոյ միոյ, | ամէն մէկուն, | հէր պիրինին· |

Մի մի, ամէն մէկը, հէր պիրի, կը հոլովի այսպէս, միոյ միոյ, միում միում, զմի մի, ի միոջէ միոջէ, ու ըսել է, ամէն մէկուն, ամէն մէկը, ամէն մէկէն, հէր պիրինին, հէր պիրինէ, հէր պիրինի, հէր պիրինտէն:

Ասոնք քիչ՝ բայց ընտիր գրուածներու մէջ կը բանին: Ասոնց տեղը կը գործածուի հասարակօրէն,

| | | |
|---|---|---|
| Ամ ըստ ամէ | տարի֊է տարի | եըլտան եըլա |
| կամ ամ յամէ, | կամ ամէն տարի, | կամ հէր եըլ· |
| Օր ըստ օրէ, | օրէ օր, | կիւնտէն կիւնէ |
| | կամ ամէն օր, | կամ հէր կիւն· |
| Մի ըստ միոջէ, | մէկէկ մէկէկ, | պիրէր պիրէր· |

Ասոնք ամէնն ալ կրնան մակբայ ալ սեպուիլ:

Հասարակօրէն անուն մը թէ որ կրկնուելու ըլլայ՝ կը նշանակէ շատ կամ երբեմն, որով յոգնակիի ոյժ կ'ունենայ. այսպէս.

| | | |
|---|---|---|
| ի կողմանց կողմանց, | շատ կողմերէն, | չօգ թարաֆլարտան. |
| ի քաղաքաց քաղաքաց, | շատ քաղաքներէն, | չօգ շէհիրլէրտէն. |
| ի տունս տունս, | շատ տներ, | չօգ էվլէրէ. |
| ընդ ժամանակս ժամանակս, | երբեմն երբեմն, ատեն ատեն, | պազը վագըթ. վագըթ վագըթ: |

Ինչ ինչ, քանի մը բան, պազը չէյ, կը հոլովի նաեւ այսպէս. իրիք իրիք, իմիք իմիք, իւիք իւիք:

Գ. Որովհետեւ կան ձայնաւորներ՝ որ հոլովելու ատեն կամ կը կորսուին եւ կամ ուրիշ ձայնաւորի մը կը փոխուին, անոր համար պատշաճ կը սեպենք հոս համառօտ մը նշանակել թէ որո՛նք կը կորսուին ու որո՛նք կը փոխուին:

1. Վերջի վանկը էով եղած բառերը՝ սեռականի եւ ուրիշ անկէ շինուած հոլովմանց մէջ նոյն գիրն էի կամ ի կը փոխեն, ինչպէս կէտ, կիտոյ, կէտ, նօգթա. սէր, սիրոյ, սէր, մուհապպէթ. ձէթ, ձիթոյ, ձէթ, զէյթին եաղը. եւ այլն: Ասկէ կը զարտուղի տէր, տէր, սահապ՝ բառը, որուն սեռականը տեառն կ՚ըլլայ: Բայց եթէ է գիրը բառին վերջը մինակ ըլլալու ըլլայ, ան ատեն անփոփոխ կը մնայ ու ըստ կանոնի կը հոլովի, ինչպէս կոտմընկէ, կոտմնկէի, [illegible], քէմէր պուրունու:

2. Եա վերջավանկով բառերը՝ սեռականի մէջ նոյն երկբարբառն ի կը փոխեն, ինչպէս ատեան, ատենի, ատեան, տիվան. լեառն լերին, լեռ, տաղ: Իսկ եայ վերջաւորութիւնը սեռականի մէջ էի կ՚ըլլայ, զոր օրինակ քրիստոնեայ քրիստոնէի, քրիստոնեայ, քրիստիան. քաւդեայ, քաւդէի, մոգ, միւնէճճիմ:

3. Իւ եւ ոյ երկբարբառներով վերջաւորած բառերը՝ սեռականի մէջ նոյն երկբարբառներն ու-ի կը փոխեն, ինչպէս հովիւ, հովուի, հովիւ, չօպան. պատիւ, պատուոյ, պատիւ, իհթիպար. քիւ, քուոյ, [illegible], սահագ. ողջոյն, ողջունի, բարեւ, սէլամ. յոյս, յուսոյ, յոյս, ումուտ. յոյն, յունի, յոյն, ուրում: Մյր բառը թէ մուրոյ ու թէ մյրոյ կ՚ըլլայ: Թէ որ ոյ՝ բա-

ուին վերջը մինակ մնալու ըլլայ նէ, անփոփոխ կը մնայ. ինչպէս մանուածոյ, մանուածոյի, ոլորոծ, պիւքմէ:

4. Ան բառերը՝ որոնց վերջին վանկն ի կամ ու է՝ սեռականի մէջ նոյն գրերը կը կորսնցընեն*, ինչպէս միս, մսոյ, ձու, էթ. նիստ, նստոյ, նստելը, օթուրմա. շուք, շքոյ, դուտէւ, խըզէլթ. գլուխ, գլխոյ, ֆըլուխ, պաշ. սուտ, ստոյ, սուտ, եալան: Իսկ եթէ ի եւ ու բառին եղքը առանձին մնալու ըլլան, այսինքն իրենցմէ ետեւ բաղաձայն մը չունենան նէ, ան ատեն սեռականի մէջ ի գիրը ւի կը փոխուի, եւ ու անփոփոխ կը մնայ, ինչպէս մատանի, մատանւոյ, մատ-նի, եիւզիւք. լեզու, լեզուի, լեզու, տիլ. ածու, ածուոյ, ածու, օճագ:

Բայց աս ալ գիտնալու է որ ի եւ ու երբ որ միավանկ բառի սկիզբը կը պատահին ըի կը փոխուին, ինչպէս ինձ, ընձու, ինձ, գափլան. ինչք, ընչից, ինչ, ազչէ. ունդ, ընդոյ, ունդ, թօխում. ունչք, ընչաց, ունչ, պուրն: Ու երբեմն անփոփոխ ալ կրնայ մնալ, ինչպէս ուղտ, ըղտու կամ ուղտու, ուղտ, տէվէ:

5. Թէ որ բառի մը եղքի ձայնաւոր գիրը մինակ ա, ե, ո, օ, ըլլայ, ան բառը հոլովելու ատեն ոչ գիր կը կորսնցընէ եւ ոչ կը փոխէ. (Տես երես 4. 6. 8. եւ այլն): Մինակ դեւ, ուտանայ, չէյթան բառը կ'ըլլայ դիւի, դիւաց:

Դ. Առջի մասին մէջ գրուած զանազան հոլովմանց կարգն աշկերտներուն աւելի դիւրըմբռնելի ընելու համար՝ հոս հետեւեալ պարզ տախտակը կը

* Թէպէտեւ պարզ գրուելուն կողմանէ նայելով՝ աս գրերը սեռականի մէջ բոլորովին անհետ եղած կը սեպուին, բայց հնչելու ատեն նոյն գրերուն տեղ մեղմաձայն ը մը կը մըտնէ. անանկ որ եթէ բացարձակապէս կորսուած ըլլային նէ, օրինակի համար, շուք, դուտէւ, խզէլթ, ու սուտ, սուտ, եալան, բառերուն սեռականները՝ շքոյ ու ստոյ չէինք կրնար կարդալ, հապա պէտք էինք ըշքոյ ու ըստոյ կարդալ, ինչպէս որ չկօթակ, ստօրք, սիւրկիւն, ու ստանալ, ստանալ, էտինմէք՝ բառերը ըշկօթակ ու ըստանալ կը կարդանք: Անոր համար հոս ըստ սովորութեան կորսուիլ ըսածնիս՝ պէտք է առ երեւոյթ կորսուիլ մը իմանալ:

| | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. | Ը. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ե Զ Ա Կ Ի** | | | | | | | |
| Ո. | — | — | — | — | — | — | — | — |
| Ս. | —ի | —ի | —ոյ | —ւոյ | —ու | —ան | —ին | —եր |
| Տ. | ի—* | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— |
| Հ. | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— |
| Բ. | ի—է | ի—է | ի—ոյ | ի—ւոյ | ի—է, ի—ուէ | ի—անէ | ի—անէ | ի—երէ |
| Պ. | զ—է | զ—է | զ—ոյ | զ—ւոյ | զ—է, զ—ուէ | զ—անէ | զ—անէ | զ—երէ |
| Գ. | —իւ | —աւ | —ով | —եաւ | —ու | —ամբ | —ամբ | —երբ |
| Պ. | զ—իւ | զ—աւ | զ—ով | զ—եաւ | զ—ու | զ—ամբ | զ—ամբ | զ—երբ |
| Ն. | ի—ի | ի—ի | ի— | ի—ւոջ | ի—ու | ի—ան | ի—ին | ի—եր |
| | **Յ Ո Գ Ն Ա Կ Ի** | | | | | | | |
| Ո. | —ք | —ք | —ք | —ք | —ք | —ունք | —ինք | —երք |
| Ս. | —ից | —աց | —ոց | —եաց | —ուց | —անց | —անց | —երաց |
| Տ. | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ունս | ի—ինս | ի—երս |
| Հ. | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ունս | զ—ինս | զ—երս |
| Բ. | ի—ից | ի—աց | ի—ոց | ի—եաց | ի—ուց | ի—անց | ի—անց | ի—երաց |
| Պ. | զ—ից | զ—աց | զ—ոց | զ—եաց | զ—ուց | զ—անց | զ—անց | զ—երաց |
| Գ. | —իւք | —օք | —ովք | —եօք | —ուք | —ամբք | —ամբք | —երբք |
| Պ. | զ—իւք | զ—օք | զ—ովք | զ—եօք | զ—ուք | զ—ամբք | զ—ամբք | զ—երբք |
| Ն. | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ունս | ի—ինս | ի—երս |

* Միայն նախդրիւ տրականը կը գնենք, ինչու որ առանց նախդրի կամ վերջահոլով տրականը, բաց ի դերանուններէն, ուրիշ ամէն տեսակ հոլովմանց մէջ սեռականին հետ ըստ ամենայնի նոյն է ։

գտնենք, որուն մէջ սորվողը՝ մէկ նայուածքով կրնայ իւրաքանչիւր հոլովմանց իրարմէ ունեցած տարբերութիւնը պայծառ տեսնել: — Աս տախտակին մէջ ուր որ ասանկ — դրած ենք, հոն պէտք է ամբողջ բառը, այսինքն եզակի ուղղականն իմանալ:

Հոս միայն գլխաւոր ութ հոլովմանց կերպը գրինք, որովհետեւ մնացածները զարտուղի հոլովմունք կրնան ըսուիլ:

Աս տախտակին մէջ աշկերտը տեսակ տեսակ հոլովմանց կերպերը դիւրին եղանակաւ միտք առնելէն զատ կը տեսնէ նաեւ թէ ո՛ր հոլովը ո՛ր հոլովէն կ'ելլէ եւ թէ ինչու կ'ըսուի առ հասարակ թէ բառի մը ո՛ր հոլովման տակ երթալն իմանալու համար պէտք է եզակի կամ յոգնակի սեռականին վերջաւորութեանը նայիլ. որովհետեւ, ինչպէս տախտակին մէջ յայտնի կը տեսնուի, հոլովները գլխաւորաբար անոնց մէջ իրարմէ կը տարբերին:

Ե. Թէպէտ ամէն բառ իր բուն հոլովման տակը կ'երթայ, բայց շատ հոլովմունք իրարու մօտ ըլլալուն համար շատ անգամ իրարու հետ կը փոխուին. ինչպէս, ճնճղուկ, որ հասարակօրէն կը հոլովի, ճնճղկան, ճնճղկամբ, երբեմն ալ կը հոլովի ճնճղուկի, ճնճղուկով: Այսպիսի զարտուղութիւններ շատ կը գտնուին, որոնք միայն շատ կարդալով, աղէկ միտ դնելով, ու բառգիրք նայելով կրնայ սորվուիլ:

Կան քանի մը անուններ ալ, որոնք զանազան նշանակութիւն ունենալնուն համար, երկու կերպ կը հոլովին.

| | | |
|---|---|---|
| Մայր, մայրի, իւ, | մայր ծառ, | չամ աղաճը. |
| Մայր, մօր, մարբ, | մայր, | անա. |
| Օդ, օդոյ, օդով, | օդ, | հավա. |
| Օդ, օդի, օդիւ, | ոտից աման, | փապուճ. |
| Որթ, որթոյ, որթով, | որթ, | ասմա. |
| Որթ, որթու, որթու, | հորթ, | տանա. |
| Դի, դիոյ, դիով, | մեռած մարմին, | լէշ. |
| Դիք, դից, դիօք, | սուտ աստուած, | փութ: |

Կրնայինք Սեռն ալ պարագաներու կարգը դնել, բայց որովհետեւ Եւրոպացւոց լեզուին պէս մեր լեզուին մէջ ճիշդ պարագայ չէիկրնար ըսուիլ, անոր համար զանց կ'առնենք։ Միայն աս կ'ուզենք ըսել որ անանկ ընդհանուր սեռի զանազանութիւն ալ չունինք նէ, կան շատ անուններ՝ որոնք միայն արուներու եւ կան որ միայն էգերու կ'ըսուին. ինչպէս արու են խոյ, գոչ. քաղ, նոխազ, քօշ, էրքէք քէչի, էրքէճ. էգ են մաքի, մարեա. այծ, տիշի քէչի. ընդհանուր են խաշն, գօյուն. որոջ, բուծ, ամիկ, գառն, գուզու. Նոյնպէս արու են եզն, էօքիւզ. ցուլ, պուղա. զուարակ, պուղա, եավրու պուղա. էգ են կով, ինէք, երինջ, տիշի տանա, ու ընդհանուր է, որթ, ընձուղ, տանա. արական է ձի, երիվար, աթ. իգական է զամբիկ, մատեան, ձակ, գըսրագ. ընդհանուր է երամ. եւ այլն։

---

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՎՐԱՅ

Ա. Բացարձակ թուականներն ածական են, ինչպէս վերը (երես 23.) ըսինք, ու կերպ կերպ կը համաձայնին իրենց գոյականին հետ։

Թուական անունը մ՝ եզակի նշանակութիւն ունենալուն համար եզակի գոյական մը կ'ուզէ, ու անոր հետ մէկտեղ կը հոլովի այսպէս*),

Այր մի, պիր ատամ.
Առն միոյ կամ միոջ, պիր ատամըն.
Առն միում, առ այր մի, պիր ատամա.
զԱյր մի, պիր ատամը.
յԱռնէ միոջէ, պիր ատամտան.
Արամբ միով, պիր ատամըլա։

* Հոս տեղս պիտի սկսին տղաք թուական ու մասնական ածական անուններուն գոյական մը գտնեն ու մէկտեղ հոլովելով գրել, ու անոնց դիմացը հոլովներուն նշանակութիւնը գնել։

Այսպէս կը հոլովի միշտ մի ածականն իր եզակի գոյականին հետ մէկտեղ ։

Քաղաք մի, քաղաքի միոյ, պիր շէհիր ·
Կին մի, կնոջ միոյ, պիր գարը ։

Իքի, իւչ, տէօրթ, անեզական են, անոր համար յոգնակի գոյական կ'ուզեն, ու միշտ մէկտեղ կը հոլովին · այսպէս,

Երկու աւուրք, երեք վկայք, չորք կողմանք ·
Երկուց աւուրց, երից վկայից, չորից կողմանց ·
Երկուց աւուրց, երից վկայից, չորից կողմանց,
յերկուս աւուրս, առ երիս վկայս, ի չորս կողմանս ·
զերկուս աւուրս, զերիս վկայս, զչորս կողմանս ·
յերկուց աւուրց, յերից վկայից, ի չորից կողմանց ·
Երկուք աւուրբք, երիւք վկայիւք, չորիւք կողմամբք ·
յերկուս աւուրս, յերիս վկայս, ի չորս կողմանս ։

Այսպէս կը հոլովին նաեւ,

Երկու եղբարք, երկուց եղբարց, իքի գարտաշ ·
Երկու ձեռք, երկուց ձեռաց, իքի էլ ·
Երկու ոտք, երկուց ոտից, իքի այագ ·
Երեք քաղաքք, երից քաղաքաց, իւչ շէհիր ·
Երեք ամք, երից ամաց, իւչ եըլ ·
Երեք մասունք, երից մասանց, իւչ փարչա ·
Չորք հրեշտակք, չորից հրեշտակաց, տէօրթ մէլայիքէ ·
Չորք անկիւնք, չորից անկեանց, տէօրթ քէօշէ ·

Իսկ հինգէն մինչեւ հազար հասարակ ածական անուններուն պէս կը համաձայնին ։

Ինչ որ առաջ դրուին, հասարակօրէն նախդրիւ կը հոլովին · այսպէս,

Եւթն այր, եւթն արք ·
Եւթն առն, եւթն արանց ·
Եւթն առն, առ եւթն այր, եւթն արանց, առ եւթն արս ·
զեւթն այր, զեւթն արս ·
յեւթն առնէ, յեւթն արանց ·
Եւթն արամբ, եւթն արամբք ։

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Հինգ նկանակ, հինգ նկանակի, պէշ սօմուն.
Վեց ժամ, վեց ժամու, ալթը սաաթ.
Եւթն ամ, եւթն ամի, եէտի եըլ.
Ութ օր, ութ աւուր, սէքիզ կիւն:

Թէ որ ետքը դրուին, յոգնակի գոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին բաց ի յոգնակի նախդրիւ հոլովներէն. այսպէս,

Եղբարք հինգ (ռամկաբար հինգք:)
Եղբարց հնգից.
Եղբարց հնգից, առ եղբարս հինգ. (ռամկաբար առ եղբարս հինգս.)
զեղբարս հինգ. (ռամկաբար զեղբարս հինգս.)
յեղբարց հնգից.
Եղբարբք հնգօք:

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Ամք վեց, ամաց վեցից, ալթը եըլ.
Արք եւթն, արանց եւթանց, եէտի քիշի.
Աւուրք տասն, աւուրց տասանց, օն կիւն.
Առաքեալք երկոտասան, առաքելոց երկոտասանից, օն-էքի առաքէլլէր:

Բ. Ինչպէս վերը (էջ 25) ըսինք՝ Դասական Թուականներն ածական են, ու հասարակ ածական անուններուն պէս, թէ որ գոյականէն յառաջ դրուելու ըլլան հասարակօրէն նախդրիւ կը հոլովին. այսպէս,

Երրորդ օր, իւչիւնճիւ կիւն.
Երրորդ աւուր, իւչիւնճիւ կիւնիւն.
Երրորդ կամ երրորդում աւուր, յերրորդ օր, իւչիւնճիւ կիւնէ.
զերրորդ օր, իւչիւնճիւ կիւնիւ.
յերրորդ օրէ, իւչիւնճիւ կիւնտէն.
յերրորդ կամ յերրորդում աւուր, իւչիւնճիւ կիւն կամ կիւնտէ:

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Չորրորդ ժամ, չորրորդ ժամու, տէօրտիւնճիւ սաաթ.
Հինգերորդ մասն, հինգերորդ մասին, պէշինճի հիսսէ.

Ութներորդ հրեշտակ, ութներորդ հրեշտակի, եէտինճի մէլայքէ:

Թէ որ գոյականէն առքը գրուելու ըլլան, մէկտեղ կը հոլովին. ինչպէս,

| | |
|---|---|
| Օր երկրորդ, | իքինճի կիւն. |
| Աւուր երկրորդի, | իքինճի կիւնիւն. |
| Աւուր երկրորդի, յօր երկրորդ, | իքինճի կիւնէ, |
| զՕր երկրորդ, | իքինճի կիւնիւ. |
| յՕրէ երկրորդէ, | իքինճի կիւնտէն. |
| յԱւուր երկրորդում, | իքինճի կիւնտէ. |

Գ. Ընձներականները՝ թէ որ մինակ բանելու ըլլան՝ գոյականի ոյժ կ'ունենան. այսպէս,

Անցին երկոքեան, երկուքն ալ անցան, իքիսի տէ կէչտիլէր:

Սպան զերկոսեան, երկուքն ալ մեռցուց, իքիսինի տէ էօլտիւրտիւ:

Բայց շատ տեղ ալ իբրեւ ածական անուն յոգնակի գոյական կ'ուզեն՝ իրենք անեզական ըլլալնուն համար, ու անոնց հետ մէկտեղ կը հոլովին. այսպէս,

| | |
|---|---|
| Երկոքին կամ երկոքեան որդիք, | իքի էվլատը տա. |
| Երկոցունց որդւոց, | իքի էվլատընըն տա. |
| Երկոցունց որդւոց, առ երկոսին որդիս, | իքի էվլատընա տա. |
| զԵրկոսին կամ զերկոսեան որդիս, | իքի էվլատընը տա. |
| յԵրկոցունց որդւոց, | իքի էվլատընտան տա. |
| Երկոքումբք որդւովք, | իքի էվլատըյլա տա. |

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Երկոքին ձեռք, երկոցունց ձեռաց, իքի էլի տէ.
Երկոքին ոտք, երկոցունց ոտից, իքի այաղը տա:

Դ. Կրկնականները (երես 26.) հասարակօրէն կամ մակբայի տեղ կը բանին, կամ գոյականէն յա-

ռաջ կը դրուին ու նախդրիւ կը հոլովին. այսպէս,
Տանուտէրէ հարցուցում, տանուտէրէ հարցուցման, տանուտէրէ հարցուցմամբ*:

---

### ՅՕԴՈՒԱԾ Դ.

#### ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Մասնական անուններն (երես 27.) Ոմն կամ Ոք թէ որ մինակ բանելու ըլլան՝ գոյական անուան ոյժ ունին. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Ոմանք յոտն կացին, | ոմանք ոտք ելան, | պազըլարը այաղա գալգտըլար. |
| Աւէ ոմն ցնա, | Մէկը անոր կ'ըսէ, | պիրիսի օնա տէր. |
| Ոչ ոք կարէ, | Մէկը չկրնար, | քիմսէ գատըր տէյիլ. |
| Մի ոք ասիցէ, | Մէկը չըսէ, | քիմսէ տէմէսին: |

Բայց թէ որ քովը գոյական ըլլայ՝ անոր հետ մէկտեղ կը հոլովի. այսպէս,

| | |
|---|---|
| Այր ոմն, | Արք ոմանք. |
| Առն ուրումն, | Արանց ոմանց. |
| Առն ումեմն, առ այր ոմն, | Արանց ոմանց, առ արս ոմանս. |
| զԱյր ոմն, | զԱրս ոմանս. |
| յԱռնէ ումեմնէ, | յԱրանց ոմանց. |
| Արամբ ոմամբ, | Արամբք ոմամբք: |

Անոր պէս կը հոլովին նաեւ՝

Այլ ոմն, այլոյ ուրումն. այլք ոմանք, առ այլս ոմանս, պիր պաշքասը:

Քահանայ ոմն, քահանայի ուրումն. քահանայք ոմանք, քահանայից ոմանց, պիր փափազ:

Մարգարէ ոմն, մարգարէի ուրումն. մարգարէք ոմանք, մարգարէից ոմանց, պիր փէյղամպէր:

* Կան քանի մը թուական անուններ ալ, որ Զուգական կ'ըսուին, որոնք ակ կամ եակ կը վերջաւորին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Միակ, | Մէկ կամ մէկիկ, | պիր. |
| Երկեակ, | Երկու, | իքի. |
| Երրեակ, | Երեք, | իւչ. |
| Քառեակ, | Չորս, | տէօրթ: |

Բայց ընտիր հեղինակներու մէջ չեն գտնուիր:

Հարիւրապետ ոմն, հարիւրապետի ուրումն. հարիւրապետք ոմանք, հարիւրապետաց ոմանց, պիր եիւզպաշը:

Ոք մասնական անունը ոչ կամ մի բացասական բառին հետ կապուի նէ՝ այսպէս կը հոլովի,

| | | | |
|---|---|---|---|
| Ոչ ոք, | մի ոք, | քիմսէ, | հիչ պիրի. |
| Ոչ ուրուք, | մի ուրուք, | քիմսէնին, | հիչ պիրինին. |
| Ոչ ումեք, | մի ումեք, | քիմսէյէ, | հիչ պիրինէ. |
| Ոչ զոք, | մի զոք, | քիմսէյի, | հիչ պիրինի. |
| Ոչ յումեքէ, | մի յումեքէ, | քիմսէտէն, | հիչ պիրինտէն. |

Իմն կամ ինչ մասնական անունն (Երես 27.) անկենդան բաներու կ'ըսուի: Թէ որ միայնակ բանելու ըլլայ՝ գոյական անուան ոյժ կ'ունենայ. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Ամենայն ինչ անցաւոր է, | ամէն բան անցաւոր է, | հէր շէյ կէչիճի տիր. |
| Չառնէ ինչ մեծ, | մեծ բան մը չ'ընէր, | պէօյիւք պիր շէյ էթմէզ. |
| Ինչ ոչ ասաց, | բան մը չըսաւ, | պիր շէյ տէմէտի. |
| Չիք ինչ ծածուկ, | ծածուկ բան մը չկայ, | կիզլի պիր շէյ եօգտուր: |

Բայց թէ որ քովը գոյական ըլլայ՝ սովորաբար մէկտեղ կը հոլովի. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Պատճառ ինչ, | պատճառ մը, | պիր սէպէպ. |
| Պատճառի իրիք, | պատճառի մը, | պիր սէպէպին. |
| Պատճառի իմիք, | պատճառի մը, | պիր սէպէպէ. |
| զՊատճառ ինչ, | պատճառ մը, | պիր սէպէպի. |
| ի Պատճառէ իմեքէ, | պատճառէ մը, | պիր սէպէպտէն. |
| Պատճառաւ իւիք, | պատճառով մը, | պիր սէպէպիլէ: |

Մեւս կամ Միւս մասնական անունը (Երես 28.) թէ որ քովը գոյական անուն մը ունենալու ըլլայ՝ մէկտեղ կը հոլովի. այսպէս, Մեւս օր, միւսոյ աւուր, միւսում աւուր, զմեւս օր, ի մեւս օրէ, միւսով աւուրբ, ի միւսում աւուր:

Այլ մասնական անունը (Երես 28.) թէ որ քովը գոյական անուն մը ունենալու ըլլայ՝ հասարակօրէն կը համաձայնի. այսպէս,

| | |
|---|---|
| Այլ քաղաք, | Այլ քաղաքք· |
| Այլոյ քաղաքի, | Այլոց քաղաքաց· |
| Այլում քաղաքի, | Այլոց քաղաքաց, |
| յայլ քաղաք, | յայլ քաղաքս· |
| զԱյլ քաղաք, | զԱյլ քաղաքս· |
| յԱյլմէ քաղաքէ, | յԱյլոց քաղաքաց· |
| Այլով քաղաքաւ, | Այլովք քաղաքօք· |
| յԱյլում քաղաքի, | յԱյլ քաղաքս: |

Այս օրինակէս կ'երեւայ որ յոգնակի նախդրիւ հոլովներու մէջ չեն համաձայնիր. անոր համար չըսուիր այլք քաղաքք, առ այլս քաղաքս, զայլս քաղաքս. եւ այլն:

Այսպէս կը հոլովի նաեւ,

Այլ աշակերտ, այլոյ աշակերտի·
Այլ ազգ, այլոյ ազգի·
Այլ մարգարէ, այլոյ մարգարէի.

Երբեմն ալ նախդրիւ կը հոլովի, այսպէս,

| | |
|---|---|
| Այլ քաղաք, | Այլ քաղաքք· |
| Այլ քաղաքի, | Այլ քաղաքաց· |
| Այլ քաղաքի, | Այլ քաղաքաց, |
| յայլ քաղաք, | յայլ քաղաքս· |
| զԱյլ քաղաք, | զԱյլ քաղաքս· |
| յԱյլ քաղաքէ, | յԱյլ քաղաքաց· |
| Այլ քաղաքաւ, | Այլ քաղաքօք· |

Բայց եթէ այլ վերջը դրուելու ըլլայ, ան ատեն սանկ կ'ըլլայ·

| | |
|---|---|
| քաղաք այլ, | քաղաքք այլք· |
| քաղաքի այլոյ, | քաղաքաց այլոց· |
| քաղաքի այլում, ի քաղաք յայլ, | քաղաքաց այլոց, ի քաղաքս յայլս· |
| զքաղաք զայլ, | զքաղաքս զայլս· |
| ի քաղաքէ յայլմէ, | ի քաղաքաց յայլոց· |
| քաղաքաւ այլով, | քաղաքօք այլովք· |
| ի քաղաք յայլ, | ի քաղաքս յայլս· |

# ԳԼՈՒԽ Բ.

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. Ինքն էական դերանունն երբեմն մէկալ էական դերանուններուն հետ մէկտեղ կը բանի. այսպէս,

| | |
|---|---|
| Ես ինքն, | պէն քէնտիմ. |
| Դու ինքն, | սէն քէնտին. |
| Նա ինքն, | օ քէնտիսի. |
| Մեք ինքնին, | պիզ քէնտիմիզ. |
| Դուք ինքնին, | սիզ քէնտինիզ. |
| Նոքա ինքնին, | օնլար քէնտիլէրի։ |

Երբեմն ալ ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն, անունները՝ որոնք մակբայ ալ կրնան սեպուիլ, էական դերանուններուն հետ մէկտեղ կը բանին. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Ես ինձէն, | Ես ինձմէ, | պէն քէնտիմտէն. |
| Դու քեզէն, | Դուն քեզմէ, | սէն քէնտինտէն. |
| Մեք մեզէն, | Մենք մեզմէ, | պիզ քէնտիմիզտէն. |
| Դուք ձեզէն, | Դուք ձեզմէ, | սիզ քէնտինիզտէն. |

Բ. Այս, այդ, այն, ցուցական դերանունները և ածական են, ինչպէս վերը (Երես 33.) գրեցինք, և կրնան իրենց գոյականէն առաջ կամ ետքը դրուիլ։

Թէ որ առաջ դրուելու ըլլան, այսպէս կը հոլովին.

| | |
|---|---|
| Այս տուն, | Այս կամ այսոքիկ տունք. |
| Այսր տան, | Այսոցիկ կամ այսց տանց. |
| Այսմ տան, յայս տուն, | Այսոցիկ տանց, յայսոսիկ տունս. |
| զԱյս տուն, | զԱյս կամ զայսոսիկ տունս. |
| յԱյսմ տանէ, | յԱյսոցիկ կամ յայսց տանց. |
| Այսու տամբ, | Այսոքիւք տամբք, |
| յԱյսմ տան, | յԱյս կամ յայսոսիկ տունս։ |

Թէ որ ետքը դրուելու ըլլան՝ այսպէս կը հոլովին.

| | |
|---|---|
| Տուն՝ այս, | Տունք՝ այսոքիկ. |
| Տան՝ այսորիկ, | Տանց՝ այսոցիկ. |

| | |
|---|---|
| Տանս այսմիկ, | Տանցս այսոցիկ, |
| ի տունս յայս, | ի տունս յայսոսիկ. |
| զՏունս զայս, | զՏունս զայսոսիկ. |
| ի Տանէս յայսմանէ, | ի Տանցս յայսցանէ. |
| Տամբս այսուիկ, | Տամբքս այսոքիւք. |
| ի Տանս յայսմիկ, | ի Տունս յայսոսիկ: |
| ի տունս յայս, | |

Նոյնպէս կը հոլովին նաեւ՝

Քաղաքս այս, քաղաքիս այսորիկ.
Ժողովուրդս այս, ժողովրդեանս այսորիկ:

կամ այսպէս.

Այս քաղաք, այսր քաղաքի.
Այս ժողովուրդ, այսր ժողովրդեան:

| | |
|---|---|
| Տունն այն, | Տունքն այնոքիկ. |
| Տանն այնորիկ, | Տանցն այնոցիկ. |
| Տանն այնմիկ, | Տանցն այնոցիկ, |
| ի տունն յայն, | ի տունսն յայնոսիկ. |
| զՏունն զայն, | զՏունսն զայնոսիկ. |
| ի Տանէն յայնմանէ, | ի Տանցն յայնցանէ: |
| Տամբն այնուիկ, | Տամբքն այնոքիւք. |
| ի Տանն յայնմիկ, | ի Տունսն յայնոսիկ: |

Նոյնպէս կը հոլովի նաեւ՝

Քաղաքն այն, քաղաքին այնորիկ.
Ժողովուրդն այն, ժողովրդեանն այնորիկ:

կամ այսպէս.

Այն քաղաք, այնր քաղաքի.
Այն ժողովուրդ, այնր ժողովրդեան:

| | |
|---|---|
| Տունդ այդ, | Տունքդ այդոքիկ. |
| Տանդ այդորիկ, | Տանցդ այդոցիկ. |
| Տանդ այդմիկ, | Տանցդ այդոցիկ, |
| ի տունդ յայդ, | ի տունսդ յայդոսիկ. |
| զՏունդ զայդ, | զՏունսդ զայդոսիկ. |
| ի Տանէդ յայդմանէ, | ի Տանցդ յայդցանէ. |
| Տամբդ այդուիկ, | Տամբքդ այդոքիւք. |
| ի Տանդ յայդմիկ, | ի Տունսդ յայդոսիկ: |

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Քաղաքդ այդ, քաղաքիդ այդորիկ·
Ժողովուրդդ այդ, ժողովրդեանդ այդորիկ։

կամ այսպէս·

Այդ քաղաք, այդր քաղաքի·
Այդ ժողովուրդ, այդր ժողովրդեան։

Գուցէ մէկը տարակուսի, թէ Սա, դա, նա, եւ Այս, այդ, այն, ցուցական դերանուններուն նշանակութիւնը մէկ ըլլալով, ինչպէս կրնան առջինները գոյական ըլլալ ու ետքինները ածական։

Պատճառն ան է որ շատ անուններ երբեմն իրենց գոյականը զօրութեամբ ունենալով, գոյականի տեղ կը բանին. ինչպէս վերը Անձներական ու Մասնական անուանց համար ըսինք։ Երբեմն ալ իրենց գոյականը ներգործութեամբ կ'ունենան. ինչպէս, Ոմն գնաց, Մէկը գնաց, պիրիսի կիթտի. հոս զօրութեամբ կայ գոյականը, ու Ոմն մասնական անունը գոյական անուան տեղ գործածուած է։ Կամ այսպէս, Այր ոմն գնաց, Մէկ մարդ մը գնաց, պիր ատամ կիթտի. հոս գոյականը ներգործութեամբ դրուած է, ու Ոմն ածական է։

Այսպէս ալ ցուցական դերանուններն երբեմն մինակ կը բանին, գոյական անունը զօրութեամբ իմացուելով։ Երբեմն ալ գոյականնին ներգործութեամբ կ'ունենան, ու ան ատեն ածական են։

Բայց գրաբառ լեզուի մէջ երբ որ ցուցական դերանունները մինակ բանին, ու գոյական անուան ոյժ ունենան՝ ան ատեն հասարակօրէն կը գործածուի Սա, դա, նա։

Իսկ երբ որ քովը գոյականը մէկտեղ ըլլայ, ան ատեն կը գործածուի Այս, այդ, այն։

Ասոր թէպէտ աշխարհաբառ ու տաճկերէն կ'ըսուի՝

Ես անիկայ տեսայ, պէն օնու կէօրտիւմ.
Ես ասիկայ տեսայ, պէն պունու կէօրտիւմ.
Ես ատիկայ տեսայ, պէն շունու կէօրտիւմ։

կամ այսպէս.

Ես ան մարդը տեսայ, պէն օ ատամը կէօրտիւմ.
Ես աս մարդը տեսայ, պէն պու ատամը կէօրտիւմ.
Ես ատ մարդը տեսայ, պէն շու ատամը կէօրտիւմ:

Բայց գրաբառ այսպէս կ'ըսուի՝

Ես տեսի զնա, ես տեսի զայրն զայն.
Ես տեսի զսա, ես տեսի զայրս զայս.
Ես տեսի զդա, ես տեսի զայրդ զայդ:

Չ'ըսուիր Ես տեսի զնա այր, զդա այր, զսա այր:

Ասիկա ալ աղէկ գիտնալու է որ այս, այդ, այն, ցուցական դերանուններն երբ որ իրենց գոյականէն ետքը կը դրուին, դիմորոշ յօդերն ալ գոյականին վրայ կրկնելու է, այսպէս, մարդս այս, մարդդ այդ, մարդն այն: Թէ որ ցուցական դերանունն այս է, իր գոյականին վրայ ս դնելու է, թէ որ այդ է՝ դ, թէ որ այն է՝ ն, ինչպէս վերի օրինակին մէջ կ'երեւայ:

Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանուններն ածական են, (երես 34.) ու հասարակօրէն իրենց գոյականէն առաջ կը դրուին, եւ կրնան երբեմն նախադաս ածականաց պէս նախդրիւ հոլովիլ. այսպէս, նոյն հոգի, նոյն հոգւոյ, զնոյն հոգի, ի նոյն հոգւոյ:

Բայց աւելի վայելուչ է մէկտեղ հոլովելը. այսպէս,

Նոյն հոգի, Նոյն կամ Նոքին հոգիք.
Նորին հոգւոյ, Նոցին հոգւոց.
Նմին հոգւոյ, Նոցին հոգւոց,
առ Նոյն հոգի, առ Նոյն կամ Նոսին հոգիս.
զՆոյն հոգի, զՆոյն կամ զՆոսին հոգիս.
ի Նմին հոգւոյ, ի Նոցին հոգւոց.
Նովին հոգւով, Նովին կամ Նովիմբք հոգւովք:

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Նոյն մարմին, Նոյն կամ Նորին մարմնոյ.
Նոյն պատարագ, Նոյն կամ Նորին պատարագի.
Նոյն ծառ, Նոյն կամ Նորին ծառոյ:

Յուցական դերանուններու սեռականը Սորա, Դորա, Նորա, Սոյա, Դոյա, Նոյա քիչ տեղ ուղղականի պէս նորէն կը հոլովին. այսպէս,

Սորայ, ոյ, ով, ոց, ովք. Սոցայ, ոյ, ով, ոց, ովք.
Դորայ, ոյ, ով, ոց, ովք. Դոցայ, ոյ, ով, ոց, ովք.
Նորայ, ոյ, ով, ոց, ովք. Նոցայ, ոյ, ով, ոց, ովք:

գ. Ստացական դերանունները ածական են, (երես 34.) ու հասարակօրէն իրենց գոյականէն ետքը գրուելով, անոնց հետ միշտ կը համաձայնին, բաց ի յոգնակի նախդրիւ հոլովներէն. այսպէս,

| | | |
|---|---|---|
| Եղբայր իմ, | Եղբայրս, | գարտաշըմ. |
| Եղբօր իմոյ, | Եղբօրս, | գարտաշըմըն. |
| Եղբօր իմում, առ | Եղբօրս, | գարտաշըմա. |
| եղբայր իմ, | | |
| զԵղբայր իմ, | Եղբայրս, | գարտաշըմը. |
| յԵղբօրէ իմմէ, | Եղբօրմէս, | գարտաշըմտան. |
| Եղբարբ իմով, | Եղբօրս հետ, | գարտաշըմըլա. |
| Եղբարք իմ, | Եղբայրներս, | գարտաշլարըմ. |
| Եղբարց իմոց, | Եղբայրներուս, | գարտաշլարըմըն. |
| Եղբարց իմոց, առ | Եղբայրներուս, | գարտաշլարըմա. |
| եղբարս իմ, | | |
| զԵղբարս իմ, | Եղբայրներս, | գարտաշլարըմը. |
| յԵղբարց իմոց, | Եղբայրներէս, | գարտաշլարըմտան. |
| Եղբարբք իմովք, | Եղբայրներովս, | գարտաշլարըմըլա. |

Այսպէս կը հոլովին նաեւ՝

Հայր մեր, հօր մերոյ, Հարք մեր, հարց մերոց.
Տուն իւր, տան իւրոյ, Տունք իւր, տանց իւրոց.
Քոյր ձեր, քեռ ձերոյ, Քորք ձեր, քերց ձերոց:

դ. Ո՞ր հարցական դերանունը (երես 36.) ածական է, ու հասարակօրէն իր գոյականէն յառաջ գրուելով՝ անոր հետ կը համաձայնի, բաց ի յոգնակի նախդրիւ հոլովներէն. այսպէս,

Ո՞ր քաղաք, որո՞յ քաղաքի, զո՞ր քաղաք, յոր֊մէ՞ քաղաքէ, որո՞վ քաղաքաւ: Ո՞ր քաղաքք, որո՞ց քաղաքաց, յո՞ր քաղաքս, զո՞ր քաղաքս, յորո՞ց քաղաքաց:

Ե. Տաճկերէն ու աշխարհաբառ լեզուին մէջ ալ կան դիմորոշ յօդեր, այս ինքն, ս, դ, ը, Գլուխս, գլուխդ, գլուխը: Ըմ, ըն, ը, Իմ, ին, ի, Պաշըմ, պաշըն, պաշը, էվիմ, էվին, էվի, ինչպէս առջի մասին մէջ (երես 29.) ըսինք: Աս դիմորոշ յօդերէն նոր սորվողները շատ անգամ կը խաբուին տաճկերէն ու աշխարհաբառ ուղղականը գրաբառ հայցական թարգմանելով: Ինչու որ հասարակ անուանց ուղղականը գրինք·

խօսք, Քաղաք, Գետ, Ժամ, Հիմ, Գառ, եւ այլն:
Սէօզ, Շէհիր, Չայ, Քիլիսէ, Թէմէլ, Գուզու:

Ասոնց հայցականը գրինք·

խօսքը, Քաղաքը, Գետը, Ժամը, Հիմը, Գառը:
Սէօզիւ, Շէհիրի, Չայը, Քիլիսէյի, Թէմէլի, Գուզույու:

Բայց աշխարհաբառ լեզուին ը կամ ն գիրը շատ տեղ հայցական չիձեւացըներ, հապա ն դիմորոշ յօդի ուժ ունի. եւ ան ատեն ուղղականն ու հայցականը մէկ է. ինչպէս երբոր կ'ըսեմ, Քաղաքը կործանեցաւ, տունը ինկաւ, արեւը ծագեցաւ, լուսինը խաւարեցաւ, ծառը չորցաւ, հիւանդը մեռաւ, աշխարհքը կլոր է, ծովը լայն է, կրակն ու օդը թեթեւ են, ասոնց ամէնն ալ ուղղական է. ու գրաբառ այսպէս պիտի թարգմանուին, Քաղաքն կամ տունն կործանեցաւ, արեգակն ծագեաց, լուսինն խաւարեցաւ, ծառն չորացաւ, հիւանդն մեռաւ, աշխարհս է գնդաձեւ, լայն է ծովն, հուրն եւ օդն են թեթեւ:

Թէ ինչպէս իմանալու է որ արդեօք աշխարհաբառն ուղղական է՝ թէ հայցական, երկրորդ մասին մէջ կը խօսինք: Հիմա միայն աս գիտնաս որ չէզոք, կրաւորական ու էական բայի քով եղածն՝ հայցական չիկրնար ըլլալ:

Նոյնպէս տաճկերէն լեզուի մէջ ալ, անուն մը մինակ եղած ատեն՝ առջի մասին մէջ հոլովներուն դիմացը դրածներնուս պէս կը հոլովի: Բայց թէ որ դիմականին քովը ստացական դերանուն մ'ըլլայ կամ զօրութեամբ իմացուի, կամ ուրիշ սեռական մը (որ յատկացուցիչ կ'ըսուի), ան ատեն այսպէս կը հոլովի:

պէնիմ էվիմ, Սէնին էվին, Օնուն էվի·
պէնիմ էվիմին, Սէնին էվինին, Օնուն էվինին·
պէնիմ էվիմէ, Սէնին էվինէ, Օնուն էվինէ·
պէնիմ էվիմի, Սէնին էվինի, Օնուն էվինի·
պէնիմ էվիմտէն, Սէնին էվինտէն, Օնուն էվինտէն·
պէնիմ էվիմիլէ, Սէնին էվինիլէ, Օնուն էվիյիլէ·
պէնիմ էվիմտէ, Սէնին էվինտէ, Օնուն էվինտէ։

Ուստի թէ որ ըսեմ, (օնուն) էվի երգըլը· (օնուն) էվի եանտը· Այըն ըշըղը գայպարտը· Տէնիզին սույու թիւքէնմէզ, ուղղական պէտք է թարգմանել, այսպէս, Տուն նորա կործանեցաւ, տուն նորա այրեցաւ, լոյս լուսնին նուազեցաւ, ջուր ծովու ոչ պակասէ։

---

# ԳԼՈՒԽ Գ.

## ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԲԱՅԵՐՈՒՆ պարագաներուն վրայ քանի մը հարկաւոր գիտելիք կան։

Խօսեցանք վերը թէ բայերուն պարագաները վեց են (Երես 36.)։ Իսկ դիւրին ճամբան որոշելու, թէ բայ մը արդեօք ներգործական է՝ թէ չէ, աս է։

Երբ որ տղան աղէկ կը հասկընայ բային նշանակութիւնը, թող քովը հայցական հոլով մը դնէ, թէ որ բային կը յարմարի՝ ներգործական է, թէ որ չի յարմարիր՝ չէզոք է։ Ինչպէս Գանեմ, ճը ծեծեմ, տէօյէրիմ՝ ըսել է. ու իր քովը հայցական հոլով կը յարմարի, ինչպէս. Վարպետս զիս չծեծեր, ուստամ պէնի տէօյմէզ, անանկ է նէ ծեծել, ներգործական է։

Այսպէս կ'ըսուի նաեւ՝

Քրիստոփոր Կոլոմբոս Ամերիկան գտաւ.
Քրիսթօֆօր Գօլօմպօս Ամէրիկայը պուլտու.
Ես աս կերակուրը կամ աս հացը կ'ուտեմ.
Պէն պու եէմէյի եախօտ էքմէյի եէրիմ։

Ես այս գինին չեմ խմեր.
Պէն պու շարապը իչմէմ.
Ես զգեստս մաքուր կը պահեմ.
Պէն էսպապըմը թէմիզ սագլարըմ.
Եղբայրս աղէկ գիր կը գրէ.
Գարտաշըմ էյի եազը եազար:

Նմանկ է նէ գտանեմ, ուտեմ, ըմպեմ, պահեմ, գրեմ ներգործական են:

Բայց ոմանց քովը հայցական հոլով չիվայլեր-ինչպէս,

Ես կ'երթամ, Պետրոս կը նստի, Թռչուններ կը թռչին,
Ջուրը կը վազէ.
Պէն կիտէրիմ, Պետրոս օթուրուր, գուշլար ուչար, սու ագար:

Ուրեմն աս երթամ, նստիմ, թռչիմ, բայերը չէզոք են:

Կան քանի մը շաղկապներ ու մակբայներ, որոնց քովի բայը հասարակօրէն ստորադասական եղանակ կը դրուի: Ստորադասականն աշխարհաբառ ու տաճկերէն շատ ժամանակներ ունի, այս ինքն Ներկայ, Անկատար, Կատարեալ, Յարակատար, Գերակատար, Ապառնի: Արդ՝ գիտնալու համար, որ ինչպէս կը ձեւանայ աշխարհաբառի ու տաճկերէնի մէջ ստորադասական եղանակը, եւ թէ ինչպէս գրաբառի կը թարգմանուի՝ հոս օրինակ մը կը դնենք:

Ստորադասական Ներկայ:

| | | |
|---|---|---|
| Թէ որ գործեմ, | էյեր իշլէրսէմ, | Եթէ գործեմ կամ Եթէ գործիցեմ. |
| Թէ որ գործես, | էյեր իշլէրսէն, | Եթէ գործես. |
| Թէ որ գործէ, | էյեր իշլէրսէ, | Եթէ գործէ. |
| Թէ որ գործենք, | էյեր իշլէրսէք, | Եթէ գործեմք, |
| Թէ որ գործէք, | էյեր իշլէրսէնիզ. | Եթէ գործէք. |
| Թէ որ գործեն, | էյեր իշլէրսէլէր. | Եթէ գործեն. |

Անկատար:

| | | |
|---|---|---|
| Թէ որ գործէի, | էյեր իշլէսէ իտիմ, | Եթէ գործէի, |
| Թէ որ գործէիր, | էյեր իշլէսէ իտին, | Եթէ գործէիր |

Թէ որ գործէր, էյեր իշլէսէ իտի, ԵԹԷ ԳՈՐԾԷՐ·
Թէ որ գործէինք, էյեր իշլէսէ իտիք, ԵԹԷ ԳՈՐԾԷԱՔ·
Թէ որ գործէիք, էյեր իշլէսէ իտինիզ, ԵԹԷ ԳՈՐԾԷԻՔ·
Թէ որ գործէին, էյեր իշլէսէ իտիլէր, ԵԹԷ ԳՈՐԾԷԻՆ։

Կատարեալ։

Թէ որ գործեցի, էյեր իշլէտիմ իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵՑԻ,
Թէ որ գործեցիր, էյեր իշլէտին իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵՑԵՐ,
Թէ որ գործեց, էյեր իշլէտի իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵԱՑ·
Թէ որ գործեցինք, էյեր իշլէտիք իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵՑԱՔ·
Թէ որ գործեցիք, էյեր իշլէտինիզ իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵՑԷՔ·
Թէ որ գործեցին, էյեր իշլէտիլէր իսէ, ԵԹԷ ԳՈՐԾԵՑԻՆ·

Յարակատար։

Թէ որ գործեր եմ, ես, է, ենք, էք, են.
Էյեր իշլէմիշ իսէմ, իսէն, իսէ, իսէք, իսէնիզ, իսէլէր·
ԵԹԷ ԳՈՐԾԵԱԼ ԵՄ կամ ԻՑԵՄ, ԵՍ, Է, ԵՄՔ, ԷՔ, ԵՆ։

Գերակատար։

Թէ որ գործեր էի, էիր, էր, էինք, էիք, էին։
Էյեր իշլէմիշ օլսամ ըտը, օլսան ըտը, օլսայըտը, օլսայըտըգ, օլսայըտընըզ, օլսայըտըլար·
ԵԹԷ ԳՈՐԾԵԱԼ ԷԻ, ԷԻՐ, ԷՐ, ԷԱՔ, ԷԻՔ, ԷԻՆ։

Ապառնի։

Թէ որ գործելու ըլլամ, էյեր իշլէյէճէք օլուրսամ.
Թէ որ գործելու ըլլաս, էյեր իշլէյէճէք օլուրսան.
Թէ որ գործելու ըլլայ, էյեր իշլէյէճէք օլուրսա.
Թէ որ գործելու ըլլանք, էյեր իշլէյէճէք օլուրսագ.
Թէ որ գործելու ըլլաք, էյեր իշլէյէճէք օլուրսանըզ.
Թէ որ գործելու ըլլան, էյեր իշլէյէճէք օլուրսալար.

ԵԹԷ ԳՈՐԾԻՑԵՄ, ԵԹԷ ԳՈՐԾԻՑԵՍ, ԵԹԷ ԳՈՐԾԻՑԷ·
ԵԹԷ ԳՈՐԾԻՑԵՄՔ, ԵԹԷ ԳՈՐԾԻՑԷՔ, ԵԹԷ ԳՈՐԾԻՑԵՆ,

Այնպէս աշխարհաբառ ու տաճկերէն լեզուի մէջ բացասական խոնարհումը ստորասականէն տարբեր է. որուն օրինակը հոս դնենք, որ սովորողը գիտնայ թէ ինչպէս պիտի գրաբառ դարձընէ։

Սահմանական Ներկայ:

| | | |
|---|---|---|
| Չեմ գործեր, | իշլէմէմ, | ոչ գործեմ, |
| Չես գործեր, | իշլէմէսին, | ոչ գործես, |
| Չի գործեր, | իշլէմէզ, | ոչ գործէ. |
| Չենք գործեր, | իշլէմէյիզ, | ոչ գործեմք. |
| Չէք գործեր, | իշլէմէզսինիզ, | ոչ գործէք. |
| Չեն գործեր, | իշլէմէզլէր, | ոչ գործեն: |

Անկատար:

| | | |
|---|---|---|
| Չէի գործեր, | իշլէմէզ իտիմ, | ոչ գործէի. |
| Չէիր գործեր, | իշլէմէզ իտիմ, | ոչ գործէիր. |
| Չէր գործեր, | իշլէմէզ իտի, | ոչ գործէր. |
| Չէինք գործեր, | իշլէմէզ իտիք, | ոչ գործէաք. |
| Չէիք գործեր, | իշլէմէզ իտինիզ, | ոչ գործէիք. |
| Չէին գործեր, | իշլէմէզ իտիլէր, | ոչ գործէին. |

Կատարեալ:

| | | |
|---|---|---|
| Չգործեցի, | իշլէմէտիմ, | ոչ գործեցի. |
| Չգործեցիր, | իշլէմէտին, | ոչ գործեցեր. |
| Չգործեց, | իշլէմէտի, | ոչ գործեաց. |
| Չգործեցինք, | իշլէմէտիք, | ոչ գործեցաք. |
| Չգործեցիք, | իշլէմէտինիզ, | ոչ գործեցէք. |
| Չգործեցին. | իշլէմէտիլէր, | ոչ գործեցին: |

Յարակատար:

Գործած չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն.
Իշլէմէմիշ իմ, սին, տիր, իզ, սինիզ, տիրլէր.
Ոչ եմ կամ չեմ, ոչ ես, ոչ է, ոչ եմք, ոչ էք, ոչ են գործեալ:

Կամ այսպէս.

Գործած չունիմ, չունիս, չունի, չունինք, չունիք, չունին.
Իշլէտիյիմ, իշլէտիյին, իշլէտիյի եօգտուր, իշլէտիյիմիզ, իշլէտիյինիզ, իշլէտիքլէրի եօգտուր:
Չիք իմ, չիք քո, չիք նորա գործեալ, չիք մեր, չիք ձեր, չիք նոցա գործեալ:

Գերակատար:

Գործած չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին.
Իշլէմէմիշ իտիմ, իտին, իտի, իտիք, իտինիզ, իտիլէր.
Ոչ էի, ոչ էիր, ոչ էր, ոչ էաք, ոչ էիք, ոչ էին գործեալ:

Ապառնի :

| | | |
|---|---|---|
| Զգործեմ, | իշլէմէյիմ, | ու գործեցէց· |
| Զգործես, | իշլէմէյէսին, | ու գործեւցեւ կամ մի գործեւցեւ· |
| Զգործէ, | իշլէմէսին, | մի գործեւցէ· |
| Զգործենք, | իշլէմէյէլիմ, | մի գործեւցուք· |
| Զգործէք, | իշլէմէյէսինիզ, | մի գործեւջէք· |
| Զգործեն, | իշլէմէսինլէր, | մի գործեւցեն: |

Ստորադասական :

| | | |
|---|---|---|
| Զգործեմ, | իշլէմէզսէմ, | ու գործէցեմ· |
| Զգործես, | իշլէմէզսէն, | ու գործէցեւ· |
| Զգործէ, | իշլէմէզսէ, | ու գործէցէ· |
| Զգործենք, | իշլէմէզսէք, | ու գործէցեմք· |
| Զգործէք, | իշլէմէզսէնիզ, | ու գործէցէք· |
| Զգործեն, | իշլէմէզսէլէր, | ու գործէցեն: |

Թէ՛ գրաբառ, թէ աշխարհաբառ ու թէ տաճկերէն լեզուի մէջ ապառնին շատ տեղ հրամայականի տեղ կը գործածուի. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| գործեսցես, | (պէտի) գործեւ, | իշլէյէսին. |
| գործեսցէ, | (թող) գործէ, | իշլէսին. |
| գործեսցուք, | (պէտի) գործենք, | իշլէյէլիմ. |
| գործեսջիք, | (պէտի) գործէք, | իշլէյէսինիզ. |
| գործեսցեն, | (թող) գործեն, | իշլէսինլէր: |

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՄԱՍԱՆՑ բանին քովէ քով գալ կապուիլը գրաբառ Համաձայնութիւն կ'ըսուի :

Ամէն լեզու համաձայնութեան վրայ զատ զատ կանոններ ունի, որով մէկալ լեզուներէն կը տարբերի, եւ թէ որ համաձայնութիւնն ամէն մէկ լեզուին կանոններուն համաձայն չըլլայ, սխալ կ'ըլլայ :

Բառերը զանազան եղանակաւ իրարու հետ կը կապուին. մէյ մը անունն անուան հետ, մէյ մ'ալ բայը անուան հետ :

Ա. Անունն անուան հետ երեք կերպ կը կապուի:

Մէյ մը իբր ածական իր գոյականին հետ, ինչպէս վերը խօսեցանք :

Երկրորդ՝ սեռական անուն մը կը կապուի ուրիշ անուան մը հետ, իբրեւ յատկացուցիչ իր յատկացելոյն հետ :

Երրորդ՝ երկու նոյն հոլովով գոյական անուններ իրարու հետ կը կապուին, իբրեւ բացայայտիչ իր բացայայտելոյն հետ :

Յատկացուցիչ կ'ըսուի ան սեռական անունը, որն որ իր մերձաւոր անուան կամ յատկացելոյն որուն ըլլալը կը ցուցընէ. ինչպէս տունը թէ որ կ'ուզեմ իմացընել թէ որունն է, քովը սեռական մը կը դնեմ, այսպէս՝ հօր տուն. որ կը ցուցընէ թէ տունն իմ հօրն է : Աս սեռականը, որ բանի մը որուն ըլլալը կը ցուցընէ Յատկացուցիչ կ'ըսուի, ու մէկալը Յատկացեալ :

Բացայայտիչ կ'ըսուի ան գոյականն, որն որ ինչպէս բառը յայտնի կը ցուցընէ, ուրիշ գոյական անուն մը կը բացայայտէ, թէ ինչ կամ ո՛րն է, ինչպէս թէ որ մինակ Պօղոս ըսեմ, չեմ բացայայտեր թէ ո՛րն է, բայց երբ որ անոր քովը կը դնեմ Առաքեալ կամ Հայր Պօղոս, ան ատեն կը բա-

ցայայտեմ թէ ըսած քաղաքս Հռոմ է, Վեննետիք կամ Վիէննա չէ:

Բ. Անունը բային հետ կամ իբրեւ անուն բայի եւ կամ իբրեւ խնդիր կը կապուի:

Անուն բայի կ'ըսուի բային քովն եղած ուղղական հոլովը, որն որ ամէն բայ կամ ներգործութեամբ եւ կամ զօրութեամբ ունի, ինչպէս առաջին մասին մէջ Եմ էական բային քովը ներգործութեամբ դրուած է, այսպէս, Ես եմ, դու ես, նա է, եւ այլն: Իսկ մնացած բայերուն քով զօրութեամբ կ'իմացուի, այս ինքն պիտի ըլլայ՝ Ես գործեմ, դու գործես, նա գործէ, եւ այլն:

Խնդիր կ'ըսուի ամէն հոլոված բառ, որն որ իւրաքանչիւր բայ իր նշանակութեան համաձայն կ'ուզէ առնել. ինչպէս աս մասին մէջ ընդարձակ պիտի խօսինք:

Խնդիր կ'ըսուին նաեւ նախադրութիւններուն առջեւն եղած հոլովները:

Աս օրինակին մէջ ամէն ըսածներս կ'երեւնան:

Նախաստեղծ մարդն Ադամ ոչ պահեաց պատուիրանն Աստուծոյ:

Պահեաց ներգործական բայ է, Ադամ անուն բային է, ուղղական հոլով, միանգամայն բացայայտիչ է. մարդն բացայայտեալն է. Նախաստեղծը՝ մարդուն ածական է. պատուիրանն հայցական խնդիր է պահեաց ներգործական բային. Աստուծոյ յատկացուցիչ է պատուիրանին:

Քերականութեան գլխաւոր վախճանն՝ աղէկ հասկընալ ու շիտակ գրելն է:

Աղէկ հասկընալու համար պէտք է իւրաքանչիւր մասն բանի աղէկ որոշել թէ արդեօք անուն բայի է թէ խնդիր է: Դարձեալ խնդիրն ալ արդեօք ուղղակա՞ն է՝ թէ անորոշ հայցական, նախդրիտրակա՞ն՝ թէ ներգոյական:

Դարձեալ շիտակ գրելու համար պէտք է աղէկ գիտնալ, թէ աս բառը կամ ան բառը ինչ հոլով է. ուղղական թէ հայցական, նախդրիւ տրա-

կան թէ ներգոյական. ինչպէս թէ որ ըսեմ, Դաւութը եկաւ, Դաւութը շինեց, Դաւութը մօտա, Դաւութը նկեցա. ասոնց առաջինն՝ ուղղական է, երկրորդը՝ հայցական, երրորդը՝ նախդրիւ տրական, ու եաքինը՝ ներգոյական:

Արդ՝ որպէս զի նոր սորվողները դիւրաւ իմանան թէ իւրաքանչիւր բառ ինչ հոլով է ու ինչ հոլով գրաբառ պիտի թարգմանեն, պէտք է որ խօսքը հարցմամբ քննեն. այսպէս,

Իմ հայրս աս գիրքը խանութէն սայլով գնեց.
Պէնիմ փէտէրիմ փարայըլա պու քիթապը թիւքեանտան սաթըն ալտը:

Հարցումն աս կերպով պիտ'որ ըլլայ.

Առաջին հարցում.

Հց. Ո՞վ գնեց, Քիմ սաթըն ալտը,
Պխ. հայրս. փէտէրիմ:

Ո՞վ հարցման պատասխանն ուղղական է: Անանկ է նէ, Հայրս ուղղական պիտի թարգմանուի:

Երկրորդ հարցում.

Հց. Ի՞նչ բանը գնեց, Նէ՞ շէյի սաթըն ալտը,
Պխ. աս գիրքը. պու քիթապը:

Ի՞նչ բանը հարցման պատասխանը հայցական է: Անանկ է նէ աս գիրքը հայցական պիտի թարգմանուի:

Երրորդ հարցում.

Հց. Ո՞ւսկից գնեց, Նէ՞րէտէն սաթըն ալտը,
Պխ. խանութէն. թիւքեանտան:

Ո՞ւսկից հարցումը բացառական պատասխան կուզէ:

Անանկ է նէ խանութէն բացառական պիտի թարգմանուի:

Չորրորդ հարցում:

Հց. Ի՞նչ բանով գնեց, Նէ՞ իլէ սաթըն ալտը,
Պխ. Սայլով. փարայըլա:

Ի՞նչ բանով հարցման պատասխանը գործիական է:

Անանկ է նէ սայլով գործիական պիտի թարգմանուի:

Մնացած հոլովներուն վրայ կարգաւ կը խօսինք:

---

# ԳԼՈՒԽ Ա.

## ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

Ինչպէս վերը յիշեցուցինք Ո՞վ կամ Ի՞նչ բան, Քի՞մ կամ Նէ՞ շէյ հարցման պատասխանը ուղղական է: Աս ուղղականին Ա՛նուն բայի կ'ըսեն. ինչպէս, Հօ՛ճնչէ, գէտդի գնան, աղբէրդի բաղըրէն, ձաղդի բօղբօղըն:

Ա. Ա՛ս ուղղական հոլովն իր բային հետ թուով եւ դէմքով պիտի համաձայնի, ինչպէս ամէն լեզու ալ կը պահանջէ: Անոր համար չ'ըսուիր Ես գործէ, դու գործեմ, նա գործես, եւ այլն. հապա պիտի ըսուի Ես գործեմ, դու գործես, նա գործէ: Ես՝ առաջին դէմը, դու՝ երկրորդ դէմը, նա ու ամէն հասարակ անունները՝ երրորդ դէմը կը ցուցընեն, ինչպէս,

Հովիւք արածեն զխաշինս.
Հովիւները կ'արածեն ոչխարները.
Չօպանլար գոյունլարը կիւտէրլէր:

Հց. Ո՞վ կ'արածէ. Պտ. հովիւները } անուն բայի է:
Հց. Քի՞մ կիւտէր. Պտ. չօպանլար }

Համրերն նշանացի խօսին:
Ծնեալքն բնութեամբ սիրեն զծնողս:
Թէպէտ եւ նախատի վատ, սակայն ոչ ամաչէ:
Կոյր զրկի ի ճառագայթից արեգական:
Վկայ հաւատարիմ ոչ ստէ:
Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց.
Շատ պտուղը ծառին ճիւղը վար կ'իջեցընէ.
Չօգ մէյվէ աղաճըն տալընը սարգըտըր:

Հց. Ի՞նչ բան վար կ'իջեցընէ. Պտ. շատ պտուղը } անուն
Հց. Նէ՞ շէյ սարգըտըր. Պտ. չօգ մէյվէ } բայի է:

Նախանձ զաչս հոգւոյն կուրացուցանէ:
Երկիր ինքնին բերէ զպտուղն:
Արեգակն ընդ լուսոյ եւ զջերմութիւն տարածէ:
Ամենայն անդամք մեր յարենէ սնանին:
Մարմին մեր ապականի եւ ի հող դառնայ:

Բ. Երբ որ շատ եզակի անուններ անուն բայի կ'ըլլան՝ բայը հաւաքականօրէն յոգնակի կը դրուի, ինչպէս աշխարհաբառ ալ կ'ըսենք. Բադն ու սագը կը լողան. Էշը, Ջորին եւ ուղտը բեռ կը կրեն:

Մեղուն եւ մրջիւնն վատաց վարդապետք լինին.
Մեղուն ու մրջիւնը ծոյլերուն վարժապետ կ'ըլլան.
Արը վէ գարընճա թէմպէլլէրէ ուսթա օլուրլար:
Գինի եւ արբեցութիւն ապականեն զարս իմաստունս:
Պետրոս եւ Յովհաննէս ընթանային ի գերեզման:
Թէ ջուր, թէ հուր, թէ երկիր, թէ օդ զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան, անդադար մատուցանեն:
Հայր իմ եւ մայր իմ թողին զիս:
Գողն եւ գողակիցն ի միում պատժի են:

Ըսինք հաւաքականօրէն, ինչու որ երբեմն եզակի ալ կը բանի. ինչպէս,

Փայտ, խոտ եւ եղէգն վաղվաղակի ապականի ի հրոյ.
Փայտը, խոտն ու եղէգը շուտ մը կրակէն կ'ապականի.
Օտուն, օթ վէ գամըշ չափուճագ աթէշտէն թէլէֆ օլուր:
Հուր եւ ցանկութիւն կերակրոյ՝ հանապազ ընդունելով հանապազ բորբոքի:
Նոյ եւ տուն իւր ապրեցաւ ի ջրհեղեղէ:
Յանձրեւաբեր ամպոյ դաշտ եւ այգի պայծառացեալ ծաղկալից լինի:
Մժեղ եւ մժղուկ ոչ այլ ուստեք լինի, այլ ի սկյ եւ յաղտոյ ջուրց:
Զինչ ինչ ի մեղաց, զոր գինի եւ արբեցութիւն ոչ գործէ:

Գ. Թէ որ եզակի բառի մը նշանակութիւնը յոգնակի ըլլայ՝ բայը կրնայ եզակի ալ յոգնակի ալ դրուիլ: Ասանկ են թուական անունները, եւ ան անունները՝ որոնք շատ բան մէկէն կը նշանակեն. ինչպէս, ամբոխ, ժողովուրդ, գունդ, ազգ, եւ այլն:

Ազատակեաց ամենայն ժողովուրդն:

Ամենայն ուրեք հարազատ բերէ յինքեան զնմանութիւն հօրն.

Ամէն հարազատ զաւակ իր հօրը կը նմանի.

Հէր եօզ էվլատ քէնտի փէտէրինէ պէնզէր:

Այր իւրաքանչիւր նստէին յաթոռ իւրում.

Ամէն մարդ իր տունին վրայ կը նստէր.

Հէր քէշ քէնտի խաքէմրիխինին իւզէրինտէ օթուրուրտու:

Պատուեսցէ իւրաքանչիւր զընկեր իւր յաշխարհի աստ:

Վէց օր է, յորս արժան է գործել:

Եօթանասուն եւ երկու նահապետք լեզուաց բաժանեցան ընդ երկիր:

Դ. Թէ որ անուն բային անեզական է, բայց հաւաքականօրէն յոգնակի, երբեմն ալ եզակի կը դրուի:

Անցցեն կեանք մեր իբրեւ զհետս ամպոյ.

Մեր կեանքն ամպի պէս պիտ'որ անցնի.

Պիզիմ էօմրիւմիւզ պուլութ իզի կիպի կէչէճէք:

Միտք զբանս քննեն, եւ քիմք զկերակուրս ճաշակեն:

Որ ծնանի ոք բարի ինչ կամ չար, իրաւունք են զի նախ ինքն վայելիցէ:

Աղօթք զպատերազմունս մղեցին, զազգ մի ողջոյն եւ զանիրաւ ապրեցուցին:

Արտասուքն զգաստութիւն սրտին ճշմարտէ:

Մեղքն միայն է չար:

Բարք մարդկան հակառակասէր է:

Ոչ եթէ վայրապար ինչ գտանի կերպարանք խա-ծայն եւ նմանութիւն երկուցն քաղրդաց (յանասունս):

Վարք առն բարւոյ է վկայութիւն բարւոք խղճի մտաց:

Ե. Երբ որ խօսքի մէջ շատ դէմք կայ, բայը նախապատւոյ-ան դէմքով կը դրուի, որն որ աւելի նախապատիւ է, ու է. ինչպէս առաջինն երկրորդէն նախապատիւ է, ու երկրորդն՝ երրորդէն: Այսպէս աշխարհաբառ

կ'ըսենք, Ես եմ [illegible] ամենէն [illegible] ըլլամ. Դուն ու քու եղբայրդ ամենէն [illegible] [illegible] [illegible]:
Պէն մէ սէն հէփիսինտէն զիյատէ համարալթ օլալըմ:
Սէն մէ սէնին գարտաշըն հիչ տայագ եէմէզ սինիզ:
Ամենայն [illegible] [illegible] եւ մեք՝ վկայեմք զմին
Քրիստոս Աստուած եւ մարդ դաւանել:
Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո յանդիմանեա զնա,
յորժամ դու եւ նա միայն իցէք:
Ի ձեռին Աստուծոյ եմք, եւ մեք եւ բանք մեր եւ
ամենայն հանճար եւ գործոց խելամտութիւն:
Դուք եւ որ եկք [illegible] իցեն ի [illegible] զնոյն առնիցիք:

Ջ. Ընդէմ բային, այս ինքն՝ աներեւութին ու ընդունելութեան անուն բային հասարակօրէն սեռական կը դրուի, երբեմն ուղղական, քիչ տեղ ալ տրական. այսպէս,

Հողմոյ առեալ զամպն այսր անդր տարաբերէ.
Հողմ ամպը կ'առնէ ասդին անդին կը տանի կը բերէ.
Բուզկեար պուլուտու ալըպ՝ պիր թարաֆա օպիր
թարաֆա կէօթիւրիւր:
Բրուտն մալեալ զկակուղ կաւն ստեղծանէ անօթ:
Տեսեալ մարդկան զծիծառն, նովաւ ճանաչեն զհասանել գարնայնոյն:
Եւ ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր
անգործ յաշխարհիս Հայոց:
Մարդիկ ոգի բանական ունելով՝ անմահ ստեղծան:
Անսաստել մեք Աստուծոյ չար է:
Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր:
Այսպէս կ'ըսուի նաեւ. Եւ եղեւ կալ նմա յաղօթս:
Ցաղթեսցես ի դատել քեզ: Լինել քեզ դատաւոր
ազգիս այսորիկ:

Է. Այս ոճ մ'ալ որ յարակատարին, գերակատարին ու ստորադասական անցելոյն երրորդ դէմքը, քովը սեռական անուն բայի ունենալով՝ թէ եզակի եւ թէ յոգնակի երեք դէմքի տեղ ալ կը բանի. այսպէս, գործեալ է իմ, գործեալ է քո, գործեալ է նորա, գործեալ է մեր. փոխանակ ըսելու գործեալ եմ ես, գործեալ ես դու, գործեալ է նա, գործեալ եմք մեք:

Գիտէ Աստուած զինչ պիտոյ մեզ է, մինչ չեւ մեր խնդրեալ իցէ ի նմանէ.

Աստուած մեր խնդրելէն առաջ՝ մեզի ինչ պէտք ըլլալը գիտէ.

Հագ թաալէ պիզիմ տիլէմէմիզտէն իլէրի, պիզէ նէ իգթիզա օլտուղունու պիլիր։

Մինչ չեւ էր արարեալ Աստուծոյ, ի կանուխ գիտութեան իւրում տեսանէր զարարածս։

Մինչ չեւ է գործեալ մարդոյ բարի ինչ կամ չար, Աստուծոյ յայտնի է անգործ մարդոյն։

Չիք իմ ամենեւին երդուեալ, եւ ոչ սուտ խօսեցեալ, եւ ոչ բարկացեալ ումեք, եւ կամ սաստեալ բանիւ լոկով։

Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ։

Ը. Ինչպէս վերի օրինակներէն կ'երեւայ՝ յարակատարին ու գերակատարին երրորդ դէմքն ինք իրեն դէմք չիցուցըներ, հապա քովի սեռական դերանունը դէմքը կ'որոշէ։ Այսպէս ալ դիմազուրկ բայն ինքերէն չիցուցըներ, հապա քովի տրական հոլով դերանունը դէմքը կ'որոշէ. այսպէս, վայել է ինձ, վայել է քեզ, վայել է նմա, պարտ է ինձ, պարտ է քեզ, պարտ է նմա։

Զմարթի բնաւորեան ինձ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար։

Անհնար է մարդոյ կալ կենդանի առանց կերակրոյ։

Վայել է երիտասարդաց հնազանդ լինել ծերոց։

Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն երկնից։

Թ. Բայց շատ հեղ տրական հոլովը չիդրուիր, ու զօրութեամբ կ'իմացուի. ինչպէս,

Մի անգամ կամ երկիցս եւ թէ շատ՝ երիցս պարտ է (մեզ) մեծարել զհիւրն վասն կերակրոց.

Մէկ երկու անգամ, ու առելն երեք անգամ պէտք է հիւրը կերակուր տալով հրամցընել.

Պիր իքի տէֆա, փէք փէք իւչ տէֆա միսաֆիրէ եէմէկ իչին իքրամ էթմէլի։

Պատուէր է (մեղ) չգողանալ.
Պատուէրան ունինք որ չգողնանք.
Թէմպիհ տիր քի խըրսըզլըգ էթմէյէլիմ։

Ժ. Երբեմն կը պատահի որ խօսքին մէջ բայը ներգործութեամբ չիդրուիր. ինչպէս,

Ամենայն արարածք վասն մարդոյ, եւ մարդ վասն փառաց Աստուծոյ (Եղշ–).
Հակառակ նախանձու՝ խոնարհութիւն, եւ ընդդէմ հակառակութեան՝ լռութիւն (Եզն–)։

---

# ԳԼՈՒԽ Բ.

## ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ՎՐԱՅ

ՄԻՆՉԵՒ հիմա ո՞վ կամ ի՞նչ բառ հարցման վրայ խօսեցանք, որուն պատասխանն, ինչպէս վերը ըսինք, ուղղական պիտի դրուի, որն որ անուան բոյթ կ'ըսուի։ Հիմա խօսինք սեռական հոլովին վրայ, որն որ շատ հարկաւոր գիտելիքներ ունի։

Ա. Սեռական հոլովը Յատկացուցիչ կ'ըսուի, երբ որ բանի մը որո՛ւն ըլլալը կը ցուցընէ. ինչպէս թէ որ ըսեմ Պետրոսին գիրքը, Վարդերեի տունը, Ձօրօ խանութը. աս խօսքերուն մէջ սեռական հոլովները կը ցուցընեն գիրքին, տան ու խանութին որո՛ւն ըլլալը։

Որո՞ւն կամ ի՞նչ բանին, քիմի՞ն կամ նէնի՞ն հարցման պատասխանը սեռական է. ինչպէս,

Անզգամն անգոսնէ զխրատ հօր.
Անըգֆամը հօրը խըրադը բանի տէյլ ըէյնէր.
Զալըմ դըլըմը փէտէրինին էօյիւտինիւ պիր հէչ նէրինէ գօյմազ։

Հյ. Որո՞ւն խրատը, Պխ. հօրը. } յատկացուցիչ է։
Հյ. Քիմի՞ն էօյիւտինիւ, Պխ. փէտէրինին. }

Բ. Աշխարհաբարի ու տաճկերէնի մէջ յատկացուցիչը յատկացեալէն յառաջ կը դրուի։ Բայց գրաբարի մէջ հասարակօրէն յատկացուցիչը յատկացեալէն ետքը կը դրուի, թէպէտ յառաջ ալ կրնայ դրուիլ։

Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց, եւ անէծք մօր խախտեն ի հիմանէ.

Հօր օրհնութիւնը զաւկին տունը կը հաստատէ, ու մօր անէծքը հիմէն կը խախտէ.

Փէտէր թէսպիհաթը էվլատըն էվինի թէմէքքին էտէր, վէ վալիտէ նալէթի թէմէլինտէն սէօքէր:

Եւթն է թիւ աւուրց շաբաթուն:

Ցանկութիւն արծաթասիրին ոչ յագի ի բազմութենէ ընչից:

Ծանրութիւն պտղոց բեկանէ զոստս:

Իբրեւ զսէգն Տրդատ՝ որ սիգալովն աւերեաց զթումբս գետոյ, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց:

Ոչ ոք է, որ ոչ գովէ զգեղեցկութիւն արեգական:

Գագաթն լերանց բարձանց միշտ պատի ձեամբ եւ սառնամանեօք:

Զաւազ ծովու եւ զշիթս անձրեւաց եւ զաւուրս ժամանակաց ո՞ թուեաց երբեք:

Ո՛չ խօսելն ինչ իմաստութիւն իցէ, այլ ճանաչելն զժամանակ խօսելոյ:

Գ. Ինչպէս ըսինք՝ յատկացուցիչը կրնայ երբեմն յատկացեալէն յառաջ ալ գրուիլ: Բայց թէ որ յատկացեալը նախդիր ունենայ, նախդիրը յառաջ գրուողին վրայ կը գրուի, թէ յատկացուցիչ ըլլայ եւ թէ յատկացեալ: Ինչպէս ածական ու գոյական անուանց մէջ տեսար որ նախդիրն յառաջ գրուողին վրայ գրուած է*:

* Երբեմն նախդիրը՝ միայն առջի բառին վրայ կը գրուի, այս ինքն՝ երբ որ յատկացեալը հայցական է, ինք առանց նախդրի կը մնայ եւ միայն իրմէ վերջը գրուած յատկացուցիչը նախդիր կ՚առնէ. իսկ երբ որ յատկացեալը տրական կամ բացառական է, յատկացուցիչը յառաջ կը գրուի եւ յատկացեալը միայն նախդիր կ՚առնէ:

Ի վերին երեսս բարեկամ ձեւանալ, եւ գործ զթշնամւոյ գործել: Փոխանակ ըսելու, գործել զգործ թշնամւոյ:

Աւետիս տայ ծննդեան նորա: Փոխանակ ըսելու, տայ զաւետիս ծննդեան նորա:

Աստուծոյ յաչաց ելանել: Կռոցն է պաշտելութենէ:

Տես հետեւեալ երեսին ծանօթութեան երկրորդ օրինակն ալ:

Պարտական ենք օգնել միմեանց, եւ փրկել զի-
րեարս ի հոգւոյ եւ ի մարմնոյ վտանգէն: — Այս
ինքն՝ ի վտանգից հոգւոյ եւ մարմնոյ.

Պարտական ենք իրարու օգնել, եւ իրար հոգւոյ ու մար-
մնոյ վտանգներէն ազատել:

Պիրիպիրիմիզէ եարտըմ էթմէյէ, վէ պիրիպիրիմիզի
թէն վէ ճան գազալարընտան գուրթարմայա
պօրճլույուզ:

Այր՝ որ հայի յայլոց սեղան, չէն կեանք նորա ի
համար կենաց: — Այս ինքն՝ որ հայի ի սեղան
այլոց:

Լուիցեն զայս մեծատունք՝ որք զաղքատութեան
հնոյն բորբոքեն:

Բազմաժամանակեայ սովորութիւն զբնութեան զօ-
րութիւն առնու:

Դ. Շատ տեղ ալ Նախդիրը վայելչութեան
համար թէ յատկացեալին եւ թէ յատկացուցչին վրայ
կը կրկնուի:

Սաւղոս զամենայն զքարկոծողաց զհանդերձս ամ-
փոփեալ պահէր.

Սօղոս ամէն քարկոծողներուն զգեստները ժողված կը պահէր.

Սօղոս հէր թաշլայանլարըն րուպասընը թօփ էթ-
միշ սագլարտը:

Յովսէփ մեկնեաց զփարաւոնի զերազն:

Տուր ինձ զքոյոց աթոռոց զդարանակալ իմաս-
տութիւն:

Ե. Երբեմն յատկացուցչին ու յատկացելոյն
մէջ ուրիշ մասն բանի կը մտնէ, եւ ան ատեն Նախ-
դիրն երբեմն միայն Նախընթացին վրայ կը դրուի, եւ
երբեմն երկուքին վրայ ալ*:

Հովանի առաքելոց զախտս բժշկէր զհիւանդաց.

* Երբեմն Նախդիրը շատերուն վրայ ալ կը կրկնուի. այսպէս,

Ամենայն ծառ զիւր տեսիլն եւ զգոյնն եւ զհամն բերէ, եւ
զբնական արմատոյ զծննդեան զբոյսն. փոխանակ ըսելու զբնա-
կան բոյս արմատոյ ծննդեան:

Զաշխարհ արժան է գովել, զերկրի զբնութիւնն քննելով,
զծովու զտարածմունս, զօդոց զփոփոխմունս, տարեւորաց զփո-
խանորդութիւն, զտնկոց յատկութիւնս եւ զբերս:

Պատկերներուն շուքը հիւանդները կ'առողջցնէր.
Րէսիմլէրին քէօլկէսի հաստալարըն մարազլարընը
տիւզէլտիր իտի:
Ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար զճշմար-
տութիւն. — այս ինքն՝ ծանիցես զճշմարտութիւն
բանիցն՝ որոց աշակերտեցար:
Զգէնս քաղէին զանկելոցն:
Վայ հզօրաց ձերոց՝ որ զիրաւունս գողանան զար-
դարոյն:
Քաւ լիցի մեզ թողուլ զօրէնս եւ զիրաւունս Աս-
տուծոյ եւ է հրամանս դառնալ թագաւորի. —
այս ինքն՝ դառնալ ի հրամանս թագաւորի:
Ամենայն մարդ որ ընդ հաստատութիւն կամիցի օ-
րինացն՝ զհետ իմ ելցէ. — այս ինքն՝ որ կամիցի
ընդ հաստատութիւն օրինացն:

Զ. Երբեմն յատկացեալը զօրութեամբ կը դրուի, ու յատկացեալին նախդիրը յատկացուցիչը կ'առնու:

Ամենայն ծառատունկք ոչ երբեք փոխեն զգոյնս
ծաղկանցն եւ զտերեւոց. — այս ինքն՝ զգոյնս տե-
րեւոց.
Ամենեւին ծառ մը իր ծաղկին ու տերեւին գոյնը չփոխեր.
Հիչ պիր աղաճ քէնտի չիչէյինին վէ եափրաղընըն
րէնկինի տէյիշմէզ:
Բանք ձեր մի լիցին անհամ եւ անաղ իբրեւ զռամ-
կաց. — այս ինքն՝ իբրեւ զբանս ռամկաց:
Մարմինն փափկացեալ մատաղացեալ լինէր իբրեւ
զառօրեայ մանկան ծնելոյ. — այս ինքն՝ իբրեւ
զմարմին առօրեայ մանկան:
Յիշեսցես զօր մահուն եւ զդատաստանին. — այս
ինքն՝ զօր դատաստանին:

Նոյնպէս կ'ըսուի, տալ շնորհներ՝ նուէրներ, եւ զԱս-տուծոյ՝ Աստուծոյ:

Է. Երբ որ չափի վերաբերեալ յատկացեալ մը քով թուական անուն մ'ըլլայ, ան ատեն յատկացուցիչը սեռական դրուելու տեղ, իր յատկացեալին հետ հոլովով կը համաձայնի:

Առ դու ինձ պատառ մի հաց·
Ինծի պատառ մը հաց բեր·
Պանա պիր փարչա էքմէք կէթիր:
Որ արբուսցէ ձեզ բաժակ մի ջուր ցուրտ միայն յա-
նուն աշակերտի, ոչ կորուսցէ զվարձս իւր:

Այսպէս կ'ըսուի նաեւ

կաթիլ մի ջուր, կաթիլ մը ջուր, պիր տամլա սու.
Նկանակ մի հաց, նկանակ մը հաց, պիր սօմուն էքմէք·
Ափ մի ջուր, ափ մը ջուր, պիր ավուճ սու.
Տիկ մի գինի, տիկ մը գինի, պիր թուլում շարապ:

Ը. Ասոնք թէ որ հոլովելու ըլլան, երկուքն ալ մէկտեղ կը հոլովին:

Արքայութեան ժառանգաւորս կացուցանէ ընդ պա-
տառոյ միոյ հացի, եւ ընդ բաժակի միոյ ջրոյ·
Պատառ մը հացի ու բաժակ մը ջրոյ տեղ՝ արքայութեան
ժառանգ կ'ընէ.
Պիր լօգմա էքմէք վէ պիր գատէհ սու եէրինէ
ճէննէթէ միրասխօր էտէր:
Հաստատեմ զսիրտ քո պատառով միով հացի:

Աս ոճն աշխարհաբառ ու տաճկերէն լեզուի մէջ ալ կը բանի:

Թ. Բայց գրաբառի մէջ հասարակօրէն չափի վերաբերեալ յատկացեալի քով եղած գոյական անունը հասարակ կանոնին պէս կը դրուի:

| | |
|---|---|
| Կաթ մի ցօղոյ· | Երկու բաժակ գինւոյ· |
| Նկանակ մի հացի· | Լիտր մի իւղոյ· |
| Բեռն մի փայտի· | Քսան հազար քոռ ցորենոյ· |
| Ափ մի գարւոյ· | Հարեւր մար ձիթոյ: |

Քիչ անգամ յատկացուցիչը սեռական դրուելու տեղ, կը համաձայնի իր յատկացեալին հետ, մանաւանդ բացառական ու գործիական հոլովներուն մէջ:

Երբ նա գինի սատակ յոյժ, որչափ ոչ էր արբեալ յօրէ ծննդենէ իւրմէ, փոխանակ ըսելու, յօրէ ծննդեան իւրոյ:

# ԳԼՈՒԽ Գ.

## ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ՎՐԱՅ

ՏՐԱԿԱՆԻՆ երկու կերպ, այս ինքն՝ վերջաւորով ու նախդրիւ ըլլալն արդէն յայտնի է։

Ա. Որո՞ւն կամ ի՞նչ բանին. քիմէ՞, նէ՞ շէյէ հարցման պատասխանը վերջաւորով տրական է։

Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի տնանկին.

Ով որ աղքատին կ'ողորմի, Աստուծոյ փոխ կու տայ.

Քիմ քի ֆուգարէյէ մէրհամէթ էտէր, Ալլահա էօտիւնճ վէրիր։

Հց. Որո՞ւն փոխ կու տայ, Պխ. Աստուծոյ. } տրական է։
Հց. Քիմէ՞ էօտիւնճ վէրիր, Պխ. Ալլահա. }

Որ ամաչէ յայտնել զվէրս իւր բժշկի, ամենայն մարմին նորա դառնայ յապականութիւն։

Մի ումեք բարկանար, եւ մի զոք բարկացուցաներ։

Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց։

Զկարիս ընկերին՝ անձանց համարեսցուք։

Զոր դու ատեաս, ումեք մի առնիցես։

Ժուժեա համբերութեամբ թերութեանց այլոց, զի եւ այլք տարցին քոյոց թերութեանց։

Նմանապէս կ'ըսուի նաեւ, խոստովանել քահանային, պատուել եղբօրն, հրամայել ծառային, հաւատացանել Տեառն։

Մարմինս այս հանապազօրեայ կերակրոյ պէտս ունի.

Աս մարմինս ամէն օրուան կերակրոյ հարկաւորութիւն ունի.

Շու վիճուտիմիզին հէր կիւնլիւք եէմէյէ իհթիյաճը վար տըր։

Հց. Ի՞նչ բանի հարկաւորութիւն ունի, Պխ. կերակրոյ.
Հց. Նէ՞ շէյէ իհթիյաճը վար, Պխ. եէմէյէ։

Արտաշէս թագաւոր Հայոց ահ արկ ամենայն դրացեացն իւրովք աշխարհակալութեամբք։

Աղեքսանդր տիրեաց առ հասարակ ծովու եւ ցամաքի։

Ագոխ վնասակար է ատամանց եւ ծուխ աչաց։

Հնազանդ լերուք ամենայնի զոր ինչ իշխքն ձեզ հրաման տացեն։

Շրթանց քոց զգոյշ լինիջիր:
Սաստեցէք մանկանց չսովորել ի խօսս աղտեղիս:
Դիր համ լեզուի քում:

Բ. Յաղթեմ, պաշտպանեմ բայերը հասարակօրէն հայցականի տեղ վերջահոլով տրական խնդիր կ'առնեն, նոյնպէս Լսեմ բայն ալ՝ երբ որ մտիկ ընել, մտադրել կը նշանակէ:

Սէր ամենայնի յաղթէ, ամենայնի համբերէ:
Լաւ է որ յաղթէ բարկութեան, քան որ առնու զքաղաք ամուր:
Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում:
Դու ոչ լսես քո աղօթից, եւ կամիս զի Աստուած լուիցէ:
Լո՛ւր, որդեակ, խրատու հօր քո:

Գ. Երբ որ բայը մէկ տեղաց մէկալ տեղ շարժում կը նշանակէ, ու կը հարցուի ո՞ւր, նէրէյէ, ի նախդրիւ՝ տրական կը դրուի:

Ամենայն ուխք ի ծով գնան, եւ ծով ո՛չ լնու.
Ամէն ջուր ծով կը վազէ, ու ծովը չի լեցուիր.
Հէր սէլ տէնիզէ ագար, վէ տէնիզ տօլմազ:

| | |
|---|---|
| Հյ. Ո՞ւր կը վազէ, Թք. ծով. | նախդրիւ տրական է: |
| Հյ. Նէրէյէ ագար, Թք. տէնիզէ. | |

Ամենայն ի հողոյ եղեւ, եւ ամենայն ի հող դառնայ:
Ծիծառն յառաջ քան զաշունն ի վերին տեղիս ի յԵգիպտոս երթայ:
Այր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ երկոքին ի խորխորատ անկանին:
Որպէս մերկ եկաք յաշխարհս, նոյնպէս եւ մերկ ելցուք յաշխարհէ:
Երիկունն յորժամ ի տանէն ելանես, համարեա թէ ի գերեզման իջեր:
Անձրեւ հրախառն տեղաց ի Սոդոմ:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ, մտանել ի նաւ, ի տաճար, ի տուն. արկանել ի հնոց, ի ծով. հանել ի ցամաք. հայել յերկինս. ելանել ի լեառն. փախչել յանապատ. եւ այլն:

Դ. Բայց երբ որ բայը մէկ տեղաց դէպ ի

մարդ մը շարժում կը նշանակէ, ու կը հարցուի որո՞ւն, քի՞մ, — առ նախդրիւ՝ տրական կ'առնէ:

Երթայք ի քաղաքն առ այս անուն.
Քաղաքը աս անուն մարդուն գացէք.
Ճեհիրէ Փիլան ատամա կիտինիզ:
Բժիշկք յորժամ տեսանեն զոք հիւանդացեալ, ոչ յապաղեն երթալ առ նա:
Մտին առ Նոյ ի տապան անդր երկու երկու յամենայն կենդանեաց:
Յուդա իսկարիովտացի գնաց առ քահանայապետսն, զի մատնեսցէ զՅիսուս:
Երթ ի տուն քո առ ընտանիս քո:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ, գնաց առ նա. դարձաւ առ մայր իւր. չեմ արժանի գալ առ քեզ. եւ այլն:

Ե. Կան ածական անուններ ալ որ առ նախդրիւ՝ տրական կ'ուզեն. այսպէս, Առ ամենայն ինչ օգտակար. Առ ամենայն ցանկութիւն բաւական:

---

## ԳԼՈՒԽ Դ.

### ՀԱՅՑԱԿԱՆ, ԲԱՑԱՌԱԿԱՆ, ԳՈՐԾԻԱԿԱՆ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՈՒ ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ:

Ա. Զո՞վ կամ ի՞նչ բանը, քի՞մի, կամ նէ՞ շէյի հարցման պատասխանը հայցական է: Աս հայցականին՝ խնդիր սեռի կ'ըսեն, ինչու որ միայն ներգործական բայերը կրնան հայցական հոլով խնդիր առնել. եւ ասով բայերուն սեռերն իրարմէ կը զատուին:

Պարտիմք սիրել զԱստուած.
Իրար սիրելու պարտական ենք.
Պիրպիրիմիզի սէվմէյէ պօրճլույուզ:

Հց. Զո՞վ սիրել, Պխ. իրար } խնդիր սեռի է:
Հց. Քիմի՞ սէվմէյէ, Պխ. պիրպիրիմիզի }

Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ արհամարհէ զմայր իւր:
Մի՛ յանդիմաներ զչարս՝ զի մի՛ ատեսցեն զքեզ. յանդիմանեա զիմաստունն, եւ սիրեսցէ զքեզ:

Զի՞ խնկես զմարմինդ, որ ի ներքոյ լի է պղծութեամբ:

Ցաղքատութեանն քան ի մեծութեանն դիւրին է զառաքինութիւն կատարել:

Սպան Դաւիթ զԳողիաթ, եւ նախանձեալ ընդ այն Սաւուղայ՝ ջանայր սպանանել զԴաւիթ:

Մրջիւն յամարայնի պատրաստէ զկերակուր, եւ ընդ երկուս զհատն կտրէ, զի մի բուսանիցի:

Մրջիւնն ամառը կերակուրը կը պատրաստէ, ու հատը երկու կը կտրէ, որ չբուսնի.

Գարընճա եազըն եէմէյինի հազըրլար, վէ (պուղտայ) թանէսինի իքի պէօլէր, քի պիթմէսին:

Հյ. Ի՞նչ բանը կը պատրաստէ, Պր. կերակուրը. } խնդիր
Հյ. Նէ՞ շէյի հազըրլար, Պր. եէմէյինի. } սեռի է:

Ակն ուռկանի զջուր ոչ արգելու.

Զերկիր շուրջ ջուր պատէ, եւ զջուր եւ զերկիր պատէ օդն:

Իժակորիւնն ուտէ բերանովն զարգանդ մօրն եւ ելանէ:

Աստուած ստեղծ զարարածս ամենայն յոչընչէ:

Մի սիրեր զդատարկութիւն:

Բ. Շատ տեղ Հայցականին վրայ զ նախդիրը չի դրուիր. ու ան ատեն կ'ըսուի անորոշ հայցական:

Որթ խաղող բերէ. այս ինքն զխաղող:

Մեղու մեղր գործէ. այս ինքն զմեղր:

Մի խօսեսցուք բանս ունայնս. այս ինքն զբանս ունայնս:

Աչք նախանձոտին արտմութիւն ծնանին:

Ծերութիւն՝ մահ ցաւագին առ դուրս պատրաստ ունի:

Ջերմութիւն արեգական ժողովէ ի ծովէ, ի գետոց եւ յաղբերաց ամպս անձրեւաբերս:

Փայտ շատ՝ յարուցանէ բոց մեծ:

Գ. Այսպէս կ'ըսուի նաեւ՝ երկուս ալ առնել. երկուս ձեռս առնել. երկուս ոտս առնել. առնեմ ինչ բաղադա. գործ գործել. գնել կերակուր. շինել տուն. ուտել հաց: Աս ոճը շատ յաճախեալ է նաեւ աշխարհաբառ ու տաճկերէն լեզուի մէջ. ինչպէս աշխարհաբառ կ'ըսենք, տուն շինել, կերակուր գնել, հաց ուտել, ջուր

խօսիլ: Նոյնպէս տաճկերէն ալ, էվ եափմագ, եէմէք եէ-մէք, սու իչմէք, եւ այլն:

Գ. Բայց յատուկ անունները, մասնական ա-նունները, դերանունները, եւ որոնք որ քովերնին իմ, քո եւ այլ ստացականները կամ դիմորոշ յօդ մը ունին, անորոշ հայցական չեն դրուիր: Անոր համար չ'ըսուիր, Տեսի հայր իմ, այր սա, Պետրոս, նա, հապա պիտի ըսուի, Տեսի զհայր իմ, զայր սա, զՊետրոս, զնա*:

Որդ իմանալու համար թէ արդեօք խօսքի մէջ բառ մը ուղղական է, թէ անորոշ հայցական՝ դիւրին ճամբան աս է:

Թէ որ անուն բայի է, պէտք է ուղղական ըլլալ: Իսկ անուն բային, ան բառն է՝ որուն վրայ որ խօսք կ'ըլլայ, ու կը հարցուի ո՞վ, ի՞նչ բան. քի՞մ, նէ՞ շէյ: Իսկ թէ որ անուն բայի չէ, հապա կը հարցուի զո՞վ, ի՞նչ բանը. քիմի՞, նէ՞ շէյի, ան ատեն հայցական է:

Թէ որ բայը չէզոք կամ էական է՝ քովի ա-նունը հայցական չիկրնար ըլլալ, ինչպէս (Երե. 135.) ըսինք:

Դ. Ո՞ւստի, ի՞նչ բանէն. քիմտէ՞ն, նէտէ՞ն, նէրէտէ՞ն, հարցման պատասխանը բացառական է:

Ամբարտաւանութիւն յերկնից ընկէց զհրեշտակսն.
Հպարտութիւնը հրեշտակները երկինքէն վար ձգեց.
Գուրուրլուգ մէլայիկլէրի կէօյտէն տիւշիւրտիւ:

| | | |
|---|---|---|
| Հյ. Ուսկից վար ձգեց, | Թր. երկինքէն. | բացառա-կան է: |
| Հյ. Նէրէտէն տիւշիւրտիւ, | Թր. կէօյտէն. | |

Եթէ ի մարդկանէ ամաչես, եւս առաւել ամաչել եւ երկնչել պարտ է յԱստուծոյ, որ տեսանէ զծած-կեալս ի սրտի:

Ծառ խորարմատ ի հողմոյ ոչ տապալի:

* Ցոգնակի հայցական ու տրական հոլովին վրայ « զ » գիր տեղ՝ դրուած ալ կը գտնուի:

Պատուել զաւուրս նշխարս սրբոց երանելեացն գեղեցիկ աւանդութեամբ ուսեալ է եկեղեցի: Փոխանակ ըսելու, զաւուրս նշխարս:

Վարդապետք առաւել պատուելի են քան զհարս ըստ մարմնոյ: Փոխանակ ըսելու, քան զհարս:

Առ աղքատս ողորմած եղիցուք: Փոխանակ ըսելու, առ աղքատս:

Զգեստուք պատսպարիմք ի [illegible] եւ ի [illegible]:
Պիւթագորաս կրօնս եդ ժուժկալել ի [illegible]:
Ի [illegible] եւ ի [illegible] արարածոց ըստ նմին
համեմատութեան եւ արարչագործն նոցա երեւի:
Կադմոս նախ եբեր Յունաց գիր ի Փի[illegible]նիկեցւոց [illegible]խարհէն:
Սրբեսցուք զլեզուս մեր ի [illegible] բանից, ի [illegible] եւ ի [illegible]:

Ե. Ինչպէս յայտնի է՝ բացառական հոլովին նախդիրն ի է, բայց քիչ տեղ [illegible] ի նախդիր ալ կրնայ դրուիլ:

Անհնարինքն [illegible] ի մարդկանէ, հնարաւորք են Աստուծոյ:
Միթէ տկարանայցէ՞ [illegible] ի յԱստուծոյ բան:

Զ. Ի՞նչ բանով, նէ՞ իլէ, նէ՞ չէյ իլէ, հարցման պատասխանը գործիական է:

Որք [illegible] անցուցին զկեանս, զղջացան, եւ [illegible] եւ [illegible] պատմեցին ի շահ զկնի եկելոցն.
[illegible]
Էօմիւրլէրինի թէմպէլլիքիլէ կէչիրէնլէր փիշման օլտուլար, վէ կէօզ եաշըյըլա արտտան կէլէնլէրին ֆայտասը իչին նագլ էթտիլէր:
Հց. Ի՞նչ բանով անցուցին, Պխ. ծուլութեամբ. } գործիական է:
Հց. Նէ՞ իլէ կէչիրտիլէր, Պխ. թէմպէլլիքիլէ. }
Գունակ գունակ [illegible] զարդարեալ է առ հասարակ ամենայն երկիր:
Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթեւն [illegible] իւրով. հանդերձ [illegible], [illegible] եւ [illegible] եւ ամենայն [illegible] իւրեանց:
[illegible] բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց, եւ [illegible] մեկոնիոն արմատոյ զխիթս կարեւորս զհիւանդաց դարձուցանեն:
Կրայ ծածկեալ ունի զանդամս իւր [illegible] [illegible]:

Այսպէս կ'ըսուի նաեւ, աչօք տեսանել, ձեռօք գործել, ոտիւք գնալ, հարկանել գաւազանաւ. եւ այլն:

է. Ներգոյական հոլովը կերպ կերպ նշանակութիւն ունի, երբեմն տեղ, երբեմն ժամ, երբեմն այլ կը նշանակէ որոնց զօրութիւնը մէկիկ մէկիկ հոս կը գտնենք:

1. Ո՞ւր, նէ՞րէտէ հարցման պատասխանը ներգոյական է:

Ի ճանապարհի ոչ է պարտ փութալ յառաջ քան զաւագագոյնն.
Ճամբան մեծէն առաջ պէտք չէ երթալ.
Եօլտա պէօյիւքտէն իլէրի էվէլլէմէմէլի:

Հց. Ո՞ւր, Պխ. Ճամբան.
Հց. Նէ՞րէտէ, Պխ. Եօլտա. } ներգոյական է:

Վասն այնորիկ ի քաղաքս բնակեմք, զի ընդ միմեանս զմիաբանութիւն ունիցիմք:
Գտանին լերինք բարձունք որպէս ի ցամաքի նոյնպէս եւ ի ծովու:
Յովսէփ Արեմաթացի եդ զմարմին Տեառն Յիսուսի ի գերեզմանի:
Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զբարիս եւ զչարս:
Յիսուս ննջէր ի խելս նաւին ի վերայ բարձի:

2. Նոյնպէս, ո՞ւր, ի՞նչ բանի վրայ. նէ՞րէտէ, նէ՞ շէյ իւզէրինտէ հարցման պատասխանը ներգոյական է:

Աւազակն ի խաչին միով բանիւ արդարացաւ.
Աւազակը խաչին վրայ մէկ խօսքով արդար եղաւ.
Խըրսըզ հաչըն իւզէրինտէ պիր սէօզ իլէ սալիհ օլտու:
Մարդ կուռեալ ձեռօք յորմ, բնակէ ի տունս թագաւորաց:
Նստաւ տապանն ի լերինս Արարատայ:
Աղեղն ձգի յամպս յաւուրս անձրեւաց:
Զպատկեր արքունի դրոշմեն ի դահեկանի:

Այսպէս կ'ըսուի, նստել յաթոռի, գրել ի թղթի, կալ ի տանիս:

Ց. Դարձեալ ո՞ւր կամ ի՞նչ բանի մէջ. նէրէտէ, նէ՞ իչինտէ հարցման պատասխանը ներգոյական է*:

Գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետս.
Անիկա տաճարին մէջ վարդապետներուն հետ նստած գտան.
Օնու հէյքէլտէ միւալլիմլէր արասընտա օթուրմուշ պուլտուլար:

Հց. Ու՞ր, ի՞նչ բանի մէջ, Պխ. տաճարին մէջ. } Ներգոյական է:
Հց. Նէ՞րէտէ, նէ՞ իչինտէ, Պխ. հէյքէլտէ. }

Ցեղս եւ ի մուտս ճանապարհաց եւ ի փողոցս եւ ի հրապարակս եւ ի ճանապարհակէտս զնոյն նշան կանգնէր:
Զմիսն կամ խորովեն հրով կամ եփեն ի կաթսայս:
Ի ջուր մաքուր տեսանի բոլորակութիւն արեգական:
Յանասունս չիք քան զայծեամն տեսանող:
Հաւու թռուցելոյ յօդս ոչ գտանին նշմարանք գնացից:
Ի կորստեան է ամենայն վատ, զի ոչ յօժարին ձեռք նորա գործել ինչ:
Արծաթ եւ ոսկի փորձի ի բովս:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ նստել ի տան, ծեծել ի պարտիզի, ննջել զհանգստեան ի դաստակերտի:

Ը. Շատ անգամ ներգոյականը գործիականի ուժ կ'ունենայ:

Դատապարտեաց զմեզ Աստուած՝ ի քրտան երեսաց ուտել զհաց. — այս ինքն՝ քրտամբ երեսաց.
Աստուած զմեզ երեսի քրտինքով հաց ուտելու դատապարտեց.
Հագ թա'ալէ պիզի ալնըմըզըն թէրիլէ էքմէյիմիզի եէմէյէ գազէպլէտի:
Ադամ ոչ պատրեցաւ յօձէն ստոյ խոստմամբ. — այս ինքն՝ սուտ խոստմամբ օձին:
Առաքեալքն ի գալ Հոգւոյն սրբոյ խօսէին յայլեւայլ լեզուս. — այս ինքն, այլ եւ այլ լեզուօք:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ, աղաղակել ի ձայն մեծ,

* Երբեմն ներգոյականին նախդիրը ներգործութեամբ չի դրուիր, երբ որ բառին առջի գիրը յ ըլլայ:

Ապաշխարութիւն զընկղմեալ հոգին յատակս դժոխոց՝ ի բարձունս հանէ. այս ինքն՝ ի յատակս դժոխոց:

Մի՛ սուտ վկայեր ընկերիդ դէմ:
Ոչ ոք ի նախնի հաւատացելոց ասէր յընչից իւրոց, թէ իւր իցէ:
Տեսիլ աշխարհի՝ իւրով գեղեցիկ կարգաւորութեամբն զարարիչն պատմէ:
Ոչ երբեք ննջեսցես ունելով ոխս զումեքէ:
Պարտին զմիմեանց հոգալ անդամքն:
Եթէ ոք անմոռաց ի մտի ունիցի զերախտիս Աստուծոյ՝ գոհանայ զնմանէ:
Մի խորհեսջիք չար զումեքէ:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ տրտնջել զԱստուծոյ, զոր խօսել կամ հայհոյել զումեքէ, կախել զփայտէ, առնել զձեռանէ. եւ այլն:

Բ. Պարառական հոլովը բանի մը անորոշ ատեններ կամ տեղուանքը կամ բոլորտիքը կը նշանակէ:
Յարեաւ Սամփսոն զմէջ գիշերաւ, եւ թափեաց զդրունս քաղաքին Գազայ:
Սամփսոն կէս գիշերանց ելաւ, ու Գազա քաղքին դուները քակեց.
Սամսոն եարը կէճէլէյին գալգըբ, վէ Գազա շէհրինին գափուլարընը գօփարտը:
Զինն ժամաւն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ:

Նոյնպէս կ'ըսուի զհաւախօսի գիշերաւ, զառաւօտ գիշերոյն, զմիջաւուրբ, որ ըսել է մէջ ի կէս գիշեր, ժամը մէջ է զօրուն, մէջ է կէսօր:
Յիջանել հրոյն զհինգ քաղաքաւ (Սոդոմացւոց) փրկեաց Աստուած զՂովտ.
Երբ որ Սոդոմացւոց հինգ քաղքին բոլորտիքը կրակ իջաւ, Աստուած Ղովտը փրկեց.
Սոտօմլուլարըն պէշ շէհիրինին էթրաֆընա աթէշ եաղտըղընտա, Ալլահ Ղովտու խէլաս էյլէտի:
Ելանէ արեգակն ընդ հարաւ, եւ պատի զհիւսիսիւ:
Աչք անմտի զծայրօք յածին:
Հայրն անկեալ զպարանոցաւ անառակ որդւոյն համբուրեաց:
Բաղեղն մնասակար պատի զծառովն:
Արկանել զիւրեաւ կամ զիւրեւ կամ զանձամբ զգեստն,

Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ:
Ոչ ոք ի նախնի հաւատացելոց ասէր ընչից իւրոց, թէ իւր իցէ:
Տեսիլ աշխարհի՝ իւրով գեղեցիկ կարգաւորութեամբն զարդարչէն պատմէ:
Ոչ երբեք ննջեցուցես ունելով ոխս զումեքէ:
Պարտին զմիմեանց հոգալ անդամքն:
Եթէ ոք անմոռաց ի մտի ունիցի զերախտիս Աստուծոյ՝ գոհանայ զնմանէ:
Մի խորհեսջիք չար զումեքէ:

Նոյպէս կ'ըսուի նաեւ տրտնջել զԱստուծոյ, զոր խօսել կամ հայհոյել զումեքէ, կոխել զփայտէ, առնել զհե-տանէ. եւ այլն:

Բ. Պարառական հոլովը բանի մը անորոշ ատեն-ները կամ տեղուանքը կամ բոլորտիքը կը նշանակէ:
Յարեաւ Սամփսոն զկէս գիշերաւ, եւ թափեաց զդրունս քաղաքին Գազայ:
Սամփսոն կէս գիշերանց ելաւ, ու Գազայի քաղաքին դռները փրցուց.
Սամսոն եարը կէճէլէյին գալգըը, վէ Գազա շէհրինին գաբուլարընը գօփարտը:
Զինն ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ:

Նոյպէս կ'ըսուի զհասարակ գիշերաւ, զառաւօտ դեռ գիշերոյն, զմիջօրէաւք, որ ըսել է դէպի կէս գիշեր, ժամը դէպի առտուն, դէպի կէսօր:
Ցիջանել հրոյն զհինգ քաղաքօք (Սոդոմացւոց) փրկեաց Աստուած զՂովտ.
Երբ որ Սոդոմացւոց հինգ քաղաքին բոլորտիքը կրակ իջաւ, Աստուած Ղովտը փրկեց.
Սօտօմլուլարըն պէշ շէհիրինին էթրաֆընա աթէշ եաղտըղընտա, Ալլահ Ղովտու խէլաս էյլէտի:
Եղանէ արեգակն ընդ հարաւ, եւ պատի զհիւսիսիւ:
Աչք անմտի զծայրօք յածին:
Հայրն անկեալ զպարանոցաւ անառակ որդւոյն համբուրեաց:
Թաղեղն փասակար պատի զծառովք:

Նոյնպէս զերեաւ կամ զերեւ կամ զանձամբ զգեստն,

կը նշանակէ զգեստը վրան առնուլ կամ դնել կամ հագնիլ:

Այսպէս կ'ըսուի նաեւ յուր զգեստն արկանել:

Գ. Կան քանի մը բայեր, որոնք թէպէտ բոլորտիք կամ անորոշ ատեն չեն նշանակեր, սակայն պարառական խնդիր կ'առնեն:

Զաւակ անարգ է, որ անցանէ զպատուիրանաւ ծնողաց.

Գէշ զաւակ է, որն որ իր հօրը մօրը հրամանէն կ'անցնի կամ չի բռներ.

Աթալարընըն սէօզինի թութմայան էվլատ, սըյսուզ տուր:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝

Անցանել զուխտիւ, ուխտը չպահել:

Անցանել զաւուրբք, օրերն անցընել, ծերանալ:

Որք զանց արարին զիմաստութեամբ, զանմտութեան թողին յիշատակ յաշխարհի.

Որոնք որ իմաստութենէն հոգ չըրին, աշխարհիս մէջ իրենց անխելքութեան յիշատակը թողուցին.

Իլիմէ հաճէթսիզ օլանլար ահմագլըգլարընըն նիշանէսինի տիւննեատա պըրագտըլար:

Մի զանցանօք մերովք զանց արասցուք:

Մի ծիծաղեսցիս զկուրամբ ընկերին:

Այսպէս կ'ըսուի նաեւ այպանել զբանիւք, արհամարհել զէն, զանց առնել զնովաւ:

Ծանուցում:

Ինչպէս վերը ըսինք, ո՞վ հարցման պատասխանն՝ ուղղական է, որ անուն բայի կ'ըսուի: Որո՞ն հարցման պատասխանը՝ սեռական է, որ յատկացուցիչ կ'ըսուի: Հայցականն ալ խնդիր սեռի կ'ըսուի: Կոչականը խօսքին մէջ մինակ կը կենայ: Իսկ մնացած հոլովներուն, այս ինքն՝ նախդրիւ ու վերջահոլով տրականին, բացառականին, պատմականին, գործիականին, պարառականին, ներգոյականին խնդիր բնութեան կ'ըսեն ան բայերուն որոնց վրայ որ կ'իյնան:

# ԳԼՈՒԽ Ձ.

## ԲԱՑԱՅԱՅՏՉԻՆ ՎՐԱՅ

Ա. ՐԱՏ անգամ գոյական անուն մը, ուրիշ գոյական անուն մը կը բացայայտէ, անոր համար ալ կ'ըսուի Բացայայտիչ: Բացայայտեալն ինչ հոլով է նէ, սովորաբար բացայայտիչն ալ նոյն հոլով կը դրուի:

Բացայայտչին ու բացայայտեալին մէջ զօրութեամբ մեկնական շաղկապ մը կ'իմացուի. ինչպէս՝ այս ինքն, այս է, որ է, կամ իմա, ասել, որոնք երբեմն ներգործութեամբ ալ կը դրուին. ինչպէս,

Մի սիրեր զծուլութիւն եւ զքուն, (այս ինքն) զմայրն ամենայն թշուառութեանց.

Ծուլութիւնն ու քունը մի սիրեր, ամէն թշուառութիւններուն պատճառը.

Հէր սէֆիլլիք սէպէպի թէմպէլլիյի վէ ույգույու սէվմէ:

Այս երկու զգայութիւնք են, որ շարժեն զմարդն ի վնասակարսն, (այս ինքն) տեսիլ աչաց եւ լուր ականջաց:

Հիւանդանայ մարմինն յառաւելուլ միոյ տարերն, ջերմոյն ասեմ կամ ցրտոյն:

Սրտմտութեան քում մի բանար դու զդուռն (այս ինքն) զբերան քո:

Պտուղ երկպառակութեան է կամքն սատանայի (այս ինքն) հեան, բամբասանքն, ատելութիւնն:

Ամենայն մարմին ի չորեց տարերց է խառնեալ, (այս է) ի հողոյ, ի ջրոյ, ի յօդոյ եւ ի հրոյ:

Բ. Թէ որ բացայայտեալը նախդիր ունենայ, նախդիրը յառաջ դրուողին վրայ կը դրուի, թէ բացայայտիչն ըլլայ եւ թէ բացայայտեալը. բայց երբեմն հայցական հոլովին մէջը միայն վերջինին վրայ կրնայ դրուիլ. ինչպէս վերը (երես 150.) յատկացուցչին վրայ ըսինք: Երբեմն երկուքին վրայ ալ կը կրկնուի. մանաւանդ երբ որ մէջը ուրիշ մասն բանի կը մտնէ:

Պետրոս հիմն եդ եկեղեցւոյ յոյնն տեղերուց, Հռոմ:
Կրկին ինչ պարտ է մեզ ստանալ, զհաւատս եւ զսրբութիւն վարուց.
Երկու բան պէտք է որ ունենանք, հաւատք ու վարուց սրբութիւն.
Լազըմ տըր քի իքի գանաաթըմըզ օլսուն, իման վէ մէշրէպ սալիհլիյի:
Յորժամ զմիմեանց անձանց աղօթեմք, զսրբոյն կոյս բարեխօս ունիմք առ Աստուած, հաւատամք եթէ լսէ հայցուածոց մերոց:

Գ. Տեղերու անուններն երբ որ բացայայտիչ կ'ըլլան, թէ որ յառաջ դրուելու ըլլան, շատ անգամ ածական անուան պէս նախդրիւ ու երբեմն ալ մէկտեղ կը հոլովին. ինչպէս,

Ի ծովանալ Նեղոս գետոյ եւ ի խառնակել զսահմանս արտորէից, կռիւք եւ սպանմունք լինէին.
Երբ որ Նեղոս գետը կը շատնար ու արտերուն սահմանները կը խառնէր, կռիւներ ու սպանութիւններ կ'ըլլային.
Նիլ չայըն ճէօշխուպ թարլալարը պիր պիրինէ գարըշտըրտըղը զաման, չօգ գավկա վէ գան օլուրուտու:
Էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ, ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի:

Դ. Իսկ թէ որ վերջը դրուելու ըլլան, հոլովով միշտ կը համաձայնին:

Ե. Մարդու անունները նախադաս դրուելու ալ ըլլան, հասարակօրէն կը համաձայնին. զոր օրինակ.

Առ Ներոնիւ կայսերբ Հռովմայեցւոց գլխատեցաւ Պաւղոս առաքեալ ի Հռովմ քաղաքի.
Հռոմայեցիներուն Ներոն կայսեր ատենը, Պօղոս առաքելոյն գլուխը Հռոմ կտրուեցաւ.
Բօմալըլարըն Ներօն չէզարընըն վագթընտա Բօմատա Պօղոս հէվարիունուն պաշը քէսիլտի:
Առաջին հալածումն քրիստոնէից եղեւ ի Տրայիանոսէ արքայէ:

Արշակ Թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ Հայոց:

Զ. Բայց քիչ անգամ կրնան նաեւ չհամաձայնիլ:

Եւ հրաման յԱւգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս:

---

## ԳԼՈՒԽ Է.

### ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. Էական բայերը հաստատակօրէն անուն բայէն զատ, ուրիշ ուղղական խնդիր մ'ալ կ'ուզեն: Անուն բայի կ'ըսուի այն ուղղականը՝ որուն վրայ որ խօսքը կ'ըլլայ. ինչպէս, Բարձր են երկինք, հոս խօսքն երկինքին վրայ է. անանկ է նէ՝ Երկինքը անուն բային է: Ուղղական խնդիր կ'ըսուի, որն որ անուն բային ինչ կամ ինչպէս ըլլալը կը բացատրէ. ինչպէս վերը գրուած օրինակին մէջ Բարձր կը բացատրէ Երկինքին ինչպէս ըլլալը:

Անկարօտական է Աստուած.
Աստուած բանի մը կարօտ չէ.
Ալլահըն պիր շէյէ էհթիաճը եօգ տուր:
Խող տղմասէր է եւ խառնակեր:
Փափուկ եւ դիւրադարձ է լեզու:
Աշխարհ Հայոց մեծ է եւ արգաւանդ:
Ցանկալի եւ քաղցրաբան է խոնարհ, եւ զուարթագին են երեսք նորա:
Սէրն է պատճառ բարեմտութեան:

Բ. Բայց շատ տեղ խօսքին յարմարութեան նայելով՝ երկու ուղղականին մէկը թող կը տրուի:

Գ. Ուրիշ տեղ ուղղական խնդիրը նախդրիւ տրական կամ ներգոյական կը դրուի:

Աբրահամ եղեւ յոյժ մեծ եւ ի բազում:
Մովսէս յորդեգիրս եղեւ դստերն Փարաւոնի:
Եղիցուք մեք ձեզ ի ծառայս. այս ինքն՝ ծառայք:

Դսրովանք որդւոց են ի նախատինս ծնողաց. այս ինքն՝ Նախատինք:

Գ. Թէ որ էական բայերը սեռական խնդիր առնելու ըլլան, ունենալ կը նշանակեն: Ինչպէս տաճկերէնի մէջ ալ ունիմ բային տեղը միշտ էական բայը սեռական խնդրով կը գործածուի:

Որ ինչ իցէ քո, մի կորուսաներ, զի կամ գտանես զնա կամ ոչ.

Ինչ որ ունիս նէ մի կորսընցըներ, ինչու որ կամ կը գտնես կամ չես գտներ.

Նէն քի վար ըսա գայպ էթմէ, զէրէ եա պուլուրսուն եա պուլմազսըն:

Լուսնի չէր իւր լոյս առանձին, այլ յարեգակնէ գայ ի նա լոյսն:

Առն միոյ էին երկու որդիք: Են իմ եղբարք հինգ:

Ղովտայ էր ոչխար եւ արջառ եւ անասուն:

Որչափ եւ իցէ քո, ըստ նմին արասցես ողորմութիւն:

Ե. Երբեմն ալ կը նշանակէ գործ, պաշտօն, եւ այլն:

Ճշմարիտ եւ առաքինի վարդապետի է, երբեմն ողոքել եւ խրատել, երբեմն սաստել եւ յանդիմանել:

Աղէկ ու առաքինի վարդապետին (գործն) է, երբեմն ողոք առնուլ ու խրատել, երբեմն ծեծել ու յանդիմանել.

Էյի վէ ֆազըլէթլի ուսթայա վէրկի տիր, պազը քէրրէ օգշամագ վէ նասիհաթ վէրմէք, վէ պազը տէֆա ազարլամագ վէ թէքթիր էթմէք:

Աչաց է տեսանել, ականջաց, լսել, ռնգաց հոտոտել, քմաց ճաշակել, շօշափելեաց զգալ. այս ինքն՝ աչաց գործ կամ պաշտօն է տեսանել. եւ այլն:

Առատացուցանել զպտուղս՝ անդրեաց է, իսկ կորուսանել՝ խորշակին:

Զ. Էական բայը վայելչութեան ու հարցման նայելով՝ կրնայ ամէն հոլով խնդիր առնուլ:

Հիւանդն է գունոյն յայտ է:

Ցօրանջելն է Բուլորնէ մարմնոյ լինի:

Սկիզբն պատերազմաց յագահութենէ մարդկան եղեւ:
Այր բարկացող տգեղ է կերպարանօք:
Ախորժելի է խնձոր տեսութեամբ եւ հոտով եւ ճաշակաւ:
Արմաւենի բարձր է հասակաւ, եւ քաղցր պտղով:
Կերակուրքն եւ ըմպելիք ոչ անկարգութեամբ եւ յաճախութեամբ, այլ պարկեշտութեամբ եւ չափաւորութեամբ եղիցին:

---

# ԳԼՈՒԽ Ը.

## ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՆԵԼՈՒ, ԾԱԽԵԼՈՒ ԲԱՑԵՐՈՒՆ, ՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՑՈՒՑԸՆՈՂ ԱՆՈՒԱՆՑ ՎՐԱՅ

Ա. ԲԱՆԻ մը բայեր կան, ինչպէս ըսել, կոչել, անուանել եւ այլն, որոնք խնդիր սեռիէն զատ երկրորդ անորոշ հայցական հոլով խնդիր մ'ալ կ'ուզեն. եւ որոնց կրաւորականը երկրորդ ուղղական կ'առնէ. ինչպէս,

Բժիշկք զչափաւոր կերակուրս մայր առողջութեան ասացին.
Բժիշկները չափաւոր կերակուրն առողջութեան մայր ըսին.
Հէքիմլէր գարէր եէմէյէ սաղլըգ սէպէպի տէտիլէր:
Զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն:
Հոմերոս հայր անուանեցաւ ամենայն քերթողաց:
Սովորութիւն է մարդկան օր կոչել զերկոտասան ժամն միայն, ցորչափ արեգակն ի վերին կիսագունդն կայցէ:
Անուն աշխարհիս մերոյ կոչի յանուն Նախնոյն մերոյ Հայկայ, Հայք:
Հեթանոսք զերկինս վասն այնչափ մեծութեան, եւ զլուսաւորս վասն առաւել պայծառութեան աստուածս կարծէին:
Նախանձոտն զանձն միայն համարի արժանաւոր ի բարեաց, եւ զամենեսին ի փառս անարժանաւոր:

Բ. Ծախելու եւ գնելու բայերը սեռական հոլով խնդիր կ'առնեն.

Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին.
Երկու ճնճղուկ մէկ ստըկի չե՞ն ծախուիր.
Իքի սէրչէ պիր աչճէյէ սաթըլմա՞զ մը:
Վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի:
Ասեն ցծերն քանո՞յ վաճառես. ասէ ցնոսա ծերն,
տասն տասն փողոյ. ասեն ցնա, կարի ծանր են,
եթէ կամիս փողոյ փողոյ առնումք:

Գ. Նոյնպէս սեռական կը դրուի, թէ որ հարցուելու ըլլայ, քանի՞ դրամ:

Վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր եւ տասանց.
Յովսէփ հարիւր տասը տարեկան մեռաւ.
Յովսէփ եիւզ օն եաշընտա էօլտիւ:
Աղեքսանդր երեսուն եւ երկուց ամաց եղեալ վախճանեցաւ:
Էր այրն ամաց իբրեւ ութսուն եւ չորից:
Նոյ էր ամաց վեցհարիւրոց, եւ ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վերայ երկրի:

Ժամանակ ցուցընող անուններն երկու հոլով կը դրուին, հայցական եւ ներգոյական. թող պարառականը՝ որ անորոշ ատեն կը ցուցընէ:

Դ. Հայցական կը դրուի՝ երբ որ գործողութեան որչափ տեւելը կը նշանակէ, ու կը հարցուի որչափ ատեն, նէ՞ գատար վագըթ:

Եղեւ անձրեւ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր.
Քառասուն օր ու քառասուն գիշեր անձրեւ եկաւ,
Գըրգ կիւն գըրգ կէճէ եաղմուր եաղտը:
Հց. Ո՞րչափ ատեն. Պխ. քառասուն օր:
Հց. Նէ՞ գատար վագըթ. Պխ. գըրգ կիւն:
Որդիքն Իսրայէլի կերան զմանանայն զքառասուն ամ,
մինչեւ եկին ի շէն երկիրն:
Յովնան եղեւ ի փոր ձկանն զերիս տիւս եւ զերիս գիշերս:
Շրջեցաւ Յիսուս յաշխարհի զամս երեսուն, ու
յայտնեալ զփառս աստուածութեան իւրոյ:
Առ ջրհեղեղաւ զամս ողջոյն ապականեալ կայր երկիր:

Ե. Նոյնպէս հայցական կը դրուի, երբ որ ատենին շարունակութիւնը կը ցուցընէ:

Մերժեցաւ քուն յաչաց իմոց զգիշերս ողջոյն.

Ա- ֆէլֆը +--Ն- -ւէ- ֆ-խ--.
Դու կեճէ ույգում կէօղիւմոէն գաշտը։
Զ+------Ն Ե- ղկկց -մ շինեցաւ տաճարն։

Զ. Շատ տեղ ալ անորոշ հայցական կը դրուի։
Մովսէս իբրեւ ծնաւ, թագուցաւ -մի-- Եբէ- ի ծնողաց իւրոց.
Մ-ւկ-- Եբէ -ը Ծն---, էր Ծն-ղէը Եբէ+ -մի- պ-ռեցէն։
Մովսէս նէզաման քի տօղտուրյուսա, քէնտի ախթալարը իւչ այ սագլատըլար։
Յովրամ որդի Աքաաբու թագաւորէ ի վերայ Իսրայելի -մ- Երկո------։
Սաւղոս եղեւ ի Դամասկոս -----ր- էնւ։
Արար հարսանիս -----ր- ըրէ+------։
Իշխանութիւն նեռին ձգի -մի-- Եբէ- Ե- կէ-։
Տիգրան զՅոյնս ու --կ-- Ժ-մ-Ն-կ- ընդ իւրեւ նուաճեալ հնազանդէր։

Այսպէս կ'ըսուի նաեւ, Շրջիկ Ժ-մ-Ն-կ- Բ---մ-. Փ-+ը մի Ժ-մ-Ն-կ ը-- Յեղ Եմ. Եղէ --- Ժ-մ-Ն-կ- էՆւ. Հ-Ն-ֆ-էւ --կ-- մի։

Է. Երբեմն նոյն խօսքը թէ հայցական ու թէ ներգոյական կրնայ դրուիլ, ժամանակին շարունակութիւնը, միանգամայն երբ կամ որչափ ատենուան մէջ ըլլալը ցուցընելու համար։
Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո -մ-Ն-յՆ -----ր- կենաց քոց։
Եբէ-էք +ր-էՆ+-ւէ ---ե- +-- Հ-յք Բ-ւէը +-- կէՆ-յք մէջ.
Պիւթիւն էօմրիւնիւն կիւնիւնտէ աննըննըն թէրիժիլէ նաֆագանը եէյէսին։
Զ-մ-Ն-յՆ -----ր- կենաց իմոց ոչ դադարեցայց օրհնել զքեզ Քրիստոս փրկիչ աշխարհի։

Այսպէս կ'ըսուի նաեւ. ղ-ե- Ե- ղ-ֆ-էւ ֆ--Ն-ւ, Ղ--ֆ Ե- ղ-ե-բէկ ֆ-ւծեւ, որոնք կրնան մակբայ ալ սեպուիլ։
Սատանայ եցոյց զամենայն թագաւորութիւն ի վայրկեան Ժ-մ-Ն-կէ։
Ի վէց -----ր- կատարեաց զգործ իւր։

Այսպէս կ՚ըսուի նաեւ. Ի գիշերի եւ ի տուընջեան, եւ յամենայն ժամու փառաւորել զԱստուած:

Ը. Ներգոյական կը դրուի, երբ որ կը հարցուի Ե՞րբ, Ն՞է զաման:

Ի մանկութեան առաւել տնկի խրատ ծնողաց ի միտս մանկանց.

Տղայութեան ատեն ծնողաց խրատն աղէկ կը տնկուի տղուն միտքը.

Չօճուգ գըսմընըն Փիքրինէ քիւչիւք եաշընտա աԹալարըն նասիհաԹը էյիճէ Թէէսիր էտէր:

| | | |
|---|---|---|
| Հց. Ե՞րբ, | Պխ. տղայութեան ատեն. | Ներգոյական է: |
| Հց. Ն՞է զաման, | Պխ. քիւչիւք եաշընտա. | |

Որ ի ծերութեանն այնպիսի կաղիցի, յայտ է թէ ի մանկութեանն եւս չար:

Մեռաւ Աբրահամ ի բարւոք ծերութեանն:

Աստեղք յայտնապէս ի գիշերի երեւին, եւ ի ծագել արեւու ծածկին:

Խոտ վայելչական եւ կանաչագեղ է ի գարնանային ժամանակի:

Ոմանք ի տնկոց ի ձմեռային անթառամ մնան.

Ծառք ի ձմեռային հանգչին, ի գարնանային ծաղկին, յամառային պտուղ սնուցանեն, եւ յաշնային հասուցանեն:

Յաւուրս Սողոմոնի ոչ էր համարեալ արծաթ, թէ իցէ ինչ:

Աս ետեւի եկած խօսքին մէջ երկու հարցումն ալ կ՚երեւայ*:

Զվեց օր գործեսցես, յաւուրն եւթներորդի մի գործեսցես. զի զվեց օր արար Աստուած զերկինս եւ զերկիր, եւ հանգեաւ յաւուրն եւթներորդի.

* Թէպէտ ո՞րչափ ատեն հարցման պատասխանը հայցական է, ու Ե՞րբ հարցման պատասխանը ներգոյական է. բայց քանի մը տեղ խառնում կը գտնուի. ինչպէս,

Շրջեցաւ Յիսուս յաշխարհի յամս երեսուն. փոխանակ ըսելու զամս երեսուն:

Աս խառնումը եպքի ատենուան քերականութիւն գրողները չփոթած են կարծելով թէ հայցականը ներգոյականի ուժ ունենայ կամ մակբայ ըլլայ:

Վեց օր գործէ, եօթներորդ օրը մի գործեր · Ինչու որ վեց օրուան մէջ ստեղծեց Աստուած երկինքն ու երկիրը, ու եօթներորդ օրը հանգչեցաւ.

Ալթը կիւն իշլէյեսին, եէտինճի կիւն իշլէմէյէ-սին. զիրա ալթը կիւնտէ Ալլահ կէօյի վէ եէրի եարաթտը, վէ եէտինճի կիւն րահաթլանտը:

---

# ԳԼՈՒԽ Թ.

## ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ ԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ, ՈՐՈՆՔ ԸՆԴ ՈՒ ԸՍՏ ՆԱԽԴՐՈՎ ԽՆԴԻՐ Կ'ԱՌՆԵՆ

Ընդ նախադրութիւնը տեսակ տեսակ նշանակութիւն ունի:

Ա. Երբ որ խօսքը տարածում կը ցուցնէ, բայց ընդ նախդրով տրական խնդիր կ'ուզէ:

Անուն Քրիստոսի փառաւորեսցի ընդ ամենայն տեղիս:
Քրիստոսի անունը փառաւորուի բոլոր աշխարհք:
Քրիստոսուն իսմի տիւննեանըն տէօրթ թարաֆընտա իհթիշամլանսըն:
Ամենայն եկեղեցիք ուղղափառաց, որք ընդ տիեզերս են, մի են:
Շրջէր Յիսուս ընդ քաղաքս եւ ընդ գեւղս, եւ ուսուցանէր:
Հրեայք ցրուեալ են ընդ ամենայն հեթանոսս:
Աւետարանն համատարած քարոզեցաւ ընդ ամենայն երկիր, ընդ ծով եւ ընդ ցամաք եւ ընդ կղզիս:
Եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր:
Ստամոքսն ընդունի զկերակուրս, եւ բաժանէ զոյժ զօրութեան ընդ յօդս եւ ընդ անդամս մարմնոյն:

Բ. Դարձեալ ընդ նախդիրը՝ բանի մը մէջէն կամ վրայէն անցնիլ կը նշանակէ: Աս նախդրիւ տրականն աշխարհաբարի ու տաճկերէնի մէջ բացառական կը դառնայ:

Մտէք ընդ նեղ դուռն, զի անձուկ է ճանապարհն՝ որ տանի ի կեանս.

Նեղ դուռնէն մտէք. Ինչու որ նեղ է ճամբան, որն որ
արքայութեան կը տանի.
Տար գափուտան կիրինիզ, զիրա (էպէտի) էօմիւրէ
կէօթիւրէն եօլ էնսիզ տիր:
Որ ինչ մտանէ ընդ բերան, ոչ պղծէ զմարդ:
Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան մտանել, քան
մեծատան յարքայութիւն երկնից մտանել:
Ընդ դուռն ածեմք ի տուն զամենայն գոյս պատուա-
կանս եւ պիտանիս, եւ ընդ նոյն դարձեալ՝ եթէ
ինչ անպիտան է, արտաքս հանեմք:
Ընդ որ գնայ արեգակն՝ տիւ է, եւ ուստի գնայ՝
գիշեր, ի վերին կիսագունդն եւ ի ներքինն:
Ընդ խորութիւն ջրոյ լոյս ոչ անցանէ:
Դաւիթ քարիւ եհար զճակատ այլազգւոյն եւ ե-
մուտ քարն ընդ ոսկորսն ի ճակատն:
Եբրայեցիք ելեալ յԵգիպտոսէ անցին ընդ ծովն Կարմիր:
Այսպէս կ՚ըսուի. անցանել ընդ Յորդանան, Յորդա-
նանին վրայէն անցնիլ. կարկառել ընդ պատուհանն.
խոնարհեալ նայել ընդ պատուհանն. ընդ այլ ճանա-
պարհ գնալ:
Դարձեալ այլեւայլ ոճով ընդ մէջ կտրել, ընդ եր-
կուս բաժանել, ծիծաղել ընդ միտս, ընդ միտ ածել,
ընդ միտ մտանել, հարկանել ընդ միտս:
Գ. Ընդ նախադրութիւնն ալ նախդրիւ տրա-
կանով՝ կը նշանակէ տեղէ մը անդէն անցնիլ, ալմաք:
Ընդ երկիր անդր ոչինչ է.
Երկրէս անդին ոչինչ է.
Եէրտէն (տիւնեատան) էօթէսի հիչ տիր:
Անցին նոքա ընդ ծով մի եւ ընդ երկուս:
Աստուած այնպիսի բարիս խոստացաւ, որ զանցանէ
ընդ միտս մարդկան.
Աստուած այնպէս բարիքներ խոստացաւ, որ մարդուն
մտքէն վեր է.
Ալլահ էյլէ էյլիքլէր վաատ էթտի, քի ինսանըն
ֆիքրինտէն չօգ եօգարը տըր:
Արարածք ոչ երբեք անցանեն ընդ եդեալ սահմանս
իւրեանց:

Այսպէս կ'ըսուի նաեւ. անցանել ընդ Յորդանան, Յորդանանէն անդին անցնիլ. անցանել ընդ բանակ, ընդ ջուր, ընդ օրէնս, ելանել ընդ քաղաքն, եւայլն:

Դ. Կան քանի մը բայեր ալ՝ որոնք ընդ նախդրով տրական խնդիր կ'առնեն. ինչպէս, խնդալ, ուրախ լինել, նախանձել, տրտմել, ցանկալ, զարմանալ, սքանչանալ:

Ծնողք ուրախ լինին ընդ յառաջադիմութիւն որդւոց. Ծնողք կ'ուրախանան տղոց առաջ երթալուն վրայ.
Աթալար էվլատլարըն իլէրլէմէսինէ սէվինիրլէր:
Վնասասէրն խնդայ ընդ չարի:
Յորժամ խնդամք եւ ուրախ լինիմք ընդ յառաջադէմ եղբարս, մասնակից լինիմք պսակաց նոցա:
ԶԱստուած բարկացուցանեմք, յորժամ ընդ բարիս այլոց տրտմիմք:
Ընդ փառս աշխարհիս ընդունայն է ցանկանալ:
Ոչ նախանձին բարիք ընդ չարս, այլ չարք ընդ բարիս:
Բազումք սքանչանային ընդ ճգնութիւն սրբոյն Անտոնի:
Մանկունք փոքունք թողեալ զմեծամեծս, որք ոչ ինչ արժեն՝ ընդ այն զարմանան:

Ե. Երբեմն ընդ նախադրութիւնն ի նախդրի տեղ կը բանի:

Յովհաննէս ունէր գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. այս ինքն՝ ի մէջս իւր:
Հայեաց ընդ երկինս եւ թուեա զաստեղս, եթէ կարիցես թուել զնոսա. այս ինքն՝ հայեաց յերկինս:
Ընդ աւուրսն ընդ այնոսիկ. այս ինքն յաւուրսն յայնոսիկ:
Ընդ մէջ անցեալ ճառէր. այս ինքն՝ ի մէջ:

# ԳԼՈՒԽ Ժ.

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Խօսեցանք վերը թէ ածական անուններն իրենց գոյականներուն հետ ինչպէս պիտի համաձայնին: Հիմա կը մնայ խօսիլ մէկ քանի մասնաւոր գիտելիքներու վրայ, որոնք երեք յօդուածով բացատրենք:

---

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՈՒ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ինչպէս վերը (երես 115) ըսինք՝ ածական անուններն երեք աստիճան ունին, դրական, բաղդատական ու գերադրական:

Ա. Բաղդատականներն աշխարհաբառ ու տաճկերէն լեզուի մէջ բացառական խնդիր կ'առնեն. ինչպէս,

Ամենէն պզտիկ աստղն ալ աշխարքէս մեծ է.
Էն քիւչիւք եըլտըզ տա տիւնեատան պէօյիւք տիր:

Բայց գրաբառի մէջ քան նախադրութեամբ հայցական կ'առնեն:

Գլուխն պատուականագոյն է քան զամենայն մասունս.
Գլուխն ամէն մասերէն աւելի պատուական է.
Պաշ հէր ազալարտան զիատէ գըյմէթլի տիր:
Զինչ գեղեցկագոյն քան զծիրամարգ:
Իմաստութիւն պատուականագոյն է քան զակունս պատուականս:
Լռելն լաւագոյն է քան զբարի բանս:
Ձեր մեծագոյն յառաքինութիւնս եւ կարեւոր քան զհամբերութիւն:

Բ. Դրականներն ալ քան նախադրութեամբ հայցական հոլով խնդիր առնելով՝ բաղդատականի ուժ կ'ունենան:

Աչքն կարեւոր է քան զամենայն անդամս.

Աչքն ամէն անդամներէն աւելի հարկաւոր է.
Կեօզ հէր ազալարտան զիատէ իգթիզալը տըր։
Առեւծ հզօր է քան զամենայն կենդանիս։
Ձկունք մեծ են եւ յաղթանդամ քան զամենայն կենդանիս։
Տեսիլ աչաց հաւատարիմ է քան զլուր ականջաց։
Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր։
Մեծ քան զամենայն ախտից՝ տխրասպանութիւն։
Ջանձն իւր ունի մարդ թշնամի, չար քան զամենայն թշնամիս։

Գ. Երբեմն դրականը բաղդատական կ'ըլլայ դրականին վրայ եւս մասնիկն աւելցնելով. ինչպէս,
Աստուած քան զհայր եւս գթած է ի վերայ մեղաւորաց.
Աստուած հօրմէ աւելի գթած է մեղաւորներուն վրայ.
Ալլահ կիւնահքեարլարըն իւզէրինէ պիր փէտէրտէն զիատէ մէրհամէթլի տիր։
Վատթար եւս ես քան զնա։
Դառնագոյն եւս քան զլեղի։
Ճշմարտագոյն եւս քան զոր ոք ոչ խօսեցաւ։

Նոյնպէս կ'ըսուի նաեւ, եւս առաւել կամ առաւել եւս, եւս չար։

Դ. Երբեմն բաղդատականները քան նախադրութեամբ հայցական հոլով խնդիր առնելու տեղ, յոգնակի սեռական կ'առնուն։
Տիգրան ամենեցուն թագաւորացն մերոց հարստագոյն եւ խոհեմագոյն էր. այս ինքն՝ քան զամենայն թագաւորս մեր հարստագոյն եւ խոհեմագոյն էր.
Տիգրան մեր ամէն թագաւորներէն զօրաւոր ու խոհեմ էր.
Տիգրան ճէմի փատիշահլարըմըզտան գուտրէթլի վէ ֆիրասէթլի իտի։
Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ամենայն հիւսիսականաց վեհագոյն. այս ինքն՝ քան զամենայն հիւսիսականս վեհագոյն։
Իմաստասիրութիւնն գեղեցկագոյն եւ պատուականագոյն է ամենայն գործոց մարդկան. այս ինքն՝

գեղեցկագոյն եւ պատուականագոյն քան զամենայն գործս մարդկան:

Ե. Դրականը գերադրական կ'ըլլայ վրան ամենամասնիկը դնելով, ինչպէս վերը (երես 115) բերուած օրինակներուն մէջ կը տեսնես: Բայց շատ անգամ դրականին ու բաղդատականին քով առաւելական անուն մը կամ մակբայ մը դնելով կը շինուի, որն որ աւելի գործածական է, ինչպէս ընտիր Նախնեաց գրքերուն մէջ կ'երեւայ:

Կարի դժուարին, շատ դժուար, չօգ չէթին.
Յոյժ համեղագոյն, շատ համով, փէք չօգ լէզզէթլի.
Սաստիկ հզօր, շատ ուժով, չօգ գուվվէթլի:

Գանգաղիմք եւ վեհերիմք այնմ պարապել, թէ-
պէտ եւ կարի իսկ յոյժ թեթեւագոյնք իցեն.
Ապականեալ ստամոքս դժուարելով ի բաց վարէ
եւ զյոյժ համեղագոյնս ի կերակրոց.
Աւրուած ստամոքը զզուելով դուրս կու տայ շատ հա-
մով կերակուրներն ալ.
Պօզուլմուշ միտէ էն լէզզէթլի եէմէքլէրի տէթիթ-
սինմէյիլէ տըշարը վէրիր:
Արեգակն կարի փայլուն է ի մէջ արարածոց:
Յոյժ չար է Նախանձ:
Քակեցից, եւ ես մեծամեծս շինեցից:
Տուր իմաստնոյն պատճառս, եւ իմաստնագոյն եւս լիցի:
Ի գազանս այն է առաւել դժնդակ եւ խիստ, որ
ոչն խառնի յերամս:
Ամենայնի գեղեցիկ եւ զարմանալի էր տեսիլ փրկչին.
ոչ կարի երկայն, եւ ոչ փոքր՝ որ արհամար-
հելի թուէր տեսողացն, այլ չափ հասակաւ:

Զ. Երբեմն ալ գերադրական կ'ըլլայ նոյն բառը կրկնելով:

Ամենայն պարգեւաց պարգեւ խոնարհութիւն է:
Իմաստունն Սողոմոն ունայնութիւն ունայնութեանց
անուանէ զաշխարհ, եւ սնոտիք սնոտեաց:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ [illegible] [illegible], [illegible] [illegible]:

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Մեր լեզուին մէջ ածականը գոյականէն յառաջ դրուի նէ նախդրիւ կը հոլովի, ինչպէս յառաջ շատ տեղեր գրեցինք: Բայց երբեմն, մանաւանդ ընտիր գրուածներու մէջ նախադաս ածականը կրնայ գոյականին հետ համաձայնիլ կամ մէկտեղ հոլովիլ:

Խոստովան լիցուք զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին Աստուծոյ.

Փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ:

Բ. Բանի մը միավանկ կամ երկավանկ ածականներ ալ կան. ինչպէս է սուրբ, մեծ, քաջ, հին, բարի, չար, եւ այլն, որոնք նախադաս եղած ատեննին գրեթէ միշտ կը համաձայնին. միայն յոգնակի ուղղականին ու նախդրիւ հոլովներուն մէջ երբեք չեն համաձայնիր:

Նախանձ կալցուք բարեաց գործոց եւ առաքինասէր վարուց.

Աղէկ գործքեր գործելու եւ սուրբերնի փառք ունենալու բաղձանք ունենանք.

Էյի ամէլ իշլէմէյէ, վէ ֆազիլէթլի հարաքէթիմիզ օլմայա ղայրէթիմիզ օլսուն:

Պապ թագաւորն Հայոց դեղ մահու արբուցեալ սրբոյն Ներսիսի ելոյծ ի կենցաղոյս:

Աստուած ընդ քաջաց համբերողացն զխիրելեացն պարգեւէ զպսակս:

Մոլութիւնք առանց մեծի աշխատութեանց եւ քրտանց մեկուսանալ ի մարդոյն ոչ կամին:

Կարճամիտք ի փոքունց վշտաց խորտակին, եւ կարծեն թէ անհամբերելի վիշտ եկն ի վերայ նոցա:

Սեղեւկիոս հնազանդեցոյց զՊարթեւս մեծաւ պատերազմաւ:

Գ. Յետադաս ածականը, ինչպէս տեսանք, իր

գոյականին հետ կը համաձայնի ու մէկտեղ կը հո-լովի։ Բայց կը գտնուի քանի մը տեղ, որ չիհոլովիր։

Քրիստոս թաղմամբ եռօրեայ զբռնութիւն մահու ելոյծ. այս ինքն՝ երեքօրեայ թաղմամբ։

Բազումք ի սրբոց խոտովք վայրենի շատանային. այս ինքն՝ վայրենի խոտովք։

Քան զամենայն արարածս զգալի պատուականագոյն մարդն էր. այս ինքն՝ քան զամենայն զգալի արարածս։

Նոյնպէս կ'ըսուի նաեւ՝ զօրէնս արտաքին, հրամանաւ արտաքին, պատկառաւ փշեայ։

Դ. Թէ որ ածականին ու գոյականին մէջ ու-րիշ մասն բանի մտնէ, երբեմն նախդիրն երկուքին վրայ ալ կը դրուի ու կը համաձայնին*։

Աբէլ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէն.

Աբէլ իր հարազատ եղբօրմէն կը սպաննուի։

Աբէլ քէնտի եօզ գարտաշընտան էօլտիւ։

Ադամ ընդերական կորոյս զփառս, եւ դատապար-տեալ անկաւ յայս երկիր անիծից.

Սողոմոն զիմաստութիւն խնդրէ յԱստուծոյ, վասն որոյ զբոլորն առնու յԱստուծոյ պարառաբար զբարիս. այս ինքն՝ զբոլոր բարիս։

Ցոյս փառաց եւ պարգեւաց առաւելութեանց են պատ-ճառ բոլոց մանկագունիցն։

Ջանիցուք մեր կենաց զծուլութիւն ի բաց ընկե-ցուք։

Սպանցուք զանդամս մեր զերկրաւորս։

Ե. Երբեմն ալ նախդիրը չիկրկնուիր ու չի-համաձայնիր։

Որ զկատարեալն ունի սէր, ոչ խնդրէ զիւրն։

Ով որ կատարեալ սէր ունի, իր բանը չի փնտռեր.

Քիմին քի թէքմիլ մուհապպէթի վար ըսա, քէն-տի հօգարըընը արամազ։

* Բայց ընտիր նախնիք ածականի ու գոյականի մէջ շատ քիչ տեղ ուրիշ մասն բանի կը դնեն, բաց ի ստացական դերա-նուններէն։

Զմարմնականն բարւոք է տալ կարօտելոց պէտս. այս ինքն՝ բարւոք է տալ կարօտելոց զմարմնական պէտս:

Ո՞ւր մեր վարժարանք է թագաւորականն պատրաստեալ հրամանաց. այս ինքն՝ ի Թագաւորական Հրամանաց պատրաստեալ:

Ձ. Երբ որ ածականները շատ են, Նախդիրն ամենուն վրայ ալ կը կրկնուի:

Ի չիմար եւ յանխրատ խնդրոց ծնանին կռիւք:

Ի բարի եւ յազնուական ազգէ ես դու:

Յորժամ Թիւրեսցին շունչք հողմոցն անդնդայնոց յընտանի եւ ի բնաւոր ճանապարհաց, յաղխս եւ ի փապարս ստորերկրեայս, հարկ լինի սասանել երկրի:

Է. Երբեմն ութիւն վերջաւորած կամ ութիւնի զօրութիւն ունեցող գոյականներուն սեռականն ածականի տեղ կը գործածուի:

Դատել զոք մահու խայտառակութեան.

Խայտառակ մահով մէկը մեռցնել.

Բեզիլ եօլիւմ իլէ պիր քիմսէյի գաթլ էթմէք:

Եթէ ոչ խլեսջիք զսննդեան չար սովորութիւնս, ոչ կարէք ընդունել զսերմն, որ ի ձեզ պտուղ տայցէ ողջախոհութեան. այս ինքն՝ որ տայցէ ի ձեզ պտուղս օգտակարս:

Խօսել բանս ունայնութեան. այս ինքն՝ դատն բանս:

Ը. Կան քանի մը գոյական անուններ՝ որ ածականի տեղ կը բանին:

Սուրբն Սահակ Թարգմանեաց զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուէ ի հայ բարբառ.

Սուրբ Սահակ աստուածաշունչ կտակարանը յունարէն լեզուէ հայերէն թարգմանեց.

Աղեղ Սահակ Թէվրատը րումի լիսանտան էրմէնի լիսանընա թէրճիւմէ էթտի:

Սուրբն Ղուկաս գրեաց զաւետարանն ի լեզու ասորէ, եւ սուրբն Յովհաննէս ի լեզու յոյն:

Մովսէս ջուր բղխեցոյց յանապատին յապառաժ վիմէ:

Զո՛ր ադամանդ քար չբեկանէ այս ձայն ահարկու.

Ո՛ր քարէ սիրտը չիվախցըներ սա ահաւոր ձայնը.
Դու եօրփիւլիւ սէս հանկը թաշ եւրէյի գօրգութմազ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Մասնական անուններուն իրենց գոյականին հետ համաձայնութիւնը վերը (երես 127.) գրեցինք:

Ա. Մասնական անունները բացառական խնդիր կ'ուզեն*:

Իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հաճոյ լիցի վասն շինութեան.
Ձեզմէ ամէնքն ալ ընկերնին հաճոյ ըլլայ, միտքը շինելու համար.
Սիզտէն հէր պիրինիզ էյի իպրէթ իչին այագտաշընա մագպուլ օլսուն:
Ո՞ք ի մահկանացուացս ունիցի կեանս անտրտում:
Ոչ ոք ի մարդկանէ բաւական է անձին իւրում, այլ կարօտ է ընկերին օգնականութեան:
Աստուած ոչ է հեռի յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ:
Պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրացն:

Բ. Այնպէս հասարակ անուններն ալ, որոնք մասնական անուան ուժ ունին, բացառական խնդիր կ'ուզեն:

Մեծն ի մէնջ եղիցի ձեր սպասաւոր:
Բազումք յաղքատաց եւ հաց իսկ ոչ ունին:
Յոլովք այն են ի մարդկանէ որ ղեղխութեամբք եւ անառակութեամբ զիւրեանց կեանս ապականեալ, զաւուրսն կարճեն:
Ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ ի դրախտէն արտաքս անկաւ:

* Երբեմն բացառականին նախդիրը, իրմէ առաջ ի՛ գիր ունենայ նէ՝ չի դրուիր, այսպէս.
Եւ նա ի մի նաւուց. — այս ինքն՝ ի մի ի նաւուց:

Այսպէս կ'ըսուի պաշտօնէից ժողովարանաց, հմուտ է բժշկաց։

Գ. Երբեմն ալ յոքնակի սեռական կը դրուի։

Վարդաշակայ միաբանեալ զքաջս Հայոց, խաղայ ի վերայ Մակեդոնացւոց։

Վարդաշակ Հայերուն քաջերը միաբանելով, Մակեդոնացւոց վրայ կ'երթայ.

Վարդաշակ Էրմենիլէրին էշպէհլէրինի թօփ էտիպ Մակեդոնիալըլարըն ուզէրինէ եւիւրիւյիւշ էտէր։

Աշակ ի գարնանային եղանակս զգործիս ի ձեռս առեալ զխստագոյնս անդաստանաց փութայ կակղել։

Զվնասակարս խոտոց արմատաքի խլել։

Յընտիրս շիրմաց մերոց թաղեա զմեռեալս քո։

Աս օրինակներէն կ'երեւայ որ շատ տեղ ասոնք ածականի ուժ ունին, ինչու որ կրնայ ըսուիլ հմուտ է մարդկանէ կամ մարդէն հմուտ. առաջինն է մարդկանէ կամ առաջին մարդն. քաղաքն յաղթանաց կամ քաղաքն յաղթանակ. քաջքն Հայոց կամ քաջ Հայք. զխստագոյնս անդաստանաց կամ զխստագոյն անդաստանս, եւ այլն։

Դ. Ինչ մասնական անունը հասարակօրէն իր գոյականին հետ կը համաձայնի. (Տես երես 128.)։

Ի բարերար արարչէն ոչ ինչ չիք եղեալ, եւ չիք ինչ ոչ, որ բնութեամբ չար իցէ.

Բարերար արարչէն՝ ոչ բան մ'եղած չէ, ու ոչ բան մը չկայ, որ բնութեամբ չար ըլլայ.

Էյիլիքտար թանրըտան՝ քէօթիւ շէյ օլմամըշ տըր, վէ քէօթիւ շէյ եօգ տուր՝ քի զաթընտան քէօթիւ օլսուն։

Նախանձոտն յորժամ տեսանէ զայլս բարւոյ իմիք դիպեալ, հաշի եւ մաշի։

Ուսո զբերան քո խօսել զայն ինչ, որ իցէ ի սիրտ քո։

Մեր կեանքս որպէս է շարժմանէ իմիքէ ընթանայ առ իւրաքանչիւր ընտանի կատարած։

Ե. Երբեմն ալ չհամաձայնիր։

Մարմին որ յախտէ ինչ վտանգի, զվնասակարն բաղձայ եւ ոչ զօգտակարն.

Մարդոյն՝ որ հիւանդութենէ մը փրկուի մեծ կ'երեւայ,
Ճառագայթը իր ծագման, քան իր օգտակարը.

Մարգարտան թէհլիքէ իչինէ տիւշմիւշ վիճուտ, եօգ
քի փայտալը՝ իլլէ զարարը (շէյլէր) արգիւլէր:

Իսկ յոքնակին մէջ միշտ անփոփոխ է. այսպէս.
Զկնի ամաց ինչ. Մէկ քանի տարիէն ետքը. Պիր գաչ
եըլտան սոնրա: Յետ աւուրց ինչ. Մէկ քանի օրէն
ետքը. Պիր գաչ կիւնտէն սոնրա:

Զ. Երբեմն ինչ մասնական անունը զարդի
տեղ կը դրուի:

Եթէ հնար ինչ է, ընդ ամենայն մարդկան զխա-
ղաղութիւն կալջիք.

Թէ որ կարելի է նէ, ամէն մարդու հետ խաղաղութիւն
ունեցէք:

Էյէր գապիլ իսէ, հէր ատէմ իլէ պարըշըգ
գալընըզ:

Մի թէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր
Աբրահամ:

Սկիզբն արգելլոյ զբարկութիւն այս ինչ է. յոր-
ժամ ոք լուիցէ ինչ եւ շարժիցի սիրտն, ոչ
խօսեսցի ինչ, այսպէս անցանէ բարկութիւնն*:

Է. Իւրաքանչիւր բառը չի հոլովիր, ինչպէս վերը
(երես 28.) ըսինք. բայց թէ որ պէտք ըլլայ, ուղղա-
կանը սեռականի ու տրականի տեղ կը բանի:

Ողջոյն տուր սիրելեաց իմոց իւրաքանչիւր յանուանէ.
փոխանակ ըսելու՝ իւրաքանչիւրոց.

Իմ սիրելիներուս ամենուն ալ անունով բարեւ տուր՝
Պէնիմ սէվկիւլիւլէրիմէ հէր պիրինին իսմի իլէ
սէլամ վէր.

Բաժանէ իւրաքանչիւր, որպէս եւ կամի:

Բայց վերջի դարերուն հեղինակները կը հո-
լովեն, որն որ հետեւելի չէ:

* Ինչ երբեւ հարցական՝ նախդրիւ կը հոլովի: Բայց երբեւ մասնական անուն՝ չի հոլովիր, ինչպէս աս օրինակին մէջ կ'երեւայ: Իսկ իրիք, իմիք, յիմեքէ, իւիքէ. Իք մասնական անունէն կ'ըլլեն որ հասարակօրէն աշխարհաբառ կը բանի:

# ԳԼՈՒԽ ԺԱ.

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Վերը (երես 130.) տեսանք թէ ցուցական ու ստացական դերանուններն իրենց գոյականին հետ ինչպէս պիտի համաձայնին: Հոս կը մնայ խօսիլ քանի մը հարկաւոր գիտելիքներու վրայ:

Ա. Աստ, անդ եւայլն մակբայները ցուցական դերանուանց տեղ կը բանին. այս ինքն՝ այսր, այդր, անդր, տրականի տեղ. աստի, այդի, անտի, բացառականի տեղ. աստ, այդր, անդ, ներգոյականի տեղ:

Ոչ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ. այսինքն՝ յայնմ պարտիզի:

Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այսինքն՝ յայսմ աշխարհի.

Այս աշխարհիս մէջ նեղութիւն պիտի ունենաք.

Դու ճիհանտէ սըգլէթինիզ օլաճագ:

Յանկամ ելանել ի մարմնոյ աստի. այսինքն՝ յայսմ մարմնոյ:

Եղիցուք յաշխարհէ աստի օտար. այսինքն՝ յայսմ աշխարհէ:

Յամենայն ծառոց որ իցեն ի ներքս ի դրախտի այդր ուտելով կերիցես. այսինքն՝ յայդմ դրախտի:

Բ. Աս մակբայները շատ տեղ դիմորոշ յօդերու տեղ կը դրուին:

Յիսուս առաքեաց զերկուս յաշակերտաց անտի. այսինքն՝ առաքեաց զերկուս յաշակերտացն.

Յիսուս աշկերտներէն երկուքը ղրկեց.

Յիսուս շակիրտլէրինին իքիսինի եօլլատը:

Թադէոս մի յեւթանասնից անտի եկն յԵդեսիա բժշկել զԱբգար. այսինքն՝ յեւթանասնիցն:

Որ սեղանոյն պաշտօնեայք են, ի սեղանոյ անտի ուտեն. այսինքն՝ ի սեղանոյն:

Ի պտղոյ անտի ծառն ճանաչի. այսինքն՝ ի պտղոյն:

Նոյ այր արդար եւ կատարեալ էր յազգի անդ իւրում. այսինքն՝ յազգին իւրում:

Այսպէս կ'ըսուի նաեւ. յաշխէ այս յայսմանէ. ի ժամանակէ այս յայսմէկ: Փոխանակ ըսելու յաշխէս յայսմանէ. ի ժամանակէս յայսմէկ:

Գ. Այս, այդ, այն ցուցական դերանուններն երբեմն եզակի ձայնով յոգնակիի տեղ կը գործածուին. այսպէս.

Տարերքս այս՝ հուր, ջուր, օդ եւ հող, խառնեալ են, եւ առանձին ուրեք ոչ երեւին. այս ինքն՝ տարերքս այսոքիկ:

Աս տարրները՝ հուրը, ջուրը, օդն ու հողը, խառնուած են, ու մինակ տեղ մը չեն երեւար.

Պու էօնսիւրլէր, աթէշ, սու, հավա վէ թօփրագ, գարըշըգ տըրլար, վէ այըրճա պիր եէրտէ կէօրինմէզլէր:

Արքս այս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են. այս ինքն՝ արքս այսոքիկ:

Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր:

Դ. Որ յարաբերական դերանունն իր յարաբերեալին հետ թուով կը համաձայնի, այս ինքն՝ թէ որ յարաբերեալը յոգնակի է՝ յարաբերականն ալ յոգնակի կը դրուի. իսկ թէ որ յարաբերեալը եզակի է՝ յարաբերականն ալ եզակի կը դրուի. ինչպէս,

Երկիր՝ որ ըմպեց զանձրեւ բազում անգամ, ծնանի արդիւնս շահեկանս: Հոս յարաբերեալը Երկիր եզակի ըլլալուն համար, որ յարաբերականն ալ եզակի դրուած է:

Ե. Յարաբերականն ամէն հոլով ալ կրնայ դրուիլ հարցման համաձայն: Թէ որ անուն բայի է՝ ուղղական պիտի դրուի, թէ որ խնդիր սեռի՝ հայցական. իսկ թէ որ խնդիր բնութեան է, բայն ինչ հոլով որ կը պահանջէ, ան հոլովը կը դրուի:

Տեղի՝ որ աւազին է, յստակ եւ քաղցրահամ բղխէ զջուր: Հոս որ անուն բայի է, անոր համար ուղղական դրուած է:

Ան տեղը՝ որն որ աւազոտ է, յատակ ու անոյշ ջուր կը բղխէ.

Գումլու եէր պէրրագ վէ թաթլը սու չըգարըր:

Այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն:
Հոս յարակացուցիչ ըլլալուն համար՝ սեռական գրուած է:
Որ ոչ հատուցանէ զոր գողացաւն, ոչ ընդունի թողութիւն յաւիտեան: Հոս խնդիր սեռի է, անոր համար հայցական գրուած է:
Զամենայն կերակուրս, յորմէ ոչ գարշիս, կեր անխտիր:
Յիշատակ հեղգութեանն՝ որով զժամանակն ծախեցաք, զմիտս խոցոտէ:
Պատուական քան զամենայն մասունս զգայութեան մարդոյն գլուխն է, յոր ուղեղն է գանձեալ, եւ յորում լուսատես աչքն:
Եղեւ ուրախութիւն ամենեցուն եղբարցն նորա՝ որք էին ի Նինուէ:
Ծով մեծ է եւ անդորր, յորում են ձկունք, որոց ոչ գոյ թիւ:
Բազում արմատք են յերկրի, զորս հմուտք ի բժըշկաց կենաց դեղս առնեն:
Յամենայնէ՝ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ, պարտ է ժուժկալ լինել:

Զ. Յարաբերականն իր յարաբերեալէն ետքը կը դրուի, ինչպէս յայտնի է աշխարհաբառէն ու վերը բերուած օրինակներէն: Բայց գրաբառ երբեմն ընտիր գրուածներու մէջ յառաջ ալ կը դրուի:

Որ քան զամենայն տկար է մեղու, զերկասիրութիւն պատուէ. այս ինքն՝ մեղու որ քան զամենայն տկար է:
Մեղուն որ ամենէն տկար է, շատ աշխատիլ կը սիրէ.
Օլ, քի հէփսինտէն զիատէ զայըֆ (պիր հայվան) տըր, չօգ չալըշմայը սէվէր:
Ո՞չ ապաքէն աշխարհս Աստուծոյ է, եւ որ ինչ միանգամ յաշխարհի վայելչութիւնք. այս ինքն՝ վայելչութիւնքն, որք են յաշխարհի:
Երկինք եւ երկիր եւ որ ի սմա լինելութիւնք, որպէս թէ գրով եւ բանիւ պատմեն զփառս Աս-

տուծոյ. այս ինքն՝ երկինք եւ երկիր եւ լինելութիւնք՝ որք են ի սմա:

Եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա, ասէ, որ Քրիստոսիւն խօսէր Պաւղոս. այս ինքն՝ ասէ Պաւղոս, որ Քրիստոսիւ խօսէր*:

է. Երբեմն յարաբերեալը զօրութեամբ կը դրուի, ու յարաբերականը յարաբերեալին հոլովը կ'առնու, ինչպէս վերը (երես 152.) յատկացուցչին վրայ ըսինք:

Որում խնդրէ ի քէն, տուր. այս ինքն՝ տուր այնմ՝ որ խնդրէ ի քէն:

Ով որ քեզմէ (բան մը) կ'ուզէ՝ տուր.

Քիմ քի սէնտէն (պիր շէյ) իսթէրսէ, վէր:

Որ բամբասէ՝ կորուսանէ եւ զանձն իւր եւ զորոց լսենն ի նմանէ. այս ինքն՝ կորուսանէ եւ զանձն իւր, եւ զանձն այնոցիկ որք լսեն ի նմանէ:

Լինիցիս միայնակեաց եւ ապաշխարեսցես վասն որոց գործեցեր. այս ինքն՝ ապաշխարեսցես վասն մեղաց զոր գործեցեր:

Որոց լսեն եւ չպահեն ի մտի, մեղադրէ սաստիկ. այս ինքն՝ սաստիկ մեղադրէ այնոցիկ որ լսեն եւ չպահեն մտի**:

* Երբ որ այսպէս յարաբերականն իր յարաբերեալէն յառաջ դրուելու ըլլայ, շատ անգամ հոլովը կը փոխէ, ինք յարաբերեալին հոլովը կը դրուի ու յարաբերեալն ալ յարաբերականին. ինչպէս,

Մարդիկ մտաւորք եւ բանաւորք տեսանելով զերկինս եւ զերկիր, եւ զոր է նոցա սքանչելագործութիւնք, փառաւորեն զարարիչն. այս ինքն՝ տեսանելով զերկինս եւ զերկիր, եւ զսքանչելագործութիւնսն՝ որ են ի նոսա. եւ այլն:

Հայելով յաշխարհիս մասունս, եւ որ է նոցա զանազանութիւնք են, զարուեստագէտն գովեսցուք վասն իմաստութեան հանճարոյ. այս ինքն՝ հայելով ի մասունս աշխարհիս, եւ ի զանազանութիւնս՝ որ են ի նոսա. եւ այլն:

Զոր ինչ վասն Կռոնոսի եւ Արամազդայ պատմութիւնք իցեն, ամաչեմ ասել. այս ինքն՝ ամաչեմ ասել զպատմութիւնսն որ վասն Կռոնոսի եւ Արամազդայ:

** Երբեմն յարաբերեալը յարաբերականին հետ կը համաձայնի. ինչպէս.

Զամենայն ինչ զոր առնէ Տէր, բնակէ յանձինս վատաց եւ անխրատից. այս ինքն՝ ամենայն ինչ զոր առնէ Տէր. եւ այլն:

Ը. Երբեմն յարաբերականին եզակին յոգնակին տեղ կը գործածուի, մանաւանդ ուղղականի ու հայցականի մէջ:

Որ ի հանգստեան են, դուն ուրեք յիշեն զԱստուած, այս ինքն՝ որք ի հանգստեան են. եւ այլն:
Որոնք որ հանգստի մէջ են, զԱստուած քիչ կը յիշեն.
Րահաթլըգ իչինտէ օլանլար Ալլահը փէք սէյրէք խաթըրլարընա կէթիրիրլէր:
Եթէ զառաջինսն զոր ասացաք, յանձին ցուցանեմք. այս ինքն՝ զորս ասացաք:
Իմաստութիւն զորդիս իւր բարձրացոյց, եւ պաշտպան լիցի այնոցիկ՝ որ խնդրեն զնա. այս ինքն՝ այնոցիկ որք խնդրեն եւ այլն:

Թ. Յարաբերական դերանունն երբ որ սեռական հոլով կը դրուի կամ յատկացուցիչ կ'ըլլայ, իր յատկացեալէն կամ յարաբերեալէն յառաջ դրուելուն համար շատ հեղ իր վրան ալ նախդիր կը դրուի:

Ո՞չ սա է Յիսուս, զորոյ մեք գիտեմք զհայր եւ զմայր.
Աս Յիսուսը չէ՞ մի, որուն մենք հայրը մայրը գիտենք.
Իսա պու տէյի՞լ մի տիր, քի պիզ օնուն փէտէրինի վէ վալիտէսինի թանըրըզ:
Գտանէք յաւանակ մի, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ:
Վա՜յ մարդոյն այնմիկ, յորոյ ձեռն գայցէ գայթակղութիւն:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ զորոյ զնոյն անուան. զորոյ զնոյ անուամբ:

Ժ. Յարաբերական դերանունն էական բայով մասնական անուան ուժ կ'ունենայ. ինչպէս աշխարհա-

Երբեմն ալ յարաբերականը յարաբերեալին հետ կը համաձայնի.

Զգէր Սեմէի քարինս Դաւթի եւ ամենեցուն՝ որոց ընդ արքային Դաւթի. այս ինքն՝ ամենեցուն որք էին ընդ արքային Դաւթի:

Երբեմն յարաբերեալը յարաբերականէն յառաջ ալ, վերջն ալ կը կրկնուի, կամ յարաբերեալին նշանակութեամբ ուրիշ բառ մըն ալ կը դրուի:

Եհան երկիր բանջար խոտոյ, որոյ սերմն իւր ի նմին:
Յորոց եւ իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ:

բառ ալ կ՚ըսենք. Մարդ կայ որ պանիր չիկրնար ուտել, իբր թէ ըսել է, օրինակ:

Ի միոյ հօր որդիս՝ է որ հնազանդ եւ հպատակ է հօրն, եւ է որ չարագոյն քան զսատանայ.

Մէկ հօր զաւակներուն մէջ կայ որ հօրը հնազանդ է, կայ ալ որ սատանայէն ալ չար է.

Պիր փէտէրին էվլատլարընըն իչինտէ, պաղըսը պուլունուր քի փէտէրինէ միւթի օլուն, պաղըսը տա պուլունուր քի շէյթանտան զիատէ քէօթիւ տիւր:

Ի տան մեծի են անօթք՝ որ ի պատուի են, եւ են որ յանարգութեան:

Սողնոց՝ զխօշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, եւ է որ ընդ փապարս երկրի մտեալք ղօղեն:

ԺԱ. Երբեմն էական բայը ներգործութեամբ չիգրուիր:

Ժողովեցին, որ շատ, որ սակաւ. այս ինքն՝ էր որ շատ, եւ էր որ սակաւ:

Ոմը շատ ոմը քիչ ժողվեցին.

Պազըլարը չօգ, պազըլարը ազ տէվշիրտիլէր:

Համապազ մեղանչեմք, որ խորհրդով, որ բանիւ, որ լսելով, որ տեսանելով:

ԺԲ. Շատ տեղ յարաբերական դերանունն ու իր բայը զօրութեամբ կը գրուին:

Ետես Յիսուս այր մի Մատթէոս անուն. այս ինքն որոյ անուն էր Մատթէոս:

Բողբոջ է առ Աստուած խաղաղութեան՝ առ եղբարսն խաղաղութիւն. այս ինքն՝ խաղաղութիւնն՝ որ լինի առ եղբարս, է բողբոջ խաղաղութեան որ լինի առ Աստուած:

Փայտն զգործով մեղսն, եւ եղէգն զբանիւ յանցանսն ցուցանէ. այս ինքն՝ փայտն ցուցանէ զմեղսն՝ որ լինին գործով, եւ եղէգն՝ զյանցանսն՝ որ լինին բանիւ:

# ԳԼՈՒԽ ԺԲ.

## ԴԻ՛ՄՈՐՈՇ ՅՕԴԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ա. ԴԻՄՈՐՈՇ յօդերը ս, դ, ն, դերանուննե- րուն արմատն են։ Ասոնցմէ ս՝ առաջին դէմը, դ՝ երկրորդ դէմը, ն՝ երրորդ դէմը կը ցուցընէ, ինչպէս առաջին մասին մէջ (երես 29.) ըսինք։

Ս դիմորոշ յօդերն երեք կերպով կը բանին։

Բ. Մ՚էյ մը էական դերանուան տեղ, ինչպէս,

Ոչ բաւեմք արարածքս զարարչէն պատմել. այս ինքն՝ մեք արարածքս։

Չենք կրնար մենք՝ որ արարած ենք, արարչին վրայ պատմել։

Պիզ քի եարատըլմըշ ըզ, եարատըճըտան էօթիւրիւ նագլ էթմէյէ գատըր տէյիլիզ։

Պարտ է մեզ՝ որք կարողքս եմք, բառնալ զտկարութիւն հիւանդաց. այս ինքն՝ մեք որ կարող եմք։

Ինձ հօրս լուարուք, որդեակք. այս ինքն՝ ինձ որ հայր եմ։

Զարթուցեալքս ի հանգստենէ քնոյ, աչիւ եւ դողութեամբ կացցուք յաղօթս. այս ինքն՝ մեք որ զարթեաք ի հանգստենէ քնոյ։

Մի հեղգասցուք մեղաւորքս դառնալ առ Աստուած, այս ինքն՝ մի հեղգասցուք մեք որ մեղաւոր եմք, դառնալ առ Աստուած։

Նախատինք եղաք Քրիստոսի քրիստոնեայքս. այս ինքն՝ մեք որ քրիստոնեայ եմք։

Եթէ զայս պաշտօնեայքս Քրիստոսի առնեմք, ապա զինչ ինչ ոչ այլքն առնիցեն. այս ինքն՝ մեք որ պաշտօնեայ եմք Քրիստոսի։

Ինչպէս աս օրինակներէն կ՚երեւայ, շատ անգամ այսպիսի խօսքերուն մէջ էական բայն ու յարաբերական դերանունը զօրութեամբ կ՚իմացուին։

Գ. Ցուցական դերանուան տեղ։

Սիրելով զմիմեանս կատարի խաղաղութիւն աշխարհիս. այս ինքն՝ խաղաղութիւն այսր աշխարհի։

Մէկզմէկ սիրելով աս աշխարհքիս խաղաղութիւնը տեղը կու-գայ.

Գիրկըխառնուրդ սէրմէջ(?)իլէ (ՊԻՐԻՊԻՐԻՄԻԶԻ ՍԷՎՄԷՅԻԼԷ) տիւնեանըն րահաթլըղը թէքմիլ օլուր:

Նիւթականս հուր ի նիւթոցն նուազեալ շիջանի. այս ինքն՝ այս նիւթական հուր. եւ այլն:

Նախ արարածքս եղեն, եւ ապա մարդն ստեղծաւ. այս ինքն՝ նախ այսոքիկ արարածք եղեն. եւ այլն:

Ի մասնէդ կարող էք զբոլորն ճանաչել. այս ինքն յայդմ մասնէ:

Ատ կտորէդ կրնաս ամէնն ալ ճանչնալ.

Շու փարչատան հէփսինի տէ թանըյապիլիր սինիզ:

Քառասուն թիւդ ի հինգ ութից աւարտի:

Դ. Երրորդ ստացական դերանուան տեղ:

Կամքս ոչ բնաւ ախորժէ զծերանալն. այս ինքն՝ կամք մեր.

Մեր կամքն ամենեւին ծերանալը չուզեր.

Կէօնիւլիւմիւզ իխթիար օլմասընը իսթէմէզ:

Ի գարնանային եղանակս ամենայն զգայութեամբքս զուարճանամք. այս ինքն՝ ամենայն զգայութեամբք մերովք:

Ծածկեա՛ զգլուխդ, զի խորշակ սաստիկ է ի լերինդ. այս ինքն՝ ծածկեա՛ զգլուխ քո, զի խորշակ սաստիկ է ի լերինդ յայդմիկ.

Գլուխդ գոցէ, ինչու որ ատ ցեղը սաստիկ տաք է.

Գափա՛ պաշընը, զիրա շու տաղըն իւզէրինտէ շիտէթլի սըճագ վար տըր:

Ե. Գրաբառ լեզուի մէջ շատ յաճախեալ ոճ մըն է՝ յարաբերական բառէ* մը ետքը պատահած բային կամ անուան կամ դերանուան կամ մակբային վրայ ս, դ, ն յօդերը դնել. այսպէս.

Ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է.

Ահա քու սիրած մարդդ հիւանդցեր է.

* Յարաբերական կ՚ըսուին ան բառերն՝ որ հարկաւ նախընթաց, կամ հետեւորդ խօսք մը կ՚ակնարկեն. ինչպէս են ով, որ, որ ինչ եւայլն:

Իշտէ սէնին սէվտիյին խասմէթէ օլմուշ:
Որ ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին:
Այդ զի՛ տեսերդ զիս եւ հաւատացեր:
Ո՞ւր եմ՛ երթամ՝ դուք ոչ կարէք գալ:
Որ առաջին եւ զկնի երթային՝ աղաղակէին:
Մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր:
Հատո ինձ զոր պարտիսդ:
Զո՞ր ասէն, կամ Զո՞ր ասէ՝ այսպիսի ինչ է:

Այս օրինակներէս յայտնի կը տեսնես որ ՛, ՝, ՞ յօդերն առնող բառէն առաջ միշտ յարաբերական բառ մը կայ:

Քիչ տեղ հարցական բառերէն ետեւ ալ կը դրուին:
Ընկեր, վասն որո՞յ եկիր: Գիտէ՞ք զինչ արարի ձեզ:
Ընդէ՞ր զրկիմ:

---

# ԳԼՈՒԽ ԺԳ.

## ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ա. Ներգործական բայերուն խնդիր սեռին հայցական կը դրուի, ինչպէս վերը խօսեցանք: Թէ որ ներգործական բայը կրաւորականի փոխուելու ըլլայ, ներգործական բային խնդիր սեռին՝ կրաւորականին անուն բայի կ'ըլլայ, եւ ասոր հակառակ ներգործականին անուն բային՝ կրաւորական բային բացառական հոլով խնդիր սեռի կ'ըլլայ:

Հեթանոսք պաշտեցին զարեգակն եւ զլուսին: Արեգակն եւ լուսին պաշտեցան ի հեթանոսաց:

Հոս առաջին պարբերութեան մէջ Հեթանոսք՝ անուն բայի է պաշտեցին ներգործական բային: Իսկ երկրորդ պարբերութեան մէջ Հեթանոսք՝ խնդիր սեռի եղած է պաշտեցան կրաւորական բային: Նոյնպէս Զարեգակն եւ զլուսին խնդիր սեռի են պաշտեցին ներ-

գործական բային. ու նոյն բառերն անուն բայի եղած են ուղղական կրաւորական բային:

Ճառագայթք արեգական լուսաւորեն զաշխարհս:
Աշխարհ լուսաւորի ի ճառագայթից արեգական:
Հրեայք խաչեցին զՅիսուս: Յիսուս խաչեցաւ ի Հրէից:
Կայէն սպան զեղբայր իւր: Աբէլ սպանաւ յեղբօրէն իւրմէ:

Արդ՝ իմանալու համար թէ արդեօք բացառականը խնդիր սեռի է, թէ խնդիր բնութեան, աս կանոնը պէտք է միտք առնուլ:

Թէ որ կրաւորական բային բացառականը ներգործականին անուն բային կրնայ ըլլալ, ան ատեն կրաւորական բային խնդիր սեռին է, թէ չէ՝ խնդիր բնութեան է:

Թէ որ նոր սորվողներն աս տարբերութիւնը չեն կրնար հասկընալ, իրենց բաւական է գիտնալ որ բացառականը կրաւորական բային խնդիրն է:

Բ. Երբեմն ներգործական բայ մը, երկու հայցական խնդիր կրնայ առնել:

Դու զի՞ առնես զմեզ:
Հարցից եւ ես զձեզ բան մի:
Թագաւոր զո՞ր ասեն զՅիսուս:

Գ. Թէպէտ ըսինք որ հայցական խնդիր միայն ներգործականները կ՚առնեն, բայց չէզոք բայերն ալ երբ որ իրենց արմատն ածականով մը խնդիր կ՚առնեն, գործիականի տեղ հայցական կ՚ուզեն:

Զամենայն հնարս հնարեսցուք, զի ի սիրոյն Աստուծոյ մի՛ վերջասցուք.
Մեր ձեռքէն եկածն ընենք, որ Աստուծոյ սէրէն ետ չմնանք.
Ալլահըն մուհապպէթինտէն այըլմամագ իչին, էլիմիզտէն կէլէնի էտէլիմ:
Ոչ ոք վկայէ զբարեկամէ իւրմէ զվկայութիւն ստութեան:

Այսպէս կ՚ըսուի նաեւ՝ զբարւոք նախանձն նախանձել. Բազում վաստակս վաստակել. զմեղս ոչ ի մահ մեղանչել. ախտանալ զախտ հպարտութեան. եւ այլն:

Դ. Շատ անգամ ալ անորոշ հայցական կը գրուի։

Երկնչել երկեւղ մեծ. այս ինքն՝ երկնչել երկիւղիւ մեծաւ։

Ելաց լալիւն մեծ. այս ինքն՝ ելաց լալով մեծաւ։

Զարմացաւ զարմացումն մեծ. այս ինքն՝ զարմացաւ մեծաւ զարմացմամբ։

Ե. Նոյնպէս չէզոք նաեւ կրաւորական բայերը գործիականի տեղ հայցական խնդիր կ'առնեն, երբ որ խնդրին նշանակութիւնը չէզոք բային նշանակութեան մօտիկ ըլլայ։

Որք սրբութեամբ ճաշակեն զմարմին Տեառն ոչ մեռանին զյաւիտենական մահն.

Որոնք որ Քրիստոսի մարմինը սրբութեամբ կը ճաշակեն, յաւիտենական մահուամբ չեն մեռնիր.

Քրիստոսուն թէնինի փագլըղըլը ալանլար, էպէտի էօլիւմ իլէ էօլմէզլէր։

Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ այնպէս մտանել ի փառս իւր. այս ինքն՝ նովին չարչարանօք չարչարել։

Նոյնպէս կ'ըսուի, ննջել զքուն. ամաչել զամօթ. եւ այլն։

Զ. Նոյնպէս թէ ներգործական եւ թէ չէզոք բայերուն քովը՝ յարաբերականը գործիականի տեղ հայցական կը գրուի, երբ որ բային արմատը կը յարաբերէ։

Եսաւ պաՀէր ոխս Յակովբայ վասն օրհնութեանցն զոր օրՀնեաց զնա Իսահակ Հայր իւր. այս ինքն՝ որով օրՀնեաց զնա. եւ այլն։

Վկայ լիցին յարութեանն, զոր յարեաւ աստուածապէս. այս ինքն՝ որով յարեաւ։

Է. Քանի մը չէզոք բայեր ներգործական բայի ուժ ունենալով՝ քիչ տեղ հայցական խնդիր կ'առնեն։

Զոր ինչ հայի ոք, ի նոյն փոխի մօք, այս ինքն՝ զոր ինչ տեսանէ ոք.

Ինչ որ մարդ կը տեսնէ, միտքն ալ այնպէս կը փոխուի.

Ինսան նէքի կէօրիւրսէ, Փիքր իլէ տէ օնա թէպտիլ օլուր։

Եղբայրն յանցեաւ զամանսն. այս ինքն՝ անգիտացաւ կամ ոչ ծանեաւ զամանսն։

Ի բամբասանաց խնայեցէք զլեզու. այս ինքն՝ արգելէք կամ կարճեցէք զլեզու ի բամբասանաց։

Ը. Նոյնպէս աս կրաւորական բայերը, վարդապետիմ, խրատիմ, հրամայիմ, պահանջիմ, հայցական խնդիր կ'առնուն*։

Ամենեցուն դատաստան եւ քննութիւն լինելոց է, եւ մեք ընդ ամենայն մեղաց պահանջիմք զհամարն։

Թ. Հարկանել, զարկանել բայերը խնդիր բնութեան՝ նախդրիւ սեռական խնդիր կ'առնեն, երբ որ տճկ. վուրմագ նշանակեն։

Հմուտ ղեկավար մօտ ի նաւահանգիստն հասեալ, առաւել խմն զգուշանայ նաւին, զի մի զքարի հարկանիցէ։

Վարպետ նաւավարը նաւահանգիստին մօտիկ աւելի նաւին վրայ զգուշութիւն կ'ընէ, որ քարի չզարնէ.

Ուսթա բէյիգ լիմանա եագլաշընձա կէմիսի թաշա չարփըլմասըն տէյի փէք զիատէ տըգգաթ էտէր։

Յետս յետս չոգան եւ զարկան զգետնի։

Նոյնպէս կ'ըսուի նաեւ՝ ձայն զձայնի հարկանել. զահի, զամօթի հարկանել. եւ այլն։

* Նոյնպէս էական բայով ձեւացած կրաւորականները ներգործական նշանակութիւն ունենալնուն համար հայցական խնդիր կ'առնեն։

Զգեստեալ լինէր կոյսն մանուկ զտիեզերաստատ բանաւորն. այս ինքն՝ (Հուխփախմէ) մանուկ կոյսն զգեստէր (զԾրդաւ) զտիեզերաստատ բանաւորն։

# ԳԼՈՒԽ ԺԴ·

## ԱՆԵՐԵՒՈՒԹԻՆ ՎՐԱՅ

Ա. Աներեւութին ներգոյականը՝ ատեն, ժամանակ կը նշանակէ, ինչպէս վերը (Երես 48) կը տեսնես*:

Ի ծնանելն Յիսուսի մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ.

Յիսուսին ծնանելուն ատենը մոգերն արեւելքէն Երուսաղէմ եկան.

Յիսուսուն տողտուղու վագըթ, մինչծիմըէր կիւն տօղուտան Գուտսի շէրիֆէ կէլտիլէր:

Ի սփռել լուսոյ վաղվաղակի ըմբռնեցին՝ որ ի խաւարի գնայցեն:

Ի բազմանալ մարդկան աճեցին չարիքն, զորս ջրհեղեղաւ դատեցաւ Աստուած**:

Եւ է սերմանելն:

Բ. Երբ որ աներեւութին վրայ ~ է նախդիրը կը գրուի, համար կը նշանակէ. ինչպէս, առ ի գործել, գործելու համար: Տես առաջի մասին մէջ (Երես 48):

Գ. Երբեմն ~ նախդիրը չի գրուիր:

Հովանի տերեւոյն պիտոյ է ի պահել զպտուղն.

Պտուղը պահելու համար տերեւին շուքը պէտք է.

* Ընտիր ձեռագիրները, ինչպէս ընտիր տպագրութիւնները, մանաւանդ աստուածաշնչին մէջ կ'երեւայ, թէ կրաւորականին եւ թէ ձայնակրակերպ չէզոք բայերուն աներեւոյթը եւ կը բանեցընեն:

Քիչ տեղ աներեւոյթը եւս կը վերջաւորի. ինչպէս, Հրամայեաց բղխեալ թռչունս. այս ինքն՝ բղխել:

** Քիչ տեղ աներեւութին ներգոյականն իր սեռական կամ տրական անուն բային հետ կը համաձայնի, ինքն ալ սեռական դրուելով. այսպէս,

Ո՛վ որ յանցանել տրտմալից գիշերոյ, եւ ծագելոյ առաւօտու, եւ արեգականն երեւելոյ ոչ ուրախանայ. այս ինքն՝ ով որ ոչ ուրախանայ յանցանել տրտմալից գիշերոյ, եւ ի ծագել առաւօտու, եւ յերեւել արեգական:

Այսպէս կ'ըսուի նաեւ. Այսոցիկ այսպէս եղելոց. այս ինքն՝ ի լինել այսոցիկ այսպէս. Հզօր կռուոյ եղելոյ. այս ինքն՝ ի լինել հզօր կռուոյ. եւ այլն: Աս կանոնը յունարէնէն մտած է մեր լեզուին մէջ:

Մէյմէյի սագլամա իչին եափրաղըն քէօլկէսի լազըմ տըր:

Ի լսել եկեալ եմ ես. այս ինքն՝ եկեալ եմ ես առ ի լսել:

Դ. Շատ անգամ ալ է Նախդիրը բոլորովին չդրուիր:

Զհուր շէջուցանել ջրոյ պէտք են. այս ինքն՝ առ ի շիջուցանել զհուր ջրոյ պէտք են.

Կրակը մարելու համար ջուր պէտք է.

Ալթէշի սէօնտիւրմէ իչին սու լազըմ տըր:

Գայ Յիսուս առ Յովհաննէս մկրտել ի նմանէ. այս ինքն՝ առ ի մկրտել ի նմանէ:

Ի մէջ լերանց աղբերք գնան, արբուցանել զամենայն գազանս վայրի. այս ինքն՝ առ ի արբուցանել:

Ել Իսահակ զբօսանել ի դաշտի ընդ երեկս. այս ինքն՝ ել Իսահակ առ ի զբօսանել:

Ած Աստուած ջրհեղեղ ապականել զամենայն երկիր. այս ինքն՝ առ ի ապականել զամենայն երկիր:

Ե. Աներեւոյթ բայերն երբեմն ընտիր գրուածներու մէջ սեռականի կամ տրականի տեղ, Նախադրութիւններուն ուղղական խնդիր կ'ըլլան:

Յեւրոպն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուսնոյ աճէ, եւ ըստ պակասելն պակասէ.

Եւրոպա ծովին քով տեղեր կան, որոնց ջուրը լուսնոյ աճելուն պէս կը շատնայ ու պակսելուն պէս կը պակսի.

Էվրօփատա պազը սէմթլէրին տէնիզին սույու այ պէօյիւտիւքճէ չօղալըր, վէ քիւչիւլտիւքճէ ազալըր:

Ըստ յառաջնում ժամանակին բնութեամբ սովորին բարիք:

Գրեաց վասն ոչ դատարկութեան եւ ծաղու ծառայանալ. այս ինքն՝ վասն ոչ ծառայանալոյ ծաղու:

Վասն անբիծ եւ անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք. այն ինքն՝ վասն անբիծ եւ անդատապարտ կալոյ, եւ այլն:

Ի ծագել արեգական ընդդէմ մերոց զօրաց, սա-

կաւ ինչ զանգիտէին, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման:

Զ. Նոյնպէս ան անուններն, որոնք աներեւութի ուժ ունին՝ սեռականի տեղ ուղղական կը դրուին:

Քրիստոնեայքն առ սէր Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանս. այս ինքն՝ վասն սիրոյն Քրիստոսի*:

Է. Շատ անգամ դիմաւոր բայի մը առջեւ աներեւոյթ բայ մը կը դրուի, զի թէական շաղկապով դիմաւոր բայ դրուելու տեղ**:

Մի աղօթեր քոց կամաց կատարել. այս ինքն՝ մի աղօթեր զի կատարեսցին կամք քո.

Մի աղօթեր որ քու կամքդ ըլլայ.

Սէնին բաղէթինին իլէրի վարմասը իչին տուա էթմէ:

Թողացուցանէ Աստուած դիւաց փորձել զառաքինիս. այս ինքն՝ զի փորձեսցեն զառաքինիս:

Բնութիւնս մեր սիրէ ծածկել զմերկութիւն:

Տեսանեմք երկուս արս միազգիս միմեանց մահու եւ արեան ծարաւել, այս ինքն՝ տեսանեմք զի ծարաւին մահու եւ արեան միմեանց:

Ը. Սկսանիմ, կարեմ, կամիմ, ջանամ եւ այլն, բայերը հասարակօրէն իրենցմէ ետքը աներեւոյթ մը կ'ուզեն:

Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել.

Աղէկ ծառը գէշ պտուղ չի կրնար տալ.

Էյի աղաճ քէօթիւ մէյվէ վէրէմէզ:

Ճշմարիտ հաւատացելոց սատանայ փորձութեամբք ոչ կարէ սասանել:

* Երբ որ աներեւութին գործիականն իր բային վրայ կրկնուելու ըլլայ, բային նշանակութիւնը կը սաստկացընէ:

Այս օրհնելով օրհնեսցես զքեզ, եւ բազմացուցանելով բազմացուսցես զզաւակ քո որպէս զաստեղս երկնից բազմութեամբ:

Ոչ միայն գիտելով գիտեն զբարին, այլ եւ այլոց ուսուցանեն:

** Աս աներեւութին՝ արգելեալ խնդրոյ կ'ըսեն, երբ թէ դիմաւոր բային թող չիտար որ իր խնդիրն առնու: Բայց կրնանք ալ ըսել որ աներեւութին առջեւը դրուած խնդիրը բուն իր խնդիրն է: Եւ թէ որ աներեւութին խնդիրը բային տրուելու ըլլայ, շատ հեղ բոլորովին տարբեր խօսք կ'ելլէ: Ինչպէս թէ որ ըսեմ, Բնութիւնն սիրէ զմերկութիւն, եւ Բնութիւնն սիրէ ծածկել զմերկութիւն:

Յիսուս առեալ ջուր՝ արկ ի կոնք եւ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն:

Այրս այս սկսաւ շինել, եւ ոչ կարաց կատարել:

Ջանային արքն դարձուցանել զնաւն ի ցամաք:

Թ. Նոյնպէս դիմազուրկ բայերն ալ բաց ի դերբայներէն, որուն վրայ (Երես 148.) խօսեցանք, աներեւոյթ մ'ալ կ'ուզեն:

Քրիստոնէի ոչ է պարտ կռուել այլ հեզ լինել.

Քրիստոնեայ եղողը պէտք չէ կռուի, հապա հեզ ըլլայ.

Պիր քրիստիանա նիզատան գաչըպ՝ միլայըմ օլմագ ֆարզ տըր:

Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց, եւ արկանել շանց:

Յորժամ զԱստուծոյ ճառիցէ ոք, պարտի զմիտս յստակել, եւ զխորհուրդս սրբել, զյոյզս շարմանց պարզել:

Ժ. Յունարէն լեզուէն մնացած է աներեւութին անուն բային երբեմն հայցական դնել:

Որ սիրէ զընկեր իւր, կամի զնա լինել ողջ մարմնով եւ առաքինի հոգւով. այս ինքն՝ կամի զի նա լիցի. եւ այլն:

Ով որ իր ընկերը կը սիրէ, կ'ուզէ որ անիկա մարմնով ողջ ու հոգւով առաքինի ըլլայ:

Արգատաշընը սէվէն՝ օնուն թէն իլէ սաղ, վէ ճան իլա ֆազիլէթլի օլմասընը արզուլէր:

Կամիմ զձեզ իմաստունս լինել ի բարիս, եւ անմեղս ի չարիս. այս ինքն՝ կամիմ զի դուք իմաստուն իցէք. եւ այլն:

Այնպէս ցուցէք ամենեցուն զձեզ ճշմարտախօս լինել, մինչ զի լոկ բանից ձերոց որպէս երդման հաւատայցեն մարդիկ. այս ինքն՝ այնպէս ցուցէք ամենեցուն թէ դուք ճշմարտախօս էք. եւ այլն:

Զառաքինութեան ոստսն քրտամբք եւ աշխատութեամբ ասաց Պղատոն բուսանել. այս ինքն՝ ասաց Պղատոն, եթէ առաքինութեան ոստքն քրտամբք բուսանին:

Ասեն յաւուրս քառասուն զարուն կենդանանալ.

այս ինքն՝ ասեն թէ ի քառասուն աւուրս արուն կենդանանայ:

Ըստ ոճի լեզուին աղէկ հմուտ եղողը կրնայ բանեցընել:

ԺԱ. Երբ որ աներեւութին վրայ ընդ նախադրութիւն դրուելու ըլլայ, ժամանակ կը ցուցընէ.

Ընդ երթալն նորա նեղէին զնա ժողովուրդքն:
Երթալու ատենը ժողովուրդը զինքը կը նեղէր:
Գիտէրքէն ճէմիաթ օնու սըգըշտըրըյօր ուտու:
Ընդ ելանելն Յիսուսի ի նաւէ, պատահեաց նմա այր մի:
Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին:
Երբեմն ալ կը նշանակէ՝ պէս, շուտ մը. կիպի, անիտէ.
Ընդ բուսանելն չորացաւ: Բուսնելուն պէս չորցաւ.
Պիթտիյի կիպի գուրուտու:

---

# ԳԼՈՒԽ ԺԵ.

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Ա. Ող վերջաւորեալ ընդունելութիւններն ածական են. եւ կը հոլովին ող, ողի, ք, աց, օք կամ աւք:

Այր բարկացող նիւթէ զկռիւ:
Մի լինիր ընկեր առն բարկացողի:

Բ. Ըստ ներգործական բայի ոյժ ունին, ու հասարակօրէն հայցականի տեղ սեռական խնդիր կ'ուզեն:

Առաջի Աստուծոյ կեաս, որ քննող է սրտից եւ խորհրդոց.
Աստուծոյ առջեւը կ'ապրիս որ սրտերն ու խորհուրդները քննող է.
Ալլահըն կէօզիւ ալթընտա եաշայօրսուն քի, եիւրէյին վէ տիւշիւնճէլէրին թէֆթիշճիսի տիր:

Լեր ի հարցմունս խոնարհամիտ, ի պատասխանիսն հանդարտ, եւ սիրով խաղաղութեան:

Զուգութիւն (միաբանութիւն) է մայր բարեաց, անզուգութիւն (անմիաբանութիւն) ծնող չարեաց:

Փականողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն Պետրոս, Քրիստոսի խաչակցեցաւ:

Գ. Շատ անգամ ալ ընդունելութեան յոգնակին՝ ող ընդունելութեան նշանակութիւնը կ'ունենայ:

Յուդա եղեւ առաջնորդ ունեցելեացն Յիսուսի. այս ինքն՝ ունողացն Յիսուսի.

Յուդա Յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ.

Յուդա Յիսուսու թուլթանլարըն գըլաւուզու օլտու:

Գինի զեղծէ զըմպելեացն եւ գայթակղեցուցանէ զմեսողսն. այս ինքն՝ զեղծէ զարբողսն:

Աստուած չբռնադատէ, այլ զկամելեացն ախորժէ զառաքինութիւն. այս ինքն՝ զկամեցողացն զառաքինութիւն. եւ այլն:

Որ չկարիցէ առեղծուլ զառակսն, առեղծելեացն ինչս տուժիցէ. այս ինքն՝ առեղծողացն:

Դ. Նաեւ ընդունելութիւնը՝ երբ որ ելոյ, ելով, ելոց, ելովք կը հոլովի, ածական է:

Որդի խրատեալ իմաստուն լիցի.

Խրատուած որդին խելացի կ'ըլլայ.

Նասիհաթլանմըշ էվլատ իլիմտար օլուր:

Արեգակն ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զխաւարեալս:

Շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց:

Ե. Նաեւ ընդունելութիւնն ան առնը բայի պէս կը բանի, երբ որ աներեւոյթ բային գործիականին ուժը կ'ունենայ:

Մեղուք նախ որդն ծնանին, եւ որդն աճեցեալ եւ թեւաբերեալ՝ թռչուն կերպարանի.

Մեղուները առաջ որդ կը ծնանին, ետքը որդը մեծնալով ու թեւ բուսցնելով՝ թռչուն կ'ըլլայ.

Արըլար էվվէլա պէօճէք տօղուրուրլար, վէ սօնրա

պէօճէք պէշլիյիւպ վէ գանատ պիթիրիպ՝ գուշ քիսվէթինի կիյէր:

Նախամարգարէն Մովսէս ի Հոգւոյն սրբոյ փըրթ-ղետել՝ ուսաւ զՀանգամանս լինելութեան արարածոց:

Մոլորեալ մարդկան զԱստուծոյ, զտարբերս աստուածս ասացին:

Որդին Յակոբայ Յովսէփ նենգեալ յեղբարցն վաճառի յԵգիպտոս:

Նախանձոտն ոչ կարանայ առ ճշմարտութեանն ընտրութիւն, ի Նախանձուն խաւարէ կուրացեալ:

Տե՛ս Նաեւ (Երես 147):

Զ. Լ՝ոց ընդունելութիւնն էական բայի հետ միաւորեալ կը բանի, ու կը նշանակէ պէտք: (Տես Երես 49):

Ե՛րբ եւ իցէ մեռանելոց եմք.

Ե՛րբ որ է նէ պէտք մեռնինք.

Նէզաման քի օլսա էօլէճէյիզ:

Ամենքին կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի:

Ամենայն դատարկ բանի համարս տալոց է:

Է. Երբեմն լոց ընդունելութեան տեղը ուրիշ բայ մը կը դրուի, որ նոյն ընդունելութեան ուժն ունի:

Համարս ունէմք տալ Աստուծոյ, այս ինքն՝ համարս տալոց եմք:

Ընդ ամենայն դատարկ բանից համարս տալ պիտանէ:

Հանդերձեալ եմ մեռանել, այս ինքն՝ մեռանելոց եմ:

Կայ մնայ մարդկան միանգամ մեռանել. այս ինքն՝ մարդիկ միանգամ մեռանելոց են:

Ը. Լի՝ ընդունելութեան ապառնին մէկ բանի յարմարութիւն կամ արժանաւորութիւն ունենալ մը կը նշանակէ:

Ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է.

Պաղ ջուրը ծարաւած մարդու ախորժելի է.

Սուդ սու սուսամըշ քիմսէյէ արզուլու տիր:

Ամբարտաւանութիւն ատելի է Աստուծոյ եւ մարդկան:

Ամենայն որ մարմին է՝ զգալի է, եւ որ անմարմին է՝ իմանալի է:

Մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մատաբերիցէ՝ ոչ **պարծելի** է, այլ **արգահատելի**:

Թ. Մէկ որ ընդունելութիւնները, մանաւանդ **եալ** վերջաւորեալները խնդիր ունենալու ըլլան ու խնդիրն իրենցմէ առաջ դրուելու ըլլայ, ընդունելութեան նախդիրն իր խնդրին վրայ կը դրուի: Ինչպէս յատկացուցչին ու յատկացեալին վրայ (**երես** 150 եւ 151) ըսինք:

Գովութեան արժանաւոր այն բժիշկն է, որ զ'ի **դրանէ** մահու **հասեալ** հիւանդն դարձուցանէ. **այս ինքն՝** որ դարձուցանէ զհիւանդն հասեալ ի դրունս մահու.

**Գովութեան արժանի այն բժիշկն է, որ մահուան դրանը հասած հիւանդը կը դարձնէ.**

Հիւրմէթէ լայըգ օ հէքիմ տիր, քի էօլիւմ սաաթընա եէթիշմիշ խասթայը սաղալթըր:

Հուրն յորժամ **զ'ի նա անկեալ նիւթն** ծախեսցէ, ինքն շիջեալ աներեւոյթ լինի. **այս ինքն՝** յորժամ ծախեսցէ զնիւթն անկեալ ի նա:

**Զ'առ ի դարան ընկեցելովքն** զանց առնէին:

**Զառաքինութեամբ զարդարեալն** պարտ է պատուոյ արժանիս վարկանել եւ մեծարանաց. **այս ինքն՝** զզարդարեալսն առաքինութեամբ:

Քրիստոս իւրով անպարտական մահուամբն կենդանացոյց **զմահու դատապարտեալս. այս ինքն՝** զդատապարտեալս մահու:

## ԳԼՈՒԽ ԺԶ·

### ԲԱՑԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ՇԱՏ գոյական եւ ածական անուններ կան, որոնք կամ ներգործական, կամ կրաւորական եւ կամ չէզոք աներեւոյթի ու ընդունելութիւններու ուժ ունենալնուն համար՝ Բայանուն կ'ըսուին. այս ինքն՝ բայի ուժ ունեցող անուն:

Ա. Ասոնցմէ ութիւն եւ ումն վերջաւորեալ գոյականները հասարակօրէն աներեւոյթի ուժ ունին, եւ խնդիր սեռի սեռական հոլով կ'ուզեն:

Ախտացեալքն դժկամակ լինին յըմպումն դեղոց օգտակարութեան. այս ինքն՝ դժկամակ լինին ըմպել զօգտակար դեղս.

Հիւանդները չեն ուզեր օգտակար դեղեր խմել.

Խասթալար մէնֆաաթլը իլաճլարը ալմագ իսթէմէզլէր:

Աստուած արար զգինի յառողջութիւն հիւանդաց, ի մխիթարութիւն ծերոց, եւ ի սփոփանս սգաւորաց. այս ինքն՝ առ ի առողջացուցանել զհիւանդս, ի մխիթարել զծերս եւ ի սփոփել զսգաւորս:

Հարց յանձն է խնամածութիւն որդւոց մանկանց. այս ինքն՝ խնամել զորդս մանկունս:

Յարարչութեան աշխարհի ջուր ծածկեալ ունէր զամենայն երեսս երկրի. այս ինքն՝ յարարչագործելն աշխարհի:

Սկիզբն ուսման գրոց աշխատութեամբ լինի. այս ինքն՝ սկիզբն ուսանելոյ զգիրս աշխատութեամբ լինի:

Յընթերցմանէ գրոց ոչ երբեք ձանձրանամ. այս ինքն՝ յընթեռնլոյ զգիրս ոչ երբեք ձանձրանամ:

Բ. Կան ուրիշ անուններ ալ՝ որ աներեւոյթի ուժ ունենալով՝ սեռական խնդիր սեռի կ'առնեն*:

* Քիչ տեղ սեռականի տեղ հայցական ալ խնդիր սեռի կ'առնեն:

Օրհնութիւն Իսահակայ զՅակոբ եւ Յակովբայ զՅովսէփ, ոչ ի նոսա, այլ ի Թոռունս նորա կատարեցաւ. այս ինքն՝ օրհնելն Իսահակայ զՅակոբ եւ Յակովբայ, եւ այլն:

Արար Աստուած զերկիր պտղաբեր ի սնունդս ծառայից իւրոց. այս ինքն՝ առ ի սնուցանել զծառայս իւր:

Աստուած երկիրը պտղաբեր ըրաւ, իր ծառաները սնուցանելու համար.

Հագ թամլէ քէնտի գուլլարընը պէսլէմէք իչին թօփրաղը մէյվէտար էթտի:

Յետ վախճանին Յովսեփայ նեղէին Եգիպտացիքն զիսրայէլ ի շինուած քաղաքաց եւ ի գործ դաշտաց. այս ինքն՝ նեղէին առ ի շինել զքաղաքս եւ ի գործել զդաշտս:

Գ. Կրաւորական աներեւութի ուժ ունեցող անունները բացառական հոլով խնդիր կ'առնեն:

Մահն ոչ այլ ինչ է, քան անջատումն հոգւոյ ի մարմնոյ.

Մահն ուրիշ բան չէ, բայց եթէ հոգւոյն մարմնէն զատուիլը.

Էօլիւմ պաշգա շէյ տէյիլ, փագաթ ճանըն թէնտէն այրըլմասը տըր:

Սուրբքն աղօթիւք զմահ խնդրէին, եւ զլուծումն ի մարմնոյ. այս ինքն՝ զլուծանելն ի մարմնոյ*:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ՝ Ծնունդ Տեառն մերոյ ի սրբոյ Կուսէն. այս ինքն՝ ծնանելն Տեառն մերոյ ի սրբոյ Կուսէն: Եղէգն շարժումն ի հողմոյ. այս ինքն՝ եղէգն շարժեալ ի հողմոյ:

Դ. Նոյնպէս ան անունները, որոնք որ ող ըն-

Պահեցէք զմիտս ձեր ի դատմանէ ընկերին. այս ինքն՝ ի դատելոյ զընկերն:

* Երբեմն կրաւորական աներեւութի մանաւանդ եւ ընդունելութեան ուժ ունեցողները բացառականի տեղ սեռական կ'առնեն:

Եմ եմ եւ ես մարդ մահկանացու ծնունդ նախաստեղծին. այս ինքն՝ ծնեալ ի նախաստեղծէն:

Այսպէս կ'ըսուի վարդապետութիւն մարդկան պատուիրեալ. այս ինքն՝ պատուիրեալ ի մարդկանէ: Մարդկան հաստատեալ կամք. այս ինքն՝ կամք հաստատեալ ի մարդկանէ: Կախեալ ոտից. այս ինքն՝ կախեալ յոտից: Անկեալ սրոյ. այս ինքն՝ անկեալ ի սրոյ:

դունելութեան ուժ ունին՝ հայցականի տեղ սեռական կ'առնեն*։

Ձեռքն են գործունեայ գործոց. այս ինքն՝ գործող գործոց։

Աստուած կանխագէտ է հանդերձելոց. այս ինքն՝ կանխաւ գիտող է հանդերձելոց։

Միտք են մարմնոյ եւ հոգւոյ կառավար. այս ինքն՝ կառավարող մարմնոյ. եւ այլն։

Խորշակ նուաճեցուցիչ է բուսոց եւ տնկոց, այս ինքն՝ թառամեցուցանող է բուսոց։

Ե. Իսկ խնդիր բնութեան՝ ան բային պէս կ'առնեն՝ որ բային որ ուժն ունին։

Անյայտ է ժամանակ ելից մերոց ի մարմնոյ աստի. այս ինքն՝ ելանելոյ մերոյ ի մարմնոյ աստի։

Մի մուտ է ամենեցուն յաշխարհս, եւ մի ել հասարակաց. այս ինքն՝ ամենեցուն մտանելն յաշխարհս միօրինակ է։

Զհոգւոյն հայհոյութիւն մի թողցի. այս ինքն՝ մի թողցի հայհոյել զհոգւոյն։

Բարկութիւնն է եռանդն սրտի արեան. այս ինքն՝ եռալ արեան զսրտիւ։

Աստուած արար զարեգակն լուսատու տունջեան, զլուսին եւ զաստեղս՝ լուսատու գիշերոյ։

Եղաք մտաւորք եւ բանաւորք, եւ պատուաւորք յանբանից. այս ինքն՝ առողք զպատուաւորութիւն յանբանից։

Հեթանոսք արարածոց պաշտօնատարք եղեն։

Շատ անգամ ածական անուններն ալ առանց բայի ուժ ունենալու խնդիր կ'առնեն։

Զ. Որոնք որ նման, յարմար, մերձաւոր կը նշանակեն, տրական խնդիր կ'առնեն, ինչպէս հարցումն ալ կը պահանջէ։

* Երբեմն թէ ող վերջաւորեալ ընդունելութիւնները, եւ թէ ող ընդունելութեան ուժ ունեցող անունները հայցական խնդիր կ'առնեն։

Ոչ սիրողաց զեղբարս պատիժս խոստանայ։
Փախչիք չարեաց, զծնողս անարգուք։
Հուր ծախիչ զխոտի։

Որպէս ոչ են նման երեսք երեսաց, նոյնպէս եւ ոչ սիրտք մարդկան օտարաց նման են։

Բնութիւնս մեր մեղանց կարօտ ստեղծաւ յարարչէն։

Լեզուն արժանի է մեծի գովասանութեան։

Է. Որոնք որ ունենալ կամ զուրկ ըլլալ կը նշանակեն, բացառական խնդիր կ՚առնեն, ինչպէս հարցումն ալ կը պահանջէ։

Չիք ինչ տեղի, որ թափուր իցէ յԱստուծոյ։

Արարիչն ամենեցուն աներեւոյթ է ի մարմնաւոր աչաց։

Անդաստան մաքուր է փշոց։

Անարգ զեռունն եւս ոչ մնայ անգործ ի խնամոցն Աստուծոյ։

Գայլ ապստամբ է ի շնոց եւ ի հնազանդութենէ ձեռաց մարդկան։

Անխառն ի ջրոյ գինին անապակ կոչի։

Ը. Այն ածականները, որոնք որ ան մասնկամբ կը բաղադրին՝ կրնան շատ հեղ բացառականի տեղ սեռական կամ տրական խնդիր առնել։

Աստուած անհաս է մտաց կամ ի մտաց։

Աստուած անտես է աչաց կամ յաչաց։

Անճաշակ հոգեւորական իմաստից։

Անճաշակ յերկնաւոր բարեաց։

---

## ԳԼՈՒԽ ԺԷ.

### ՄԱԿԲԱՅՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. ՇԱՏ տեղ պարզ ածական անունները բային վրայ իյնալնուն համար մակբայ կ՚ըլլան։

Մի ունայն ծախեսցուք զաւկաւ աւուրս կենաց մերոց։

Հոս ունայնը՝ որ պարզ ածական անուն է, մակբայ եղեր է։

Ղուկաս լուսաւորագոյն պատմէ զհանգամանս վերանալոյն Քրիստոսի։

Որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի։

Մեծաւ փութով անդանդաղ տայ զանձն ի գործ
եւ ի վաստակ (մրջիւնն)։
Մեծաձայն կարդացէք։

Այսպէս կ՚ըսուի նաեւ՝ անողորմ դատել, առատ պարգեւել, անխնայ շռայլել. եւ այլն։ Տես առաջին մասին մէջ (երես 106)։

Բ. Երբեմն ալ ածականներուն վրայ, երբ որ մակբայի տեղ կը բանին, ս գիրը կամ ին մասնիկը կը դրուի։

Բազմապատիկս աշխատէին։
Լեզու փոքր ինչ անդամ է, այլ մեծամեծս բարբառի։
Չարագործքն խղճիւ մտաց հարեալք սաստկագոյնս տանջին։
Ջուրն առաւելին գիրացուցանէ զերկիր, եւ զբնունդս նորա դարմանէ։
Երիտասարդք առաւելին ունին զանհնազանդութիւն վասն եռանդնոտ արեանն եւ անհաստատ բարուցն։

Այսպէս կ՚ըսուի նաեւ՝ անշահս լալ, անօգուտս ծախել, եւ այլն։

Գ. Երբեմն ալ նախդրիւ տրական կը դրուի. այսպէս,

Ցանգէտս ուտել. Ցանյայտս ի ներքս մտանել.
Ցանհոգս կալ. Ցանարժանս ծախել. եւ այլն։

Դ. Ասոր հակառակ երբեմն մակբայները գոյական անուններու վրայ իյնալնուն համար, ածականի տեղ կը բանին։

Սիրտն է շտեմարան ամենայն բարեաց խորհրդոց. այս ինքն՝ բարի խորհրդոց։
Որդէգրաբ սիրով զկամս հօրն կատարել. այս ինքն՝ որդիական սիրով։
Շինէ երկուս տունս մեծապէս ծախիւք. այս ինքն՝ մեծ ծախիւք։
Աստուած զանճառելի ծածկապէս խորհուրդ տնօրէնութեան մարգարէիւք տպաւորեալ եցոյց. այս

ինքն՝ զծածուկ խորհուրդ տնօրէնութեան մարգարէիւք եցոյց։

Ե. Մակբայները կրնան նաեւ բայանուններու վրայ դրուիլ։

Վէմ հատեալ ի լեռնէ առանձին ոլորմամբ վայրաբերի։

Յանկարծակի շարժմունք բազում անգամ ի միում ժամու զաշխարհս սասանեցին։

Զ. Իսկ երբ որ առանց մակբայ ունեցող բայանունը կամ ընդունելութիւնը նախդիր ունենայ, նախդիրը մակբային վրայ կը դրուի։

Ողորմութեան փոխարէն պարգեւէ Աստուած չ'ի սկզբանէ պատրաստեալ արքայութիւնն. այս ինքն՝ պարգեւէ զարքայութիւնն պատրաստեալ ի սկզբանէ։

Ծունկք առաքելոյն Յակովբայ խստացան իբրեւ զուղտու է ստէպ ծունր կրկնելոյն։

Է. Երբ որ նախադրութիւնները խնդիր ունենալու չըլլան, բային վրայ կ'իյնան ու մակբայի պէս կը բանին։

Արի, անց է ձմեռ.

Եւ, ձմեռը եկաւ.

Գալգ, օրթայա կէլ։

Մտեալ ի նաւ անց յայնկոյս։

Արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ յագարակս, գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն։

Ը. Երբեմն նոյն անունը կրկնուելով կամ շատ անուններ քովէ քով գալով՝ մակբայի տեղ կը բանին։

Սովն օր ըստ օրէ սաստկանայր։

Աստուած ընդ Մովսեսի բերան ի բերան խօսէր։

Բան առ բան պատասխանի առնել։

Արբեալքն ոչ կարեն ուղիղ ոտիւք ընթանալ, այլ գայթ ի գայթ, եւ վաղվաղակի անկեալ կործանին։

Աստուածպաշտութիւն ծայր ի ծայր երեւեալ լինէր յաշխարհին Հայոց։

Մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ։

Առ Մակեդոնացւոց Թագաւորն ազատաւք ողջոյն տային զայս օրինակ, խնդա՛ Թագաւոր Պտղոմէոս:
Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ զայս:
Թ. Նոյնպէս քանի մը անուններ զանազան հոլով դրուելով՝ մակբայի ուժ կ'ունենան:
Վխճել զճանապարհայն:
Չարութիւնն թէպէտ առ ժամայն հեշտացուցանէ, սակայն յետոյ մեծապէս տրտմեցուցանէ:
Լեառն Սինա ծխէր առ հասարակ:
Առ օրէն կամ նոյն օրէն հատուցանել զվարձ:
Համարեցան թէ առ ոչինչ ինչ իցէ:
Կալաւ Սաւուղ զԹագաւորն Ամաղեկայ զԱգագ կենդանւոյն:
Հանէ զգիշերն ի ծոցոյ յաղօթս:

---

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Որչափ կարելի էր՝ ջանացինք համաձայնութեան գիտելիքները դիւրին կարգով, բացայայտ օրինակներով քիչ կանոնի մէջ համառօտել. միանգամայն հարկաւոր գիտելիք մը դուրս չձգել: Միայն քանի մը զարտուղութիւններ դուրս թող տուինք, որոնք մեր նախնիք բանեցուցած են՝ իրենք լեզուի հեղինակ ըլլալնուն համար, կամ մեր լեզուն շատ բանուկ ըլլալուն համար: Անոնցմէ մէկ քանին հոս դնենք՝ որ մնացածները կարդացողը մակաբերէ:
Երիս խորհուրդս սոսկալիս տեսանի: Հոս անուն բային թուով չէ համաձայներ բային հետ, ու յոգնակի ուղղականին + գիրը ալ փոխուեր է:
Ո՞չ ապաքէն ի մարդկանէ զերիս տիւս եւ զերիս գիշերս անընդհատ ի քուն լինիցի: Հոս դիմաւոր բային անուն բային սեռական դրուեր է:
Երբեմն այս, այդ, այն ցուցական դերանունները՝ թէ իրենց գոյականէն առաջ ու թէ ետքը դրուին, ամենեւին չեն հոլովիր:
Այդ է—այդ: փոխանակ ըսելու. այդք է—այդ:

Տանս այս, հօրէս այս: Փոխանակ ըսելու. տանս այսորիկ, հօրէս այսորիկ:

Կամ մէկ հոլովը մէկալ հոլովին տեղ կը դրուի:

Այսր երախտեօք, զայսոսիկ առաքեալք, այսմ սահմանաւ:

Փոխանակ ըսելու. այսոքիւք երախտեօք, զայսոքիւք առաքեալք, այսու սահմանաւ:

Նոյնպէս կ'ըսուի նաեւ՝ որում անուն էր Յայրոս, այս ինքն՝ որոյ անուն էր Յայրոս:

Որչափ աւելի փոյթ ունենայ սորվողը կարգացածը աղէկ հասկընալու, այնչափ աւելի դիւրաւ կրնայ գտնել այսպիսի զարտուղութիւնները:

---

# ԳԼՈՒԽ ԺԲ.

## ԼՈՒԾՄԱՆ ՈՒ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՇԱԿԵՐՏՆԵՐԸ քերականութիւնը դաս առնելու սկսած օրէն պիտի սկսին ամէն օր մէյ մէկ քիչ պարզ գրքէ մըն ալ կարդալ, միանգամայն չգիտցած բառերնին սորվիլ: Ետքը ան սորվածներնուն վրայ պիտի սկսին զատել նախ անուններուն հոլովները, երկրորդ ածականն ու գոյականը, ու ետքը դերանունները, բայերուն սեռն ու խոնարհմունքը, եւ այլն. այսպէս,

Իբրեւ էջ Յիսուս ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք:

Իբրեւ — մակբայ. էջ, իջանեմ ներգործակերպ չէզոք բային կատարեալին եզակի երրորդ դէմը. Յիսուս ուղղական յատուկ անուն. ի լեռնէ բացառական, կ'ելլէ լեառն գոյական անունէն, անտի մակբայ: Գնացին, գնամ ներգործակերպ չէզոք բային կատարեալին յոգնակի երրորդ դէմը. զկնի նախադրութիւն, նորա սեռական խնդիր նախադրութեան. ժողովուրդք յոգնակի ուղղական. բազումք իր ածականը, որ մէկտեղ հոլովեր է:

Երբ որ երկրորդ մասը կը սկսին, ան ատեն պիտի ճանչնան թէ ո՛րն է անուն բային, խնդիրը, յատկացուցիչը, եւ այլն: Անոր համար ըսինք որ սոր-

րածներնուն վրայ ընեն լուծումը, ինչու որ մինչեւ խօսքը չհասկըցուի՝ չիլուծուիր, ու խօսքը չհասկընալն է պատճառը, որ նորերը չեն կրնար լուծում ընել: Ուստի լուծելու խօսքը յառաջ պէտք է թարգմանել տալ տղուն, ինչ լեզու որ աղէկ կը հասկընայ, ու ետքը լուծել տալ այսպէս,

Օրինակ:

Իբրեւ էջ Յիսուս ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի երկիր պագանէր նմա եւ ասէր, Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել:

Յիսուս երբ որ լեռնէն իջաւ, անոր ետեւէն շատ ժողովուրդներ գացին: Եւ ահա բորոտ մը գալով անոր երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր, ով Տէր, թէ որ կ'ուզես, կրնաս զիս սրբել:

Նեզամամն Յիսուս տաղտան էնտի, օնուն արտընտան չօգ ճէմահաթլար կիթտիլէր: Վէ իշթէ պիր ույուզլու օնա եագլաշըպ սէճտէ գըլար ըտը վէ տէրիտի, էֆէնտիմ, էյէր իսթէրսէն պէնի թէմիզ էտէպիլիրսին:

Լուծում:

Էջ ներգործական չէզոք բայ է. Յիսուս անուն բայի. ի լեռնէ անտի, այս ինքն՝ ի լեռնէն բացառական խնդիր էջ բային. իբրեւ մակբայ: Գնացին չէզոք բայ ժողովուրդք բազումք անուն բայի. զկնի նորա նախադրութեամբ խնդիր գնացին բային: Մատուցեալ անցեալ ընդունելութիւն, որ գործիականի ուժ ունի. երկիր պագանէր ներգործական բայ. բորոտ մի անուն բայի. նմա տրական խնդիր երկիր պագանէր բային. եւ շաղկապ. ահա մակբայ: Ասէր ներգործական բայ. իր անուն բային զօրութեամբ կ'իմացուի՝ որ է նա, այս ինքն՝ բորոտն. եւ շաղկապ: Տէր կոչական. կամիս հասարակ բայ, զօրութեամբ ունի անուն բային, որ է դու. եթէ շաղկապ. կարող ես չէզոք բայ, զօրութեամբ ունի անուն բային դու. սրբել իր աներեւոյթը. զիս խնդիր սեռի՝ սրբել աներեւութին:

Երբ որ վարպետը կը տեսնէ որ աշկերտը բաւական կը հասկընայ, ան ատեն հարկ չէ ամէն բան նախ թարգմանել տալ, հապա միայն ան կտորները՝ որոնք աւելի դժուար են:

Նոյնպէս երբ որ դիւրին խօսքերը կրնայ անսխալ լուծանել, ան ատեն լուծումն ուրիշ կարճ կերպով պէտք է ընել:

Աս երկրորդ լուծման կարգն աս է, նախ՝ իւրաքանչիւր բառ իր կարգաւը դնել. երկրորդ՝ մութ խօսքերը պարզել:

Կարգին մէջ ամէնէն առաջ կը դրուի յարաբերական դերանունը կամ շաղկապը, ետքը մակբայը, ետքը անուն բային, ետքը խնդիր սեռին, ետքը մէկալ խնդիրները. այսպէս,

Յիշեաց Աստուած զՆոյ... եւ ած Աստուած հողմ ի վերայ երկրի. եւ խցան աղբերք անդնդոց, եւ արգելաւ անձրեւ յերկնից..: Եւ նստաւ տապանն ի լերինս Արարատայ: Եւ յետ քառասուն աւուր եբաց Նոյ զպատուհան տապանին, եւ արձակեաց զագռաւն:

### Լուծում:

Աստուած յիշեաց զՆոյ, եւ Աստուած ած հողմ ի վերայ երկրի. եւ աղբերք անդնդոց խցան, եւ անձրեւ արգելաւ յերկնից: Եւ տապանն նստաւ ի լերինս Արարատայ: Եւ Նոյ եբաց զպատուհան տապանին, եւ արձակեաց զագռաւն:

Յատկացուցիչը յատկացեալէն, բացայայտիչը բացայայտեալէն, ու բացասական մասնիկն իր բայէն, մասնական անուան բացառական խնդիրը, ածական անուան խնդիրը ածականէն չեն զատուիր. ինչպէս,

### Օրինակ:

Ետես փարաւոն երազ. թուէր թէ կայցէ յեզր գետոյ. եւ ահա որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք գեղեցիկք տեսանելով եւ ընտիրք մարմնով: Եւ այլ եւս եւթն երինջք ելանէին ի գետոյ անտի, զազիրք տեսանելով եւ վտիտք մարմնով:

### Լուծում :

Փարաւոն ետես երազ . թուէր եթէ կայցէ յեզր գետոյ, եւ ահա որպէս թէ եւթն երինջք գեղեցիկք տեսանելով եւ ընտիրք մարմնով ելանէին ի գետոյն : Եւ այլ եւս եւթն երինջք զազիրք տեսանելով եւ վտիտք մարմնով ելանէին ի գետոյն :

### Այլ օրինակ :

Իջին եղբարքն Յովսեփու տասնեքին գնել ցորեան յԵգիպտոս, եւ զԲենիամին զեղբայրն Յովսեփու ոչ արձակեաց Յակոբ ընդ եղբարսն . քանզի ասէր թէ գուցէ պատահիցէ նմա հիւանդութիւն : . . . Ծանեաւ Յովսէփ զեղբարսն իւր, եւ նոքա ոչ ծանեան զնա . յիշեաց Յովսէփ զերազն իւր, եւ ասէ ցնոսա . Լրտեսք էք դուք, եւ դիտել զել եւ զմուտ աշխարհիս եկեալ էք :

### Լուծում :

Տասնեքին եղբարքն Յովսեփու իջին յԵգիպտոս —— է գնել ցորեան, եւ Յակոբ ոչ արձակեաց զԲենիամին զեղբայրն Յովսեփու ընդ եղբարսն . քանզի ասէր թէ գուցէ հիւանդութիւն պատահիցէ նմա : Յովսէփ ծանեաւ զեղբարսն իւր, եւ նոքա ոչ ծանեան զնա . Յովսէփ յիշեաց զերազն իւր, եւ ասէ ցնոսա . Դուք էք լրտեսք, եւ դուք եկեալ էք —— է դիտել զել եւ զմուտ աշխարհիս :

### Օրինակ :

Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա, վարդապետ, ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն :

### Լուծում :

Ոմն ի ժողովրդենէն ասէ ցնա, ո՛վ վարդապետ, դու ասա ցեղբայր իմ բաժանել զժառանգութիւնն ընդ իս :

Իսկ պարզելու մթութիւններն ասոնք են . այսինքն՝ թէ որ յարաբերականը յոդնակիի տեղ եզակի է նէ, յոդնակի ընել . երբ որ հարկաւոր եղած տեղ աներեւութին վրայ —— է նախդիրը կը պակսի՝ դնել .

Նոյնպէս անուն բային ալ թէ որ ներգործութեամբ չէ գրուած, ներգործութեամբ դնել, եւ այլն:

Օրինակ:

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թագստեան, եւ ոչ ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի. զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն:

Լուծում:

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թագստեան, եւ ոչ ++ դնէ ընդ գրուանաւ, այլ դնէ ի վերայ աշտանակի. զի որ+ մտանեն՝ տեսանիցեն լոյս:

Տես վերի օրինակներն ալ:

---

## ՇԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Նախնեաց շարագրութեան միտ դնելու ըլլանք, կը տեսնենք որ մէջերնին զանազանութիւն մը կայ: Աս զանազանութեան ուսկից առաջ գալը թող տալով, (որովհետեւ անիկա լեզուին պատմութեան կը վերաբերի,) հոս մինակ ինչ ու քանի տեսակ ըլլալուն վրայ համառօտ մը կը խօսինք:

Շարագրութիւնն երեք տեսակ կրնանք բաժնել, այս ինքն՝ Պարզ, Միջակ եւ Ճոխ կամ Բարձր:

Ա. Պարզ կ'ըսուի ան շարագրութիւնը՝ որուն շարքը բնական է ու դիւրաւ կը հասկցուի: Այսպէս են Աստուածաշնչին շատ գրքերը, այս ինքն՝ Մովսէսին հինգ գրքերը, Յեսու, Դատաւորք, Թագաւորք, Մնացորդք, Մարգարէութեանց ոմանք, չորս Աւետարանները: Իսկ վերջին հեղինակներու գործքերէն ասոնց կարգը կրնան սեպուիլ Հարանց վարուց խրատները, Շնորհալին, Յայսմաւուրքը, եւ ասոնց նման գրուածներ:

Բ. Միջակ կ'ըսուի ան շարագրութիւնը՝ որուն բառերն ու ոճերն աւելի վայելուչ ու կարգը հասարակ բնական կարգէն տարբեր է. ինչպէս են Աստուածաշնչէն Յուդիթ, Իմաստութիւն, Գործք առաքելոց, Պօղոսի, Պետրոսի, Յուդայի, եւ այլն թըղ-

թերը. Եզնիկ, Ոսկեբերանին Մատթէի, Պօղոսի թըղթոց եւ Եսայեայ մեկնութիւններն եւ ուրիշ շատ ճառերը, Ս. Բարսղի վեցօրեայ արարչութեան գիրքը, Եւսեբիոսին ժամանակագրութիւնը, Սեբերիանոսի ճառերը, Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոց՝ Սուրբ Գրոց մեկնութիւնը: Աս կարգին տակը կ'երթան նաեւ Ս. Եփրեմին՝ Սուրբ Գրոց մեկնութիւնը, Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին՝ Զգօն ըսուած գիրքը, Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւնը, որոնք թէպէտ եւ առջիններէն քիչ մը տարբեր ոճ մ'ունին, բայց անոնց նման ընտիր կարգով ու փայլուն են: Իսկ երկրորդ թարգմանչաց եւ վերջի հեղինակներուն մէջ աս կարգին տակ գացողներն են, Մամբրէ, Եղիշէ, Մանդակունի, Սարգիս, Իգնատիոս, Լամբրոնացի:

Գ. Ճոխ կամ Բարձր կ'ըսուի ան շարադրութիւնը՝ որուն բառերն առատ, եւ զանազան փայլուն ածականներով զարդարուած ու կարգը շըջուն է. ինչպէս են Մակաբայեցւոց գրքերը, Կորիւն, Ագաթանգեղոս, Բուզանդայ պատմութեան շատ տեղերը, Գործոց առաքելոց, Պօղոսի ու կաթուղիկեայց թըղթերուն Յառաջաբանները: Աս կարգին տակ կ'երթան նաեւ Ս. Կիւրղի Երուսաղեմացւոյ Կոչումն ընծայութեան ըսուած գիրքը, Եւագրի խրատներն ու Ոսկեբերանին Յովհաննու մեկնութեան առաջին տասուերեք ճառերը: Իսկ երկրորդականներէն՝ Խորենացւոյն շատ տեղերը, Յովհան կաթողիկոսի պատմութիւնը, Նարեկացին, եւ այլն:

Այսչափ քերականութեան աշկերտներուն համար բաւական կը համարինք: Հիմայ պարզ, միջակ ու ճոխ շարադրութեանց քանի մը օրինակ դնենք:

### Ա. Պարզ շարադրութեան օրինակ:

Եւ եղեւ իբրեւ չուեաց ժողովուրդն ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան. եւ քահանայքն բարձին զտապանակ ուխտին տեառն առաջի ամենայն ժողովրդեանն: Եւ իբրեւ մտանէին քահանայք՝ որ կրէին զտապանակ ուխտին, ի Յորդա-

նան, եւ ոտք քահանայիցն կրելեաց տապանակին մխեցան յեզր ջրոյն Յորդանանու. եւ Յորդանան լցեալ դայր դարիւ եւ դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ. եւ կացին ջուրքն՝ որ իջանէին ի վերուստ՝ միաձոյլք, անջրպետեալք, հեռացեալք յոյժ յոյժ. յԱդամիտէս քաղաքէ՝ որ է մասն Կարիաթարիմայ. եւ որ իջանէինն՝ իջին ի ծովն Արաբացւոց ի ծովն աղի, մինչեւ ի սպառ նուաղելոյ. եւ ժողովուրդն կայր յանդիման Երիքովի։ Եւ կացին քահանայքն՝ որ կրէին զտապանակ ուխտին տեառն ի վերայ ցամաքի ի մէջ Յորդանանու պատրաստութեամբ։ Եւ ամենայն որդիքն Իսրայեղի անցին ընդ ցամաք, մինչեւ վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան։

ՅԵՍ. Գ. 14—17։

## Բ. Միջին շրջագրութեան օրինակ։

Ա. Ո՞րք ի բանակս զօրականացն անդս երկրի գնեսցէ, կամ նիւթս վաճառականաց աղխաղխիցէ. չիք որք, չիք ուրեք։ Եւ կարի իսկ յիրաւի եւ նմանագոյնս։ Ի պատերազմ եկիր, ասէ, եւ ո՛չ վաճառս ինչ վաճառել. զի՞ այդչափ ոգորիցիս վասն տեղւոյդ, զոր յետ սակաւ մի ժամանակի թողուլ հասանիցէ. յորժամ յաշխարհ երթայցեմք, զայդ անդ արասջիր։ Զնոյն եւ այժմ ասեմ ցքեզ. եթէ յորժամ ի մեր քաղաքն հասանիցէ երթալ, յայնժամ զայդ կազմեսջիր. մանաւանդ թէ չհասանիցէ ինչ քեզ այնուհետեւ աշխատ լինել, զի թագաւոր ինքնին զամենայն կազմիցէ։ Քեզ աստ փոս ինչ սակաւ շուրջ հատանել բաւական է, եւ ձողիս կանգնել, ի վերայ գլխոյդ սակաւ մի զհովանոցակն գործել. այլ շինուածոց եւ ոչ մի ինչ պէտք են։ Տես, զիա՛րդ վաչիւքն եւ սայլիւք Սկիւթացւոց աշխարհին կեանքն վճարին. զիա՛րդ ըստ ճարակացն եւեթ փոփոխեն. այսպիսի կեանս պարտ է կեալ քրիստոնէից. ընդ աշխարհս շրջել, եւ ընդ սատանայի պատերազմ տալ. զգերեալսն ի նմանէ արձակել, զվտարանդիսն ի դիւրութիւն հատուցանել, եւ յամենայն երկրաւորացս

ազատել: Զի՞ շինեսցես ապարանս, ո՞վ այր դու, զի՞ առաւել զանձն կայցես: Ընդէ՞ր փորես զերկիր, եւ դնես գանձս, զի հակառակ անձինդ պատերազմ կոչիցես: Ընդէ՞ր ածիցես պարիսպ, եւ կազմիցես անձամբ անձին բանդ:

Եւ եթէ դժուարին ինչ թուիցի քեզ այս, եկ երթիցուք յայն տաղաւարս. զի եւ արդեամբք իսկ ուսանիցիս զդիւրութիւնն: Խուղս եւեթ շինեցին. եւ եթէ չուել հասանիցէ, այնպէս թողուն եւ չուեն, որպէս զօրականքն ի խաղաղութեան զբանակն թողուցուն եւ գնայցեն. քանզի այնպէս բանակեալ են. մանաւանդ թէ եւս աւելի ցանկալի տեսիլ տեսանել իցէ. քանզի եւ ցանկալի իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականօք, վարկպարազի խորանօք խիտ առ խիտ թեւ ի թեւ հարեալ, ճիգն ի ճիգն զապարմանցն թեւակս խառնեալ, քան զզօրականացն բանակի. ուր սրահակք ձգիցին, եւ զտէգս եւ զգեղարդունս կանգնեսցեն, եւ զբնիցն գեղարդեանցն զաղէզնակապարճս կախիցեն, պղնձապատ զգլուխսն առնիցեն, եւ մեծապայծառ իմն կմբեայ վահանացն փայլիցեն, եւ կողինաւորք եւ զրահապատք շողայցեն. Թագաւորին սպաս առնիցեն ի դաշտի ուրեք, ի հարթ եւ յողորկ վայրի, եւ ճաշք զճաշս մղիցեն, եւ ընթրիք զընթրեօք անցանիցեն, գուսանք երգիցեն, փողարք զձայն փողոցն նուագիցեն: Սակայն եւ այնպէս չիցէ գեղեցիկ տեսիլն քան զայն՝ զորմէ այժմ ես պատմեմ: ՈՍԿ. ՄԱՏ. ԿԹ.

Բ. Արդ յորժամ հարցանիցեն զիս եւ ասիցեն. զո՞վ պաշտես դու. զի՞նչ ասիցեմ: Ասեմ զԱստուած Իսրայելի: Ասիցեն զիս. զա՞յն Աստուած պաշտես դու, որ սատակեաց կորդս զժողովուրդն իւր. ո՞չ ահա նա ասէր՝ որդի իմ է. ո՞չ ասէր՝ անդրանիկ իմ է: Զիա՞րդ գգուեաց սիրեաց բարձրացոյց զնա, եւ դարձեալ միւսանգամ անդրէն խոնարհեցոյց կործանեաց զնա. արդ դու ո՞վ ես. եթէ ի նոցանէն իցես դու, զիա՞րդ ոչ սատակեցար դու ընդ նոսա յանապատի անդ. եւ եթէ չիցես ի նոցանէ,

զի՞րդ պագանես դու երկիր Աստուծոյն նոցա: Զի՞նչ ասացից նոցա. ստեցի՞ց, դանդաչեցի՞ց, ասիցե՞մ թէ չեմ ի նոցանէ. նա թլփատութիւնս եւ շաբաթն եւ ընտրութիւն կերակրոցն յանդիմանեն զիս: Եւ եթէ ասիցեմ՝ թէ ի նոցանէն եմ, ասեն. իսկ դու զի՞րդ ապրեցար: Զի՞նչ ասիցեմ ցհեթանոսն՝ առ որս եսն երթանայցեմ. ասեմ Մովսէս եմ ես: Լինին նոքա նախատել զիս եւ ասել. Ո՞չ շատ իցէ քեզ այն, զի աւերեցերն դու զեգիպտոս եւ սատակեցեր կորուսեր զժողովուրդն. զի՞ եկիր դու դառնալ այսր. միթէ պատրել հանե՞լ կամիս դու զմեզ յանապատ, սատակել կորուսանել եւ զմեզ եւս, որպէս սատակեցեր կորուսեր դու զժողովուրդն՝ զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց: ԵՓՐ. ԵԼՔ. Գ:

### Գ. Բարձր շարադրութեան օրինակ:

Ա. Արդ՝ ի մեւս եւս գլուխ տարւոյն, սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զօրս բովանդակել: Գումարել զզօրս Աղուանից եւ զՎրաց· բանալ զդրունս Ալանաց, եւ զճորայ պահակին: Հանել զզօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից: Արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիզբոնի, աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն եւ աւանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր եւ աւերակ թողոյր. ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել հիմն ի վեր ջանայր առնել: Համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ուխտ եդեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանգանելն իւրեանց ի տէրութենէն. սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել մեծաւ քինու նախանձաբեկ լինելով. մեծամեծս փքայր, ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, եւ ի քաջութիւն զօրաց յուսացեալ. վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ձիոյ, եւ բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք,

եւ ճիղբք, կասպք, եւ այլ եւս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտեւանայ խնդրեսցեն:

Զի թէպէտ եւ էր ինքն ի մեծի տրտմութեան՝ վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնազանդեցան եւ ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, եւ ընդ նմին միաբանեցան: Զի էր խոսրովու եւ դեսպան արարեալ զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն, եւ նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն: Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, եւ յայնմ մարզէ, եւ յիւրեանց ի բուն աշխարհէն, եւ ի քաջ ազգաց եւ ի մարտիկ զօրացն, զի ի թիկունս հասցեն: Սակայն տոհմքն եւ ազգապետքն, եւ նախարարքն, եւ նահապետքն Պարթեւաց ոչ լինէին ունկնդիր. զի միաբանեալք եւ հաւանեալք եւ նուաճեալք էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին եւ եղբայրութեանն: Սակայն առեալ խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց, եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան, նիզակակիցք գործոյն պատերազմի: . . . ԱԳԱԹ. Ա:

Բ. Չուեաց խաղաց գնաց Յուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի եւ եկն բանակեցաւ ի Բեթսակարիա, դէմ յանդիման բանակի արքային: Կանխեաց ընդ առաւօտն թագաւորն, առ զբանակն՝ տարաւ բանակեցոյց ի միջոյ անտի ըստ ճանապարհին Բեթսակարիայ. եւ զզօրսն սփռեաց ճակատեցոյց ի մարտ պատերազմի. փողս հարին, կազմեցին պատրաստեցին զփիղսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ, ի զմուռս եւ ի գինիս: Եւ կարգեցան բաշխեցին ի գունդս գունդս. եւ կարգեցին առ փիղ փիղ հազար հազար այր սպառազէն, եւ պահապան գլուխ գնդիցն հինգհազար հեծեալ վառեալ նժոյգ ի ձեռն պաշտպան գնդիցն. զի ուր եւ կայցեն գազանքն՝ կայցեն եւ նոքա, եւ ուր եւ գնայցեն՝ գնայցեն եւ նոքա: Եւ վանդակակապ մարտկոցս մնքենայիւք ի վերայ փղացն կազմեցին, եւ զփղապանն ի վերայ գլխոյն նստուցին:

Եւ զայլ այրուձին յաջ եւ յահեակ թեւս գնդին կազմեցին: Իբրեւ անտի արեգակն ծայրս արձակէր, առհասարակ ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն նշոյլք զերամբքն փայլատակէին, եւ ճառագայթք հատանէին իբրեւ ի փայլատականց հրոյ: Եւ երկայնէր ճակատն, զեղջր որ զբարձամբք լերանցն, որ զձորովք եւ զխորովք եւ զդաշտիւք. եւ խաղային յառաջ՝ առհասարակ կարգեալք եւ կազմեալք. միաբան շարժէին առհասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ բազմութեանն, ղշաչիւն զինու, զշառաչիւն զերիվարացն թնդիւն, զոտնաձայն վահանաւոր վառելոցն: Եկն եհաս Յուդա իւրով գնդաւն, կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատրաստեցաւ, յարձակեցաւ ի դիմի հարաւ գնդի թագաւորին. յայնմ տեղւոջ յանդիման թագաւորին վեցհարեւր հեծեալ սպառազէն դիթաւալ կացուցանէր յանդիման թագաւորին: Յայնմ վայրի դէտ ակն ի վեր ամբառնայր Եղիազար աւարան, տեսանէր մի ի գազանաց անտի վառեալ զարդարեալ, ի զէն արքունի վառեալ. եւ նշանս արձակեալ, համարեցաւ թէ արքայն իսկ ի նմին իցէ: Յարձակեցաւ ի վերայ գնդին՝ յաջ յահեակ կոտորեաց, չոգաւ մինչեւ եհաս ի փիղ անդր նշանաւոր, զէն վերացոյց եւ եմուտ ի ներքոյ. եհար եւ անդէն կործանեաց. եւ էջ նստաւ փիղն ի վերայ, եւ զնա անդէն ճմլեաց: Ա. ՄԱԿԱ. Զ. 32—46:

Գ. Ի հանդիսի աստ արտաքին աշխարհականքդ յորժամ բռնաւոր մարտիկ զոք մեծահզօր յաղթական, պսակեալ ուստեք լսիցեն, համագունդ խուռներթաց առհասարակ ամենեքեան ի վերայ դիմեն, զի տեսանել եւ զննել զմեծասքանչ զօրութիւն եւ զհմտութիւն ճարտարութեան զամենայն մարթացեն: Եւ անդ է տեսանել զժողովս բիւրաւորաց սրտի մտօք ոգւովք եւ մարմնովք զիւրաքանչիւր աչս արձակեալ ի տեսանել. զի մի ինչ իւիք իրօք յորմէ որ ինչ ի մէջ նոցա գործիցի, վրիպեալ գտանիցին: Դարձեալ թէ եւ յերգս արուեստականաց զոք պաճուճեալ ի մէջ նոցա պատմեսցեն, մի անգամ դէմ եդեալ առաւել

քան զհանդէս լնուն զասպարիզացն տեղի. եւ յամենայն կարեւոր իրացն լքեալ, մեծաւ յօժարութեամբ եւ փութով ելեալ նստին. զի զերգս արուեստականաց եւ զերփն երփն զարդարելոցն առ ընդ միմեանս կշռելով՝ որ ինչ ընտիր իցէ լաւութեամբ, զայն գտանել ինչ մարթասցեն: Եւ այս արտաքին խառնաղանճ բազմութեան: Ապա եթէ ճարտարապետք հռետորացն ճախարակեայս սեթեւեթեալս բանիւք փիլիսոփայք ի մէջ մատիցեն. քանզի գոն եւ նոցա թատերք եւ հանդէսք նուագաց. կափիւնք եւ անհնարին կշռութիւնք եւ ընտրութիւնք բանիցն ասացելոց: Իսկ արդ եթէ ճարտարութեան բանիցն իմաստութեան, եւ քաղցրութեան երգոցն արուեստականաց, եւ բռնութեամբ քաջութեան արանցն ճգնութեանց այնչափ միագունդ միախուռն ի լսելիս եւ ի տեսանելիս մեծաւ յօժարութեամբ դիմեալ շուրջ նստեալ դեգերին, ո՞րչափ պարտ եւ պատշաճ է փոյթ եւ յօժարութիւն մեծաւ պահանջմամբ առ մեզ մատուցանել: Զի իբր ոչ եթէ լկտութիւն ինչ երգոց արուեստականաց, եւ ոչ ընդունայնապարծ բռնութիւն ըմբշաց մերկամարտիկ ճգնութիւն պատմելոց եմք, եւ ոչ զճարտարութիւն հռետորացն, այլ աստուածեղէն շնորհօք ի լեզուն տատանելոց: Եւ անդ էր սքանչելիս ի վերայ սքանչելեաց տեսանել. զի այնչափ էր գոչիւնն եւ բարբառն. եւ ոչ էր ձայն չարաձայն, եւ ոչ խիստ դժկամակ լսելեաց. այլ քաղցր քան զամենայն երգս արուեստականաց ցանկալի եւ անձկալի եւ ուխտիւք խնդրելի. զի քաղցրացուցանել մարթէր զամենայն միտս եւ զլսելիս: Եւ ի վերայ այսր ամենայնի սրբագոյն սոսկալի եւ զարմանալի. եւ այնչափ լի էր անճառ ճառիւք, եւ այնչափ բարութիւնս յանձին բարձեալ բերէր, մինչ զի որք միանգամ զնոսա ընդունէին, զանձինս երկրակոխս այնուհետեւ ի մարդիկ չհամարէին. այլ ի վեր յերկինս բնակեալ ի հրեշտակաց վիճակս, զերկրաւոր բնակութիւնս յերկինս հաստատէին: ՈՍԿ. ՅՈՎՀ. ՅԱՌԱՋԱԲ.

## ԳԼՈՒԽ ԺԹ.

### ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Վերծանութիւնը, որ կարդալ ըսել է, հին քերականն այսպէս կը սահմանէ. Վերծանութիւն է ձայն՝ ընթերցածոց կամ շարագրաց անվրէպ յառաջբերութիւն. այս ինքն վերծանութիւնը քերականութեան մէկ մասն է, որ առանց սխալի լեզուին առջեւը կը բերէ թէ ընթերցած, այս ինքն ոտանաւոր խօսք ըլլայ, եւ թէ շարադրեր, այս ինքն կարգաւ գրուած պարզ խօսք ըլլայ:

Աղէկ կարդալու համար երեք բան պէտք է. Նախ ամէն բառ իր յատուկ գրովն արտաբերել: Երկրորդ՝ աղէկ շեշտել կամ բթել. եւ այլն: Երրորդ՝ խօսքին վայելչութեան համաձայն շատ կամ քիչ շունչ առնել: Առաջինը կ՚ըսուի ուղղագրութիւն, երկրորդը՝ առոգանութիւն, երրորդը՝ տրոհութիւն:

Ա. Ուղղագրութեան վրայ:

Ուղղագրութեան գործքն է աղէկ միտ դնել որ կարդալու եւ գրելու ատեն գրերը սխալ չարտաբերուին, կամ իրարու տեղ սխալ չգրուին: Ինչպէս ծն ոի տեղ, եր էի տեղ, ան վի տեղ, յն ցի տեղ, ըն ոի եւ յի տեղ. եւ այլն:

Բ. Առոգանութեան վրայ:

Մեր նախնիք զանազան առոգանութեան նշաններ ունէին, որոնք հիմակուան ատենս չեն բանիր:

Հիմա բանածներն են՝ շեշտն ու պարոյկը:

Շեշտը՝ որ ասանկ (՛) նշան մըն է, ան բառին կամ ան վանկին վրայ կը դրուի, որն որ զարնելով պիտի արտաբերուի: Անոր համար բայերուն հրամայական եղանակին վրայ, բացառական կամ ստորասական մակբայներուն վրայ ու կոչականին վրայ հասարակօրէն շեշտ կը դրուի:

Որդեակ, մէր դու ողորմած եւ արդար, ըն ծարէ մէնէցէ տեղ:

Որ ուղէ կամեցէ գործել, եւ կերեցէ մ...

Իսկ անուններուն, դերանուններուն ու մակբայներուն վրայ յարմարութեան ու վայելչութեան նայելով կը դրուի:

Պարոյկը՝ որ ասանկ (°) նշան մըն է, հարցական խօսքի վրայ կը դրուի:

Ընդէ՞ր տրտում ես: Կերա՞ր արդեօք:
Ո՞չ տեսանես: Զի՞նչ գործ գործեցեր:

### Գ. Տրոհութեան վրայ:

Տրոհութեան նշաններուն անուններն ասոնք են. Բութ, Ստորակէտ, Կէտ, Վերջակէտ:

Վերջակէտը՝ որ ասանկ (:) նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ խօսքն ամբողջ կը լմըննայ, ուր մեծ հանգիստ կամ շունչ պէտք է առնել, ինչպէս անթիւ տեղեր օրինակը տեսար:

Կէտը՝ որ ասանկ (.) նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ թէպէտ խօսքին իմաստն ամբողջ է, բայց ուրիշ ամբողջ խօսքին մասն է, ուր քիչ մը կանգ առնելու է. ինչպէս,

Որդի խորագէտ հնազանդ է հօր. որդի անհնազանդ է կորուստ եղիցի:
Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. որդի անմիտ տրտմութիւն է մօր:

Ստորակէտը՝ որ ասանկ (,) նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ խօսքն իր դիմաւոր բայն ունի, բայց միտքն ամբողջ չէ, եւ ուրիշ խօսքէ կախում ունի, ուր քիչ մը պէտք է կենալ՝ առանց մեծ շունչ առնելու:

Ած զնա յերուսաղէմ, եւ կացոյց ի վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ ցնա եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր:

Բութը՝ որ ասանկ (՝) նշան մըն է, շատ տեղ կը բանի:

Նախ երբ որ բային ու իր խնդրին մէջ ուրիշ պարբերութիւն մտնելու ըլլայ. ինչպէս,

Ամենայնի՝ որ խնդրէ ի քէն, տուր: Հոս ամենայնի խնդիր է տալ բային. որ խնդրէ ի քէն՝ երկուքին մէջը մտեր է:

Երկրորդ կը դրուի ստորակէտի տեղ, երբ որ երկու դիմաւոր բայ իրարու շատ մօտ ըլլան:

Յոր տուն մտանիցէք՝ անդ օթջիք:

Տեսանելով տեսցեն՝ եւ մի տեսցեն, եւ լսելով լուիցեն՝ եւ մի իմասցին:

Երրորդ՝ երբեմն սկզբնաւորական շաղկապներու վրայ, այսպէս, Արդ՝ Եւ արդ՝ Իսկ արդ՝ եւ այլն:

Տրոհութեան կը վերաբերի գիտնալը թէ բառերն ինչպէս բաժնելու է որ բաժանումը կամ գրադարձը սխալ չըլլայ:

Արդ այնպէս պէտք է բաժնել, ինչպէս որ կ'արտաբերուի: Ուստի ինչպէս որ խօսքի մէջ չենք ըսեր բար-ի, դան-ակ, գիտ-ութ-իւն, հապա՝ բա-րի, դա-նակ, գի-տու-թիւն, նոյնպէս ալ գրելու ատեն բաժնէ:

Ուստի թէ որ բառ մը երկու ձայնաւորի մէջ մէկ բաղաձայն ունենայ, այն բաղաձայնը ետքը եկող ձայնաւորին վրայ պէտք է դնել. ինչպէս սիրող՝ սի-րող, պատիւ՝ պա-տիւ:

Աս կարգէն դուրս կ'ելլեն բարդ բառերն ու բաղադրեալ մասնիկները, որոնց բաղաձայնը թէեւ երկու ձայնաւորի մէջ ըլլայ, չիզատուիր. ուստի չիբաժնուիր ըն-դունայն, յա-նօրէնք, ա-նարժան, ա-նարգ. հապա՝ ընդ-ունայն, յան-օրէնք, ան-արժան, ան-արգ:

Բայց թէ որ բառ մը երկու ձայնաւորի մէջ երկու կամ երեք բաղաձայն ունենայ, այն բաղաձայններէն միայն մէկը ետեւի ձայնաւորին քովը պէտք է դնել. ինչպէս եղբայր՝ եղ-բայր, Նարգման՝ Նարգ-ման:

Թէ որ երկու ձայնաւոր գիր քովէ քով գալու ըլլան, այն ատեն կրնան իրարմէ զատուիլ. այսպէս, գոր-ծէ-ին, Մա-րի-ամ:

Բայց աւ, եւ, ու, ուա եւ ուէ երկբարբառ ձայնաւորներն իրարմէ չեն զատուիր, ուստի չիբաժնուիր ա-ւե-տիս, համ-բա-ւել, ստեղծո-ւած, ի բարձո-ւէ. հապա աւ-ետիս, համ-բաւ-ել, ստեղ-ծուած, ի բար-ձուէ:

Բաղաձայն յ գիրը երբ որ բառի մը ետքը գիրը ըլլայ՝ ձայն չիհաներ. ինչպէս, ծառայ, արքայ, եւ այլն: Բայց թէ որ բառի մը սկիզբը դրուելու ըլլայ

բարակ հի ձայն կը հանէ. այսպէս, Յակոբ, Յարութիւն: Անոր համար յ բաղաձայնը թէեւ երկու ձայնաւորի մէջ մտնէ, ետքի եկող ձայնաւորին վրայ չիգրուիր, հապա առջինին, այսպէս, արքայ-ութիւն, ծառայ-ական:

Աս ալ պէտք է գիտնալ որ բառերը բաժնելու ատեն ուր որ ը զօրութեամբ կայ, պէտք է ներգործութեամբ դնել. այսպէս, գնա՝ ըգ-նա, գնել՝ գը-նել:

Մնացած մէկ քանի նշանագիրներուն վրայ:

Դիւրին կարդալու համար քանի մը նշանագիրներ ալ կան, որոնց անուններն ասոնք են, ապաթարց, ենթամնայ, փակագիծ, պատուագիր, երկարեակ, եւ այլն:

Ապաթարցը՝ որ ասանկ (') նշան մըն է, էին ետեւը կը դրուի, երբ որ նախդիր կ'ըլլայ. այսպէս, 'ի, առ 'ի, եւ այլն. բայց ասիկայ աւելորդ բան մ'ըլլալով՝ կամաց կամաց կը վերնայ:

Ենթամնայ՝ որ ասանկ (‿) նշան մըն է, տողին վերջի ծայրը կը դրուի. երբ որ բառը պէտք ըլլայ կիսել, ու կը ցուցընէ որ բառն ամբողջ չէ:

Փակագիծը՝ որ ասանկ () նշան մըն է, ան ատեն կը գործածուի, երբ որ խօսքի մէջ դրսէ ուրիշ խօսք մը կը մտնէ, որն որ կամ առջի խօսքին իբր թէ մեկնութիւն կամ համառօտ ծանօթութիւն մըն է. ինչպէս,

Ընդէ՞ր ով կարէ առնել ի մեղ երկնային Աստուծոյ զայն (որպէս ասաց ոմն ի սրբոցն) զոր կարող է առնել առ ծովուն կամ շան:

Պատիւ որ ասանկ (‾) նշան մըն է, համառօտուած բառերուն վրայ կը դրուի որ ամբողջ կարդացուին. այսպէս, Յս̄, Յիսուս, Նց̄. նոցա. ա̄մ, ամենայն, իսկ Պատուագիր՝ վրան պատուով աննշան ձեւ կամ գիր մըն է, որն որ ամբողջ բառի տեղ կը դրուի. այսպէս, ա̄յ, այս ինքն. եւ այլն: Բայց ասոնք կամաց կամաց կը վերնան:

Երկարեակը կամ Զոյգ գիծը՝ որ ասանկ (") նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ բառն ամբողջ չիգրուիր. այսպէս, Յովհ". Ոսկեբ". այս ինքն՝ Յովհան Ոսկեբերան:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ԶԱՆԱԶԱՆ ԶՐՈՅՑՔ Ի ԽՐԱՏ ԵՒ Ի ԶԲՕՍԱՆՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ

### Ա.

### ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Վարդապետ, Աշակերտ:

Վարդապետ. Զի՞նչ կարծես, որդեակ, յորժամ շուրջ հայեցեալ տեսանես զմարգագետինս ծաղկօք զարդարեալս, զծառս պտղովք լցեալս եւ զդաշտս արմտեօք առատացեալս: Յորժամ տեսանես զձկունս ի ջուրս, եւ զթռչունս յօդս: Կարծիցե՞ս զայս ամենայն ըստ դիպաց եղեալ:

Աշակերտ. Յետին անմտութեան է յայդպիսի անաստուած խորհուրդս մտաբերել:

Վ. Ապա ո՞վ ոք գոյացոյց զերկինս եւ զերկիր, եւ որ ինչ միանգամ ի նոսա արարածք իցեն:

Ա. Աստուած, որ միայն կարէ ի չգոյէ ի գոյ ածել զարարածս:

Վ. Արդարեւ յիրաւի Աստուծոյ արարածք են երկինք, աստեղք, արեգակն եւ լուսին: Երկիր, հուր, ջուր եւ օդ. մարդիկ եւ անասունք, ձկունք եւ թռչունք երկակենցաղք, որդունք եւ ճճիք բազմոտանիք: Բոյսք, ծառք, պտուղք եւ արմտիք: Ծով եւ լիճք, լերինք եւ ձորք, վէմք եւ մետաղք: Այլ արդ՝ ասա ինձ, գիտե՞ս համբուն՝ թէ է Աստուած:

Ա. Այո՛ յանհամար գործոց նորա հաւաստեաւ գիտեմ թէ է Աստուած:

### Բ.

Վ. Ո՞վ ստեղծ զքեզ:

Ա. Աստուած, որ ետ ինձ զհոգի եւ զմարմին, զկերակուր, զըմպելի եւ զհանդերձ, եւ պահէ զիս ողջ մարմնով, եւ այլովք եւս բիւրապատիկ երախտեօք ճոխացուցանէ:

Վ. Միթէ պատուականագո՞յն ես դու քան զանբան կենդանիս:

Ա· Այո՛, զի մարդ եմ, եւ գոյ յիս հոգի բա-նական, յորմէ վրէպ են ամենայն ազգք կենդանեաց:

Վ· Ձիցէ՞ արժան մեծապէս գոհանալ զԱստուծոյ մերմէ՝ զհօրէն գթութեանց, որ այսպիսի անգուգական պատուով պատուեաց զմեզ:

Ա· Արդարեւ որ ոչ լիաբերան գոհանայ զԱստուծոյ, անարժան է զարեւ տեսանելոյ, եւ անարժան է կենաց:

Գ·

Վ· Ո՞ւր է Աստուած բարեխնամ տեսուչ մեր:

Ա· Աստուած մերձ է առ ամենեսեան, որպէս եւ Առաքեալ վկայէ, թէ Ոչ [illegible]: Ձիք տեղի խաւարին՝ աներեւոյթ յաչաց Նորա: Եւ ոչինչ կարէ թագչել ի Նմանէ, ոչ բան, ոչ խորհուրդ, եւ ոչ ինչ ի ծածկելոցն ի սրտի:

Վ· Զգոյշ լեր, որդեակ, ոչինչ գործել կամ խորհել յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ: Զի թէպէտ եւ կարես խաբել զմարդիկ, այլ զԱստուած ո՛չ բնաւ: Այլ յորժամ բարիս գործես, ուրախ լեր, զի վկայ ունիս քեզ զամենատես ակն, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր:

Դ·

Վ· Կարե՞ս տեսանել զԱստուած զգալի աչօք:

Ա· Ոչ բնաւ, զի անմարմին է, եւ որոյ ոչ է մարմին, աներեւոյթ է աչաց, այլ մտաց իմանալի է:

Վ· Ո՞չ ապաքէն եւ ի քեզ իսկ կրի բնութիւն իմն՝ որ ոչ անկանիցի ընդ տեսլեամբ ական:

Ա· Այո՛, հոգին, որ է պատճառ կենդանութեան մարմնոյ:

Վ· Ո՞րչափ է զօրութիւն Աստուծոյ:

Ա· Աստուծոյ զօրութեան չիք սահման: Ամենայնի կարող է, եւ չիք ինչ անհնարին առ ի յԱստուծոյ: Վասն որոյ տէր ամենակալ է անուն Նորա:

Վ· Ապա զգոյշ լեր, զի մի արտաքոյ օրինաց Նորա գործելով անհաճոյ լինիցիս յաչս Նորա: Եւ ո՞վ ոք յարարածոց կարէ ապրեցուցանել զքեզ ի ձեռաց

Նորա ։ Զօրացիր ի հրամանս աստուածայինս, եւ առաւել յԱստուծոյ երկիցես քան ի մարդկանէ ։

Ա. Զի՞ է ինձ երկնչել, եթէ Աստուած ամենակալ ընդ իս է ։ Ճշմարիտ է բան Առաքելոյն, որ ասէ. Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ ։ Վասն որոյ այր քաջայոյս յԱստուած, խաղաղ եւ անդորր սրտի վիճակի ։

Ե.

Վ. Զիա՞րդ կարես գիտել, եթէ բարերար է Աստուած ։

Ա. Ի բազմապատիկ երախտեաց Նորա, յորս օր ըստ օրէ վայելեմք անբաւ առատութեամբ, մինչեւ անաստուած մտաց է յայսպիսի եւ յայսչափ երախտեաց միջի յերկրայս անկանել զբարերարութենէն Աստուծոյ ։

Վ. Ապա Աստուած խնամէ՞ զմարդիկ ։

Ա. Այո, Աստուած նախախնամող զօրութեամբ վարէ ոչ միայն զմարդիկ, այլեւ զանասունս եւ զանշունչ տարերս ։ Զայսոսիկ արարածք իւրեանց գեղեցիկ կարգաւորութեամբ իբրեւ խօսուն բերանով զարարչէն պատմեն ։

Վ. Ո՞վ ոք ծայրագունին արժանաւոր է սիրոյ ։

Ա. Միայն Աստուած, զոր պարտիմք ոգւով չափ սիրել, ի վեր քան զծնողս եւ զամենայն սիրելիս, վասն ազգի ազգի խնամոց Նորա առ մեզ ։

Վ. Արդարեւ ոչ բաւեմք սիրել զնա եւ պատուել արժանի պատուով ։

Զ.

Վ. Միթէ ամենեքեան հաճո՞յ են Աստուծոյ ։

Ա. Ոչ. միայն աստուածասէրքն՝ որք Աստուծոյ իբրեւ հօր հնազանդին, սիրելի են Նմա ։ Իսկ չարասէրքն, որք ապստամբ են ի հրամանաց Նորա, եւ անպատկառ յօրինաց ի ներքս ի մեզ բնաւորելոց, ատելի են յաչս Նորա. զի Աստուած սուրբ է, եւ ատէ զամենայն անօրէնութիւն ։

Վ. Եթէ Աստուած արդար է, ապա դատի

զմեղաւորս: Եւ զի՞նչ պատուհաս սահմանեաց վասն մեղաւորաց:

Ա. Կայ մնայ մեղաւորաց արդար դատաստան եւ դառն պատուհաս յաւիտենից, զոր ունին լուծանել ի կեանս որ յետ մահու:

Վ. Ապա զգոյշ լեր մի ինչ գործել անհաճոյ Աստուծոյ, զի վերջին սահման չարեաց է անկանել ի ձեռս բարկութեան ամենակալ դատաւորին:

Է.

Վ. Զի՞նչ խոստացաւ Աստուած արդարոց:

Ա. Զանանց երանութիւն ի փառս արքայութեան երկնից:

Վ. Ճշմարտի՞ւ այդ այդպէս է:

Ա. Այո՛, զի Աստուած խոստացաւ անսուտ բերանովն, եւ հաստատեալ է ի հոգիս առաքինեաց թէ վրիպէ ի խոստմանցն եւ ոչինչ, այլ ամենայն անվրէպ ի գլուխ ելանէ:

Վ. Ո՞վ զարթոյց զմեզ յաւետիս խոստմանցս այսոցիկ:

Ա. Յիսուս Քրիստոս, որ հազար ութհարեւր յիսուն եւ վեց ամօք յառաջ եկաց ի Հրէաստանի, եւ իւրով վարդապետութեամբ եւ մահուամբ զայս յարութեան եւ արդար հատուցման մեզ հաւատարմացոյց:

Վ. Գոհացի՛ր զպարգեւացս, եւ զամենայն աւուրս կենաց քոց կատարեա զկամս Նորա, որպէս զի մասին սրբոց՝ որ պատրաստեալ է պատուիրանապահ համբերողաց, արժանի լիցիս:

Ը.

ՅԱՂԱԳՍ ՅԱՌՆԵԼՈՅ Ի ՔՆՈՅ

Պետրոս, Պաւղոս:

Պետրոս. Զարթիր, Պա՛ւղէ, զարթիր, ընդէ՞ր ննջես. ժամ է արդ ի քնոյ զարթնուլ:

Պաւղոս. Գնա, եղբայր, գնա, մի աշխատ առներ զիս, զի սակաւին չեւ է իմ բաւական ի քուն եղեալ:

Պետ. Գիշերն էանց, եւ առաւօտն ծագեցաւ, ժամ է արդ երթալոյ ի դպրոց:

Պօղ. Թոյլ արա ինձ սակաւիկ մի, զի յերեկոյին կարի վաստակեալ մտի ի քուն:

Պետ. Ոչ թողից զքեզ մինչեւ ոչ ելանիցես յանկողնոյ: Ո՞չ գիտես թէ զիա՞րդ իմաստունն յանդիմանական բանիւ վարի առ ծոյլսն. թէ որպէս Դուռն շրջի ի ծխնւոջ, այսպէս ծոյլ ի մահճի իւր:

Պօղ. Զի՞ եղեւ քեզ այսօր, զի այսպէս վաղ քաջ ի հաւախօսի եկեալ՝ չտաս ինձ թոյլ առ վայր մի հանգչել յաշխատութենէս:

Պետ. Զի՞նչ ասես, ապաքէն անց պահ մի առաւօտուն:

Պօղ. Քանի՞ ժամք են աւուր:

Պետ. Երեք, եւ գրեթէ ուսայ ի բերան զհամարն իմ:

Պօղ. Վա՜յ ինձ զի հեղգութեամբ ծախեցի զժամանակն: Յարեայց վաղվաղակի. ներեա սակաւիկ մի մինչեւ պատրաստ լինիցիմ:

Թ.

Աստուածատուր, Խոսրով:

Աստուածատուր. Ե՞րբ զարթեար այսօր ի քնոյ:

Խոսրով. Ի մետասաներորդ ժամու գիշերոյ:

Ա. Զի՞նչ գործ գործեցեր՝ իբրեւ յարեար ի քնոյ:

Խ. Նախ առաջին գոհացայ զԱստուծոյ, որ ետ ինձ զգիշերս խաղաղութեամբ անցուցանել:

Ա. Արդարեւ մեք բանաւորքս պարտիմք անպակաս գոհութիւնս առ Աստուած մատուցանել, վասն անբաւ երախտեաց նորա առ մեզ: Զի՞նչ յետ այնորիկ:

Խ. Արկի զինեւ զհանդերձս, լուացի զձեռս եւ զերեսս իմ. եւ ապա սկսայ ուսանել ըստ հանապազորդ կարգի:

Ա. Բարւոք է, ջանա այսպէս օր ըստ օրէ յառաջադէմ լինել:

## Ժ.

## ՅԱՂԱԳՍ ԸՆԹԵՐՑՄԱՆ

Մորիցս, Թէոդորս:

Մորիցս. Ե՛ղբայր, զի՞նչ է այս՝ զոր ի ձեռին ունիս:

Թէոդորս. Ընթերցանութիւն, որպէս եւ տեսանես:

Մ. Գիտեմ ի բերան զհամարն:

Թ. Դեռ եւս ուսայ, եւ այժմ պատրաստիմ երկրորդել զմիանգամ ուսեալն. զի հաստատուն լիցի եւ մի հարեւանցի ինչ:

Մ. Ընդէ՞ր հանապազօր կրկին ուսանիմք, զոր յերէկն ուսաք:

Թ. Այնպէս հրամայեաց վարդապետն:

Մ. Լուայ զպատուէրն, այլ զպատճառն հարցանեմ, թէ ընդէ՛ր այնպէս հրամայեաց:

Թ. Առ ի սերտել ի միտս զնորոգ ուսեալն: Եթէ ոք ոչ ոռոգէ օր ըստ օրէ զնորատունկ բոյս՝ վաղվաղակի ցամաքի. Նոյնպէս եւ որ զմիանգամ ուսեալն թողու անյիշատակ, դիւրաւ մոռանայ:

Մ. Աղաչեմ զքեզ, պատմեա ինձ եղբայրաբար սիրով, թէ զիա՛րդ ուսանիս, զի տեսանեմ զքեզ զբազմօք աշակերտակցօք իմովք յոյժ գերազանցեալ:

Թ. Ահա պատմեմ քեզ զամենայն յանկեղծ մտաց: Զի ոչ շատանամ մի անգամ ուսանելով, այլ երկիցս եւ երիցս փորձեմ զնոյն, զի ի խոր տնկեսցի ի միտս իմ:

Մ. Ցանկամ հարցափորձիւ քննել զքեզ, եւ տեղեկանալ վասն աւուրս ընթերցուածոյ:

Թ. Ե՛ւ ինձ կարի ախորժելի է, այլ դու քաջ միտ դիր, զի եթէ անկանիցի բառ կամ բան ի բերանոյ իմմէ, յիշեցուսցես անթերի:

## ԺԱ.

## ՅԱՂԱԳՍ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՌ ԾՆՈՂՍ

Վերներս, Արնոլդս:

Վերներս. Հայր քո, որպէս լուայ, դարձաւ յեգիպտոսէ:

Արիստակէս. Այո՛ դարձաւ, յաւուր ուրբաթու յերեկոյի։

Վ. Ապաքէն ծանր է քեզ գալուստ նորա։

Ա. Ընդէ՞ր, մանաւանդ թէ կարի ուրախ եմ ընդ գալուստ նորա։ Բայց զի՞ է քեզ, զի յայդպիսի միտս բերիս։

Վ. Թուերեւս ի լինել նորա ի բացէ, կարէիր ըստ մտի շրջել։

Ա. Ոչ գիտեմ զինչ ակնարկէ ըստ մտի շրջելն։ Ես ի մի եւ ի նոյն շաւղաց վերայ գնամ եթէ հեռի իցէ հայր իմ եւ եթէ մերձ։ Խաղամ, եթէ դէպք ժամանակին այնպէս պահանջեն։ Ոչ բնաւ մեկնիմ ի տանէ, բայց եթէ վասն կարեւոր պիտոյից հրամանաւ մօր իմոյ։

Վ. Նուէ մօր եւս քո այնչափ հնազանդ բա՞րս ցուցանես։

Ա. Ոչինչ խտրեմ ընդ հայր եւ ընդ մայր։ Ո՞չ ապաքէն միապէս օրինադրեն տասնաբանեայ պատգամքն զհօրն եւ զմօրն պատիւ, թէ Պատրոսեա պէտայր եօ եւ պմայր։

Վ. Արդարեւ զամենայն զոր ասացեր, արդար խօսեցար։

Ա. Ընդէ՞ր այդչափ հակառակեցար յայն ինչ, զորոյ ինքնին գիտէիր զճշմարտութիւնն։

Վ. Առ ի ճանաչել զանշարժութիւն մտաց քոց ի բարին։

ԺԲ.

ՑԱՂԱԳՍ ՑՐՏՈՒԹԵԱՆ ՁՄԵՐԱՑՆՈՑ

Գրիգոր, Ներսէս։

Գրիգոր. Տես, քանի՜ բռնութիւն է օդոյ, որպէս սաստկութեամբ շնչէ հիւսիս։ Ո՞չ ապաքէն լաւ եւս էր ամենայն սառնամանեաց եւ դառնաշունչ օդոց անբաւ հեռաւորութեամբ մեկնել ի սահմանաց մերոց։

Ներսէս. Ոչ այդպէս, զի ի բազում իրս պիտանի է ձմեռն եւ սառնամանիք ցրտութեան։

Գ. Յինչ իրս, ասէ ասա։

Ն. Բռնութիւն հողմոյ ուժգին բախելոյ մաքրէ զօդն ի վնասակարութենէ, զի եթէ օդ ան-

շարժ կայր ի կայանի, անթիւ մահուանս գործէր ապականարար գոլորշեօք:

Գ. Այլ զի՞նչ օգուտ մատակարարէ ձմեռն անբերելի սառնամանեօք:

Ն. Բոյսք եւ ամենայն ծառատունկք եւ երկիր ամենայն եթէ ոչ առցեն զձմեռն եւ սառնամանիք ոչ պնդէին զերկինս, արմատք խոտոց ոչ պարարէին:

Գ. Եւ ընդէ՞ր է զի ի ձմերայնի երկիր պնդի, եւ ջուրք պաղին սառնամանեօք:

Ն. Այն է պատճառն, զի ի ձմերայնի ճառագայթք արեգական կողմնակի անկանին յայն մասն երկրի, ուր ձմեռն զօրացեալ իցէ: Եւ կողմնակի անկեալ ճառագայթք տկար են ի ջեռուցանել: Աստի է եւ անզուգութիւն տուընջեան եւ գիշերոյ, զի ի ձմերայնի կարճին աւուրք եւ յամարայնի երկարին:

## ԺԳ.

## ՑԱՂԱԳՍ ՃԱՇՈՒ

Միքայէլ, Գաբրիէլ:

Միքայէլ. Խնդիր մի փոքր խնդրեմ ի քէն, աղաչեմ մի անտես առներ:

Գաբրիէլ. Եւ ես աղաչեմ զքեզ մեկն եւ յայտնի ասել զամենայն, զի անխափան կատարեմ:

Մ. Խնդրեմ ի քէն այսօր ի միասին ճաշել:

Գ. Բարւոք է, այլ զգոյշ լեր մի ինչ առաւել քան զայլ աւուրցն սովորութիւն պատրաստել:

Մ. Դու ինքնին գիտես, թէ որպէս ի մանկութենէ անտի իմմէ վարժեցայ ի ծնողաց իմոց պարկեշտ լինել ի կերակուրս եւ յըմպելիս:

Գ. Քանի՞ ժամք են աւուր:

Մ. Երեք: Մերձ է ժամ ճաշուն, եկ երթիցուք ի տուն:

Գ. Իմ այսպէս լուեալ է, թէ արեւմուտք այլազգ վարին ի թիւս ժամուց:

Մ. Այո՛ այնպէս է. զի առ նոսա հասարակ օր եւ հասարակ գիշեր միշտ յերկոտասաներորդ ժամու լինի: Իսկ առ մեզ ժամք հասարակ աւուր եւ հասարակ գիշերոյ միշտ փոփոխին:

ԺԴ.

## ԺԱՄ ՃԱՇՈՅ

Միքայէլ, Գաբրիէլ, Եղբայր Նորա Ռափայէլ, եւ ծառայ մի Պետրոս անուն.

Գ. Ընդէ՞ր անցեր զբանիւ քով, եւ ետուր յօրինել խորտիկս զանազանս եւ բազմապատիկս, միթէ գա՞յլ կարծիցես զիս եղբայր:

Մ. Քա՛ւ լիցի, սակայն եւ ոչ անարիւն ճպուռն, որ առանց կերակրոյ զօդն միայն ծաքելով, կամ ի ցօղոյ երկնից կերակրի:

Գ. Ո՞ւր է եղբայր քո կրտսեր Ռափայէլ:

Մ. Նա՛ստ առ մեզ է, այլ քանզի կարի փոյթ է յուսմունս, հրաժարեալ է ի մարմնական զբաղմանց:

Գ. Պետրոս, գնա ազդ արա նմա զեկաւորութիւն իմ եւ թէ ժամ է ճաշոյ:

Ռափայէլ. Ողջո՞յն իցէ:

Մ. եւ Գ. Ողջոյն է. եկ առ մեզ, բազմեսցուք:

Ռ. Ներեցէք ինձ, զի ոչ իմացայ զգալուստ ձեր, եւ ոչ հանդիպեցայ ձեզ ըստ արժանի ընդունելութեան ողջունիւ սիրոյ:

Գ. Կանխաւ գիտեմք մեք թէ որպիսի սրտիւ սիրեմք զմիմեանս, եւ վասն ակամայ տգիտութեան ոչ ոք մեղադիր լինի սիրելւոյ:

Մ. Արդ՝ քանզի ամենայն ինչ պատրաստ է՝ աղօթս արարեալ բազմեսցուք ի սեղան:

Ռ. Օխա՞րդ է թանն:

Գ. Յոյժ բարւոք է, եւ ինձ կարի ախորժելի:

Մ. Պետրոս. առեալ զսկաւառակս՝ բեր այլ փոխանակ նորա:

ԺԵ.

Մ. Արդ՝ բաժանեցի զմիս որթուն, զո՞ր մասն առաւել ախորժես:

Գ. Որն եւ իցէ, ինձ մի եւ նոյն է:

Մ. Առջիք զայս մասն, զի փափուկ է եւ համեղ:

Գ. Մեծապէս ցաւ է մեզ, զի զանձնէ քեզ ոչինչ փոյթ է. ես ինքնին մասնաւորեցից քեզ զմեւս մասն:

Մ. Նա ի սեղանի չհրաժարիմ ի կերակրոց։

Ռ. Նոյն զի՞ է քեզ զի զերեսս քո ոչ տեսանեմ զուարթագին, որպէս յերէկն եւ յեռանդ։ Գործ զԿրիսիպպոսին գործես։

Գ. Նաւակօք բացեր զբերան քո։ Այլ չգիտեմ ես յինչ ակնարկէ առակս։

Ռ. Պատմեն զԿրիսիպպոս փիլիսոփայէ, թէ այնպէս զմայլէր մօրքն յուսմունս իւր, մինչեւ առ սեղանով բազմեալ՝ սովամահ լինէր, եթէ ծառայ նորա ոչ տանէր զկերակուրն ի բերան նորա։

Գ. Ինձ այսպէս թուի, թէ որպէս ոչ ուրեք այսպէս բարեկամաբար հիւրընկալեալ մեծարեցայ, նոյնպէս ոչ երբեք այսչափ կերայ, որչափ այսօր։ Ցիմ վերայ արդարանալ կարծեմ զառասպելն Թէ քո Հօրատոյէ որկորն է, մեր Հերակլեայ ամբարտն չէն։

Մ. Նաղաչեմ զձեզ պատմեցէք ինձ զինչ խրատէ առակս։

Գ. Պատճառս ետու քեզ քննել զպատմութիւն Մովսիսի Խորենացւոյ. բաց զառաջին հատորին զմետասաներորդ պրակն, եւ անտի տեղեկանաս*։

ԺԶ.

Մ. Ո՞րն յերկուց աստի հաճոյ թուի քեզ, միս եղին, եթէ ոչխարին։

Գ. Միս եզին առաւել ախորժելի է ինձ, այլ զոչխարինն առաւել առողջարար ասեն։

Մ. Նայպէս եւ ես զխոզենին յոյժ սիրեմ, այլ վնասակար պատմի առողջութեան։

Ռ. Յիրաւի է զարմանալ, թէ ուստի ի քիմս մարդկան այսչափ զանազանութիւն։ Հազիւ գտանին յաշխարհի երկուք ոմանք, որք միաբանիցին ի ճաշակս կերակրոց։

* Դէմք առակիս առ շատակերան հային, որ առ ժամանակօք Մովսիսի Խորենացւոյ յաճախեալ էր ի բերանս գեղջկաց, զի Արամայիս զորդի իւր զՇարայ զայր շատակեր եւ գյոլովածին առաքէ ի դաշտ մի արգաւանդ եւ բերրի, յագեցուցանել զանյագութիւն նորա ի պարարտութենէ երկրին։ Խոր. Ա. 11։

Մ. Գիտեմ զբազումս, որք եւ զպանրոյ հոտն առնուլ անգամ ոչ հանդուրժեն:

Գ. Մանաւանդ տեսի ես զոմանս, որք բնաւ հաց եւ ջուր ոչ ճաշակեն:

Մ. Այլ յերկարել մեր զբանս, մոռացաք զուտելն:

Գ. Շնորհակալ եմ, եղբայր, այնպէս յագեցայ, զի այլ ոչինչ կարեմ ուտել:

ԺԷ.

## ՅԱՂԱԳՍ ԶԲՕՍԱՆԱՑ

Հայր, Որդի:

Հայր. Ես ահաւասիկ ելանեմ զբօսանել, գա՞ս եւ դու ընդ իս, որդեակ:

Որդի. Ահաւասիկ եմ, հա՛յր, երթիցուք վաղվաղակի:

Հ. Աւասիկ անցաք պահ մի, եւ երեւի մեզ ծով:

Ո. Ո՜վ քանի ահագին եւ լայնածաւալ է ծով. միթէ ունի՞մք անցանել ընդ այս ծով:

Հ. Այո՛, եկ առ իս, եւ կալեալ զձեռանէ քումմէ այնպէս մտցուք ի նաւակն, մի գուցէ անկանիցիս ի ծով անդր:

Ո. Միթէ խո՞ր է ջուրն:

Հ. Յոյժ խոր է:

Ո. Տեսանեմ ես, հա՛յր, զբազմութիւն նաւաց մեծամեծաց եւ փոքունց: Ուստի՞ գան, կամ յո՞ երթան:

Հ. Մեծամեծ նաւքն՝ զոր տեսանես, յածին ընդ աշխարհ ամենայն, զի ծով է շուրջ զաշխարհաւ. վաճառս բերեն եւ տանին: Իսկ փոքրիկ նաւակք այսր անդր շրջեցուցանեն զմեզ առ ի զբօսանս:

Ո. Տեսանե՞ս, հա՛յր զբազմութիւն նաւակաց, որք գան այսր լի մեծամեծ ձկամբք: Եւ զի՞նչ է այն որ ի խելս նաւին:

Հ. Նոքա ձկնորս ասին, եւ գործի նոցա ուռկան է:

Ո. Զիա՞րդ կարեն ուռկանաւ ձկունս որսալ:

Հ. Որկանեն զուռկանս ի ծով, եւ ի չորից տրտնոց ձգեն ի ցամաք բազում աշխատանօք, եւ որ ինչ ի ներքս փակի, զայն ըմբռնեն եւ վաճառեն:

Ո. Աղաչեմ զքեզ, հայր պատուական, զի կալեալ զձեռանէ իմմէ հանցես ի ցամաք, մի գուցէ անկանիցիմ ի ծով:

Հ. Նաւուղք է, ոչ թողից զքեզ անկանել:

---

## ԶՈՒԱՐՃԱԼԻ ՏԵՍԻԼ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Ա. Տիեզերք: ԸՆԴՀԱՆՈՒՐ աշխարհս յերկուս մասունս բաժանի, յերկինս եւ յերկիր: Յերկինս տեսանեմք զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս: Երկիր ընդ այլոց տարերաց, այս ինքն հրոյ, ջրոյ եւ օդոյ, ի պատճառս մարդոյ ստեղծաւ: Ի յերկրի գտանին լերինք անտառովք եւ խոտովք, քարամբք եւ մետաղօք. ձորք ծաղկամբք եւ սիզովք. դաշտք ագարակօք եւ արմըտեօք, պարտիզօք եւ բանջարօք, ծով, լիճք, գետք եւ առուք, կենդանիք եւ մարդիկ: Ամպք վերանան յօդս, թռչունք թռչին ի ներքոյ երկնից, չորքոտանիք գնան կամ ընթանան. սողունք սողան ի վերայ երկրի: Մարդիկ ժառանգեն զընաւ տիեզերս:

Բ. Արեգակն: Արեգակն, որոյ մեծութիւն ի վեր է քան զմիտս, է գունտ մի հրեղէն. ի ծագել իւրում զխաւար գիշերին փարատէ, եւ լուսաւորէ զամենայն ինչ ճառագայթիւքն իւրովք: Մինչ չեւ ծագեալ իցէ՝ նախընթաց իւր առաքէ զարշալոյսն եւ զառաւօտն, եւ յորժամ մտանէ՝ զհետ իւր գայ երեկոյ եւ գիշեր: Սոյն այս արեգակն նուազէ եւ մերժէ զցուրտն, ջեռուցանէ զաշխարհս ամենայն, եւ տայ ամենայնի սնունդ եւ աճումն: Ապա ուրեմն աղբիւր է լուսոյ եւ ջերմութեան:

Գ. Արեգակն է զի հեռանայ, եւ է զի մերձենայ, որով չափին չորք եղանակք տարւոյն. գարուն, ամառն, ձմեռն, աշուն: Որչափ կողմնակի անկանին ճառագայթք արեգական, այնչափ սակաւ է զօրութիւն նոցա առ ի ջերմութիւն: Վասն այնորիկ հասարակաւուր ճառագայթք արեգական զօրաւորագոյն են քան զառաւօտուն եւ զերեկոյին: Յորժամ լուսինն կշիռ

դէպ արեգականն պատահիցէ, յայնժամ խաւարի արեգակն. եւ այս պատահէ միայն ի ծնանել լուսնի։

Դ. Լուսին։ Լուսին իբրեւ զերկիր ընդդիմահար մարմին է, որ զլոյս իւր առնու յարեգակնէ։ Լուսաւոր է գիշերոյ, եւ ի լուսոյ նորա աղօտանան աստեղք, այլ անմասն է ի ջերմութենէ։ Երբեմն երեւի եւ ի տուընջեան։ Ցանկ ի փոխման կայ լուսին. է զի լրանայ, եւ է զի պակասէ ի նմա լոյսն, եւ դարձեալ ընծայի նմա լոյս. եւ առ սակաւ սակաւ աճէ ի նմա, մինչեւ յառաջին պայծառութիւնն ի վեր ելանէ։ Լրումն լուսնի հանդիպի ի չորեքտասաներորդ աւուր, յորժամ կողմն յարեգակնէ պայծառացեալ առ մեզ ունի զհայեցուածն։

Ե. Լուսինն գնդաձեւ է, սակայն ոչ հարթ հաւասար, այլ խորացեալ ըստ օրինակի խորոց եւ ըստ ձորոց, ըստ լերանց եւ ըստ բլրոց։ Արբանեակ կամ ընկեր է երկրի, եւ շուրջ գայ զսովաւ յարեւմտից յարեւելս ի քսան եւ ինն աւուրս, եւ ի մետասան ժամս, եւ տարեւոր շրջագայութեամբ բերի զարեգակամբ։ Յորժամ երկիր կշիռ անկանիցի ընդ մէջ արեգական եւ լուսնի, խաւարի լուսին։ Այս լինի միայն ի լրանալ լուսնի։ Երբեմն ըստ մասին եւ երբեմն ամբողջ խաւարի։ Յիսուն միլիոն մղոնս հեռի է յերկրէ, եւ յիսնիւ չափ փոքր է քան զերկիր։

Զ. Աստեղք։ Բաց ի լուսնոյ անհամար պարք աստեղաց զբոլոր գիշերն լուսաւորեն, որք բաժանին յանմոլարս եւ ի մոլորակս։ Հաստատուն կամ անմոլար աստեղք առանձին լուսով իւրեանց լուսաւորեն, եւ բնաւ ոչ փոխեն զտեղին, յոր կառուցան յԱրարչէն։ Ի մէջ աստեղաց աստղն հիւսիսային միշտ ի նմին տեղւոջ երեւի։ Հաստատուն աստեղք, որպէս աստեղագէտք ասեն, մի մի արեգակունք են. եւ շուրջ զնոքօք որպէս զարեգակամբ շուրջ գան մոլորակք ոմանք, զորս լուսով իւրեանց լուսաւորեն եւ ջեռուցանեն։ Ծիրն այն բազմապայծառ յարդգող ձայնեալ, յանհամար աստեղաց խիտ առ խիտ երեւելոց ունի զտեսիլն, որ անբաւ միջոցաւ հեռի է յերկրէ։

Է. Երկիր: Գնդաձեւ է երկիր, վասն այսորիկ ասի եւս ոլորտ երկրի: Յայտ է ի ստուերէ երկրի տպացելոյ ի լուսինն խաւարեալ: Երկիր կիսով չափ լուսաւոր է եւ կիսով չափ խաւար: Լուսաւոր կիսագունտն՝ տիւ, իսկ խաւարն՝ գիշեր կոչի: Երես երկրի ի ջրոյ եւ ի հողոյ բաղկանայ, այլ փոքր է տարածութիւն ցամաքին քան զծովու: Եզերք նորա հինգ հազար եւ չորեքհարիւր մղոն է: Չորք են կողմանք աշխարհի. արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ: Բաժանի ի հինգ գօտիս, որոց երկուքն գրեթէ անբնակ են առ սաստիկ ցրտութեան: Երկուքն բարեխառն, որպէս Հայաստան եւ Իտալիա, եւ այլն: Եւ որ ի միջոցին է՝ սաստիկ ջերմ է, որպէս Ափրիկէ եւ Հնդկաստան: Զանազան են բերք սորա, որպէս արմտիք ի դաշտս, բոյսք ի պարտէզս, խոտք ի մարգագետինս, եւ ծառք յանտառս: Ընդ հողով գտանան մետաղք եւ վէմք:

Ը. Ջուր: Գտանին ի լերինս շտեմարանք ջրոյ, որք ի փեղկից լերանց քամեալք աղբերանան, եւ առ սակաւ սակաւ վտակացեալ մեծամեծ գետս գնացուցանեն: Ամենայն ջուր բնաւոր ծանրութեամբ ի վայր բերի. վասն այնորիկ տեղիք՝ ուստի աղբեւրք բղխեն՝ բարձր են քան յո դիմեն: Ջուրն ծորելի է եւ թափանցիկ, եւ կերպարանք իրաց՝ որք ի նա անկանին, որպէս երկինք, արեգակն եւ լուսին եւ ամպք, իբրեւ ի հայելւոջ տեսանին: Ջուր մաքուր եւ անխառն զուրկ է ի համոյ, ի հոտոյ եւ ի գունոյ: Ջուր անձրեւոյ առաւել պտղաբեր գործէ զերկիր քան զգետոց եւ զաղբերաց:

Թ. Ի ջուրն բնաւորեալ է ջերմութիւն, իբր զի հեղուկ է: Եւ եթէ յամենայն ջերմութենէ վերջասցի՝ սառնամանիս ծնանի, որ ջերմութեամբ հալի: Նոյն բնաւորական ջերմութիւն հանապազ գոլորշիս ի վեր հանէ: Խառնեալ է ընդ սմա եւ օդ, զոր պղպջակքն յերեսս նորա յայտ առնեն: Ոմանք յաղբերաց ջուր ցուրտ բղխեցուցանեն, ոմանք ջերմ, այլք դառն եւ կէսք թթու ի պէտս մարդկան առողջութեան: Աղի ասի ջուրն, յոր գտանի խառ-

նեալ հասարակաց աղ։ Այսպիսի է ջուր ծովու եւ աղբերաց ոմանց։ Ջրոյ գոյացութիւն կարի պիտանի է եւ կարեւոր։ Մարդկան եւ անասնոց ըմպելի է ի ծարաւս, զամենայն հողաբոյսս սնուցանէ եւ քաջուղէշ առնէ, եւ բազում աղօրիս եւ մեքենայս շրջեցուցանէ։ Նովաւ կերակուրս եփեմք, եւ զմերս ամենայն լուանամք եւ մաքրեմք։

Ժ. Ծով։ Լայնատարած ժողով ջուրցն ծով կոչի, որ զերկիրս շուրջանակի պատեալ ունի, եւ յառանձինն անուն ովկիանոս կոչի, ուստի հանապազ գոլորշիք ի վեր ելանեն անբաւ առատութեամբ։ Եւ կարի յիրաւունս. զի եթէ չէր սպառեալ մասն ինչ ի ծովէ գոլորշիս ի վեր տալով, ծով ոչ կարէր հանդարտել տանել ջուրց գետոց, որք անդադար ի ծով դիմեն։ Ջուր ծովու աղի է եւ դառն, որով պահի ի նեխութենէ։ Վասն այնորիկ ջուր ծովու ոչ է ըմպելի իբրեւ զջուր աղբերց եւ զգետոց։ Յայն սակս առաւել ծանր է քան զգետոցն եւ զաղբերաց, եւ ի վերայ մկանանց խորոց բարձեալ բերէ բեռինս ծանունս, իբր զի նաւք գնան անհնարին մեծութեամբ եւ ծանրութեամբ։ Առաւել զարմանալի է տեղատուութիւն եւ մակընթացութիւն ծովու. զի ջուր նորա ի քսան եւ ի չորս ժամու երկիցս աճէ եւ նուազէ ի ծովափունս։ Եւ այս որպէս կարծի ի լուսնոյ անտի ունի զպատճառն. զի ըստ աճել նորա աճէ, եւ ըստ պակասելն պակասէ։ Ի ծովու են ծովափորք, հրուանդանք, կղզիք, ցամաքակղզիք, աւազակոյտք եւ ծոցք։

ԺԱ. Օդ։ Զերկիր եւ զջուր շուրջ օդ պատէ, որ շնորհէ ամենայն ազգի կենդանեաց զտուրեւառս շնչոյ, եւ առանց նորա ոչ կենդանիք կարեն կեալ եւ ոչ տունկք աճել։ Որչափ մերձաւորագոյն է երկրի, այնչափ թանձրագոյն գոլորշեօք լցեալ է, որ մթնոլորտ ասի։ Օդն ստորին խստագոյն է եւ ծանրագոյն քան զվերինն եւ զհեռագոյնն յերկրէ։ Օդն լոյծ է եւ թափանցիկ, եւ ի վերայ ամենայնի ունի եւ ոյժ առաձգական. զի թէպէտ ներէ սեղմել, բայց իբրեւ ազատանայ ի բռնութենէն՝ սաստիկ յարձակմամբ

յառաջին անդայտութիւնն ի վեր ելանէ: Ցրտութեամբ սեղմի եւ խտանայ, եւ ջերմութեամբ անդայտի եւ ծաւալի, եւ որչափ բարձր է, այնչափ ցրտագոյն է:

ԺԲ. Օդն երբեմն պարզ լինի եւ երբեմն անձրեւէ. յամարայնի ջերմ է, եւ ի ձմերայնի ցուրտ: Իսկ ի գարնայնի եւ յաշնայնի բարեխառն: Ոչ երբեք պարզի, այլ միշտ խառն է ընդ աղի եւ ծծմբոյ եւ ընդ այլ տարերաց մասունս: Որչափ մաքուր է օդ, այնչափ առողջարար է: Օդն թեթեւագոյն ի վեր բերի քան զծանր, որպէս իւղ ի յերեսս ջրոյ: Ընդ օդ ճանապարհ գործէ ձայնն, եւ որչափ մաքուր է եւ խաղաղ, այնչափ առաւել յստակ լսի ձայնն: Դարձեալ ցնդի ձայնն ի թանձր եւ ի խոնաւական մասանց յօդս ճախրելոց: Արձագանգ ասի բացագանչութիւն օդոյ. իբր զի ուր ընդդիմահար մարմնոյ պատահէ, անդրէն ընդ կրունկն դառնայ, յորմէ նոյն ձայն աղդէ յականջս խօսողին: Յօդս գոյանան ամպ, անձրեւ, ձիւն, փայլակն, կայծակն, ծիածան եւ այլ մետէորայք:

ԺԳ. Հողմ: Օդն հազիւ երբեք հանդարտի, այլ գրեթէ միշտ ի շարժման կայ: Շարժումն օդոյ սաստիկ հնչելոյ՝ հողմ ասի, իսկ հեզիկ հնչեալ՝ Օդիք անուանի: Չորք են գլխաւոր հողմունք, որք շնչեն ի չորից կողմանց աշխարհի: Ապարքտիաս որ եւ Բորէաս շնչէ ի հիւսիսոյ, Ապելիոտ կամ Եւրոս յարեւելից, Նոտոս ի հարաւոյ, Զեփիւռ յարեւմտից: Հիւսիսային շնչմունք ցրտագին են քան զայլ ամենայն հողմունս. հարաւ ըստ առաւել մասին գաղջ է. արեւմուտք խոնաւ. եւ արեւելք չոր: Հողմունք բազմապատիկ օգտակարութիւնս ունին. մաքրեն զօդն ի վնասակար գոլորշեաց. բարեխառնեն զտապ խորշակին եւ զբազում ախտից պատճառս կարճեն: Վարեն զամպս եւ այսր անդր տարաբերեն. եւ յետ ձմերայնոյն անցանելոյ՝ լուծանեն զձիւնս. եւ զերկիր բազում անձրեւօք ոռոգեալ՝ վաղ քան զարեգակն գիտեն ցամաքեցուցանել. Նաւս վարեն, եւ աղօրիս շարժեն: Բայց երբեմն վնաս գործեն: Մրրիկ երբեմն զծառս

յարմատոց խլէ, զշէնս կործանէ, եւ զնաւս ի նաւաբեկութեան վտանգ արկեալ՝ բազում անգամ եւ խորտակէ։ Բռնութիւն հողմոյ անդընդայնոյ է պատճառ երկրի սասանման, որ բազում անգամ ի բազում տեղիս զքաղաքս եւ զգիւղս հիմն ի վեր տապալեաց։

ԺԴ. Հուր։ Հուրն է պատճառ լուսոյ եւ ջերմութեան. լուսաւորէ, ջեռուցանէ, խանձէ եւ այրէ։ Երբեմն բորբոքի հուր արագ արագ շփմամբ դիւրավառ նիւթոց։ Այրեն եւ ճառագայթք արեգական եթէ գոգաւոր ապակւով ի մի ժողովիցին։ Հասարակօրէն հուր վառեն՝ զվէմ գայլախազ ընդ պողովպատի հարեալ։ Փայտն վառեալ՝ ծխէ, իսկ մնացեալն յածխին դառնայ։ Բազում պինդ մարմինս գիտէ հուր հեղուկ գործել, որպէս զոսկին, զարծաթն եւ զայլ մետաղս։ Հուրն ճարակի կարօտանայ եւ օդոյ փչելոյ, ապա թէ ոչ՝ շիջանի։ Ի տարերս թեթեւագոյն է քան զամենեսին։

ԺԵ. Լոյս։ Ի հրոյ գոյանայ լոյս, զոր հուրն ընդ ամենայն կողմն ծաւալէ։ Զօրութիւն լուսոյ յերկուս առաւելապէս փայլէ։ Նախ՝ զի միայն լուսով կարեմք տեսանել. եւ երկրորդ՝ զգոյնս որոշել ի միմեանց։ Քանզի ուր չիք լոյս, խաւարն ի վերայ հասեալ՝ գոյնք անհետանան։ Լոյսն քան զամենայն ինչ, եւս եւ քան զձայն արագ ընթանայ։ Ճառագայթք արեգական միշտ ուղղաձիգ բերին եւ ոչ երբեք խոտորին, բայց եթէ յորժամ յանգայտ մարմնոյ ի թանձր հասանեն, որպէս յորժամ յօդոյ ի ջուր գան մտանեն։ Զի ի լինել այսմ այսպէս՝ բեկբեկին ճառագայթք արեգական, եւ գաւազան ի ջուր մխեալ՝ խորտակեալ երեւի։

ԺԶ. Գոլորշիք։ Ջերմութիւն արեգական ժողովէ ի ծովէ, ի գետոց եւ յաղբերաց անբաւ գոլորշիս, որք ի վերելս ցնդեալ պակասին։ Այս գոլորշիք ի ցրտութենէ վերին օդոյ ի մի ժողովին եւ խտանան, որով եւ երեւելի լինի աչաց մերոց. եւ եթէ տարածեսցի ի վերայ երկրի, հասարակ ձայնիւ մէգ կոչի. եթէ վերանայ յօդն՝ ամպ անուանի։

ԺԷ. Ամպ, անձրեւ, ձիւն, կարկուտ եւ այլն։ Եթէ մէգն տարածեսցի ի վերայ երկրի՝ նշան է օդոյ

պարզելոյ, այլ եթէ ի վեր յօդս ելցէ, նշան է անձրեւոյ։ Ցաշնանային եւ ի գարնանային եղանակս ընդ առաւօտս եւ ընդ երեկս մէգք յաճախեն, մանաւանդ ի ջրարբի տեղիս։ Եթէ գոլորշիք յօդս սառին ի ցրտոյ, ձիւն ծնանի։ Եթէ սառուցեալ անձրեւ ի ցրտութենէ վերին օդոյն՝ իսկոյն անկցի ի ստորին օդ ջերմ, կարկուտ լինի։ Վասն այնորիկ յամարայնի կարկտէ, եւ ի ձմերայնի ձիւնէ։ Ցօղն պատճառի ի շոգեաց երկրի եւ տնկոց, որք ընդ առաւօտս եւ ընդ երեկս խտացեալ ի կայլակս կայլակս ժողովին։ Եթէ ցօղն զցուրտ մարմնովք սառի, եղեամն անուանի։

ԺԸ. Փայլակն, կայծակն, եւ այլն։ Ինաց ի ջրային գոլորշեաց ելանեն նաեւ ծծմբային գոլորշիք խառնեալք ի ծծմբոյ եւ յարջասպէ. ուստի եւ փայլատակունք ծնանին։ Փայլակն երեւի ի խիտ եւ ի լրթագոյն ամպոց, եւ բազում անգամ ճայթիւնս գործէ աՀագին որոտմամբ, թէպէտ յամր Հասանէ ձայնն յականջս մեր, կամ բնաւ ամենեւին ոչ լսի։ Զի որչափ Հեռի է ի մէնջ փայլակն, այնչափ անագան Հասանէ եւ Հնչիւն որոտման։ Կայծակն բազում օգտակարութիւնս մատակարարէ յաշխարՀս. զի մաքրէ եւ զովացուցանէ զօդն, եւ զվնասակարս գոլորշեաց ծախէ։ Բազում անգամ վնասէ եւս, զի Հերձանէ եւ մանրէ զծառս, եւ զմարդիկ եւ զանասունս արագագոյն քան զքթթել մի ական Հեղձամղձուկ մաՀուամբ կարճէ ի կենաց։ Ցամարայնի յաճախ փայլատակէ եւ որոտայ։

ԺԹ. Այլ Երեւոյթք։ Են եւ այլ ի Հրոյ ձեւացեալ տեսիլք եւ մետէորայք, որք ոչինչ ճայթիւնս գործեն. որպէս վիշապք թռուցեալք եւ աստեղք սաՀեալք, որք ծնանին ի պարարտ գոլորշեաց երկրի։ Մոլէ հուր ի ճախին վայրս երեւի։ Ծիածան կամ աղեղն ձգի յամպս յաւուրս անձրեւաց, յորժամ արեգակն ի Հանդիպոյ ծագէ։ Վասն այնորիկ յառաւօտու ծիածանն նկարի յարեւմուտս, եւ յերեկոյի՝ յարեւելս։

Ի. Լերինք։ Յերեսս երկրի են լերինք բարձունք, բլուրք ամբարձեալք, եւ խորին ձորք։ Բլուր ասի փոքրիկ եւ խոնարՀ լեառն։ Որչափ բարձր են լերինք,

նոյնչափ առաւել խորին ձորս ունին: Լեառն Դաւաղագէր բարձր է քան զամենայն լերինս ի վերին կիսագունտն, իսկ ի ներքինն՝ այս ինքն յԱմերիկա՝ Բերուվեան լերինք: Գագաթն լերանց բարձանց նաեւ ի ջերմ գաւառս պատի միշտ սաստկութեամբ սառնամանեաց, որպէս Աղպեայ լերինք: Են եւ լերինք ինչ, որոց կատարն հրով տոչորի. որպէս Եթնա ի Սիկիլիա, եւ Վեզուվ ի Նէապօլիս: Լերինք բազում օգուտ մատակարարեն յաշխարհս. անտի քամեալ ժողովին աղբերք եւ գետք եւ անտի պեղեն զամենայն ազգս հանքաց: Ունին խոտս առողջարարս: Յանձեն զանկարգ հողմոց շնչել, եւ բարեխառնեն զխորշակին սաստկութիւն:

ԻԱ. Մետաղք: Զմետաղս ի լերանց հատանեն, յորոց ոմանք պատուական ասին, եւ ոմանք անարգ: Պատուական է ոսկին, արծաթն. անարգ է երկաթն, պղինձն, անագն, կապարն եւ սնդիկն: Ոսկին՝ որ քան զամենայն մետաղս ծանր է եւ պատուական, ոչ միայն ի լերինս, այլ եւ ի գետս գտանի: Ոսկեգործք ոսկի եւ արծաթի դրամ հատանեն, եւ ազգի ազգի զարդս քանդակեն: Երկաթն՝ յորմէ բազում ինչ ի բարւոք պէտս կազմեն, գտանի ի բազում կողմանս: Պողովպատն է երկաթ հրացեալ եւ ի ջուր թացեալ: Ի պղնձոյ եւ յանագէ զանազան անօթս հանդերձեն. մանաւանդ պղնձի անօթ անագեալ՝ ժանգիւ ոչ ապականի: Զկապարն, որ կակուղ է քան զայլ ամենայն մետաղս, դիւրին է հրով հալել:

ԻԲ. Քարինք: Քարինք յազգս ազգս բաժանին: Ոմանք հասարակ են, ոմանք սակաւագիւտ, եւ ոմանք պատուական: Հասարակ են վէմք, գայլախազ քար, եւ այլն: Սակաւագիւտ է մագնիս, ապակի, մարմարիոն: Պատուական՝ ակունքն: Շինուած որմոց, տանց եւ քաղաքաց հասարակ քարանց պիտոյանայ ի կատարումն: Ցեսանաւ սրեն զբթացեալ դանակ, զածելի, եւ այլն: Գայլախազ վէմ ընդ պողովպատի հարեալ՝ կայծակունս թօթափէ: Մագնիս քարն զարմանալին քան զամենեսեան, զերկաթ յինքն ձգէ, եւ սերտ ընդ նմա կապի: Զայս զօրութիւն բնաւորական հա-

զօրդէ եւ երկաթոյ: Եթէ ազատ թողցի, միշտ ընդ հիւսիս բերի, եւ նաւավարաց յանհետ ծովու զգուշաւոր շաւիղ ցուցանէ:

ԻԳ. Ապակին քար է թափանցիկ եւ սերտ: Մարմարիոնն կամ սպիտակ է, կամ երփն գունաւորութեամբ պիսակացեալ: Սաթ ի ծովու գոյանայ: Ակունք գտեալք ի հող, ամենեւին ոչ փողփողեն. այլ ձեռն արուեստագէտ ճարտարաց սրեալ, ընդ ոսկի յեռեալ պայծառ երեւեցուցանէ: Կամ թափանցիկ են եւ կամ ընդդիմահար. որպէս զմրուխտ կանաչ, յակինթ կարմիր, տպազիոն դեղին, եւ այլն: Այլ պատուականագոյն եւ անվանելի է քան զամենայն՝ անդամանդ, որ պայծառ ճառագայթիւք եւ երփն երփն հարկանելով զաչս տեսողացն զօշոտէ: Սակայն երկանաքար օգտակարութեամբ գերազանցէ զամենեքումբք:

ԻԴ. ՏՈՒՆԿՔ: Ամենայն տունկք երիս մասունս ունին. ԱՐՄԱՏ, ԲՈՒՆ եւ ՈՍՏ: Ոստքն ի բունոյ շառաւիղեն, որ ի փոքրիկ եւ ի փափուկ բանջարս՝ ԾՂՕՏ կամ ծիլ կոչի: Ոստքն բերեն պտուկս, սաղարթս, տերեւս, ծաղիկս, պտուղս եւ սերմանս: Արտաքուստ կեղեւով պատին, խոկ ի ներքս ի բունն է ուղեղ տնկոց: Արմատք տնկոց ընդ հողով ծածկին, ուստի զխոնաւութիւնն ի վեր ծծեն, որ սնուցանէ զբոյսն: Բայց ոչ յարմատոյ միայն սնանին՝ զհիւթն ի վեր բերելով, այլ նաեւ ընդ ծակտիս տերեւոց ձգեն զօդն, վասն այնորիկ առանց տերեւոյ ոչինչ պտուղ հասունանալ կարէ: Ծառք բազմանան կամ ի սերմանէ կամ ի շառաւիղէ եւ կամ յարմատոյ: Ոչ ամենայն տունկ յամենայն տեղիս աճէ:

ԻԵ. ԾԱՌՔ: Ծառք կամ պտղաբեր են եւ կամ անպտուղ: Պտղաբերք են խնձորենի, տանձենի, կեռասենի, սալորենի, նռնենի, ընկուզի, դեղձի, ծիրանի, եւ այլն: Անպտուղք են եղեւին, գի, սաւճի, կաղամախ, հացի, ուռի: Վայրենիք ինքնին բուսանին, իսկ պտղաբերք մարդկային խնամոց պէտս ունին: Յաշնանային եղանակս տերեւք ծառոց ինչ թօթափին, որպէս խնձորենւոյ, եւ այլն. եւ այլոց անթառամ մնան, որպէս դափնւոյն եւ եղեւնափայտին եւ այլոց

բազմաց։ Փայտ ծառոց կամ ի չինուածս պատշաճի, եւ կամ յայրումն պատրաստի։

ԻԶ. Արմտիք։ Ի բերս երկրի օգտակարագոյն մարդկան համարին արմտիք, յորոց կէսքն կանուխ, եւ կէսքն անագան հասունանան։ Կանուխ ասի զոր յաշնայնի սերմանեալ յամարայնի ի գալ ամին հնձեն. որպէս ցորեան, հաճար եւ այլն։ Անագան ասի, զոր ի գարնայնի սերմանեն, որպէս վարսակ, գարի, կորեակ եւ ձիակորեակ։ Ի կարգ սոցա դասին բակլայ, ոսպն, լուբիա, սիսեռն եւ այլն։ Որպէս զի երկիր պտղաբեր լիցի, աղբս արկանեն։ Ցետոյ արօրադիր առնեն, սերմանեն եւ տափանեն։ Իբրեւ հունձք ատոքանան, մանգաղաւ հնձեն, եւ ի շտեմարանս ժողովեն։

ԻԷ. Ծաղկունք։ Որպէս արմտիք կարգեցան յաւարչէն ի պէտս մարդկան դարմանոյ, նոյնպէս ծաղկանց ամենահրաշ զանազանութիւնք պատրաստեցան ի զուարճութիւն աչաց եւ ի բուրումն անուշահոտութեան ի վայելս մարդկան ազգի։ Ծաղկանց առ մեզ յաճախելոց ի բուրաստանս եւ յառնին զբօսանս՝ բազում են տեսակք, բայց գլխաւորք ի նոսա գեղեցկութեամբ են՝ շահպրակ, վարդ, շուշան, կակաչ, յակինթ ծաղիկ, շահոքրամ։ Շահպրակ յառաջ քան զամենայն ծաղկունս աւետէ զգարունն։ Վարդից բազում են տեսակք զանազանեալք ի տերեւս, ի գոյնն եւ ի հոտն։ Շուշան սքանչելի բուրմամբ եւ պայծառ գունով վառեալ՝ պատմէ զԱրարչին գեղեցկութենէ եւ զանպակաս խնամոց նորա։ Բազումք ի ծաղկանց հոտ անոյշ բուրեն. եւ կէսք առ աչս միայն ունին զշնորհն որպէս կակաչ որ ամենեւին հոտ ոչ բուրէ։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013 2970